ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ

А II
888 51

4

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ИЗДАТЕЛЬСТВО “ГИТУТЮН” НАН РА

Ե Ր Ե Վ Ա Ն 2003 ЕРЕВАН

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Հ 282

Ժողովածուն տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պ. գ. դ. *Ա. Ա. Մելքոնյան*
Խմբագրական կոլեգիա՝ պ. գ. թ. *Գ. Ս. Գրիգորյան*
պ. գ. թ. *Կ.Հ. Խաչատրյան*
պ. գ. թ. *Ք. Ռ. Ավագյան*

Հ 282 ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ /Գիտական հոդվածների
ժողովածու/ Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003, 172 էջ:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների չորրորդ ժողովածուում տեղ են գտել Հայաստանի և Ափյուռքի երիտասարդ պատմաբանների ուշագրավ հոդվածները:
Ժողովածուն նախատեսված է պատմաբանների, հայագետների և ընթերցող հանրության համար:

Ժողովածուում ընդգրկված նյութերի մեծ մասը զեկուցվել է
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հիմնադրման 60-ամյակի
միջոցառումների շրջանակներում կազմակերպված
երիտասարդ գիտաշխատողների 28-րդ նստաշրջանում
(14-15 հուլիսի, 2003 թ.)

Հ 0503020913 ԳԱԴ 63.3 (2Հ)
703/02/-2003

ISBN 5-8080-0534-5

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2003
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2003

ԿԱՐԵՆ ԹՈՒԽԱԹՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի տարածքը, որը նախնադարյան մշակույթի ծագման հիմնական օջախներից է, բնականաբար, հարուստ է ոչ միայն ժայռապատկերներով, այլև դրանց գոյության մասին հնագույն վկայություններով:

Հայաստանում ժայռապատկերների առկայության մասին հայտնի էր դեռևս Մովսես Խորենացուն: Նա հրաշապատումի ձևով, փրկել ու մեզ է հասցրել ժայռագրության ու տառաստեղծման աղերսների մի հնագույն վկայություն՝ Մաշտոցի երազը. «Եվ տեսանէ ոչ ի քուն երազ և ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երևութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Է, զի որպէս ի ձեան վերջք գծին կուտեալ /կուտակեալ/ ունէր քարն: Եվ ոչ միայն երևութացաւ, այլ և հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ»[1]:

Պատմահոր երկրորդ վկայությունը ժայռափորագրման առթիվ՝ Հայկի թոռ Պասքամի տոհմից սերող դյուցազն Տորք Անգեղի արծիվներ գրելու մասին է. «... երգէին նմա բուռն հարկանել զործաքար վիմաց ձեռօք, ուր ոչ գոյր գեզութիւն, և ճեղքել ըստ կամաց մեծ և փոքր. և քերել եղնգամբքն և կազմել որպէս տախտակ, և գրել նոյնպէս եղնգամբք իւրովք արծուիս և այլս այսպիսիս»[2]: Նշեմ, որ աշխարհաբարի վերածելիս Ստեփանոս Մալխասյանցը «գրել արծուիս»-ը դարձրել է «գծում էր արծիվներ»[3], ինչը բնագրային իմաստից շեղում է: Խորենացու այս տեղեկության և ժայռապատկերների կապի մասին ազգագրագետ Խաչիկ Սամվելյանը 1931 թ. նշել է, որ Պատմահոր տողերում «պահպանվել են

---

[1] Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, Գ գիրք, ԾԳ (վերահրատ. Եր., 1991, լրացումները Ա.Բ. Սարգսեանի) (այսուհետ՝ Խոր.), էջ 327: Գրեթե նույնն է հաղորդում նաև Ղազար Փարպեցին (Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քնն. բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանցի և Ստ. Մալխասյանցի, Եր., 1982, Ժ, էջ 34:): Գարագաշեան Ա.Մ., Քննական պատմութիւն հայոց, մասն Գ, Թիֆլիս, 1895, էջ 191-193: Դանիելյան Է.Լ., Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հոգևոր ակունքները և պատմական նշանակությունը, Եր., 1997, էջ 48-49:

[2] Խոր., Բ գիրք, Ը, էջ 115:

[3] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, թարգմ., ներած. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Եր., 1968, Բ գիրք, Ը, էջ 138:

հետքեր այն հնագույն դարաշրջանից, երբ մարդիկ իրենց տեխնիկական ճարտարվեստը արտահայտում էին միայն սեփական ձեռքով ու քարով»[4]:

Սեպագրագետ, արևելագետ Նշան Մարտիրոսյանը «շատ հետաքրքրական և մշակութային պատմության համար հույժ կարևոր» համարելով այս տեղեկությունը, Տորքի փորագրած «...արծիվի և ուրիշ կենդանիներու և առարկաներու պատկերները» առնչել է մ.թ.ա. II-I հազ. փոքրասիական մեհենադրոշմների հետ[5]: Շարունակելով նրանց, բանագետ Արամ Ղանալանյանը նշել է, որ Հայաստանում հայտնաբերված «...հազարավոր հիանալի ժայռապատկերները ... ավանդական Տորքին վերագրված քարարվեստի այդօրինակ նմուշներից են, որն այնքան տարածված ու ծաղկած է եղել Հայկական լեռնաշխարհի բնակիչների մոտ»[6]:

Առավել ուղղակի վկայություն է Անանիա Շիրակացու հաղորդածը. «Զգայարանք առաջնոցն սուր էին քան զայժմուցս՝ զոր վկայեն բազումք. վասն որոյ ոչ միայն զարեգական գնացս կարացին նկատել, այլ եւ զբոլոր լուսաւորացս կարացին դրոշմել եւ ճանաչել»[7] («Նախնիների զգայարաններն առավել սուր էին, ինչը շատերն են վկայում. Ուստի ոչ միայն արեգակի շարժումը կարողացան նկատել, այլև բոլոր մյուս լուսատուների շարժումը կարողացան դրոշմել ու ճանաչել») (ընդգծումները՝ Կ. Թ.)[8]:

Հայոց գիտության հսկայից պահպանած այս հատվածն առանձնահատուկ նշանակություն ունի. սա հավանաբար ժայռապատկերների վաղեմության և հավաստիության աշխարհում հայտնի հնագույն մատենագիտական վկայությունն է, քանզի «դրոշմել» բառը քարի վրա փորագրել, արձանագրել, քանդակել է հուշում: «Դրոշ» արմատից, որն ունի նաև «կուռքի պատկեր, արձան» իմաստ, ծագում են «դրոշել» (փորել, քանդակել), «դրոշագործութիւն» (արձանագործութիւն), «դրոշեալ» (քանդակեալ պատկեր) բառերը: Ավելին. նկարադրոշմ նշանակում է «գիր, նշանագիր»[9]: Ստ. Ալիխասյանցն էլ ընդգծում է «դրոշ» և «դրոշել» բառերի կիրառման սրբազնական կողմը՝ «քանդակուած պատկեր, արձան, յատկապէս աստուածների արձան, կուռք: Արձան քանդակել, կուռք

---

[4] Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հ. I, Եր., 1931, էջ 307-308:
[5] Գիլգամեշ, Հին Արևելքի դյուցազնավեպ, թարգմ. և ներած. Նշան Մարտիրոսյանի, Եր., 1963, էջ 12-13:
[6] Ղանալանյան Ա.Տ., Ավանդապատում, Եր., 1969, էջ ճԽԹ:
[7] Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, աշխատ. Աշ. Աբրահամյանի, խմբ. Հ. Աճառյան, Եր., 1940, ԾԹ, էջ 83-84:
[8] Հ. Գաբրիելյանն, իր հետազոտության շրջանակներում հպանցիկ անդրադառնալով այս հատվածին, մեկնաբանել է այն, առնչելով զգայությունների ու ճանաչողության հետ (Գաբրիելյան Հ., Հայ փիլիսոփայության պատմություն. Եր., 1976, էջ 99):
[9] Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Եր., 1971, էջ 694, 697:

շինել: Դրոշեալ գիրք նուիրականք, քանդակված մեհենական գրութիւն, եգիպտական մեհենագրութիւն, հիերոգլիֆներ»[10]:

Կարևոր է այն, որ Անանիա Շիրակացին նշում է գործընթացի փուլերի հերթականությունը. «նկատել, դրոշմել և ճանաչել», այսինքն՝ նախ պետք էր նկատել դրանց շարժումները դիտելով երկնային լուսատուները, ապա դրոշմել՝ արձանագրել, կուտակել գրանցումները և հետո միայն ուսումնասիրելով դրանք՝ ճանաչել, հասկանալ: Ուրեմն, Շիրակացին VII դարում արդեն քաջատեղյակ էր ու համոզված, որ հնում, իր ապրած ժամանակից էլ շատ առաջ, լուսատուների շարժումների վերաբերյալ դիտողական տվյալները սևեռվել են՝ դրոշմվել քարի վրա: Այսինքն, նրա բերած տեղեկությունը նաև աստղագիտական ժայռապատկերների գոյության վկայություն է:

Ասվածի վառ ապացույց կարող է ծառայել Գեղամա լեռների Աստղաբերդ հնավայրում 1990 թ. նկատածս հետևյալ ժայռապատկերը: Այն ունի ավելի քան 1 մ երկարություն և ամուր սևեռված է տեղում: Կարծում եմ, որ սա աստղագիտական գրանցումների աղյուսակ է, որ նշում է երկու լուսատուի տեսանելիության պայմանները: Երևում են երեք հորիզոնական գծերով ձևավորված երկու շերտ, որոնք ձախից, ուղղահայաց գծերով բաժանված են չորս մասի: Սա կարող է լինել չորս օր, ամիս, տարի կամ, ասենք, տասնամյակ: Պատկերված է երկու լուսատու՝ իրենց տեսանելի մեծությանը համապատասխանող օղակներով և խորհրդանշաններով: Ձախից առաջին սյունակում երկուսն էլ չեն երևում, երկրորդում՝ նույնպես, երրորդում երկուսն էլ փոքր կամ թույլ են, չորրորդում վերևինը մեծ է կամ պայծառ, մյուսը չի երևում: Եվ գրանցման այս գործընթացը հավանաբար կիսատ է մնացել, այլապես նշումները շարունակված կլինեին դեպի աջ: Դա հավանական է դառնում նաև գծերի՝ քարաբեկորի մյուս կողմն անցնելու փաստից: Այսպիսով, քարի վրա գրանցում էին այդ լուսատուների դիրքն ու պայծառությունը՝ ժամանակի որոշակի, հավասար միջակայքերում, կուտակում դրանք և ապա միայն՝ եզրակացություններ անում դրանց շարժման ու փոփոխությունների մասին:

---

[10] Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. I, Եր., 1944, էջ 546-547:

Հայաստանում ժայռապատկերների առաջին հայտնաբերումների առթիվ Խ. Սամվելյանը գրել է. «Այդպիսի նշանագրերի հայտնաբերումը տեղի է ունեցել Հայաստանի սահմաններում տակավին անցյալ դարում. բավական է հիշել Շտրեկկերի անունը, որին և պատկանում է առաջնությունն այդ հարցում. այնուհետև մի շարք թե՛ օտար և թե՛ հայ բանասերներ հայտնաբերել են շարունակ այդպիսի նշանագրեր, որոնք դժբախտաբար մինչև այսօր չեն լույս տեսել, մինչդեռ նրանք ահագին նշանակություն ունեն մեր երկրի կուլտուրայի պատմության տեսակետից»[11]:

Այդուհանդերձ, գիտության նորօրյա մակարդակում, հայ ժայռապատկերաբանության ծննդյան թվական կարելի է համարել 1902-ը, երբ ականավոր հայագետ Մեսրովբ մագիստրոս եպիսկոպոս Տեր-Մովսեսյանն առաջին անգամ ժայռապատկեր է տեսնում ու նկարագրում: Դա աշխարհահռչակ Մեծամոր հնավայրում էր: Դրանով նա, փաստորեն, արձանագրում է Հայաստանում առաջին ժայռապատկերի հայտնաբերումը, նշելով՝ «1902 թուին ... Հայ Զէյվա գիւղի բնակիչներից ինձ պատմեցին, որ Կզլթափա կամ Կարմիր բլուր բարձրութեան վրայ կայ մի տեսակ օտարոտի գրութիւն, որ ոչ ոք չի կարողանում կարդալ: Այդ բլուրը, էջմիածնից վեց վերստ հեռու դէպի արեւմուտք, Այղրգեօլից մի փոքր տարածութեան վրայ, հրաբխային մի բլրակ է, առանձնակի ընկած, ամբողջովին բաղկացած կարմիր չեչաքարից: Բլրի ամենաբարձր կէտում, յիշած բնական հրաբխաքարի ոչ այնքան հարթ մակերեւոյթի վրայ, կայ մի քանի տող գրութիւն. չափազանց խոշոր մասշտաբով: Գրութիւնը բաղկացած է խորհրդանշաններից, իրար հետ սերտ շաղկապուած և մի քանի անգամ կրկնուած: Փորձեցի լուսանկարել, անկարելի եղաւ. ժայռը շատ է անկանոն: ... Արձանագրութեան բռնած տարածութիւնն է

[11] Սամուելյան Խ., նշվ.աշխ., էջ 343, ծանոթ. 88:

երկայնութիւնը 5-6 լայնութիւնը 1-2 սաժէն ... Արդեօ՞ք դա հիտիտական գրութիւն չէ՞»[12]:



Մեծամորի այս ժայռապատկերը հետագայում նկատել է ֆիզիկոս, պրոֆ. Հ. Անժուրը և 1936 թ. տեղեկացրել ականավոր հնագետ Աշխարհբեկ Քալանթարին, որն այն մեկնաբանել է որպես Արագածոտնի նախնադարյան ոռոգման համակարգի քարտեզ[13]: 1938 թ. հնագետ Եվգենի Բայբուրդանը բլրի գագաթնային մասում նկարագրել է «*հիերոգլիֆիկ*» գրեր[14]: Փորագրված քարտեզն արտանկարվել ու հրատարակվել է 1961 թ.[15], չափագրվել և լուսանկարվել՝ 1973 թ.[16]: Նկարներում մեծամորյան բազմաթիվ մեհենագրերից մի քանիսն են:

---

[12] Տէր-Մովսէսեան Մ., Արարատի և Արագածի գագաթներին, «Արարատ», 1913=ՈՅԿԲ, թիվ 1, էջ 65-66: 1 սաժենը 2,13 մ է:

[13] Խաչատրյան Մ.Ա., Արագածոտնի նախաուրարտական ջրաբաշխական համակարգի փորագրված գծագիրը, «ՊԲՀ», 1971, թիվ 3, էջ 128, նկ. 4:

[14] Խանզադյան Է.Վ., Մկրտչյան Կ.Հ., Պարսամյան Է.Ս., Մեծամոր, Եր., 1973, էջ 5:

[15] Բարսեղյան Լ.Ա., Հայոց գիրը Մաշտոցից շատ առաջ, «Գիտություն և տեխնիկա», Եր., 1964, թիվ 3, էջ 49, նկ. 1:

[16] Խանզադյան Է.Վ., նշվ. աշխ., էջ 153, 155, նկ. 154, աղ. XXX-6:



Ստորև ներկայացված է Հայաստանի և Արցախի Հանրապետությունների տարածքում ժայռապատկերների հայտնաբերման ժամանակագրությունը[17]:

Մեծամոր (հայտնաբերվել է 1902 թ., Արմավիր), Արագած (հայտ. 1909 թ., 1913 թ., Արագածոտն), Գեղամա լեռներ (հայտնաբերվել էր 1913 թ., որի մասին հրատարակվեց 1972 թ., Գեղարքունիք), Երերույք (տեղեկություն կար 1913 թ., որի մասին հրատարակվեց 1972 թ., Շիրակ), Արմավիր (հայտ. 1927 թ., Արմավիր), Ավան (տեղեկ. 1931 թ., Երևան), Մաստարա (տեղեկ. 1935 թ., Արագածոտն), Վարդենիկ (հրատ. 1935 թ., Գեղարքունիք), Հոռոմ (հրատ. 1942 թ., Շիրակ), Սևսար (հայտ. 1965 թ., Գեղարքունիք), Սյունիք (հայտ. 1966 թ., Վայոց ձոր, Սյունիք), Վարդենիս (հայտ. 1966 թ., Գեղարքունիք), Արտին (տեղեկ. 1967 թ., Արագածոտն), Քուչակ (հայտ. 1967-68 թթ., Արագածոտն), Նավասար (հայտ. 1968 թ., Սիւնիք՝ Երնջակ և Վասպուրական՝ Գողթն, այսօր՝ Նախիջևան), Շամիրամ (հայտ. 1969 թ., Արագածոտն), Այրք և Ներքին Շորժա (տեղեկ. 1969 թ., Գեղարքունիք), Քարաշեն և Իշխանասար (տեղեկ. 1969 թ., Սյունիք), Ձիթհանքով (տեղեկ. 1969 թ., Շիրակ), Կաքավաձոր (հրատ. 1973 թ., Արագածոտն), Պտղնի (հայտ. 1970-ական թթ., Կոտայք), Քարվաճառ (տեղեկ. 1981 թ., Արցախ՝ Քարվաճառի շրջան), Բջնի (հայտ. 1987 թ., Կոտայք), Ագարակ (հայտ. 1989 թ., Արագածոտն), Բալահովիտ (հայտ. 1989 թ., Կոտայք), Կողես (հայտ. 1990 թ., Լոռի), Ոսկեհատ (հայտ. 1990 թ.,

---

[17] ՀՀ տարածքի ժայռապատկերների տեղը նշված է ըստ այժմյա մարզերի, Արցախինը՝ ըստ շրջանների, Մեծ Հայքի բռնազավթված տարածքներում՝ ըստ «Աշխարհացոյց»-ի (աշխարհ՝ գաւառ):

Արագածոտն), Գեղարդ (հայտ. 1991 թ., Կոտայք), Շուշի (տեղեկ. 1990 թ., Արցախ, Շուշի), Նեղոց (հրատ. 1991 թ., Լոռի), Լոռիբերդ (հայտ. 1992 -93 թթ., Լոռի), Զովունի (տեղեկ. 1992 թ., Կոտայք), Գավառ (հայտ. 1997 թ., Գեղարքունիք), Ապարանի ջրամբար (հայտ. 1986-87 թթ., 1999. Արագածոտն), Եղցատեղ (հրատ, 1999 թ., Արցախ Քարվաճառի շրջան), Զորացքար (հայտ. 2000 թ., Սյունիք), Անիպեմզա (տեղեկ. 2001 թ., Շիրակ), Սուրբ Շուշանիկ (տեղեկ. 2001 թ., Արագածոտն), Գեղամավան (հայտ. 2002 թ., Արագածոտն), Գոշ (տեղեկ. 2002 թ., Տավուշ), Լճաշեն (տեղեկ. 2002 թ., Գեղարքունիք), Տիրաշեն և Հայկաձոր (տեղեկ. 2003 թ., Շիրակ):



Պատմական Հայաստանում ժայռապատկերների առկայության քարտեզ

Ինչպես պարզ երևում է քարտեզից, ուսումնասիրման համար մեզ մատչելի տարածքում (ՀՀ և Արցախ) ժայռապատկերային հնավայրերի աշխարհագրական խտությունը մեծ է: Բռնազավթված տարածքներում հնավայրերի նոսրության պատճառը լոկ վատ ուսումնասիրվածությունն է: Դա ակնհայտ է, քանզի Հայկական լեռնաշխարհում մշակույթն իր բոլոր ոլորտների դրսևորումներով բաշխված է գրեթե հավասարաչափ՝ դրա վկայությունն են հնագիտական, ազգագրական, լեզվաբանական փաստերը և հնամարդաբանական տվյալները: Լեռնաշխարհը ներկայանում է որպես մեկ ամբողջություն. մարդաբանական ու մշակութաբանական պատկերն անընդհատ է ըստ տարածության (մոտ 500.000 կմ^2) և ժամանակի (հարյուր հազարավոր տարիներ): Հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիք Հայկական լեռնաշխարհի միակ տեղաբնիկ տարրը՝ հայ ազգը, ձևավորվելով ու հարատևելով միևնույն տեղում, բնականաբար, կրողն ու տերն է ողջ այդ մշակույթի: Ուստի, լեռնաշխարհի ամբողջ տարածքով մեկ սփռված բյուր-հազարավոր ժայռապատկերները ևս պետք է դրսևորեն թեմատիկ ու տարածական բաշխման այն օրինաչափությունները, որոնք առկա է ՀՀ և Արցախի տարածքների ժայռապատկերների դեպքում:

Հնդեվրոպական նախահայրենիքի լեզվաբանորեն տեղորոշումը և արտալեզվական մի շարք փաստեր՝ Հայկական լեռնաշխարհից վաղ բրոնզեդարյան մշակույթի պայթունածև տարածման հնարավորության բացահայտումը, տոմարագիտական ու ժայռապատկերաբանական հետազոտությունները, օրինակ, աստղային, լուսնային և արեգակնային օրացույցների ծագման տեղի ու ժամանակի պարզաբանումը, ժայռապատկերների թեմատիկ և տարածական բաշխման ուրվագծումը և այլն, վկայում են հայ ժողովրդի, նրա մշակույթի և պետականության կարևոր դերը Հին Աշխարհի քաղաքակրթության ոլորտում, առավել հաստատելով հայ էթնոսի տեղաբնիկ լինելը և Հայկական լեռնաշխարհից էթնոմշակութային հզոր ալիքների տարածումը հարակից շրջաններ և ավելի հեռու:

Հետևաբար, Հայաստանը ժայռապատկերման օջախ է, և բնականաբար՝ այստեղ են նաև ժայռապատկերաբանության ակունքները:

ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

ՀԱՅԱՍԱ-ԱԶԶԻԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Խեթական սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից երևում է, որ դեռևս մ.թ.ա. XIV դարում, գուցե և ավելի վաղ շրջանում, Հայկական լեռնաշխարհի արևմտյան կողմում կազմակերպվում է մի պետական միավոր՝ թագավորություն, որին խեթերը անվանում էին Հայասա (խեթ. KUR URUïajaša) կամ Ազզի (խեթ. KUR URUAz(z)i): Պատմագիտության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել Հայասա-Ազզիի տեղադրության մասին: Օտար հետազոտողներից Ա. Գյոտցեն 1927թ. իր հոդվածներից մեկում Հայասա-Ազզին տեղորոշել է Տրապիզոնից հարավ-արևելք ընկած Պոնտոսի մերձափնյա շրջանում[1], իսկ այնուհետև այն տեղադրել Արևմտյան Եփրատի և Ճորոխի ավազաններում՝ մինչև Սև ծովի ափերը[2]: Է.Կավենյակը Հայասա-Ազզին տեղորոշել է Վերին Եփրատի ավազանում[3]: Դեռևս 1931թ. Է.Ֆոռերը կարծիք է հայտնել, որ Հայասա-Ազզին պետք է Բարձր Հայքում տեղադրվեր[4], ինչը ընդունվել է արևելագետների մեծ մասի կողմից: Հակառակ դրան հետազոտողների մյուս մասը գտնում էր, որ այն գտնվել է Սև ծովի հարավ-արևելյան ափերին, և հիմնական կռվանը նրանց համար Ազզիի Առիպսա քաղաքի տեղադրությունն էր, որը ըստ Սուրսիլիս II-ի տարեգրության՝ «գտնվում էր ծովի մեջ» (խեթ. URUA-ri-ip-ša-aš [ŠA(G) A.A]B.BA)[5]:

Ի. Դյակոնովը, որը համաձայն չէր Հայասան ներկայիս Երզնկայի և Էրզրումի շրջակայքում գտնված լինելու կարծիքի հետ, Ազզին տեղադրում էր Սև ծովի հարավ-արևելյան ափերին՝ տարածելով մինչև Փառնակիա, որի մոտ նա տեղորոշում էր Առիպսա քաղաքը, իսկ Հայասան՝ Ճորոխ գետի ավազանում[6]:

Հայասա-Ազզիի տեղադրության հարցը կարևորվում է, քանզի շատ պատմաբանների կողմից այն ընդունվում է որպես Հայք-Հայաստան

---

[1] Goetze A., Zur geographie des Hethiterreichs, "Kleinasiatische, Forschungen", 1927. Bd. 1, Hf. 1, s. 114:

[2] Goetze A., Klemasien, Munchen, 1957, (տե՛ս գրքի վերջում զետեղված քարտեզը):

[3] Cavaignac E. La place du Palâ et du Tumanna, "Revue Hittite et Asianique", 1936, t. 6, f. 22/23, p.174-175, նույնի՝ Le premier royaume d'Arménie, "Revue Hittite et Asiamque", 1934, f. 17, p.14.

[4] Forrer E. Hajasa-Azzi, "Caucasica", 1931, f. 9, s 1.

[5] Friedrich J., Hethitisches Elementarhuch II, Heidelberg, 1946, s. 3.

[6] Дьяконов И., Предыстория армянского народа. Ереван, 1968, стр. 81-84:

երկրի գոյության փաստ մ.թ.ա. II հազարամյակում: Սույն նույնացումը հանդիպել է առարկությունների և նույնիսկ մերժվել ընդհանրապես Հայասա-Ազզի երկրի կապը Հայաստանի հետ: Հայասա-Ազզիի պատմության հարցերը կարևոր տեղ են զբաղեցնում հատկապես հայ պատմագիտության մեջ:

Այսպես, Ա. Խաչատրյանը գտնում է, որ խեթերը Հայաստանի համար ունեին մի ընդհանուր անուն՝ Հայասա, որի աշխարհագրական դիրքը նա որոշում էր Կարինից Վան ընկած տարածքում, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում: Հայասա և Հայաստան բառերի նմանության հիման վրա, Ա.Խաչատրյանը փորձում էր հիմնավորել, թե արդեն գտնվել է Հայաստան անվան հնագույն ձևը[7] (այդ կարծիքին էին նաև Կ. Ռոթը[8], Պ.Կրեչմերը[9]):

Հայասայի պատմությանն է անդրադարձել Հ. Տաշյանը: Ըստ նրա, Հայասան Արևմտյան Հայաստանն էր կամ Հայաստանի լեռնամասը, որի տակ նա հավանաբար հասկանում էր Բարձր Հայքը: Հայասայի մասն էր կազմում Ազզին[10]: Ըստ հեղինակի, Իշուվան (Հ. Տաշյանը տալիս էր Շուվէ ձևով), Ալշեն (Առձնիքը) և Հայասան հայ ազգի հիմնական բնակեցման վայրերն են եղել[11]:

Անդրադառնալով Հայասա-Ազզիի թագավորության պատմությանը Հ. Մանանդյանը տվել է նաև նրա տեղադրությունը, ըստ որի այն տարածվում էր Վանա լճից արևմուտք և հյուսիս ընկած շրջաններում: Նա գտնում էր, որ Հայասայի հյուսիս-արևմտյան սահմանները հասնում էին մինչև Մնձուրի լեռները, իսկ արևելքում՝ մինչև Վանա լճի հյուսիս-արևելյան ափերը: Ըստ Հ.Մանանդյանի, Հայասան և Ազզին միևնույն երկրի տարբեր անուններն էին: Երկիրը Հայասա էր կոչվում իր մայրաքաղաքի անունով (Հայասա), որը Սարգոն II-ի արձանագրությունում հիշատակվում էր Ուայաիս ձևով (գտնվում էր Վանա լճի հյուսիսային ափին), իսկ Ազզի անունն ուներ էթնիկական ծագում և այն սկզբնապես կրում էր տեղի ժողովուրդը, որի անունով էլ

---

[7] Խաչատրյան Ա., Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 41-48:

[8] Roth K., Die Bedeutung des Armenischen, «Հանդէս ամսօրեայ», 1927, թիվ 11-12. էջ 741-750:

[9] Kretchmer P., Der Nationale Name der Armenier, «Հանդէս ամսօրեայ», 1933, թիվ 7-8, էջ 429–432 (տես հայերեն համառոտ թարգմանությունը):

[10] Տաշյան Հ., Հաթեր և Ուրարտեանք, Վիեննա, 1934, էջ 59-64:

[11] Տաշյան Հ., Թէ ինչպես կազմուցաւ հայ ազգը,«Հանդէս ամսօրեայ», 1934, թիվ 1-2, էջ 28-31:

հետագայում կոչվել է երկիրը: Հ. Մանանդյանը Ազգիի Առիպսա քաղաքը տեղորոշել է Վանա լճի ափին[12]:

Հայասայի տեղորոշման հարցին անդրադարձել է նաև Ն. Ադոնցը: Նա Հայասայի աշխարհագրական դիրքը որոշում էր Վերին Եփրատի հովտում: Նա նույնպես նշել է, որ Հայասա և Ազգի անունները հոմանիշ են և մեջբնդմեջ գործածվում են Մուրսիլիսի ժամանակագրության մեջ՝ նույն տարածքի իմաստով: Ըստ Ն. Ադոնցի, Հայասա-Ազգի երկիրը տեղակայվել է Դերսիմի շրջանում, Կումմախա-Կամախ քաղաքի հարավում: «Ծովի մեջտեղը գտնվող քաղաքը» (Առիպսա) համարել է Եփրատի ջրերից գոյացած ճահիճների մեջ գտվող մի բերդ: Ըստ հեղինակի, Եփրատի և Արաբկիրի միացման կետում ներկայումս գոյություն ունի Դենիզլու անունով բնակավայրը (թուրք. դենիզ-«ծով», դենիզ-լու-«ճահիճ»): Այստեղ էր նա տեղադրում Առիպսա քաղաքը[13]:

Ըստ Ե. Քասունու, Հայասան տարածվել է Արևմտյան Եփրատի ավազանից մինչև Վանա լիճ: Հայասայի արևմտյան մասում է գտնվել Ազգին, որը ենթակա էր Հայասային և ուներ իր թագավորը: Ազգին գտնվել էր Բարձր Հայքում և իր մեջ ընդգրկում էր ներկայիս Երզնկա քաղաքը և Արևմտյան Եփրատի վերնասրազուկը: Նա կարծիք է հայտնում, որ Ազգիի մայրաքաղաք կարող էր հանդիսանալ հետագայի Էրզրումի մոտ գտնվող Արծն քաղաքը: Ե. Քասունին, Մուրսիլիսի տարեգրության մեջ հիշատակված Առիպսան տեղորոշել է Վանա լճի ափին՝ Դատվանի կամ Խլաթի մոտ: Նա չի համաձայնվում այն հեղինակների հետ, որոնք Հայասայի Դուկկամա քաղաքը տեղադրում են Դատվանի մոտ: Նա այդ քաղաքը տեղորոշել է Մանազկերտի մոտ և հավանական է համարում, որ այն պետության մայրաքաղաքն էր[14]:

Հայասա-Ազգիի մասին հատուկ ուսումնասիրություն ունի նաև Գ. Ղափանցյանը: Իր աշխատության մեջ նա պատկերացում է տվել նաև այդ երկրի ընդգրկած տարածքի մասին: Գ. Ղափանցյանը համաձայն էր այն մտքի հետ, որ Հայասա-Ազգի երկիրը զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան շրջանները՝ Ճորոխ, Եփրատ և Արաքս գետերի վերին հոսանքի շրջանները, համընկնելով Փոքր Հայքի արևելյան և Բարձր Հայքի տարածքներին: Նա Հայասա-Ազգիի կենտրոն է համարել ներկայիս Կամախ, Երզնկա, Դերջան և Ապեր բնակավայրերի միջև ընկած տարածքը: Գ. Ղափանցյանը կարծում էր, որ Ազգին գրավել էր Հայասա-Ազգիի արևմտյան շրջանները, տարածվելով մինչև Գայլ գետի ավազանը և ավելի հարավ, իսկ Հայասան, հավանաբար, գրավում

---

[12] Манандян Я., Сообщения хеттских, ассирийских, урартийских и древне-армянских источников о Хайаса-Аззи, Труды. Т. 5. Ереван, 1984, стр. 489-563:

[13] Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 33-52:

[14] Քասունի Ե., Նախահայկական Հայաստան, Բեյրութ, 1950, էջ 76-107:

էր արևելյան շրջանները՝ Դարանաղին, Եկեղյացը, Դերջանը և Սպերը, հավանաբար՝ նաև Կարինի շրջանը: Գ. Ղափանցյանը գտնում էր, որ Առիպսան և Դուկկաման գտնվում էին Հայասա-Ազզիի արևելյան մասում՝ առավել անվտանգ ու հեռու խեթական հարձակումներից, Կարին-Էրզրումի մոտ գտնվող ճահճոտ վայրերում, կամ՝ ներկայիս Բերդակ բնակավայրի մոտ, կամ էլ՝ Էրզրումից 15 կմ հարավ–արևելք, որտեղ միջնադարում (VI դ.) հիշատակվել է Արաբիս գյուղը: Հեղինակը հնարավոր է համարել, որ այդ բնակավայրի տեղում ճահիճ է եղել[15]:

Լ. Բարսեղյանն անդրադարձել է Հայասա-Ազզիի տեղադրմանը, նրա ռազմա-քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմությանը: Նա ընդունել է, որ Հայասան և Ազզին թե՛ տարածքային, թե՛ քաղաքական առումով իրենցից ներկայացրել են միևնույն երկիրը: Հեղինակը Հայասայի կենտրոնը (համանուն Հայասա քաղաքը) տեղորոշել է Երզնկայի շրջանում՝ Խայիք կամ Խայեք գյուղի տեղում, որը գտնվել է Բաբերդից 40 կմ հարավ-արևմուտք: Իսկ Ազզին տարածվել է Մնձուրի լեռների ստորոտներից մինչև Տուժիկի լեռները: Այն գտնվել է Հայասայից հարավ՝ մինչև Իսուվայի սահմանները, որը Լ. Բարսեղյանը համարում է Հայասա-Ազզիի կազմի մեջ մտնող երկիր: Նա տեղադրում է Առիպսան Խարբերդից ոչ հեռու գտնվող Ծովք լճի ափին[16]:

Ըստ Ա. Երեմյանի, հայ ժողովրդի ձևավորման գործընթացում ամենահին և հիմնական օջակներից մեկը եղել է Հայասա-Ազզի ցեղային միությունը: Ս.Երեմյանը քաղաքային կենտրոն Թիլ–Հայասան (կամ՝ Թիլ–Խայասա) տեղադրել է հին հայկական Թիլ ավանի տեղում: Այս տեղորոշումը տալով, նա հանգել է այն եզրակացությանը, որ Հայասա երկրի կորիզը և նրա սկզբնական տարածքը եղել է հին հայկական եկեղյաց գավառը: Թիլ ավանը տեղադրվում էր Երզնկայի դաշտի կենտրոնում՝ Երիզա (Երզնկա) քաղաքից ոչ հեռու, որի տեղում գտնվել է Հայասա կամ Խայասա երկրի մյուս կենտրոնը՝ Ազզի քաղաքը[17]:

Հայասա-Ազզիի պատմությանն է անդրադարձել նաև Վ. Խաչատրյանը[18]: Նա իր ուսումնասիրությունների ամփոփումը տվել է «Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում» աշխատության մեջ: Վ. Խաչատրյանը նույնպես նշել է, որ Հայասան հաճախ հանդես է եկել Ազզի անվան փոխարեն: Հայասայի Առիպսա քաղաքը գտնվել է Ճորոխ գետի

---

[15] Капанцян Гр., Хайаса-колыбель армян, Ереван, 1947, стр. 58-64:

[16] Բարսեղյան Լ., Խայասա-Ազզիի ու նրա մի քանի բնակավայրերի տեղադրման հարցի շուրջը, ՊԲՀ, 1963, թիվ 3, էջ 307-313:

[17] Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, 1970, թիվ 2, էջ 27-56:

[18] Хачатрян В., Восточные провинции Хеттской империи. Ереван,1971, стр. 128-145:

միջին ավազանում՝ Սպերից մի փոքր դեպի հյուսիս-արևելք: Դուկկամա քաղաքը տեղադրվել է միջնադարի Ազորդ գավառում: Այս գավառի անվան մեջ, ըստ հեղինակի, պահպանվել է Ազզի երկրի անունը: Հայասա-Ազզին ընկած է եղել Ճորոխ գետի ավազանում՝ հյուսիսում ձգվելով մինչև Սև ծով: Նա Հայասա երկրի մեջ է տեղադրում նաև «Բարձր» կոչված նահանգը, որը նույնացնում է Բարձր Հայքի հետ: Հաջորդ երկիրը, որը նույնպես մտել է Հայասայի կազմի մեջ, դա Պախուվան է, որը գտնվել է Բյուրակնի լեռների արևմտյան հատվածում: Հայասայի կազմի մեջ է եղել նաև Իսուվան: Այն ընդգրկել է Արածանի գետի ստորին ավազանը: Տարածաշրջանի հաջորդ վարչաքաղաքական միավորը, որը Վ. Խաչատրյանը ներառում է Հայասայի կազմում, դա Օուխման է (վերին Եփրատ և Արածանի գետերի միջև՝ Բյուրակնի լեռների արևելյան հատվածում): Վ. Խաչատրյանը շեշտում է, որ Հայասա թագավորության սահմանները հաճախ չեն ընդգրկել նշված բոլոր նահանգները, որոնցից մի քանիսը մերթընդմերթ նվաճվել են խեթական թագավորների կողմից և մտցվել խեթական պետության կազմի մեջ[19]:

Բացի նշված գիտնականներից, Հայասա-Ազզիին Հայկական լեռնաշխարհի հյուսիս արևմտյան մասում տեղադրելու տեսակետի հետ համաձայն է նաև Ա. Քոսյանը[20]: Սակայն, ի տարբերություն հեղինակների մեծ մասի, նա Կումմախան համարում է որպես առանձին քաղաքական միավոր, որը չէր մտնում Հայասայի կազմի մեջ[21]:

Հ. Ավետիսյանը ևս նշում է, որ Հայասա-Ազզի պետական միավորը գտնվել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում: Նա Հայասայի վիճահարույց Առիպսա քաղաքը հնարավոր է համարում տեղադրել Եփրատի կղզիներից մեկի վրա՝ Անի-Կամախ չհասած[22]:

Այսպիսով, ընդհանրացնելով խնդրո առարկա թեմային նվիրված հայ և օտար պատմաբանների տեսակետները, մենք փորձեցինք ներկայացնել գիտության մեջ եղած տարբեր կարծիքները, որոնք, ըստ պատմա-աշխարհագրական բովանդակության, կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

---

[19] Խաչատրյան Վ., Հայաստանը մ. թ. ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 34-38:
[20] Քոսյան Ա., Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 166, 189:
[21] Քոսյան Ա., Անի-Կամախը խեթական դարաշրջանում, ՊԲՀ, 2002, թիվ 3, էջ 225-241:
[22] Ավետիսյան Հ., Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը: Ս.թ.ա. XVII – IX դդ., Երևան, 2002, էջ 44, 81, 106:

ա) Հայասա-Ազզին գտնվել է Սև ծովի հարավ-արևելյան ափերին[23],

բ) Հայասա-Ազզին գտնվել է Բարձր Հայքի և Փոքր Հայքի սահմաններում՝ ընդգրկելով համեմատաբար փոքր տարածք[24],

գ) Հայասա-Ազզին գտնվել է Վանա լճից հյուսիս և արևմուտք և ընդգրկել Արևմտյան Հայաստանի տարածքի մեծ մասը,

դ) Հայասա-Ազզին ընդգրկել է Հայկական լեռնաշխարհի մեծ մասը և նույնացվում է Հայք-Հայաստան երկրի հետ[25]:

Վերլուծելով թեմայում քննարկվող հիմնահարցի վերբերյալ մասնագետների կարծիքները՝ կարելի է եզրակացնել, որ Հայասա-Ազզին գտնվել է Հայկական լեռնաշխարհում և արևմուտքից սահմանակից է եղել Խեթական տերությանը: Պատմաբանների մեծ մասը գտնում է, որ Հայասա-Ազզին գտնվել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան կողմում՝ կենտրոն ունենալով հիմնականում Բարձր Հայքի տարածքը: Սակայն ակնհայտ է նաև, որ Հայասա-Ազզիի տարածքի մասին խեթական սկզբնաղբյուրներում տվյալներ կան այնքանով, որքանով որ խեթերը կարողացել են ներթափանցել Հայկական լեռնաշխարհ: Հեղինակների մեծ մասն առավել հստակ նկարագրել է Հայասա-Ազզիի հատկապես արևմտյան սահմանները, որոնք անցնում էին հիմնականում պատմական Փոքր Հայքի կամ Բարձր Հայքի տարածքով, որտեղ Հայասա-Ազզին սահմանակցում էր Խաթթիի հետ, իսկ Արևելապոնտական լեռներով՝ Կասկա ցեղերի հետ:

Արդյո՞ք Հայասա-Ազզին ընդգրկել է Հայկական լեռնաշխարհի մեծ մասը, թե միայն գտնվել է Բարձր Հայքի տարածքում: Այդ հարցի լուծմանը կարող է զգալիորեն նպաստել հնագիտական նյութը խեթական սեպագիր աղբյուրների տվյալների հետ շաղկապելը: Հայկական լեռնաշխարհի ուշբրոնզեդարյան հնագիտական վայրերի ժամանակագրական ընդհանուր շղթայի մեջ նյութական ընդհանրությունների առկայության դիտարկումը հնարավորություն կընձեռի պատկերացում կազմել Հայասա-Ազզիի ընդգրկած մշակութային արեալի մասին:

---

[23] Cornelius Fr. Zur hethitischen Geographie: die Nachbarn des Hethiterreiches, "Revue Hittite et Asianique". 1958, t.16, f. 62, s. 1-12.

[24] Առաքելյան Բ., Ջահուկյան Գ., Սարգսյան Գ., Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988, էջ 7, 51, 52, 58:

[25] Ժամկոչյան Հ., Հայաստանը նախնադարյան-համայնական հասարակության և ստրկատիրության շրջանում, Պրակ 1. Երևան, էջ 108-115:

А II 88851

ՍՈՒՐԵՆ ՄԱՐՏԻԿՅԱՆ
(ՌԻ)

ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ՝ ՀԱՅՈՑ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽԻՉ

V դարը հայոց պատմության բեկումնային ժամանակաշրջաններից էր, երբ աննախադեպ զարգացման հասան հայոց գիտական միտքը, հասարակական ու մշակույթային կյանքը: Այդ հորձանքից դուրս չմնաց մինչ այդ էլ բարձր մակարդակի հասած հայոց ռազմարվեստը:

Մի շարք օբյեկտիվ պատճառներով ոչ միայն V դարի, այլև առհասարակ հայոց ամբողջ ռազմատեսական մտքի վերլուծության հարցն առայժմ պատմաբանների ուշադրությանը չի արժանացրել: Առանձին, սակայն ակնհայտ անբավարար, ուսումնասիրվել են միայն ռազմարվեստի զարգացման հիմնահարցերը և ստիպված ենք արձանագրել, որ այդ գործում ևս զգալի բացեր կան: Մինչդեռ բավարար նյութ կա, որը կարող է մեզ օգնել նորովի լուսաբանել հայոց պատմության ուսանելի էջերից մեկը հանդիսացող V դ.: Այն սկսվեց 428 թ. պետականության կորստով, որին հաջորդեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարի երկու գագաթները՝ 450-451թթ. Վարդանանց և 481-484թթ. Վահանանց պատերազմները:

Դժվար չէ նկատել, որ V դ. պատերազմներով առանձնապես «հարուստ» չէր, հետևաբար կասկածից վեր է, որ զարգացած մարտավարությունը հիմնված պետք է լիներ ավելի վաղ անցյալի փորձի վրա: Սակայն մեր խնդիրը հայոց մարտավարության ակունքների բացահայտումը չէ, այլ V դ. վերջին քառորդում նրա կրած փոփոխությունների վերլուծությունը:

Տարօրինակ կարող է թվալ, բայց հայոց մարտավարության հիմնական տարրերի փոփոխումը և հետագա մոտ 1500 տարիների ընթացքում նրանց զարգացմամբ պայմանավորած դարաշրջանն ու մասնավորապես Վահան Մամիկոնյանի գործունեությունն առայժմ արժանի գնահատական չեն ստացել[1]: Դա մասամբ բացատրվում է

---

[1] Հայոց ռազմարվեստի պատմության մեջ Վահան Մամիկոնյանի բարեփոխումների ունեցած նշանակության մասին չի խոսվում նույնիսկ Ս.Վ. Սարգսյանի աշխատությունում (տե՛ս. Ս.Վ. Սարգսյան, Հայ ռազմական արվեստի պատմությունից, Ե., 1969, էջ 201-210), թեև հեղինակը մանրամասն նկարագրում է պարսիկների հետ ապստամբների մարտավարության բազմաթիվ կարևոր հարցեր: Նույն պատկերն է նաև ՀՀ Զինված Ուժերի սպաների և ենթասպաների հասարակական-պետական պատրաստվածության համար ձեռնարկում: Տե՛ս, Հայրենիք և ծառայություն, Ե., 2001, էջ 126-137:

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

նրանով, որ տաղանդավոր զորավարի և ռազմարվեստի բարեփոխիչի անձը կարծես մնացել է հորեղբոր՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանի, իսկ նրա վարած ճակատամարտերը՝ Ավարայրի ստվերում: Խնդիրն այն է, որ եթե Վարդանանց պատերազմը մանրամասն ուսումնասիրվել է, նրա հերոսներին նվիրվել են ոչ միայն պատմագիտական աշխատություններ, այլև՝ վեպեր ու պոեմներ, հայոց եկեղեցին զոհերի հիշատակը հավերժացնող տոն է հաստատել, որով այն մարդկանց հիշողության մեջ հատուկ փայլ է ստացել, ապա 481-484թթ. ապստամբությունը չի արժանացել նման մեծարանքի[2]: Ավելին՝ սպարապետ Վահան Մամիկոնյանն ավելի հաճախ գնահատվել է որպես քաղաքական գործիչ, քան՝ զորավար: Արդյունքում հայոց ազատագրական պայքարի մարտավարության պատմության ուսումնասիրությունը մնացել է թերի: Մինչդեռ նրա գործունեության վերլուծությունը կարող է հայոց ռազմարվեստի զարգացման պատմության բազմաթիվ հարցերի պատասխաններ տալ: Բավական է նշել, որ Վահան Մամիկոնյանը հայոց ռազմարվեստի պատմության մեջ առաջինը կիրառեց ապստամբական մարտավարություն[3]:

Այս մարտավարությանը բնորոշ տարրեր հայոց ռազմարվեստում միշտ էլ կիրառվել էին: Դարերով ձևավորվել էին զինված պայքարի սկզբունքներ, որոնք մի շարք ընդհանրություններ ունեին ապստամբական մարտավարության հետ: Եվ դա բնական էր: Լեռներին բնորոշ կտրտված տեղանքը, կլիմայի ուղղաձիգ գոտիականությունը, զինագործության զարգացման համար վճռական նշանակություն ունեցող օգտակար հանածոների բազմազանությունն ու, վերջապես, հզոր հեծելազոր ունենալու համար կարևոր զարգացած ձիաբուծությունը[4] չէին կարող ազդեցություն չունենալ հայոց ռազմարվեստի վրա:

Այսպիսով ապստամբական մարտավարության տարրերը խորթ չէին հայոց ռազմարվեստին ու դրանց կիրառման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել: Սակայն մինչ Վահան Մամիկոնյանը այս մարտավարությունը գերիշխող չի եղել: Հատկանշական է, որ մինչև 480-

---

[2] Այս մասին տե՛ս. Կ.Ն. Յուզբաշյան, Հայ-վրացական ապստամբությունը Սասանյան իշխանության դեմ (482-484թթ.), «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1985, թիվ 1, էջ 46-63: В.Н. Хачатрян, Вопросы военного искусства в книге Егише "О Вардане и войне армянской", «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1992, թիվ 1, էջ 126-139.

[3] Ապստամբական մարտավարության էության, նրա տարրերի ու պայքարի բնույթի մասին, տե՛ս. Е.А. Разин, История военного искусства, Т. I. М., 1955. стр. 351-358.

[4] В.Б. Ковалевская. Конь и всадник. М., 1977. стр. 65-66.

ական թվականները ապստամբական մարտավարությունը չէր կիրառվել ոչ միայն պատերազմների, այլև ապստամբությունների ժամանակ:

Այս տեսակետը հիմնավորող օրինակները ևս բազմաթիվ են: Բավական է հիշել տարբեր պատմական դարաշրջաններում տեղի ունեցած ազատագրական պատերազմների երկու դրվագ՝ մ.թ.ա. 521-520թթ. և մ.թ. 450-451թթ. ապստամբությունները և ամեն ինչ պարզ կլինի: Ինչպես հայտնի է առաջինում ապստամբած հայերը ոչ միայն հաջող պաշտպանվում էին, այլև համարձակորեն դուրս եկան լեռնաշխարհի սահմաններից ու մարտական գործողությունները տեղափոխեցին Ասորեստանի տարածքը (Իզալայի ճակատամարտ)[5]:

Երկրորդում՝ 450թ. ամռանը ապստամբ ուժերը բաժանվեցին երեք մասի: Սպարապետ Վարդան Մամիկոնյանը, ուժերի ընդամենը մեկ երրորդի գլուխն անցած, շարժվեց ապստամբ աղվաններին օգնության և պարսիկներից առնվազն 1.5-2 անգամ փոքրաթիվ բանակով Խաղխաղի մոտ ջախջախեց նրանց գլխավոր ուժերին[6]: Հատկանշական է, որ ապստամբական մարտավարության կիրառման մասին խոսք անգամ լինել չի կարող ոչ միայն այն պատճառով, որ փոքրաթիվ ուժերը համարձակվել էին բաց դաշտում հզոր հակառակորդին ճակատամարտ տալ, այլև այն պատճառով, որ սպարապետը մարտական գործողությունները տեղափոխել էր Կուրի հովտի հարթավայրային շրջանները, մի այնպիսի տեղանք, որը լեռներին սովոր հայոց մարտավարությանը հիմնականում անծանոթ էր: Պակաս կարևոր չէ և այն հանգամանքը, որ հոների հետ ռազմական դաշինք ձևավորել ձգտող հայոց սպարապետը մարտից հետո շարունակեց առաջխաղացումը և վտանգի տակ դնելով իր զորքերի առանց այն էլ անկայուն թիկունքը՝ հասավ Ալանաց դուռ: Հատկանշական է, որ Ավարայրում ևս, չնայած փոքրաթիվությանը, հայկական կողմը նախընտրեց բաց դաշտում թշնամու հիմնական ուժերի հետ վճռական ճակատամարտը և չդիմեց հակառակորդին հյուծելու, ժամանակ շահելու, նահանջի կամ խուսանավող այլ քայլի:

Այսպիսով կարող ենք արձանագրել, որ առնվազն մինչև 480-ական թվականների սկիզբը հայոց ռազմարվեստին բնորոշ չէր ապստամբական մարտավարությունը ոչ միայն մեծ պատերազմների վարման, այլ նույնիսկ՝ ապստամբությունների ժամանակ:

Վահան Մամիկոնյանը գիտակցաբար հրաժարվեց հակառակորդի հետ ճակատային բախումներից ու ընտրեց մարտավարության ապստամբական ձևերը: Կարևոր տեղ էր տրվում պայքարի ընթացքի նախապատրաստման ու հետևանքների վերլուծության հարցերի

---

[5] Ս.Վ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 36-47:

[6] Ս. Մարտիկյան, Խաղխաղի ճակատամարտի նշանակությունը ռազմարվեստի պատմության մեջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XIX, Ե., 2000, էջ 184:

վերանայմանը: Դրա պատճառն այն էր, որ, ինչպես և պետք էր սպասել, ապստամբների շարքերում կային զենքին վատ տիրապետող և բողոքի ալիքի վրա պայքարի մեջ մտած մարդիկ, որոնց գործողությունները տարբերվում էին ռազմարվեստի ավանդական կանոններով մարտնչող բանակի մարտավարությունից: Հետևաբար պետք էր հրաժարվել ժամանակի պահանջներին արդեն չհամապատասխանող մի շարք մարտավարական հնարքներից, ի դեպ՝ նաև նրանցից, որոնք նախկինում հաջողությամբ էին կիրառվել:

Պետության կողմից ղեկավարվող և նրա շահերը պաշտպանող կանոնավոր բանակի բացակայությունը ստիպում էր մշակել սպառազինման ու հանդերձավորման նոր կարգ: Այս պայմաններում պատահական չէր, որ, հրաժարվելով ռազմական հիմնական բազան երկրի կենտրոնական շրջաններում ստեղծելու սկզբունքից, ռազմավարական բազայի է վերածվել անմատչելի Տայքը:

Առաջին իսկ Ակոռի ճակատամարտը վկայեց, որ որակական զարգացում էին ապրել արագ փոփոխվող մարտավարական իրավիճակի գնահատման ու մարտակարգերի կառուցման սկզբունքները: Ապստամբները հակառակորդին ընդառաջ էին գնացել Երասխն անցնելիս նրա վրա հարձակվելու մտադրությամբ և, քանի որ չհասցրեցին գետանցմանը խոչընդոտել, նահանջեցին այնքան, մինչև որ հետապնդող պարսիկները հայտնվեցին Մասիսի փեշերին, և նրանց վրա գրոհեցին վերևից:

Կարևորագույն նշանակություն ստացավ տեղանքը՝ որպես մարտական իրավիճակի տարր: Բաց ճակատային բախումներից խուսափելով՝ մարտը սկսվում էր մեծաթիվ ուժերին բացազատման հնարավորություն չտվող նեղ կամ կտրտված տեղանքում հակառակորդից բարձր դիրք զբաղեցնելուց ու նահանջի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելուց հետո: Օրինակ՝ Ակոռում նպաստավոր էին ոչ միայն տեղանքի թեքությունը, այլև՝ շրջակա ձորակները: Պատահական չէ, որ պարսիկների կողմն անցած ու Կատշաց զորամասով շրջանցում իրականացնող Գարջոյլ մաղխազը չհասցրեց ժամանակին ավարտել զորաշարժը: Շրջանցող ուժերը մարտադաշտ հասան պարսիկների գլխավոր ուժերի պարտությունից հետո: Նույն ձգտումն ենք տեսնում նաև Ներսեհապատի ճակատամարտում, երբ մարտի մտահղացումը հանգում էր պարսիկներին դեպի փոքր լանջակողմը տանելուն ու այնտեղ նրանց ջախջախելուն:

Ապստամբության ընթացքում այս սկզբունքից նահանջի միայն մեկ օրինակ ենք տեսնում՝ Ճարմանայի ճակատամարտը, այն էլ ավարտվեց հայ-վրացական ուժերի պարտությամբ: Ի դեպ, շեշտենք, որ հիմքեր կան կարծելու, թե Ճարմանայում ևս Վահան Մամիկոնյանը փորձել է օգտագործել տեղանքը: Մասնավորապես Փարպեցին նշում է, որ եթե ոչ ամբողջ բանակը, ապա առնվազն սպարապետի անմիջական

ենթակայության տակ գործող կենտրոնի զորաթևը նպատակ է ունեցել մարտն աստիճանաբար տեղափոխել դեպի Կուրի քարքարոտ գետափը և այնտեղ հակառակորդին ջախջախել[7]:

Մեծացվեց հակառակորդի համար անսպասելի վայրերում հանկարծակի հարձակումների նշանակությունը: Օրինակ, Փարպեցին վկայում է, որ Վահան Մամիկոնյանը զորքը Դվինից մինչև Ներսեհապատ տարել է միայն գիշերային ռազմերթով ու առավոտյան հարձակվել պարսկական բանակի վրա[8]: Կամ՝ Դվինի պատերի տակ մարտակարգով շարված պարսկական բանակի պաշարման օղակն անսպասելի գրոհով՝ ճեղքելով՝ ապստամբները կարողացել են դուրս գալ քաղաքից ու հեռանալ դեպի Խաղտիք[10]:

Վահան Մամիկոնյանը մեծ ուշադրություն դարձրեց նահանջի, հակառակորդի հետ առճակատումից խուսափելու և մի շարք այլ հարցերի նոր մեկնաբանմանը: Դրա դասական օրինակ դարձավ նրա գործունեությունը Տայքի անտառապատ դժվարամատչելի լեռներում:

Կարող ենք արձանագրել, որ մարտին հաջորդող նահանջն ինքնուրույն մարտական գործողության էր վերածվում, որը ևս նորություն էր հայոց ռազմարվեստում: Օրինակ՝ Երիզայի մոտ պարսկական բանակի ճամբարի վրա գիշերային հարձակումից հետո նահանջող ապստամբներին հետապնդելու ուղարկված զորամասերի հետ տեղի ունեցած մարտն ու հետապնդումից ազատվելու դժվարին մարտական գործունեությունը շարունակվում էր երկու օր և երեք գիշեր:

Լայն տարածում ստացան հատկապես գիշերային մարտերը, որոնց օրինակներ ենք տեսնում Տայքում ծավալված մարտերի նկարագրության ժամանակ: Փարպեցին ներկայացնում է գիշերային մարտավարության բավականին հետաքրքրական մի տարբերակ: Ըստ նրա, ապստամբները պարսիկների հետ մերձամարտի չէին բռնվում և, նրանց նետահարելով, նահանջում էին[11]: Հիմնականում գիշերային մարտերի լայնորեն կիրառումով է բացատրվում այն փաստը, որ Վահան Մամիկոնյանին ժողովուրդը հիշում է որպես «Գայլ Վահան»:

Քանի որ այս կարգի գործողություններն անընդհատ լարվածության մեջ էին պահում հակառակորդին, պետք է կարծել, որ դրանք ունեին նաև բարոյահոգեբանական նշանակություն: Այդ մասին Փարպեցին ակնարկում է Երիզայի մոտ տեղի ունեցած գիշերային մարտի նկարագրության ժամանակ, երբ նշում է, թե մարտից հետո իրականացված վերոհիշյալ հետապնդման ընթացքում տեղի ունեցած

---

[7] Ղազար Փարպեցի, Պատմութիւն հայոց, Ե., 1982, Գ., ՀԴ, էջ 326:
[8] Նույն տեղում, Գ., ՀԱ, էջ 312:
[9] Նույն տեղում, Գ., ՀԸ, էջ 350:
[10] Նույն տեղում, Գ., ՀԹ, էջ 352:
[11] Նույն տեղում, Գ., ՁԲ, էջ 364-366:

բախման ժամանակ զոհված Գդիհոն Սյունու զորամասը «քայքայվեց» ու, լքելով մարզպան Շապուհին, վերադարձավ Սյունիք[12]:

Ճիշտ էր օգտագործվում ծմռանը մարտական գործողություններ վարելուց խուսափելու պարսիկների ձգտումը: Մասնավորապես, երբ հերթական պարտությունից հետո կամ ձմեռելու նպատակով պարսիկները հեռանում էին Հայաստանից, ապստամբներն արագորեն վերահաստատվում էին Դվինում:

Սակայն պետք է հատուկ շեշտել, որ ապստամաբական մարտավարության յուրացումը չէր նշանակում մերժել անցյալի ամբողջ ժառանգությունը: Սասնավորապես բնութագրական է, որ պահպանվել է ճակատամարտից առաջ բանակի հրամանատարի կողմից զորաթևերի հրամկազմ նշանակելու նախկինում տարածում ստացած կարգը: Ճակատամարտերի նկարագրություններում տեսնում ենք մարտից առաջ զորաթևերի հրամանատարների տեղակալի տեղակալ (կամ տեղակալի տեղակալներ) նշանակելու սովորության ապացույցներ:

Առաջին հայացքից պարզ տրամաբանական քայլի ետևում թաքնված է ոչ միայն այս ապսամբության, այլև հայոց բանակի վարած այլ պատերազմների նկարագրություններում պատմիչների կողմից վեր հանվող և բանակաշինության պատմության համար մեծ նշանակություն ունեցող մարտի ընթացքում զոհված հրամանատարին փոխարինելու կարգը, որը, ցավոք, նույնպես առայժմ ուսումնասիրված չէ: Խոսքն այն մասին է, որ զորավարը նախքան մարտը սկսելը ինչպես իրեն, այնպես էլ զորաթևերի հրամանատարներին փոխարինելու համար նշանակում էր ոչ թե մեկ, այլ միանգամից մի քանի տեղակալ: Ընդ որում այս համակարգը հայոց մարտավարության մեջ այն աստիճան էր հիմնավորված և այնքան խորը պատմական արմատներ ուներ, որ պատմիչները հնագույն ժամանակների ճակատամարտերը նկարագրելիս էլ խոսել են դրա մասին[13]:

Այս կապակցությամբ դիմենք համաշխարհային ռազմարվեստում եզակի՝ Ակոռի ճակատամարտի Ղազար Փարպեցու նկարագրությանը: Կրկին ստիպված ենք նշել, որ հայոց ռազմատեսական մտքի զարգացման բարձր մակարդակի վկայություն հանդիսացող ճակատամարտն առայժմ պատմաբանների ուշադրությանն ավելի շատ արժանացել է մարտից առաջ Կռվակք գյուղում Վասակ Մամիկոնյանի իրականացրած հետախուզության ու նրա ռազմական խորամանկության, քան բուն մարտի մտահղացման ու մարտակարգի պատճառով:

Խոսքն այն մասին է, որ պատմիչն ընդամենը 400 հոգանոց հայոց զորամասի մարտակարգը նկարագրելիս ևս հետևում է ընդունված

---

[12] Նույն տեղում, Գ., ՃԴ, էջ 372:

[13] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1940, ԺԱ, էջ 23-24:

կարգին ու զորաթևերի հրամանատարների կողքին չի զլանում նշել նրանց տեղակալներին: Հատկանշական է, որ ոչ միայն բանակ, այլ զորամաս կոչվելու համար փոքրաթիվ այս ուժերի մարտակարգը նկարագրելիս նշվում է ռեզերվ առանձնացնելու մասին: Ի դեպ, կարևոր է, որ հավանաբար ընդամենը մի քանի տասնյակ մարդուց բաղկացած ռեզերվի հրամկազմում ևս հիշվում է ոչ թե մեկ, այլ՝ երկու անուն[14]:

Այսպիսով, անկախ ճակատամարտի մեծությունից և ռազմավարական առումով կարևորությունից, հայոց ռազմարվեստում ընդունված սկզբունք էր նախքան մարտը սկսելը հրամանատարների երկու կամ ավելի տեղակալներ նշանակելու կարգը:

Հարցն այնքան առանցքային նշանակություն չէր ունենա, եթե չլիներ մարտավարության՝ համաշխարհային փոծի վերլուծության համար կարևոր հետևյալ ուշագրավ փաստը: Մինչև V դարը ոչ մի երկրում, երբեք նախքան մարտի սկսվելը ենթակայի երկու տեղակալներ նշանակելու կարգ չի եղել: Համոզիչ լինելու համար հիշենք թեկուզ հույն պատմիչ Արիանոս Փլաբիոսի կողմից Ալեքսանդր Մակեդոնացու Արևելյան կամ Պարսկական արշավանքի նկարագրությունը[15]: Պատմիչն ամենայն մանրամասնություններով ներկայացնում է Գավգամելայի ճակատամարտին (մ.թ.ա. 331թ.) մակեդոնական բանակի նախապատրաստվելն ու նրա ընթացքը: Մասնավորապես թվարկվում են ճակատամարտին մասնակցած մակեդոնական և նրանց դաշնակից զորքերի զորամասերի՝ ընդհանուր առմամբ մոտ երեք տասնյակ հրամանատարներ[16]: Դա եզակի դեպք է ոչ միայն հունա-հռոմեական, այլև համաշխարհային պատմագրության մեջ, սակայն, այդուհանդերձ, նույնիսկ ակնարկ չկա զորաթևերի հրամանատարների նշանակման վերը նշված համակարգը հիշեցնող կարգի գոյության մասին: Մեկ այլ ճակատամարտ նկարագրելիս Արիանոսը թվարկում է զորամասերի տասնչորս հրամանատարների, և կրկին պատկերը նույնն է[17]:

Այսօր գրեթե բոլոր պետությունների բանակներում կանոնադրական պարտադիր պահանջ դարձած այս մարտավարական սկզբունքը[18] Եվրոպայում սկսեց կիրառվել միայն XVIII դ., այն էլ հիմնականում պայմանավորված էր հրետանու արագածգության ու կրակային հզորության աճով:

---

[14] Ղազար Փարպեցի, նշվ. աշխ., Գ., ԿԹ, էջ 300:
[15] Е.А. Разин, там же, стр. 223.
[16] Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, Ե., 1987, III, 11-12, էջ 101-103:
[17] Նույն տեղում, I, 14, էջ 30-31:
[18] ՀՀ ԶՈՒ Մարտական կանոնադրություն, մաս II, Գումարտակ, վաշտ, Ե., 1999, էջ, 24-25: Боевой устав сухопутных войск ВС СССР, ч. II, М., 1990, стр. 45.

. Վերը նշվածը վկայում է, որ մինչև V դ. հայ զորավարներն ապստամբական մարտավարությանը բնորոշ առանձին հնարքներ կիրառել էին, սակայն դրանք երբեք գերիշխող չէին եղել: Անչափ կարևոր է շեշտել այն փաստը, որ Վահան Մամիկոնյանը մարտավարական նոր հնարքներ չկիրառեց: Նա ուղղակի ամբողջացրեց ու վերջնական տեսքի բերեց մեծաթիվ հակառակորդի հետ հակամարտության նոր մարտավարությունից բխող դրույթները և, դրանք կիրառելով, ցույց տվեց, որ պետականության կորստից հետո ստեղծված իրադրությունում դրանք այլընտրանք չունեն: Հատկանշական է, որ մարտավարության հիմնական տարրերի կտրուկ փոփոխումը և V դ. վերջին ստեղծված պայմաններին նրանց հարմարեցումը չէր ընթանում անցյալի ամբողջ փորձի մերժման ճանապարհով: Կարող ենք արձանագրել, որ որքան էլ բեկումնային և խորը լինեին փոփոխությունները, միևնույն է Վահան Մամիկոնյանի իրականացրած բարեփոխումը հայոց մարտավարության հետագա զարգացման արդյունք էր:

Փորձելով տալ հայոց ռազմարվեստի զարգացման գործում Վահան Մամիկոնյանի խաղացած դերի գնահատականը՝ կարող ենք նշել, որ նրա սպարապետության ընթացքում հայոց ռազմարվեստը յուրօրինակ հեղափոխական դարաշրջան մտավ: Վերջնական տեսքի եկավ ապստամբական մարտավարությունը, որն առանձին բացառություններով գրեթե մինչև XX դ. տիրապետող էր հայոց ռազմարվեստում:

ԿԱՐԻՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

ՀՈՎՀԱՆ ՄԱՅՐԱԳՈՄԵՑՈՒ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՓԱՍՏԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ԸՍՏ «NARRATIO DE REBUS ARMENIAE»-ի

Հովհան Մայրագոմեցին նշանավոր դեմք էր 7-րդ դարի հայ հոգևորականության մեջ: Նա աչքի էր ընկնում աստվածաբանական խորը գիտելիքներով, դավանաբանական նրբությունների հմտությամբ, լայն մտահորիզոնով և ուժեղ ոգով: Միջնադարյան հայ աստվածաբանական մտքի մեջ նրա ունեցած մեծ ներդրումի մասին են վկայում Մայրագոմեցու գրական ժառանգությունից մնացած 9 պատառիկները՝ պահպանված «Կնիք հաւատոյ» դավանաբանական ժողովածուի մեջ[1]:

Առանձնապես չանդրադառնալով Հովհան Մայրագոմեցու թե կյանքին, թե հոգևոր գործունեությանը և թե հատկապես նրա դավանաբանությանը, հարցեր, որոնք արդեն իսկ բավական ուսումնասիրվել են պատմագիտական մտքի կողմից[2], անմիջապես անցնենք մի շարք փաստերի լուսաբանմանը, որոնք մեզ տրամադրում է «Narratio de rebus Armeniae» քաղկեդոնական սկզբնաղբյուրը: Նախապես նշենք, որ շարադրվելիք այս փաստերից և ոչ մեկը միջնադարյան մեր պատմիչները չեն վկայում:

1/ Այսպես, համաձայն աղբյուրի, Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսը /613-628/ ցանկանում էր, որ իր մահից հետո հայոց հայրապետական աթոռը ժառանգի Հովհան Մայրագոմեցին: 628 թ. կաթողիկոսը վախճանվում է, սակայն նրա ցանկությունը չի իրագործվում, աթոռը ժառանգում է, ինչպես հայտնի է Քրիստափոր Ապահունին /628-630/ և կարճ ժամանակ անց կարգալույծ է արվում ըստ Սեբեոսի՝ իր գոռոզ և մեծամիտ բնավորության[3], իսկ ըստ Հովհաննես Դրասխանակերտցու,

---

1 «Կնիք Հաւատոյ Ընդհանուր սուրբ եկեղեցւոյ» հրատարակություն Կարապետ եպիկոպոսի, Ս. էջմիածին, 1914, էջ 52-55, 142, 146, 253-256, 281,288, 327-330, 363-364:

2 Նրա մասին տես արդեն նշված «Կնիք Հաւատոյ» առաջաբան, էջ XXVI-XXXII, LXXXIX-CVII: Կ. Տեր-Մկրտչյան, «Յովհան Մանդակունի և Յովհան Մայրագոմեցի», Շողակաթ, Վաղարշապատ, 1913, էջ 84-113: Գարեգին եպիսկոպոս «Պատմութիւն Յոհաննու Մայրագոմեցւոյ», Արարատ, 1917, էջ 735-749: Կ. Քիպարյան, Յոհան Մայրավանեցի /կոչված նաև Մայրագոմեցի/, «Բազմավեպ» Վենետիկ, 1963, էջ 234-235: Հ. Քենդերյան, Հովհան Մայրագոմեցի, Երևան, 1973 և այլն:

3 Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն, առաջաբանը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1939, գլուխ ԼԸ, էջ 98:

ընդհակառակը, հակառակորդների հորինած կեղծ բամբասանքների պատճառով[4]:

Համաձայն Narratio-ի, Մայրագոմեցին ուրախանում է, կարծելով. թե ինքը կնստի հայոց հայրապետական գահին, սակայն կաթողիկոս է ընտրվում Եզր Փառաժնակերտցին /630-640/: Անգամ վերջինիս մահից հետո, Մայրագոմեցին վերստին հույսեր էր փայփայում, թե «իշխանների օգնությամբ կստանա գահը» /Narratio/: Բայց հերթական անգամ ձախողվում են նրա ակնկալիքները, քանի որ կաթողիկոսական աթոռն անցնում է Ներսես 3-րդ Իշխանցուն /642-662/:

Զարմանալիորեն, միջնադարյան մեր պատմիչները չեն պատմում կաթողիկոս դառնալու Մայրագոմեցու շարունակական ձգտումների և հիասթափությունների մասին. փաստ, որ քանիցս շեշտվում է Narratio-ում:

Մի կողմից պատմականորեն վավերական ենթադրելով այս փաստը, մյուս կողմից չենք բացառում, որ քաղկեդոնիկ մեր հեղինակը, հիմնվելով Եզր Փառաժնակերտցու և Ներսես 3-րդ Իշխանցու հետ վարդապետի ունեցած դավանաբանական հակասությունների բավական հայտնի փաստի վրա, միգուցե Հովհան Մայրագոմեցուն թյուրիմացաբար վերագրել է կաթողիկոսական նկրտումներ՝ հիշյալ հակասությունները փորձելով բացատրել հատկապես այս տեսակետից:

2/ 633թ. Կարինի ժողովում հայոց եկեղեցին Եզր կաթողիկոսի գլխավորությամբ ընդունում է բյուգանդական եկեղեցու դավանությունը: Հաստատվում է երկու եկեղեցիների միաբանությունը: Սկսած Հովհաննես Դրասխանակերտցուց, հետագա պատմիչները ևս՝ Ստեփանոս Տարոնեցի, Վարդան Արևելցի, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օրբելյան, խստագույնս դատապարտում են Եզր Փառաժնակերտցու հարումը դավանաբանական այս միաբանությանը: Նրան, ինչպես նաև պատվիրակության մնացած անդամներին համարում են տգետներ, ս. Գրքին անհիրազեկ անձնավորություններ, Հերակլիոս կայսրից խաբված դավաճաններ. «... Իսկ Եզրի և իւրացոցն տգիտաբար իբր անծանօթ գրոց Աստուածայնոց ... դաւաճանեալ խաբեցան ընդ նոսա...»[5]:

Հիշյալ պատմիչները մեղադրում են կաթողիկոսին, որ նա ժողովին մասնակցելու համար իր հետ չէր տարել ժամանակի ամենագիտուն վարդապետներից մեկին՝ Հովհան Մայրագոմեցուն, որը

---

4 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 75-76:

5 Նույն տեղում, էջ 77-78:

«Յայնմ ժամանակի կատարեալ էր աստուածային գրոց գիտութեամբ»°, այլ «զոմն կիսակատար գիտութեամբ ընդ իւր առնոյր» :

«Narratio de rebus Armeniae»-ի վկայություններն այս հարցում միանգամայն տարբերվում են հայ ազգային պատմագրության տրամադրած փաստերից, նշելով, որ 633թ. Կարինի ժողովում Հովհան Մայրագոմեցու, ինչպես նաև երկու այլ եպիսկոպոսների՝ Սյունյաց Մաքուսաղայի և Գարդմանի եպիսկոպոս Ստեփանոսի բացակայությունը ոչ թե կաթողիկոսի նախաձեռնությամբ էր, այլ՝ վերջիններիս: Աղբյուրի շարադրանքում եզր Փառաժնակերտցին հիշեցնում է, որ իր կողմից երիցս արված հրավերին նրանք հրաժարվել են արձագանքել: Ի դեպ, միայն Ստեփանոս Օրբելյանն է իր Պատմության մեջ նշում, որ Մաքուսաղան կաթողիկոսի կողմից մի քանի անգամ հրավիրվել էր ժողովին մասնակցելու:

Մաքուսաղան մերժել էր մի շարք պատրվակներով, միաժամանակ, մասնակցության համար ուղարկել իր աշակերտ Թեոդորոսին[8]:

3/ Դավանաբանական այն ձեռնարկը, որը նախքան Կարինի ժողովի գումարումը բյուզանդական Հերակլիոս կայսեր կողմից տրամադրվեց հայոց կաթողիկոս եզր Փառաժնակերտցուն, համաձայն Սեբեոսի, գրված էր անձամբ կայսրի ձեռքով և նրա մեջ «...նզովեալ զՆեստոր և զամենայն հերձուածողս, բայց ոչ էր նզովեալ զժողովն Քաղկեդոնի»[9]: Հիշյալ ձեռնարկում Քաղկեդոնի ժողովի հիշատակության բացակայությունը փաստում են նաև Ստեփանոս Տարոնեցին [10] և Հովհաննես Դրասխանակերտցին[11]:

Այն հանգամանքը, որ կայսրի կողմից ուղարկված հավատո ձեռնարկի մեջ խոսք չկար Քաղկեդոնի մասին, ենթադրել է տալիս, թե հայոց կաթողիկոսին տրամադրված դավանաբանական ֆորմուլան իրենից ներկայացնում էր ոչ այլ ինչ, եթե ոչ միակամության դավանությունը, որում Քաղկեդոնը լռությամբ էր անցնում, կամ էլ իմիջայլոց էր հիշվում: Այն բովանդակում էր «մեկ կամք, մեկ ներգործություն» նոր բանաձևը, որի ներքո դյուրին էր «մեկ բնության» դավանությունը հասկանալ: Վ. Գրյումելի կարծիքով Կարինի ժողովում հայոց եզր կաթողիկոսին առաջարկված հավատո խոստովանությունը

---

[6] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, Պետերբուրգ, 1885, Բ հանդես, էջ 87:

[7] Նույն տեղում, հմմտ. «այլ զայլ ոմն զիւր քեռորդի՝ կիսակատար ուսմամբ», Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 77:

[8] Պատմութիւն նահանգին Սիսական Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի, Ղուկասեան մատենադարան, Թիֆլիս, 1910, գլուխ ԻԸ, էջ 112-119:

[9] Սեբեոս, գլուխ ԼԹ, էջ 102:

[10] Ստեփանոս Տարոնեցի, էջ 87:

[11] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 77:

Հերակլիոս կայսեր «էկթեսիսն»[12] էր: Գիտնականը նկատի ունի «էկթեսիսի» նախնական ծրագիրը, որը հրապարակվում է միայն 638թ.:

Narratio-ի հեղինակը փաստում է, թե Կարինի ժողովը գումարվեց հատկապես Քրիստոսի երկու բնությունների և Քաղկեդոնի ժողովի հարցի շուրջ: Ուղղվածությամբ քաղկեդոնիկ Narratio-ի համար այս պնդումը, մեր կարծիքով, ավելի քան բնական է: Սակայն Narratio-ն կարևորագույն և չափազանց հետաքրքիր լուսաբանում ունի այս խնդրի շուրջ: Հովհան Մայրագոմեցու հետ մի հանդիպման ընթացքում կաթողիկոսը, որպես հիմնավորում բյուզանդական եկեղեցու հետ դավանաբանական միաբանության իր վճռին, փաստում է Կարինի ժողովում իր և մյուսների կողմից քննության ենթարկված ս. հայրերի գրվածքների համաձայնությունը հայոց վարդապետների և ս. Գրքի վկայությունների հետ:

Narratio-ում առկա կարևորագույն այս հատվածը ցույց է տալիս, որ Կարինի ժողովի խորհրդակցություններում, որն ըստ Narratio-ի տևել է 30 օր, այսպես կոչված «հայրաբանական» փաստարկն ազդեցիկ գործոն էր: Ի դեպ, պատահական չէ, որ հենց այս ժամանակաշրջանում էր կազմվել «Կնիք հաւատոյ» ժողովածուն, որը գերազանցապես եկեղեցու հայրերի, ինչպես և հայ աստվածաբանների երկերից քաղված հատվածների եզակի մի հավաքածու է:

«Հայրաբանական» փաստարկի, որպես կարևոր գործոնի վավերականությունն այսպիսով ապացուցվում է նաև Narratio-ի տեսքով:

4/ Միջնադարյան մեր պատմիչները շարադրում են Հովհան Մայրագոմեցու և Եզր Փառաժնակերտցու հանդիպումը Կարինի ժողովից հետո, բանակռիվը նրանց միջև, Եզրի անվան շուրջ Մայրագոմեցու արտասանած դիպուկ խոսքերը, և ապա կաթողիկոսի կողմից հալածված վարդապետի առանձնությունը Նիգ գավառում, Բջնիի մոտ գտնվող Մայրոց վանքում, որը նրա ծննդավայրն էր: Համաձայն մեր պատմիչների, այս տեղանունը կաթողիկոսի կողմից վիրավորական ձևով փոխակերպվում է Մայրոց Գոմի, իսկ Մայրավանեցին՝ Մայրագոմեցու[13]: Նրանք ապա փաստում են վարդապետի մահը Գարդման գավառում[14]: Մինչդեռ քաղկեդոնիկ մեր աղբյուրը տրամադրում է հարուստ փաստեր Հովհան Մայրագոմեցու հետագա գործունեության մասին: Ըստ աղբյուրի,

---

[12] V. Grumel. Recherches sur l'histoire du monothelisme. "Echos d'Orient." t. 27/1928/, pp. 15-16.

[13] Հ. Քենդերյանն իր մենագրության մեջ հետաքրքիր մի լուսաբանում է տալիս այս տեղանվան շուրջ, ընդգծելով, որ լուսաբանման իրական հեղինակը բյուզանդագետ Հ. Բարթիկյանն է: Խոսքը վերաբերում է նրան, որ Մայրագոմը շատ է նման հունական «մետրոկոմե»-ին, որը թարգմանաբար նշանակում է «Մայրավան». «այն կարող էր թարգմանվել ինչպես Մայրավան, այնպես էլ Մայրագոմ, դույզն իսկ չափով չհիշեցնելով գոմի այսօրվա իմաստը», տես Հ. Քենդերյան, նշվ. աշխ., էջ 30:

[14] Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 79: Ստեփանոս Տարոնեցի, էջ 88:

Ներսես 3-րդ Մայեցու /642-662/ աթոռակալության շրջանում ևս Մայրագոմեցին շարունակում է իր հակառակությունը կաթողիկոսի հանդեպ, տեսնելով, որ նա համահաղորդակից է բյուզանդական եկեղեցու դավանությանը: Կաթողիկոսը, չհանդուրժելով Մայրագոմեցու հակառակությունը, եկեղեցական մի ժողով է գումարում, ուր մանրամասն քննության են ենթարկվում Մայրագոմեցու հակաճառության դրդապատճառները: Արդյունքում, նրան դատապարտում են աքսորի: Մայրագոմեցու, ինչպես նաև նրա կողմնակիցների ճակատին շիկացած երկաթով «աղվեսադրոշմ» են խարանում և աքսորում Կովկաս լեռը:

Անպատվաբեր այս պատիժը՝ «աղվեսադրոշմը», ի դեպ վկայված է արդեն Շահապիվանի ժողովի 19-րդ կանոնում[15], պատիժ, որ սահմանված էր հերետիկոսության համար:

Կ. Տեր-Մկրտչյանն այս առիթով կարծիք է հայտնել, թե անհնարին էր, որ Մայրագոմեցու պես վարկ ունեցող մի վարդապետի աղվեսադրոշմով պատժեին և «իբրև մի ամենագեղ աղանդավորի դուրս քշեին երկրից»[16]:

Համաձայն Narratio-ի, Կովկասում, չընդունվելով տեղի կռապաշտների կողմից, Անաստաս Ակոռեցու /662-667/68/ մահից հետո Մայրագոմեցին վերադառնում է Հայաստան և վախճանվում խոր ծերության մեջ: Այս տեսակետից շատ ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում վրաց կաթողիկոս Արսեն Սափարացին իր «Վրաց և հայոց բաժանման մասին» երկում[17]՝ պատմելով վարդապետի երկար տարիների դեգերումները Հայաստանի մի շարք նահանգներում և նրա քարոզչությանը:

Ինչպես տեսնում ենք, միջնադարյան մեր աղբյուրները անհիրազեկ են Մայրագոմեցու կյանքի այս վերջին շրջանին: Մեր պատմիչները նշում են, որ նա վախճանվել է Գարդմանում: Վարդան Արևելցին անգամ վկայում է, որ դեռևս 13-14-րդ դդ. Գարդմանում տակավին ցույց էին տալիս նրա գերեզմանը:

Մինչդեռ Narratio-ն վկայում է, թե նա վախճանվում է խոր ծերության մեջ, իր ծննդավայրում, Մայրոց վանքում:Արսեն Սափարացին անգամ նշում է նրա մահվան թվականը. դա հայոց ՃԼԳ /133/ թվականն է, որը համապատասխանում է 684թ.[18]:

Եթե Կոմիտաս Աղցեցու մահից հետո՝ 628թ. Հովհան Մայրագոմեցին հույս ուներ կաթողիկոս դառնալ, բնականաբար

---

[15] Ն. Ակինյան, Շահապիվանի ժողովի կանոները, Վիեննա, 1950, էջ 167:
[16] «Կնիք Հաւատոյ», ներածություն, էջ XCVI:
[17] Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ.1, Երևան, 1934: Արսեն Սափարացի, Վրաց և Հայոց բաժանման մասին, էջ 34-47:
[18] Արսեն Սափարացի, էջ 47:

գտնվելով հասուն տարիքում, ապա 684թ. նա պետք է, որ բավական զառամյալ լիներ[19]:

Մեր կարծիքով Հովհան Մայրագոմեցու կյանքի և գործունեության զանազան խնդիրների շուրջ շատ ավելի վստահելի են Narratio-ի տրամադրած փաստերը, քանի որ նրանք իրենց մանրամասնություններում ավելի հարուստ են տեղեկացված:

Այս փաստերից մի քանիսն այս կամ այն չափով առկա են նաև Արսեն Սափարացու երկում և «Փոտ առ Զաքարիա» թղթում[20]:

---

[19] Հ. Քենդերյանն իր աշխատության մեջ, մանրամասն քննության ենթարկելով Սափարացու երկի վերոհիշյալ տվյալը, անհնարին է համարում, որ 684թ. Մայրագոմեցին կենդանի լիներ, այս մասին տես հեղինակի նշվ. աշխ., էջ 30-35: Նրա կարծիքով Մայրագոմեցին վախճանվել է 647-652թթ., նույն տեղում, էջ 19:

[20] Թուղթ Փաւտայ պատրիարքի առ Զաքարիայ կաթողիկոս Հայոց Մեծաց: Православный палестинский сборник,Т. XI , СПБ., 1892, с. 179-210.

ԱՐՍԵՆ ԱԶԻԶՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՍԸՐ ՋՈՆ ՄԱՆԴԵՎԻԼԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԵՐԿՈՒՄ (XIV դ.) (Համառոտ ակնարկ)

Եվրոպայի միջնադարյան ուղեգրությունների շարքում առանձնահատուկ տեղ ունի Ջոն Մանդևիլի «Ճանապարհորդություններ»-ի գիրքը, որը ուշագրավ է իր բազում առասպելախառն տեղեկություններով:

14 դ. անգլիացի ճանապարհորդ և ուղեգիր Ջոն Մանդևիլի[1] մասին մեզ առայժմ հայտնի է միայն այն, ինչ նա պատմում է իր «Սըր Ջոն Մանդևիլի ճանապարհորդությունները» երկում:

Ըստ իր ուղեգրության մեջ առկա վկայության, Ջ. Մանդևիլն անգլիացի ասպետ էր: Նա ծնվել է Սուրբ Ալբանս քաղաքում[2]: Ուղեգրության հրատարակիչ Ս. Մոսլիի կարծիքով, նա հավանաբար էսսեքս կոմսության Բլէք Նոթլի քաղաքի Մանդևիլների տոհմից էր:[3] Չնայած այն փաստին, որ Ջ. Մանդևիլի կողմից իր մասին տված տեղեկություններն այլ աղբյուրներով չեն հաստատվել, սակայն դրանք կասկածի տակ դնելու պատճառ ևս չի հայտնաբերվել: Ջ. Մանդևիլի լեզուն (գիրքը սկզբից գրվել է հին ֆրանսերենով՝ Անգլիայի միջին դարերի գրական լեզվով) և գաղափարները լրիվ համապատասխանում են այդ ժամանակաշրջանին:[4] Վավերական է նաև այն, որ իր նշած ծննդավայրը՝ Անգլիայի Սուրբ Ալբանս քաղաքը նաև «Ճանապարհորդությունների» սկզբնավորման վայրն է:

Ջ. Մանդևիլը ճանապարհորդել է 1322-1356 թթ. (ըստ որոշ ձեռագրերի՝ 1332-1366) և երեսունչորս տարի անց է կացրել օտար երկրներում: Նա ճանապարհորդությունը սկսել է Անգլիայից և հասել մինչև Չինաստան ու Կորեա: Այդ ճանապարհին նա անցել է նաև Հայաստանով, հայերի հանդիպել Սուրբ Երկրում[5] և այլուր. «Շատ ժամանակ անց եմ կացրել օտար երկրներում և տեսել ու անցել եմ շատ արքայությունների, երկրների, գավառների և կղզիների միջով և անցել եմ Թուրքիայով, Փոքր և Մեծ Հայաստանով, Թաթարիայով, Պարսկաստանով, Սիրիայով, Արաբիայով, Վերին և Ներքին Եգիպտոսով, Լիբիայով, Քալդեայով, Եթովպիայի մի մեծ մասով,

---

[1] Նրա «անգլիացի» կամ նաև «ճանապարհորդ» լինելու փաստը նշելով մենք նույնպես հիմնվում ենք իր իսկ վերոհիշյալ աշխատության վրա:
[2] The Travels of Sir John Mandeville. Translated with an introduction by C.W.R.D. Moseley. Penguin Books, England, 1988, p. 44.
[3] The Travels of Sir John Mandeville, p. 10.
[4] Նույն տեղում, էջ 10-11:
[5] Նույն տեղում, էջ 44:

Ամազոնիայով, Մեծ և Փոքր Հնդկաստանի մի մեծ մասով և Հնդկաստանի կողքին գտնվող ևս շատ կղզիներով, որտեղ ապրում են շատ տարբեր մարդկանց տեսակներ, տարբեր սովորույթներով և արտաքիններով...»[6]:

Ջ. Մանդևիլի գիրքը գրվել է նույն տարում, երբ ավարտվել է իր ճանապարհորդությունը՝ 1356 թ.: «Ճանապարհորդությունները» թարգմանվել է եվրոպական շատ լեզուներով: 15-րդ դարի սկզբին արդեն կային անգլերեն, գերմաներեն, լատիներեն, հոլանդերեն, չեխերեն և այլ լեզուներով թարգմանություններ:

Պահպանվել են Ջ. Մանդևիլի շուրջ երեք հարյուր ձեռագիր տարբերակներ, մինչդեռ Մարկո Պոլոյի *"Milione"* գրքից՝ ընդամենը յոթանասուն:

14-17 դդ. Ջ. Մանդևիլի «Ճանապարհորդությունները», որպես Արևելքի մասին տեղեկությունների վստահելի աղբյուր, ընդգրկվել է նաև բազմաթիվ ժողովածուների և քարտեզագրքերի մեջ:

Այս ուղեգրությունն արժանացել է հետազոտողների ոչ միանշանակ գնահատականին: Այսպես Հեննինգը[7] և Բովենշենը[8] առհամարանքով են խոսում Ջ. Մանդևիլի մասին՝ նրա ուղեգրությունն անվանելով «մի խղճուկ սուտ»: Մյուս կողմից, ժամանակակից ուրիշ պատմաբաններ, ինչպես՝ Ջայլս Միլտոնը[9] և «Ճանապարհորդությունների» ժամանակակից հրատարակիչ Ա. Մոսլին, համոզված են որ Ջ. Մանդևիլն իրոք ճանապարհորդել է, առնվազն մինչև Սուրբ Երկիր և Եգիպտոս: Ռուս գիտնական Ս.Մ. Միրնին հայտնում է, որ Ջ. Մանդևիլն անգլիացի ասպետ էր, որը ծառայել է Եգիպտոսի սուլթանի մոտ[10]: Տարաձայնություն է առկա նաև հայագիտության մեջ. գիրքը որպես սկզբնաղբյուր չի ընդգրկվել Հովհաննես Հակոբյանի[11] կազմած «Ուղեգրությունների» առաջին հատորում, Մանվել Ջուլալյանն արդարացի վերապահությամբ է մոտեցել Ջ. Մանդևիլի հաղորդումներն իր աշխատության մեջ ներառելուն և օգտագործելուն[12]: Գոհար

---

[6] Նույն տեղում:

[7] Хеннинг Р., Неведомые земли. М., 1961, т. III, стр. 194.

[8] Նույն տեղում, էջ 199-200:

[9] Milton G.,"The Riddle and the Knrght: In Search of Sir John Mandeville, the World's Greatest Traveler, Farrar, Straus and Giroux. New York, 2001.

[10] С. М. Мирный. La Flor des Estoires de Terres d'Orient Гайтона как историко-географический источник по востоку и по истории монголов, «Советское Востоковедение», 1956, т. V, стр. 73.

[11] Հակոբյան Հ., Ուղեգրություններ, Հ. Ա, Երևան, 1932:

[12] Ջուլալյան Մ., Հայ ժողովրդի 13-18 դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Երևան, 1990, էջ 17:

Կարագյոզյանն[13] իր գրքում ավելի հանդուրժողաբար է մոտեցել Ջ. Մանդևիլի գրվածքներին:

Ջ. Մանդևիլի դեմ ուղղված փաստարկներից ամենատարածվածն այն է, որ նա իր «Ճանապարհորդությունները» գիրքը կազմելիս օգտվել է այլ Օդորիկոս Պորդենոնցու, Վիլհելմ ֆոն Բոլդենսելի և Հեթում Պատմիչի ուղեգրություններից[14]: Իրենց հերթին այլ ճանապարհորդներ ևս տեղեկություններ են քաղել Ջ. Մանդևիլից, ինչպես՝ Յոհաննես Շիլթբերգերը[15]:

Անկախ վերոհիշյալ հանգամանքներից, Ջ. Մանդևիլի գիրքը եվրոպացիների համար աշխարհի մասին տեղեկություններ հաղորդող աղբյուր էր: Ջ. Մանդևիլի «Ճանապարհորդությունները» այս կամ այն տարբերակով կարդացել և տեղեկություններ են քաղել Լեոնարդո դա Վինչիին, Արագոնի արքայազն Պետրոս III-ը, Քրիստափոր Կոլումբոսը և այլոք:

Ջ. Մանդևիլը Հայաստանի, ինչպես նաև շրջակա երկրների մասին բերում է բազմազան տեղեկություններ: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նրա հիշատակած տեղական առասպելները:

Նա գրում է. «Տրապիզոնից դեպի Մեծ Հայք ուղիղ ճանապարհը տանում է դեպի Արթիրոն[16] անունով մի քաղաք, որը նախկինում գեղեցիկ և հարուստ քաղաք էր, բայց թուրքերն այն ավերել են: Մոտակայքում խաղող և որևէ ուրիշ միրգ լավ չի աճում, քանի որ այդ երկիրը բարձր է և ցուրտ, սակայն շատ գետեր և աղբյուրներ կան, որոնք գետնի տակով հոսում են Եփրատից, որն այդ քաղաքից մի օրվա ճանապարհի տարածության վրա է: Այս Եփրատ գետը գետնի տակից դուրս է գալիս Հնդկաստանի կողմից և կրկին դուրս գալիս Ալազար երկրում: Մարդիկ Մեծ Հայքով անցնում են և գալիս Պարսից Ծով (Ocng - Ա.Ա.): Էրզրում քաղաքից կարող ես գնալ Աբիսսեբելլա կամ Սաբիսսակոլ անունով սարի մոտ: Դրան մոտ կա ևս մի բլուր Արարատ անունով (Հրեաները այն անվանում են Թանո), որտեղ իջավ Նոյի տապանը: Այն դեռ այնտեղ է և հեռվից երևում է պարզ եղանակի ժամանակ: Այդ լեռը յոթ մղոն բարձրություն ունի: Որոշ մարդիկ ասում են, որ նրանք եղել են այնտեղ և մատերով շոշափել են այն անցքը, որտեղից Սատանան դուրս եկավ այն բանից հետո, երբ Նոյն ասաց *Benedicite*, բայց նրանք ճշմարիտ չեն խոսում: Ոչ մի մարդ չի կարող այս բլրի վրա բարձրանալ ձյան պատճառով, ինչը միշտ այնտեղ է՝ ամառ և ձմեռ: Եվ ոչ մի մարդ այնտեղ չի բարձրացել Նոյի ժամանակվանից ի վեր, բացի մի վանականից, որն Աստծո շնորհքով գնաց այդ վայր և իր հետ բերեց նավից մի փայտ, որը մինչ այսօր պահվում է սարի ստորոտում գտնվող

---

[13] Կարագյոզյան Գ., Հայաստանը և հայերը ֆրանսիական գրականության մեջ 11-14 դարերում, Երևան, 1988, էջ 86-97:
[14] The Travels of Sir John Mandeville, p. 12.
[15] Նույն տեղում:
[16] Ըստ հրատարակչի նույնացման՝ Էրզրում:

վանքում[17]: Այս վանականը շատ էր ցանկանում բարձրանալ բլրի վրա, և մի օր նա այդ ձեռնարկեց: Ճանապարհի երրորդ մասն անցնելուց հետո նա քուն մտավ և երբ արթնացավ, նա կրկին բլրի ստորոտի մոտ էր: Այդ ժամանակ նա աղաչեց Աստծուն, որ իրեն թույլ տա բարձրանալ, և մի հրեշտակ եկավ իր մոտ և ասաց, որ նա բարձրանա: Նա այդպես արեց, և տախտակը իր հետ ներքև բերեց: Սրանից հետո այլևս ոչ մի մարդ չի եղել այնտեղ, և նրանք, ովքեր ասում են, թե եղել են՝ սուտ են ասում»[18]:

Հարկ է նշել, որ Նոյի տապանի վրա ապաստան գտած սատանայի մասին լեգենդի աղբյուրը մինչ օրս մնում է անհայտ[19]:

Ապա Ջ. Մանդևիլը շարունակում է. «Այնտեղից քիչ հեռու Դայն[20] քաղաքն է, որը հիմնել է Նոյը, և նաև՝ Անյե (Անի - Ա.Ա.) քաղաքը, որտեղ ժամանակին կար հազար եկեղեցի»[21]:

Ջ. Մանդևիլը մեջբերում է մի լեգենդ դրախտից հոսող չորս գետերի մասին, որոնցից երկուսը՝ Տիգրիսն ու Եփրատը, հոսում են Հայաստանի տարածքով[22]:

Զգուշանալ հետաքրքիր է Բազեի Ամրոցի մասին առասպելը: Ջ. Մանդևիլը գրում է. «Տրապիզոն քաղաքից մարդ գնում է դեպի Փոքր Հայք: Այդ երկրում ժայռի վրա կա մի հին ամրոց, որը ֆրանսերեն կոչվում է *'le Chastel Despuere'* այսինքն, անգլերեն, *The Castle of the Sparrowhawk*[23]: Այն գտնվում է Լարրայս[24] և Պերսեփրե քաղաքների միջև և պատկանում է Կոռիկոսի իշխանին: Նա հարուստ մարդ է և լավ քրիստոնյա: Այս ամրոցում դուք կգտնեք մի բազե՝ թառած իր նիստի վրա և մի գեղեցիկ Ֆէրի[25] կին, որը նրա կողքին է նստած և նայում է նրա հետևից: Եվ ով որ գա և բազեին նայի, նրան արթուն պահելով յոթ օր ու յոթ գիշեր (ոմանք ասում են երեք օր ու երեք գիշեր) մենակ և առանց քնելու, ապա յոթերորդ (կամ՝ երրորդ) օրվա վերջում այս գեղեցկուհին կգա նրա մոտ և կպարգևի աշխարհում ցանկացած բան, որ նա կամենա: Դա փորձել են շատ անգամ: Մի անգամ եկավ մի Հայոց Թագավոր, հզոր և արժանավոր իշխան և բազեին արթուն պահեց մինչև հաստատված օրվա վերջը: Ապա կինը եկավ նրա մոտ և հարցրեց, թե ո՞րն է իր ցանկությունը, քանի որ նա փորձը լավ էր անցել: Թագավորը

---

[17] Հավանաբար՝ Ս. Էջմիածնի կամ Ակոռիում՝ Ս. Հակոբի վանքում:
[18] The Travels of Sir John Mandeville, pp. 113-114.
[19] Այս առասպելը XIX դ. վերջին ռուսական աղբյուրներից գրի է առել Ունո Հոլմբերգը: The Mythology of All Races, MacCulloch, C. J. A., ed. Uno Holmberg. Finno-Ugric, Siberian, Vol. IV, Marshall Jones Co., Boston, 1927, p. 363.
[20] Ս. Մոսլին թե՝ Dayne-ը, և թե՝ Anye-ը թարգմանել է «Անի», սակայն շատ ավելի հավանական է որ առաջինը Դվինն է:
[21] The Travels of Sir John Mandeville, p. 114.
[22] Նույն տեղում, էջ 184-185:
[23] Բազեի ամրոց:
[24] Իմա՝ Այաս (ըստ Մոսլիի):
[25] "Faerye"="fairy", այսինքն՝ «փերի»:

պատասխանեց. «Ես իշխանս, բավականին հարուստ եմ, և ուրիշ բան չեմ ուզում բացի քո մարմնից, որը կուզենայի ունենալ ըստ իմ քմահաճույքի»: Եվ կինը պատասխանեց. «Հիմար և ոչ իմաստուն էր քո ցանկությունը: Չի դու չես տիրանա իմ մարմնին, քանի որ ես երկրային արարած չեմ, այլ ոգեղեն»: Թագավորն ասաց. «Իրոք, ես չեմ խնդրի ուրիշ ոչ մի բան»: «Ես չեմ կարող քեզ հանել քո խելագարությունից», - ասաց կինը, - «բայց ես քեզ կտամ այն, ինչ դու չես խնդրել, սակայն՝ ինչն արդարացի է: Դու և քո հետնորդները մինչ իններորդ սերունդ, պատերազմ կտեսնեք և չեք ունենա կայուն խաղաղություն և միշտ ճորտ կլինեք ձեր թշնամիներին և ամեն տեսակի ապրանքի պակաս կզգաք»: Եվ այդպես էլ եղավ, քանի որ այդ ժամանակվանից Հայոց Թագավորը ևս երբեք խաղաղություն չտեսավ, այլ՝ անընդհատ պատերազմ, և՛ նա, և՛ նրա բոլոր ազգակիցներն աղքատ ու չքավոր են և ապրում են իրենց թշնամիների հարկի տակ»[26]:

Այս առասպելն աննկատ չի մնացել գրականության մեջ. այն որպես սյուժե օգտագործվել է ժան դ Արրասի աշխարհահռչակ «Մելյուզին» վեպում, որը գրվել է 1387 թ.:

Ջ. Մանդևիլի համար Հայաստանի և այլ երկրների մասին տեղեկությունների կարևոր աղբյուր է Հեթում Պատմիչի "La Fleur des Estoires de la Terre d'Orient" («Արևելքի երկրների պատմության ծաղկաքաղ») երկը: Ջ. Մանդևիլի «Ճանապարհորդությունների» Գլուխ 28-ը Հեթումի «Ծաղկաքաղի» առաջին գրքի 7-13 գլուխների մի ուշագրավ համակցություն է, որտեղ ճանապարհորդը խոսում է Պարսկաստանի, Հայաստանի, Մարաստանի, Վրաստանի, Թուրքիայի, Միջագետքի և Եթովպիայի մասին:

«Սրանից (Պարսկաստանից - Ա.Ա.) հետո կա Հայաստան երկիրը, որը մի ժամանակ բաժանված էր չորս թագավորությունների: Սա մի մեծ, առատաբեր ու լավ երկիր է: Այն սկսվում է Պարսկաստանի մոտից § տարածվում դեպի արՀմուտք՝ մինչՀ Թուրքիա երկիրը: Լայնությամբ այն Ալեքսանդրիա քաղաքից, որ հիմա կոչվում է Porte de Fer (Երկաթե դուռ - Ա.Ա.), տարածվում է մինչՀ Մեդիա երկիրը: Այս Հայաստան երկրում կան շատ գեղեցիկ քաղաքներ, բայց ամենահայտնին Թավրիզն է »[27]:

Եվրոպական միջնադարյան ուղեգիրների երկերում արձանագրված փաստերն ու դիտարկումները մեծ արժեք են ներկայացնում ինչպես Հայաստանի պատմության տարբեր հարցերի քննության ու հետազոտման, այնպես էլ եվրոպական ընթերցող հասարակության շրջանում Հայաստանի մասին առկա տեղեկությունների հաղորդման առումով: Ջ. Մանդևիլի «Ճանապարհորդությունները» երկը մեծ դեր է խաղացել Եվրոպայում Հայաստանի մասին պատկերացում ձևավորելու գործում:

---

[26] The Travels of Sir John Mandeville, pp. 112-113.
[27] Նույն տեղում, էջ 162:

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ
(ԵՊՀ)

ՋՐԱԲԵՐԴ ԳԱՎԱՌԻ ՏԻՐԱԿԱԼ ՄԵԼԻՔ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ
(Նյութեր հայոց մելիքությունների մասին)

Արցախի Ջրաբերդ (Չարապերթ, Չարաբերդ) գավառի մելիքությունը սկսվում էր Թարթառ գետից և տարածվում մինչև Խաչեն գետը: Գավառն իր անվանումը ստացել է մելիքանիստ ամրոց Ջրաբերդի անունից, որը «գտնվում է ԼՂՀ Մարտակերտի շրջանում, Թարթառ գետի և նրա Թրղի վտակի ծախ ափին, զառիթափ լանջերով հսկայածավալ ժայռազանգվածի վրա՝ շրջապատված անտառոտ լեռնակուլտերով»[1]: Գավառի տիրակալներն էին Մելիք-Իսրայելյանները, որոնց նստավայրերն էին նաև Հին Մոխրաթաղի ապարանքը և Մայրաքաղաք (Քաղաքատեղ) բերդավանը: Սույն հոդվածում համառոտ ներկայացված են Մելիք-Իսրայելյանների ազգաբանությունը և տոհմածառը:

Ռաֆֆին, Լեոն, Միրզա Յուսուֆ Ներսեսովը (Հովսեփ Ներսիսյանց) և մի շարք ուսումնասիրողներ հակված են այն կարծիքին, որ Մելիք-Իսրայելյանները 17-րդ դարի վերջերին Արցախ են գաղթել Սյունյաց աշխարհի Սաղավուզ և Խնածախ գյուղերից (Ռաֆֆին նշում է 1687 թվականը)[2]: Այս տան նահապետ Մելիք-Իսրայելը ապրել է 17-րդ դարի վերջերին: Նրա անունով էլ տոհմի անդամները սկսել են կոչվել Մելիք-Իսրայելյաններ: Հայտնի է որ Մելիք-Իսրայելն ունեցել է չորս որդի՝ Մելիք-Եսայի, Ալլահվուլի, Մելիք-Հաթամ (Ադամ), Հովսեփ բեկ և մեկ դուստր, որի անունը տակավին անհայտ է մնում:

Մելիք-Իսրայելի ավագ որդի Մելիք-Եսային (աղբյուրներում՝ «Չարապերթու երկրի Եսայի ուզբաշի») իր քրոջ պատիվը փրկելու նպատակով սպանում է Սյունիքի խաներից մեկին և, հարկադրված, գերդաստանով գաղթում Արցախ, հաստատվում Մռավ լեռան անտառապատ լանջերին ու հետզհետե ընդարձակում իր տիրապետության սահմանները: Ջրաբերդի մելիքության հիմնադիր Մելիք-Եսային վախճանվել է 1728 թվականին:

Նրան հաջորդում է եղբայրը՝ Ալլահվուլին, որը «զորավար Աբդալլահ Քյոփրուլուզլի փաշայի դեմ Նադիր շահի մղած կռվում՝ վերջինիս ծառայելով մեծ արիություն է ցուցաբերում, Նադիր շահը հրամայում է, որ նրան այսուհետև մելիք չկոչեն, այլ Ալլահվուլի սուլթան

---

[1] Ղուլյան Ա., Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, 2001, էջ 82:

[2] Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1987, էջ 425-426: Լեո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 748: Ներսեսով Մ. Յ., Թարիխ-ե Սաֆի, (ճշմարտացի պատմություն), Երևան, 2000, էջ 43:

հորջորջեն»[3]: Թերևս, նրա միակ սխալն այն էր, որ ապաստան ու մի աննշան պաշտոն էր տվել Պարսկաստանում գլխատման դատապարտված ջիվանշիրցի «ջառչի» (մունետիկ) Փանահ-Ալիին, որը հետագայում իր զավակների հետ պատուհաս դարձավ թե՛ սուլթանի, թե Խամսայի մելիքությունների համար: Տարիներ անց հզորացած և թուրքական ջիվանշիր ցեղի մի ճյուղի՝ սարջալլուների ցեղապետը դարձած Փանահ խանը ուխտադրժորեն ձերբակալել է իր մոտ բանակցությունների եկած Ալլահղուլի սուլթանին և, Նախիջևանի կառավարիչ Հեյդար Ղուլի խանի դրդմամբ, հրամայել գլխատել նրան (1756թ.): Այդ դեպքից հետո սկսվել է Զրաբերդի, Գյուլիստանի և Դիզակի մելիքների ու սարջալլուցի խաների արյունահեղ ընդհարումների ժամանակաշրջանը, որը փոխնեփոխ ուղեկցվող հաջողություններով տևել է երկար տարիներ[4]:

Ալլահղուլի սուլթանին հաջորդել է եղբայրը՝ Մելիք-Հաթամը (Ադամ, 1756-1783), որը «մանկության հասակից պատանդ էր եղել Դաղստանի Խոսրով սուլթանի մոտ և լավ վարժվել էր լեռնականների պատերազմական կարգերին: Նրան ազատել էր Նադիր շահը»[5]: Ժամանակակիցները Մելիք-Հաթամին բնութագրել են այսպես. «Սա խորամիտ և քաղաքավարի մի մարդ է, պատերազմի մեջ խիզախ: Ինքնագլուխ (անկախ-Ա. Մ.) իշխան է, այնպես որ կարող է իրեն ենթակա ժողովրդի միջից հանցավորին, վնասապարտին կամ դատապարտելիին, ով էլ որ նա լինի, ինքնակամ կերպով պատժել ու սպանել՝ առանց որևէ մեկի հրամանի»[6]: Մելիք-Հաթամը և Գյուլիստանի Մելիք-Հովսեփը քսան տարի անընդմեջ պատերազմեցին Փանահ խանի (մահ. 1762) և նրա որդու՝ Իբրահիմ խանի (1762-1806) դեմ:

Թե ինչպիսի մեծ հարգանք է վայելել Աելիք-Հաթամը, ակնհայտ է դառնում 1771-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցու՝ նրան ուղղված թղթից, որտեղ գրված էր. «Յորմէ ժամանեսցի թուղթ սիրոյ՝ ողջունի՝ օրհնութեան և շնորհաց, հանդերձ ամենառատ ողորմութեամբն և գթութեամբն աստուածային և շնորհիւ սրբոյ իջման տեղւոյս ի վերայ սիրելւոյդ մերոյ և ստոյգ և օգտասէր բարեկամիդ և հարազատ զաւակիդ սրբոյ աթոռոյս՝ Քրիստոսասէր և ի սոյն միշտ զորացեալ, պերճապատիւ և շքեղափառ, օրհնեալ և բարեպաշտօն պարոն Մելիք Ադամիդ, աստուածապահ տանդ և բնակութեանդ, ի Քրիստոս զօրացեալ որդւոցդ և դստերացդ, սիրելեացդ և բարեկամացադ, ընչիցդ և ապրանացդ, անդիցդ և անդաստանացդ, վարիցդ և վաստակացդ, հօտիցդ և

---

[3] Ներսեսով Մ. Յ., նշվ. աշխ., էջ 43:

[4] Մանրամասն տես Կոստիկյան Ք., Ղարաբաղի XVIII դարի պատմությունն ըստ Միրզա Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի»-ի, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1999, թիվ 2-3, էջ 351-352:

[5] Լալայան Ե., Երկեր, հ. 2, Երևան, 1988, էջ 216:

[6] Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ, թարգմ. և ծանոթ.՝ Պ. Մ. Խաչատրյան, Երևան, 1991, էջ 102-103:

արջառացդ և ամենայն քոյայնոցդ և ընդ օրհնեալ յարկաւդ եղելոցն»[7]: Զրաբերդ գավառի հզոր տիրակալ Մելիք-Հաթամ մեծը վախճանվել է 1783թ. հուլիսի սկզբին: Մահվանից առաջ, դիմելով ռուսաց արքունիքի նվիրակին, նա պատգամել է. «Մի՛ թողեք, որ այս վայրերի տեր հայ ժողովուրդը հույսը կորցնի...»:

«Թաղումը, որին հավաքվել են շրջակաների շատ բնակիչներ և նույնիսկ Իբրահիմ խանի տղան՝ երկու հարյուր հարազատների հետ միասին, տևել է մեկ շաբաթի չափ»[8]: Անշուշտ, նրանք ժամանել էին ոչ թե հանգուցյալի հանդեպ հարգանքից դրդված, այլ եկել էին հետախուզելու հայոց ճամբարում տիրող իրավիճակը: Մելիք Հաթամի մարմինն ամփոփվել է եղիշե առաքյալի վանքում, Վաչագան թագավորի կողքին: Ցավոք նրա տապանագիրը կրող մարմարյա տախտակը չի պահպանվել, սակայն պահպանվել են Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսի մխիթարական թղթերը, գրված 1783թ. հուլիսի 17-ին և ուղղված նրա որդի Մելիք-Մեջլումին ու կրտսեր եղբայր Հովսեփ բեկին: Վերջինիս ուղղված թղթում կարդում ենք. «Զի լուաք այժմ զաղետալի համբաւ մահուան գերազնիւ սիրելւոյն մերոյ և եղբօրն քո ի Քրիստոս հանգուցեալ պարոն Մէլիք Ադամին, որ յիրաւի նոր իմն ցաւ եղև մեզ մեծագոյն և էարկ ի տրտմութիւնս սատիկս և ի սուգս դառնագոյնս, քանզի ոչ էր նա իբրև զայլս ի պիտանաւորաց և յօգտարարաց այլ առաւել քան զբազումս և ընտիր՝ զարդարեալ խոհեմութեամբ և հանճարեղութեամբ պիտանի բազմաց և օգտակար հասարակութեան»[9]: Մելիք-Հաթամի կինը Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանի քույր Ղամար-սուլթանն էր, որին չպետք է շփոթել Գյուլիստանի Մելիք-Աբով Բ-ի (կաղ Աբով, մահ. 1728) կնոջ՝ Գանձակի խանի դուստր Ղամար-սուլթանի հետ:

Մելիք-Հաթամին հաջորդել է որդին՝ Մելիք-Մեջլումը, որը «կյանքն անցկացրել է Զրաբերդի մելիքության սահմաններից դուրս՝ դաշնակիցներ փնտրելով և պայքար մղելով Փանահ խանի որդու՝ Իբրահիմ խանի դեմ»[10]: Գանձակի Ջավադ խանը (1756-1801), որը ծագումով պարսիկ էր և ցեղական թշնամություն ուներ Իբրահիմ խանի հետ, Զրաբերդի մելիքների հավատարիմ բարեկամն էր ու Մելիք-Մեջլումը ապաստանել էր նրա մոտ՝ Գանձակում: Հետևելով իրենց տիրակալին, Մելիք-Մեջլումի հպատակներից մոտ հազար ընտանիք 1788-ին ևս թողնում են Զրաբերդը ու գաղթում Գանձակի գավառը: Ջավադ խանը նրանց տեղավորում է Շամշադինում: «Երբ Աղա Մուհամմադ խանը արշավում է Ղարաբաղ, Մելիք Աթամի որդի Մելիք Մեջնունը (պետք է լինի Մեջլում-Ա. Մ.) նրա մոտ ծառայության է անցնում և ջանք չի խնայում Իբրահիմ խանի դեմ Աղա Մուհամմադ խանի մղած

---

[7] Լեո, Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Երևան, 1934, էջ 160:
[8] Ուլուբաբյան Բ., Ոսկե շղթա, Երևան, 1979, էջ 303, 304:
[9] Լեո, նշվ. աշխ., էջ 160:
[10] Հայկական սովետական հանրագիտարան, հ. 9, Երևան, 1983, էջ 524:

կռիվներում»[11]: Մելիք-Մեջլումը և Ջավադ խանը, միանալով Իրանի շահ Աղա Մամադ խանի (1742-1797) բանակին, 1795թ. սեպտեմբերին մասնակցել են Թիֆլիսի ավերմանը: Այդ արշավանքից հետո շահը Մելիք-Մեջլումին շնորհել է հետևյալ արտոնությունները. «1. Երբ կամենա, կարող է անարգել կերպով ել և մուտ գործել իր մոտ. 2. Ինչ որ խնդրելու լինի, նրա կամքը կկատարվի. 3. Արքունի գանձարանը նրա տրամադրության ներքո կլինի»[2]: Մելիք-Մեջլումը 1796թ. Գանձակի բերդի պաշտպանության մարտերից մեկում իր հայրենակիցների ձեռքով դավադրաբար սպանվեց: Ջավադ խանի կամքով Ջրաբերդի հզոր մելիքի մարմինը թաղվել է Գանձակի Ս. Հովհաննես մայր եկեղեցում: Այս եզակի գործիչն իր հետ գերեզման տարավ Ղարաբաղը պարսից շահերի օգնությամբ ազատագրելու ծրագիրը, ինչը տրամագծորեն տարբերվում էր ռուսամետ կողմնորոշում ունեցող գործիչների ծրագրերից: «Մելիք-Մեջլումի հպատակները (որը արդեն մեռած էր) մնացին Գանձակի գավառում Ջավադ խանի հովանավորության ներքո»[13]:

Մելիք-Մեջլումին հաջորդել է միակ որդին՝ տասնչորսամյա Մելիք-Հաթամ Բ-ը, որը մասնակցել է 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմին[14]: Վերջինս նշանված էր Հերակլի դրամահատության արվեստապետ Յասսեի (աղբյուրներում՝ Եասիյ) կրտսեր աղջկա՝ Ռեհանի հետ, սակայն երբ նրա խնամակալ Ջավադ խանը խնամախոսներ է ուղարկել Թիֆլիս, խորամանկ ազնվականը Ռեհանի փոխարեն Մելիք-Հաթամին կնության է ուղարկել իր ավագ դստերը՝ անբարետես Թամարին: Մելիք-Հաթամ Բ-ը, չդիմանալով այս խաբեությանը, վախճանվել է երիտասարդ հասակում, թողնելով միայն մեկ դուստր, որի անունը Սհարնազ էր: Մայրը նրան ամուսնացրել է նախիջևանցի Ասրիբեկի որդու՝ Սայի-բեկի հետ և վերջինիս ընդունել իր տուն որպես տնփեսա: Քանի որ տոհմի անդամներ են համարվում նաև երկու սեռերի այն անձինք, որոնք ընդունվում են տուն որպես հարս կամ տնփեսա, ուստի վերոհիշյալ Սայիբեկին մենք ևս ընդգրկել ենք Մելիք-Իսրայելյանների տոհմածառում:

Եվ, քանզի Մելիք-Իսրայելյանների ժառանգները տեղափոխվել էին Գանձակի գավառ, իսկ Շուշվա խաների դրածո Մելիք-Ալլահվերդյանները՝ Նուխիի գավառ, Մելիք-Իսրայելյաններից սերված[15] Աթաբեկյանների տոհմի անվանի ժառանգ Վանի յուզբաշուն (մահ. 1854) շնորհվել է մելիքի տիտղոս և նա 1813թ. ստացել է Ջրաբերդի մելիքության կառավարչի պաշտոնը:

---

[11] Ներսեսով Մ. Յ., նշվ. աշխ., էջ 52:
[12] Ռաֆֆի, նշվ. աշխ., էջ 512:
[13] Նույն տեղում, էջ 533:
[14] Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1984, էջ 270:
[15] Ավագյան Ս., Արցախը հայ մշակույթի կարևորագույն օջախ, Երևան, 1991, էջ 187:

Այսպիսով, հայրենի հողից դուրս, երիցս խաբված և թուլացած Մելիք- Իսրայելյանները 19-րդ դարի սկզբին աստիճանաբար սկսել են հեռանալ պատմության թատերաբեմից: Մեր կարծիքով, դրան առաջին հերթին նպաստել է Մելիք-Իսրայելյանների տոհմի վերջին սերնդի՝ առանց արու ժառանգների մնալու հանգամանքը:

ՁՐԱԲԵՐԴ ԳԱՎԱՌԻ ՏԻՐԱԿԱԼ
ՄԵԼԻՔ - ԻՍՐԱՅԵԼՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ



Ծանոթագրություններ


- տղամարդ

- կին

СЕРГЕЙ МИНАСЯН
(ИИ НАН РА)

К ВОПРОСУ ОБ УЧАСТИИ АРМЯН В КАВКАЗСКОЙ ВОЙНЕ XIX В.

Участие армян в Кавказской войне на Северном Кавказе является одной из практически не изученных страниц военной истории Армении, а также армяно-русских военно-политических отношений в XIX в. Кавказская война, закончившаяся присоединением Северного Кавказа к Российской империи в середине XIX в., явилась последним этапом в многовековой истории покорения и освоения этих территорий Россией, которая началась еще в конце XVI в. Изучение данной темы с точки зрения истории Армении представляет интерес по ряду причин, которые и должны стать основой для научного исследования[1].

Исторически и географически Армения была тесно связана с Северным Кавказом, между армянами и народами Северного Кавказа существовали вековые культурные, торгово-экономические, социально-политические отношения, которые особенно усилились начиная с XVIII в., когда на Северном Кавказе появились первые крупные армянские поселения и колонии (хотя армяне жили на Северном Кавказе с древнейших времен). В то же время, как территория самой Армении (вплоть до конца XVIII – начала XIX вв.), так и многие другие районы Кавказа, где жили армяне, в течение долгого периода постоянно подвергались разбойничьим набегам горских племен, убивались и угонялись в плен тысячи людей, наносился серьезный урон экономике. Причем эти набеги продолжались даже после присоединения части Восточной Армении к Российской империи, хотя в это время горцы уже сталкивались с более упорным сопротивлением армянского населения этих областей[2].

Кроме этого, лезгины служили и в отрядах местных мусульманских правителей на территории исторической Армении, например, Ереванского ханства и особенно Ахалцихского пашалыка. Помощь армян русским войскам при покорении этих областей в период русско-турецких и русско-персидских войн заключалась и в борьбе против отрядов горцев, составляющих наиболее боеспособные части войск этих ханств и

---

[1] См. также: Минасян С. Участие армян в Кавказской войне XIX в. (Основные концептуальные тезисы). Երիտասարդ գիտաշխատողների XVIII նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Եր., 2003, էջ 8-9.

[2] Акты Кавказской Археографической Комиссии, т. IV, стр. 484-485.

пашалыков[3]. В частности, в ходе боев в Джавахке еще в самом начале XIX в. отличились отряды знаменитого карабахского мелика Абова.[4]

Борьба против горцев нашла широкое отражение в общественно-политической жизни армян Кавказа, в армянской литературе и публицистике, особенно в середине и второй половине XIX в.

Кавказская война имела очень большое влияние на военно-политическую ситуацию в регионе, она продолжалась вплоть до 60-х гг. XIX в., хотя и в последующем, особенно во время русско-турецкой войны 1877-1878 гг., имели место столкновения горцев с русскими войсками на Северном Кавказе, к примеру в Дагестане, в ходе которых отличился полковник (впоследствии генерал-майор) русской армии Тер-Асатуров[5].

Почти во время всех войн, которые вела Российская империя на Кавказе в XIX в. как с Турцией, так и с Персией, горцы Северного Кавказа оказывали содействие турецким или персидским войскам. Имели место не только случаи совместных действий турецких войск и отрядов кавказских горцев против русской армии, но также многие горцы с Северного Кавказа постоянно служили в войсках турецких пашей и персидских ханов на исторических территориях Восточной и Западной Армении. Турецкие инструкторы принимали участие в подготовке отрядов горцев, в частности, находящихся под командованием Шамиля, для боев с русскими войсками, а в ходе Крымской войны 1853-1856 гг. определенную помощь горцам оказывали также некоторые европейские державы, в особенности Англия, стремясь использовать их силы против русской армии[6].

Начиная еще со второй четверти XVIII в. в ходе боев, которые вела русская армия против горцев Северного Кавказа, отличились многие армянские офицеры и генералы. Именно в период Кавказской войны в полной мере проявились военные дарования таких выдающихся армянских полководцев русской армии, как генералы М. Т. Лорис-Меликов, В. О. Бебутов, И. Д. Лазарев, В. Мадатов, адмирал Л. М. Серебряков и десятки других, которые, как известно, сыграли большую роль в войнах с Турцией и Персией в XIX в. и для которых бои с горцами являлись в какой-то мере

---

[3] См. подробнее Минасян С. Участие армян на Кавказском фронте русско-турецкой войны 1806-1812 гг. Հայոց պատմության հարցեր, N.2, Երևան, 2001, էջ 60-64:

[4] Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т. 1, Ереван, 1972, д. 355; Մատենադարան, ֆ. Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 156, վ. 353:

[5] Кривенко В.С. По Дагестнану, СПб.,1896, стр.167-174.

[6] Шамиль – ставленник султанской Турции и английских колонизаторов. Сборник документальных материалов. Под ред. Цагарейшвили Ш.В., Тифлис, 1953 стр.18-19, 40-41, 92, 166, 368-371.

продолжением той борьбы, которую они вели в составе русской армии на территорри исторической Армении[7].

Особенно важна в этих боях роль М. З. Аргутинского-Долгорукого. В 1842 г. полковник М. З. Аргутинский был назначен командиром Самурского отряда и принял под свое командование русские войска, дислоцированные в районе Южного Дагестана. Там в этот период вспыхнуло восстание горцев против русских властей в Самурском округе, в частности в Казикумыхском ханстве, и русские войска в этой области находились в сложном положении. В результате энергичных действий Аргутинского крупные отряды горцев потерпели тяжелое поражение в сражении у селения Кюлюлн, а вскоре русские войска заняли и центр ханства – селение Кумух. Наградой Аргутинскому за успешную операцию стало присвоение звания генерал-майора[8]. Кроме этого, «За отличные действия и распоряжения во время вторжения Шамиля в июне 1842 г. в Кумух, и в особенности при разбитии скопищ Шамиля, 2 июня, при селении Кюлюли», генерал-майор, князь М. З. Аргутинский был также удостоен ордена Св. Георгия 3-й степени[9]. Вскоре генерал-майор М. З. Аргутинский был назначен командующим русским войсками в Дербентском военном округе, а также в Среднем и Южном Дагестане[10]. Среди кампаний и походов князь Аргутинского в период его многолетней боевой службы на Северном Кавказе выделяется кампании 1847-1848 гг., ознаменовавшаяся успешными операциями отрядов под командованием генерал-лейтенанта М. З. Аргутинского по штурму и взятию важных горских укреплений Салты, Гергебиль, спасению окурженного отрядами Шамиля Ахтынского укрепления и другие. За успешные бои в Дагестане Аргутинский получил прозвище «самурского льва»[11].

Активное участие в боях в Дагестане против отрядов Шамиля принимал и другой известный армянский полководец – князь В.О. Бебутов, удостоенный за отличие в сражениях против горцев многочисленных наград русского правительства. Вот как описывает кампанию 1846 г. в Дагестане русский военный историк: «В юго-восточной части Дагестана разгорелись

---

[7] Հայաստանի Հանրապետության Ազգային Արխիվ (ՀՀ ԱԱ), ֆ. 42, ց. 1, գ. 2, թթ. 1-11; գ. 35, թթ. 1-2:

[8] Очерк положения военных дел на Кавказе с начала 1838 г. до конца 1842 гг. Кавказский сборник. т. XXXII, Тифлис, 1912, стр. 61.

[9] Гизетти А.Л. Сборник сведений о Георгиевских кавалерах и боевых знаках отличий Кавказских войск, Тифлис, 1901, стр. 67.

[10] Российский Государственный Военно-исторический Архив (РГВИА), ф. ВУА, д. 6535, лл. 47-47об.

[11] Ավետիսյան Հ., Ռուսական բանակի հայ զորավարները և սպայությունը, Հայ-ռուսական հարաբերությունների պատմության հարցեր /նյութերի ժողովածու/, Եր., 1998, էջ 90-91:

довольно серьезные военные действия, вследствии того, что Шамиль, желая овладеть давно уже покоренным Даргинским округом, двинул туда сильные скопища горцев, взявших и разоривших покорные нам аулы Цудахар и Хаджал-Махи. Однако разбитый несколько раз нашими войсками под начальством князей Аргутинского и Бебутова, Шамиль должен был вскоре отойти в глубину гор»[12]. Родной брат князя Василия Осиповича – Давид Бебутов, впоследствии генерал-лейтенант и военный комендант Варшавы, также в период службы на Кавказе, в звании майора Нижегородского драгунского полка, принимал участие в боях против горцев, в частности, отличился при переправе через реку Гедермес 8 сентября 1831 г., в сражениях у села Чукмекент 28 ноября 1831 г. и села Ачхой 5 августа 1833 г. и других[13].

В боях с горцами впервые проявился воинский талант знаменитого армянского полководца русской армии и государственного деятеля М. Т. Лорис-Меликова. Среди многочисленных боев на Северном Кавказе, в которых отличился Лорис-Меликов, упомянем только бой 18 февраля 1852 г. в Чечне, в самом начале военной карьеры Михаила Тариеловича, когда крупный отряд чеченцев, во главе с одним из наибов (начальников отрядов) Шамиля – Кур-Магомой, неожиданно напал на подразделение русских войск на левом берегу реки Джалка. В самый критический момент боя, как описывает современник – офицер русской армии, когда горцы, казалось уже добивались успеха, «Вдруг, откуда ни возьмись, явились впереди цепи казаки, под начальством адъютанта главнокомандующего гвардии ротмистра Лорис-Меликова, и приняли на себя удар, направленный неприятелем на пехоту. Блеснули шашки, кинжалы – и на минуту все стихло... Отбитые, смятые, горцы ринулись назад, преследуя нашим беглым огнем, не успев унести с собой не только тела убитых сотоварищей. Но и самого Кур-Магомы, который, вместе с прочими, остался на месте с разможенной головой»[14].

В боях против горцев принимали участие и отличились не только армянские офицеры и генералы русской армии, но и ополчения, регулярно формируемые как из армян Восточной Армении, так и других областей Кавказа. К примеру, за отличие в боевых действиях против горцев указом Николая I в августе 1833 г. были награждены бойцы Конно-волонтерского полка и 3-й армянской конной сотни: Мелик Юсуп Сарабегов, Оганес Саратов, Петрос Калантаров, Зали Ералов и другие, большая часть которых

---

[12] Служивый В. Очерки покорения Кавказа, СПб., 1901, стр. 82-83.
[13] Акты Кавказской Археографической Комиссии, т. VIII, стр. 549-550, 689-694, 697.
[14] Волконский Н.А. Погром Чечни в 1852 г. Кавказский сборник. т. V, Тифлис, 1880, стр. 91.

участвовали еше в русско-персидской войне 1826-1828 гг. и русско-турецкой войне 1828-1829гг.[15].

После окончательного присоединения Северного Кавказа к России, сотни тысяч горцев, с согласия русского правительства были переселены в Турцию, большинство которых, в результате целенаправленной политики османского правительства, обосновалось на территории исторической Западной Армении, тем самым сыграв значительную роль в изменении демографической картины в этих районах.

Таким образом, можно с уверенностью утверждать, что боевая деятельность армянских полокодцев русской армии в ходе Кавказской войны XIX в. является одним из интересных, но к сожалению, практически не изученных периодов в богатой блестящими страницами военной истории Армении и русско-армянских отношений.

---

[15] Собрание Актов, относящихся к обозрению истории Армянского народа. Ч. 1, М., 1833, стр. 387-388.

ԱՆԱՀԻՏ ԽՈՍԲՈԵՎԱ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

ՀԱՅ-ԱՍՈՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

19-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունում քրիստոնյա բնակչության վիճակը գնալով ավելի էր վատթարանում: 1854-1855 թթ. ռուս գեներալ Մ. Լիխուտինը, որն անմիջական մասնակցություն է ունեցել Ղրիմի պատերազմի Կովկասյան ճակատի ռազմական գործողություններին և քաջատեղյակ էր Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակին, գրում էր. «Հայերի, ինչպես Թուրքիայի մյուս բոլոր քրիստոնյաների վիճակը շատ ողբերգական է, և նրանք մշտապես գտնվում են անհանգիստ վիճակում: Այստեղ նրանց ահաբեկում են ոչ միայն թուրքերը, այլ նաև քրդերը, որոնք խանգարում են հիմնականում ասորիներին և հայերին՝ խաղաղ ու հանգիստ կյանք վարել»[1]:

19-րդ դարի 60-70-ական թվականներին թուրքական բուրժուազիայի ձևավորման հետ միասին, աշխուժանում էր Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին համաիսլամական դրոշի ներքո համախմբելու և ծուլելու «նոր օսմանների» քաղաքականությունը: Թուրքական կառավարությունն իր այս անսքող նպատակներն իրագործում էր արյունռուշտ մահմեդական տարրերի միջոցով՝ նրանց հետևողականորեն մղելով կայսրության քրիստոնյա ազգերի դեմ: Այդ ամենի նպատակը, իհարկե, երկիրն ամբողջապես թուրքացնելն էր, «որպեսզի Թուրքիա միատարր ու միապաղաղ երկիրը մը ու տերութուն մը դառնա»[2]:

Քրիստոնյաների ջարդերը դառնում էին պետական քաղաքականություն: Այդ քաղաքականության հեղինակները բացեիբաց հայտարարում էին, որ «թուրքական առաջին սուլթանների կողմից քրիստոնյաների նկատմամբ թույլ տրված սխալի հետևանք է, որ նրանք դեռ գոյություն ունեին Օսմանյան կայսրության մեջ, և իրենք պետք է ուղղեն այդ սխալը»[3]:

1876թ. գահ բարձրացած սուլթան Աբդուլ Համիդ II–ը ձեռնամուխ եղավ քրիստոնյաների զանգվածային կոտորածների ծրագրմանը, որին 300 հազար հայերի հետ միասին թուրքական յաթաղանին զոհ գնացին 55 հազար ասորիներ[4]:

---

[1] Лихутин М., Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах, СПб, 1863, с. 168, 152.
[2] Օրմանյան Մ., Խոհ և խոսք, Երուսաղեմ, 1929, էջ 476:
[3] История XIX века, ред. Лависс и Рамбо, т. 8, М., 1907, с. 1-2.
[4] Naayem J., Shall this nation die. New-York, 1921, p. 274.

Բնականաբար, խնդրո առարկա հիմնահարցի ամբողջականացման համատեքստում հարց է ծագում, հնարավո՞ր էր արդյոք այդ դժնդակ ժամանակներում հայ-ասորական զինակցությունը: Միանգամից ասենք, որ հայերի և ասորիների զինակցություն ստեղծելու փորձեր, համենայն դեպս, կատարվել են, քանզի երկու բախտակից ժողովուրդների հարաբերություններն ինչպես նախորդ, իսկ առավել ևս այդ ճակատագրական տարիներին բարեկամական էին: Երկու հարևան ժողովուրդներն էլ պետականությունից զուրկ էին և երկու համայնքներն էլ «կառավարվում» էին միայն հոգևոր իշխանությունների՝ ազգային եկեղեցիների կողմից:

Հայ-ասորական համագործակցության գաղափարն արևմտահայ ազգային-ազատագրական շարժման հորձանուտում վաղուց էր հուզել հայ գործիչներին: Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության նշանավոր գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը հայ-ասորական փոխհարաբերությունների հարցի շուրջ այսպիսի դիպուկ բնութագրում է կատարել. «Հայերի և ասորիների հարաբերություններն այնքան սերտ էին միմյանց հետ, որ կարծես տարբեր դավանանքի և բարբառի պատկանող մեկ ազգ լինեին՝ իրար հասկացող, միմյանց լեզուն և մշակույթն ըմբռնող»[5]: Իհարկե հայ հասարակական-քաղաքական գործիչների կողմից հայ և ասորի ժողովուրդների բարեկամական հարաբերությունները հավաստող այս բնութագիրը միակը չէր: Հայերի և ասորիների միասնական պայքարի անհրաժեշտության մասին խորհրդածություններով և դատողություններով հանդես են եկել հայ նշանավոր այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Ռաֆֆին, Մ. Խրիմյանը, Ս. Թոխմախյանը, Ս. Տեկանցը և ուրիշներ:

Մատենադարանի արխիվային բաժնում են գտնվում ասորի բարձրաստիճան հոգևորականների և Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու մի շարք նամակներ[6]: Դեռևս 1854թ. կաթողիկոսական իր երկու կոնդակներում հայ-ասորական բարեկամության ամրապնդման փորձեր է կատարել Ներսես Աշտարակեցին՝ Վանի հոգևոր առաջնորդ Գաբրիել արքեպիսկոպոսին հորդորելով գործնական միջոցառումներ ձեռնարկել այդ ուղղությամբ[7]: Ներսես Աշտարակեցին շատ ջերմ հարաբերությունների մեջ էր նաև ասորիների առաջնորդ Մար-Շիմունի հետ, որն առաջին անգամ Վան էր ժամանել 1856թ., իսկ հետո նաև 1880թ. և լավ ընդունելության արժանացել քաղաքի վերնախավի ու բնակիչների կողմից[8]: 1880թ. ասորիների հոգևոր առաջնորդի Վան ժամանելու ընթացքում ժողովրդի մեջ տարածվել էին լուրեր այն մասին,

---

[5] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Բ, Պեյրութ, 1983, էջ 18:
[6] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 153, վավ. 247, թղթ. 138, վավ. 359: Տես նաև Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 154, վավ. 165,173, 175:
[7] Հովհաննիսյան Ռ.Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Ե., 1965, էջ 226:
[8] «Լումա», 1904, N 1, էջ 83:

որ «Մարշիմոնին Խրիմյան հայրիկն է հրավիրել Վան, որ միասին որոշեն իրենց բռնելիք դիրքը բռնապետության հանդեպ և համագործակցեն»[9]: Այդ համագործակցության արդյունքը 1880թ. Զուլամերկի հայերի ու ասորիների միասնական ապստամբությունն էր: «Մեղու Հայաստանի» թերթը նշում էր, որ «Մար-Շիմունն այդ ժամանակ իր զինված ուժերին դիմել էր մի ճառով, որտեղ ասել էր, թե պետք է հայերի հետ միասին կյանքի ու մահու կռիվ մղել թուրքական բռնակալության դեմ»[10]:

Հայերն ու ասորիները, վկայակոչելով մի շարք հանրածանոթ փաստեր, գանգատվում էին, որ թուրքական կառավարությունը գիտակցաբար և համառորեն ձգտում է ոչնչացնել քրիստոնեական տարրը Արևմտյան Հայաստանում: Նեստորականների պատրիարքը քարոզում էր, որ անհետաձգելի անհրաժեշտություն է նեստորականների միանալը հայերին, որպեսզի հարկ եղած դեպքում միահամուռ հակահարված տրվի թշնամուն[11]:

Ասորիների քաջ կեցվածքն ու նրանց ինքնապաշտպանական կռիվները ոգևորում էին թուրքական տիրապետության տակ ապրող Վասպուրականի հայերին: Այսպես, Ռաֆֆին, պատմավեպերը երկնելիս, առաջին հերթին հոգում էր, որպեսզի նրանցում, որպես զարկերակ անցնեն ժամանակի հուզող հարցերը, ուստի չի շրջանցել նաև հայ-ասորական դաշինքի խնդիրը: Իսկ «Սամվել»-ում, հաղթահարելով 4-րդ դարի հեռավորության դժվարությունները, նա ընդգծում է. «Հույներն ու ասորիները այնքան վատ չեն, որքան դուք կարծում եք»: «Զուլոն (ասորիները - Ա. Խ.) մի քաջազնական ժողովուրդ է, որ սկսյալ անհիշելի ժամանակներից, Զուլամերկի լեռներում պահպանել է իր անկախությունը: Քրդի և թուրքի իշխանությունը մինչև այսօր այնտեղ մուտք չի գործել: Ասորիները զինված մարդիկ են, նրանց կանայք, աղջիկներն մինչև անգամ զենք են կրում»[12]: Մեծ վիպասանը միաժամանակ նշում է, որ Մար-Շիմունի «օրինակը մի բացառություն է ամբողջ քրիստոնեական աշխարհում, որ հոգևոր պատրիարքը միևնույն ժամանակ հասարակ զինվոր է, հայրենիքի պաշտպան՝ զինվորի բոլոր ազնիվ հատկություններով»[13]:

1881թ. սկզբներին քուրդ շեյխ Օբեյդուլլան Շամդինանի մոտ գտնվող ասորական Մետրոպոլիտին ուղարկում է Մար-Շիմունի մոտ և առաջարկում միավորվել ընդդեմ թուրքական կառավարության, սակայն ասորի մելիքները հրաժարվում են միանալ նրան և որոշում են միավորվել հայերի հետ, որոնց լուրջ վտանգ է սպառնում ինչպես թուրքական կառավարության, այնպես էլ նրանց ձեռքին գործիք դարձած

---

[9] Պողոսյան Հ. Մ., Վասպուրականի պատմությունից. 1850-1900, Ե., 1988, էջ 86:
[10] «Մեղու Հայաստանի», 1880, թիվ 72:
[11] Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850-1870թթ., Ե., 1955, էջ 180:
[12] Ռաֆֆի, Երկեր, հ. 4, Ե., 1956, էջ 493:
[13] Նույն տեղում, էջ 494:

քրդական վերնախավի ուժերի կողմից: Մար-Շիմունը խնդրում է Բարդուղեմեոս առաքյալի վանքի վանահայր Հովհաննես վարդապետին այդ որոշման մասին տեղյակ պահել Վանի հոգևոր առաջնորդին: «Նեստորականները, - գրում էր Վանի ռուսական փոխհյուպատոս Կ. Կամսարականը, - առաջարկում են Վանի հայերին անհրաժեշտության դեպքում դուրս բերել մինչև 15 հազար կամավոր, հայերից պահանջելով միայն Մարտինի տեսակի հազար հրացան»[14]:

Վանի թուրքական իշխանությունները, անշուշտ, գիտեին հայ-ասորական բարիդրացիական հարաբերությունների մասին և, վախենալով դրանից, երկու վաշտով ավելացրել են բերդի կայազորը և բերդ փոխադրել քաղաքում գտնվող զինապահեստները, սկսել զենք բաժանել մահմեդականներին և ավելի ուժեղացրել հսկողությունը քրիստոնյաների նկատմամբ[15]:

Բնականաբար, դարավերջին Օսմանյան կայսրությունում ընթացող իրադարձությունները բարենպաստ հող էին ստեղծելու հայ-ասորական միասնական գործակցության համար: Այդ իսկ պատճառով 1894 և 1896թթ. ՀՅԴ կուսակցության ղեկավարները պատգամավորներ էին ուղարկել Ուրմիա՝ Մար-Շիմունի մոտ՝ համագործակցելու նպատակով: Ասորիների հոգևոր առաջնորդը հասկանում էր, որ թուրքական կառավարության քաղաքականությունը հետապնդում է քրդերի միջոցով քրիստոնյաներին հալածելու և ոչնչացնելու նպատակ, ուստի ինչպես ինքը, այնպես էլ իրեն ենթակա մելիքները, հայ-ասորական համագործակցության ջատագով էին: Հայ-ասորական համագործակցության մասին է խոսում նաև այն փաստը, որ ասորիները լիազորել էին Կ.Պոլսի հայոց պատրիարքությանը՝ միջնորդի դեր կատարելու Բ. Դռան և իրենց միջև[16]:

Հայ-ասորական համագործակցության ուշագրավ փաստ է արձանագրված նաև Վ. Փափազյանի հուշերում. «Մեր ընկերները Ուրմիոյ և շրջակա գյուղերու ասորիների մտավորական և ղեկավար տարրերու հետ մոտ և սրտագին հարաբերութիւններ մշակած էին»[17]: Դաշնակցության կուսակցության առանձին անդամներ ևս բավականին սերտ հարաբերություններ են ունեցել նաև Վերին Հայոց Ձորի ասորական գյուղերի հետ և դրանցում ստեղծել են իրենց կոմիտեներն ու ենթակոմիտեները:

Ասորիների և հայերի շրջանում ճանաչված ասորի բժիշկ Աբրահամը, շրջելով ասորական գյուղերը, իր հայրենակիցներին հայերի հետ համատեղ պայքարի կոչ էր անում: Նրա քարոզչության արդյունքում այդ գյուղերի տասնյակ ասորի երիտասարդներ մտել են հայ հայդուկային խմբերի շարքերը, մասնակցեցին բազում

---

[14] Հովհաննիսյան Ռ.Փ., նշվ. աշխ., էջ 228:
[15] Պողոսյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 88:
[16] Հովհաննիսյան Ռ.Փ., նշվ. աշխ., էջ 227:
[17] Փափազյան Վ., Իմ հուշերը, հ. Ա, Պոսթոն,1950, էջ 294:

ինքնապաշտպանական կռիվների և դարձել նրանց անդավաճան ու հավատարիմ զինակիցները[18]:

Ամփոփելով հարցի քննությունը, նկատենք, որ ցավոք, հայ-ասորական համագործակցության այս փորձերն իրենց խորացումը և անհրաժեշտ զարգացումը չստացան: Մեր կարծիքով, արդյունավետ համագործակցության բացակայության հիմնական պատճառն այն էր, որ Օսմանյան կայսրությունում տիրող հասարակական, քաղաքական և տնտեսական պայմանները նպաստավոր էին ոչ այնքան նրանց համագործակցության, որքան տարանջատման և առճակատման համար, ինչին բավականին հետամուտ էին թուրքական իշխանությունները: Կարծում ենք նաև, որ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ և ասորի ժողովուրդների պատմության դասերն ու բաժին հասած գրեթե նման ճակատագրերը սթափեցման և զգոնության ազդակ կդառնան մեր ժողովուրդների հետագա պատմության առանցքային հարցերում միասնական ճակատով հանդես գալու համար:

---

[18] Սիմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Ե., 1986, էջ 164:

ԼԻԼԻԹ ԱՍՈՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՃԸ ՍԻԲԻՐՈՒՄ ԸՍՏ 1897 թ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Սիբիրն իր հարստություններով ռուսներին հայտնի էր դեռևս XI-XIIդդ., երբ նովգորոդցիները տեղի բնակիչներից թանկարժեք մորթիներ էին գնում՝ փոխանակելով դրանք այլ ապրանքների հետ: XVդ. այստեղ հայտնվեցին նաև մոսկվացիները՝ Ս.Կուրբսկին և Պ.Ուշատին, որոնք հարկատու էին դարձրել էվենկա-նենեցյան և խանտի-մանսիական ցեղերին: XVIդ. կազակային ջոկատները Երմակի գլխավորությամբ, վերացնելով Սիբիրի խանությունը /Ոսկե Հորդայի մնացուկները/, տարածաշրջանում հիմնեցին ռուսների առաջին հենակետերը՝ Տյումեն /1586թ./ և Տոբոլսկ /1587թ./ քաղաքները[1]: Դրանով իսկ հիմք դրվեց ռուսների կողմից տարածաշրջանի յուրացմանը, որը հետագայում շարունակեցին ռուս կազակները Վ.Դ.Պոյարովի, Ե.Պ.Խաբարովի, Օ.Ստեպանովի, Ն.Ռ.Չերնիգովսկու և այլոց առաջնորդությամբ: Նրանք կարողացան ոչ միայն հետազոտել երկրամասը, այլև կարճ ժամանակամիջոցում տեղի բնակչությանը դարձնել ռուսահպատակ: Արդեն XVII դ. 70-ական թթ. ռևիզիաների ցուցակներում /հաշվառվում էր միայն արական սեռի հարկատու բնակչությունը/, հիշատակվում էր 20 ռուսական բնակավայր՝ 119580[2] մարդ, իսկ 1795-ին՝ 241084 մարդ ռուս բնակչությամբ[3]: Ցարական կառավարությունը, իրականացնելով մի շարք միջոցառումներ՝տարածքի վարչական բաժանում, բնական պայմանների ուսումնասիրում, վերաբնակեցման քաղաքականություն, ընդհանուր օրենսդրության մշակում, աքսոր, միսիոներական շարժում, մեծապես նպաստեց տարածաշրջանի յուրացման գործընթացին: 1861թ. մարտի 26-ին հրապարակվեց «Правила для поселения русских и иностранцев в Амурской и Приморской областях» փաստաթուղթը, որի հիմքում դրված էր կամավոր և զեխչերով վերաբնակեցումը /льготное поселение/, հողի, որպես սեփականություն, ձեռքբերման իրավունքով, և 1861թ. ապրիլի 24-ի հրամանագիրը, որով Հեռավոր Արևելքում վերաբնակվողներն ազատվում էին ռեկրուտային ծառայությունից /10 հավաքով/, շնչահարկից /подушная подать/, և միայն 20 տարի անց պետք է մուծեին հողահարկ:[4] Արդյունքում, Սիբիրում, որտեղ մինչ ռուսների հաստատվելն ապրում էր 11700 տեղաբնիկ /բուրյատներ,

---

1 От древних славян до Петра Великого. Гл. ред. Исмаилова С.Т., М.,1995, с. 451-452

2 Кабузан В.М. Как заселялся Дальний Восток /Вторая половина XVII-нач. XXвв., Хабаровск, 1976, с.22, 29.

3 Նույն տեղում, էջ 32:

4 ЦГАРФ, ф. 1315, оп.1, д.3, лл.137,142.

յակուտներ, ալթայցիներ, խակասներ, էվենկներ, սիբիրյան թաթարներ, խանտի, մանսի և այլն/, վերաբնակվեցին մեծ թվով գյուղացիներ /հիմնականում ռուս և ուկրաինացի/, աքսորյալներ, ժամանակավոր բնակվողներ, զինվորներ և կազակներ: Շնորհիվ վերաբնակեցման քաղաքականության I-IX ռևիզիաների ընթացքում /1795-1857թթ./ Սիբիրի բնակչությունն ավելացավ 500%-ով՝ 241084-ից հասնելով 1437680-ի:[5] Սիբիրը դարձավ Ռուսաստանի ամենաինտենսիվ բնակեցվող շրջանը[6]: Երկրամասում ռուսական ազդեցության հաստատման և տարածման հարցում մեծ տեղ էր տրվում նաև աքսորին՝ սկսած XVIIդ.: 19-րդ դ. երկրորդ կեսից Սիբիրը վերածվեց Ռուսաստանի հիմնական գաղութացման շրջանի: Տարածաշրջանի բնակչության ռուսիֆիկացման նպատակով 60-ական թթ. կառավարությունը որոշեց տեղաբնիկների քոչվոր կենցաղը վերափոխել՝ ընտելացնել հողագործությանը և նստակեցությանը, դարձնել քրիստոնյա՝ միաժամանակ բարձրացնելով գրագիտության մակարդակը: Միսիոներականությունը Սիբիրում երկար ճանապարհ անցավ՝ սկսած բացահայտ բռնի մկրտությունից և ավանդական պաշտամունքային վայրերի ոչնչացումից, վերջացրած ուղղափառության կամավոր ընդունումով 19դ.-20դ. սկզբին[8]:

Ըստ 1897թ. մարդահամարի տվյալների, Սիբիրի նահանգները զբաղեցնում էին ընդհանուր մակերեսով 10 940 644,7 վերստ^2 տարածություն 5758822 մարդ բնակչությամբ /կայսրության բնակչության 4,58%-ը/, որից 2964419-ը՝ արական, 2794403-ը իգական սեռի[15]:

Ընդհանուր առմամբ Սիբիրի բնակչությունը կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

տեղաբնիկներ /օստյակներ, վոգուլներ, սամոեդներ, խանտի, մանսի և այլն/

ռուսներ /վելիկոռուսներ, մալոռոսներ, բելոռուսներ/

այլ ազգություններ, որոնց բնակությունը երկրամասում պատահական բնույթ է կրում /հայեր, լեհեր, լատիշներ, հրեաներ, վրացիներ և այլն/:[18]

Տեղաբնիկների քանակը Սիբիրում ըստ 1897թ. մարդահամարի կազմում է 842896 մարդ: Սրանք զբաղվում էին հիմնականում որսորդությամբ և քոչվոր անասնապահությամբ: Ռուսների կողմից երկրամասի յուրացումից հետո տեղաբնիկների տեսակարար կշիռը կտրուկ նվազեց. իրենց բնակավայրերում նրանք արդեն

---

[5] Кабузан В.М., ук.соч., с.32.

[6] Кабузан В.М. Изменения в размещении населения России в 18-первой половине 19вв. (По материалам ревизий). М., 1971, с. 28.

[8] Топчий А.Т. Царская колониальная администрация в Сибири. Вопросы истории. Но. 3, 1989, с.166.

[15] ПВПНРИ, Краткие общие сведения по империи. "Распределение населения по главнейшим сословиям, вероисповеданиям, родному языку и по некоторым занятиям", СПб, 1905. Таб.2. Насление по главнейшим вероисповеданиям.

[18] ПВПНРИ, т. 78, Тобольская губерния, СПб, 1905, с. XXXII.

փոքրամասնություն էին կազմում: Ռուսների թվաքանակի կտրուկ աճն այս տարածքում արդյունք էր ցարիզմի ժողովրդագրական քաղաքականության, որի նպատակն էր վերաբնակեցման միջոցով փորձել հաղթահարել սակավահողության և կայսրության ծայրամասերի ռուսիֆիկացման խնդիրները, ինչպես նաև աշխատուժով ապահովել տեղի գործարանները, զարգացնել տրանսպորտային ցանցը, արդյունաբերությունը և երկրագործությունը: Այդ ուղղությամբ կառավարությունը մի շարք միջոցառումներ ձեռնարկեց՝ դյուրացվեց երկաթուղու շրջակա բնակավայրերի բնակեցումը, պարզեցվեց վերաբնակեցման թույլտվություն ձեռք բերելու կարգը /այժմ պահանջվում էր միայն ՆԳ թույլտվությունը/, բնակեցման համար նախապատրաստվեց 717.3 հազար դեսյատին հողաբաժին:[19]

Մինչ Ռուսական կայսրության տարածքում ընդգրկվելը՝ Սիբիրի բնակչությունը ներկայացված էր մի շարք տեղաբնիկ ժողովուրդներով, որոնք դեռևս պահպանում էին տոհմական-նահապետական հարաբերությունները[20]: Տեղաբնիկների զբաղվածությունը ներկայացված էր հիմնականում որսորդությամբ, հավաքչությամբ և քոչվոր անասնապահությամբ՝ եղջերաբուծությամբ: Որոշ բնակավայրերում /Տայմիր թերակղզի, Սախալին կղզի/ տեղաբնիկները զբաղվում էին նաև ձկնորսությամբ, ծովային հավաքչությամբ, ծովային կենդանիների որսով և այլն: Մինչև XX դ. առաջին քառորդը Սիբիրի արդյունաբերությունը թույլ էր զարգացած: Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում այն ներկայացված էր հիմնականում կարագի[21] /կապված վերջինիս արտահամանման ծավալների ավելացման հետ/ ու ալյուրի արտադրությամբ, ոսկու արդյունահանությամբ[22] և մորթու վերամշակումով: Ընդ որում, վերամշակող արտադրությունը տնայնագործական բնույթ ուներ, քանի որ բացակայում էին տեխնիկապես հագեցած ֆաբրիկաներն ու գործարանները[23]: Սրանով էր պայմանավորված նաև բանվորության սակավաթիվությունը /403177 մարդ/[24] և գյուղացիության գերակշիռ քանակը /4081242 մարդ/: Սիբիրում չնչին տոկոս էին կազմում նաև ազնվականները /45765 մարդ/, քաղաքացիները /9026/ և վաճառականները /8964 մարդ/: Երկրամասում բավական մեծ թիվ էին կազմում կազակները /256401 մարդ/, ապա քաղքենիները /323755 մարդ/ և այլածագում տեղաբնիկները /инородцы – 842896 մարդ/:

---

[19] Историческая демография Сибири, с.103, 111.

[20] Топчий А.Т., ук.соч, с.164.

[21] Исторические аспекты экономического, культурного и социального развития Сибири. Новосибирск, 1978, с. 42.

[22] Кабузан В.М., ук.соч, с. 129.

[23] ПВПНРИ, т.80, Якутская область, СПб, 1905, с.XII.

[24] Рубакин Н.А. Россия в цифрах. Страна. Народ. Сословия. Классы. СПб, 1912, стр. 95.

Ռուսների, լեհերի, գերմանացիների և այլազգի ներկայացուցիչների հետ մեկտեղ վերաբնակիչների թվին էին պատկանում նաև հայերը, որոնց թիվը, ըստ 1897թ. մարդահամարի, ողջ Սիբիրում կազմում էր 629 մարդ /584-ը՝արական, 45-ը իգական սեռի /տե՛ս աղյուսակ թիվ 1//: Հայերը ներկայացված էին բոլոր նահանգներում, սակայն հիմնական կուտակումը դիտարկվում էր Իրկուտսկի նահանգում /197 մարդ արական, 16 մարդ իգական սեռի ներկայացուցիչներ/ և Սախալին կղզում /155 տղամարդ և 12 կին/:[25] Այստեղ հայերենը նույնիսկ դասվել էր գերակշռող լեզուների թվին[26]

Հայ բնակչության տեղաբաշխումը Սիբիրում					
Նահանգներ և մարզեր	բնակչության թիվը				%-ային հար.
	ընդհանուր բնակչություն	հայ բնակչություն			
		արական	իգական	ընդհանուր	
Ամուր	120306	11	2	13	0,01
Ենիսեյ	570161	39	5	44	0,007
Անդրբայկալյան	672037	69	6	75	0,01
Իրկուտսկ	514267	197	16	213	0,04
Պրիմորյան	223336	44	2	46	0,02
Սախալին կղզի	28113	155	12	167	0,59
Տոբոլսկ	1433043	27	–	27	0,001
Տոմսկ	1927679	25	–	25	0,001
Յակուտսկ	269880	17	2	19	0,007
Ընդամենը	5758822	584	45	629	0,01

Սախալին կղզում ապրում էր 167 հայ, որից 79-ը կենտրոնացված էր Ալեքսանդրովյան գավառում: Նրանց, ինչպես նաև թաթարների, լեհերի, գերմանացիների, վրացիների և այլոց ներկայությունը երկրամասում պատահական բնույթ էր կրում և պայմանավորված էր աքսորով, զինվորական ծառայությամբ կամ տեղի ադմինիստրացիայում ընդգրկվելու հանգամանքով: Ենթադրվում է, որ Սիբիրի հայ բնակչությունը համալրվել է նաև արտագնա աշխատանքով զբաղվողների հաշվին: Այդ մասին է վկայում հայ ազգաբնաչության սեռա-տարիքային կազմը, որը խիստ անհամաչափ է ներկայացված: Գերակշռում է արական սեռի բնակչությունը, որը կազմում է հայ բնակչության 92,84%-ը: Օրինակ, Սախալին կղզում 100 տղամարդուն բաժին էր ընկնում ընդամենը 6 կին[27]: Սեռերի նման հարաբերակցությունը խիստ անբարենպաստ էր, որը բացատրվում էր

[25] ПВПНРИ, Общий свод по империи результатов разработки данных ПВПН, СПб, 1905, т.1, с. 42.

[26] ПВПНРИ, Вып.7, Наличное население обоего пола по уездам с указанием числа лиц преобладающих родных языков, СПб, 1905.

[27] Главные данные по статистике населения крайнего востока Сибири. Приморская и Амурская области и о-в Сахалин. На основании сведений ПВПНРИ и других источников, СПб, ЦСК МВД, 1903, с. 17.

երկրամասի տնտեսական արագ զարգացմամբ, որն էլ իր հերթին պայմանավորում էր գրեթե բացառապես արական սեռի ընտանիքավոր և ամուրի մշտական և ժամանակավոր բնակվող ներկայացուցիչների մասսայական ներհոսքը: Ընդ որում, ի տարբերություն հյուսիսային նահանգների, որտեղ բնակչությունը կազմված էր հիմնականում հնաբնակներից /старожилы/, հարավային նահանգներում գերակշռում էր 20-59 տարեկան չափահաս աշխատունակ բնակչությունը: Ըստ 1897թ. մարդահամարի տվյալների, 1 տարեկանից պակաս տարիքային խմբում գրանցվել էր ընդամենը 4 երեխա: Խիստ նվազ էր մարդկանց թիվը նաև հաջորդող /1-9տ., 10-19տ./ տարիքային խմբերում, սակայն այն կտրուկ աճել էր 20-29տ., 30-39տ., 40-49տ., 50-59տ. տարիքային խմբերում, ինչը ինքնին վկայում էր Սիբիրում բնակություն հաստատած երիտասարդ և միջին տարիքի աշխատուժի մասին: Ամբողջ Սիբիրում այն տեղաբաշխված էր հետևյալ կերպ[28].

20-29 տարեկան – 118 մարդ
30-39 տարեկան – 180 մարդ
40-49 տարեկան – 125 մարդ
50-59 տարեկան – 58 մարդ

Հայ բնակչության ներկայությունը Սիբիրում ժամանակավոր բնույթ է կրել: Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Սիբիրում գրեթե բացակայում էր 70-նն անց հայ ազգաբնակչությունը. ամբողջ երկրամասում 70-79 տարեկան տարիքային խմբում գրանցվել էր 8 մարդ, ինչպես նաև խիստ նվազ էր կանանց թիվը՝ 38 մարդ ամբողջ Սիբիրում: Բացի այդ, արական սեռի բնակչության մոտ 68%-ն ապահովված էր ինքնուրույն զբաղմունքով, սակայն չէր կերակրում ընտանիքի և ոչ մի անդամի, այսինքն «ընտանիքի անդամներ» սյունակում նրանց դիմաց նշում արված չէր, ինչը վկայում է տեղում ընտանիքի բացակայության մասին:

Տարածաշրջանի հայ բնակչության 1/3-ը հաստատվել էր գավառներում և համալրել գյուղացիության շարքերը՝ հայ բնակչության մոտ 7,63%-ը: Որոշ բնակավայրերում՝ Խաբարովսկում նրանք համաչափ բաշխված են քաղաքների և գավառների միջև: Ցավոք մեզ հայտնի չեն ստույգ տեղեկություններ հայերի դասային բաժանվածության մասին, քանզի այն նահանգներում, որտեղ նրանք չնչին տոկոս են կազմել ընդհանուր բնակչության ֆոնի վրա, աղյուսակներում տեղաբաշխված են «остальные инодо-европейские» սյունակի մեջ: Այնուամենայնիվ, ելնելով մի քանի նահանգների տվյալներից կարող ենք եզրակացնել, որ բնակչության մեծ մասը գյուղացիներ էին, ապա՝ քաղքենիներ և ազնվականներ: Հայերը հիմնականում զբաղվում էին առևտրով /մոտ 10%-ը/ և շինարարությամբ /մոտ 2,7%-ը/: Մեծ էր նաև ազատազրկման վայրերում գտնվողների /14 մարդ Իրկուտսկի նահանգում և 81 մարդ Սախալինում/, օրավարձուների, ինչպես նաև մասնավոր

[28] Մխիթար Վարդապետ, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, 1906, էջ 96-97:

ծառայություններում ընդգրկվածների թիվը /4 մարդ Տոմսկում, 11՝ Սախալինում, 38՝ Իրկուտսկում և այլն/: Բնակչության հիմնական զբաղմունքը մնում էր երկրագործությունը, անասնապահությունը թույլ էր զարգացած, արդյունաբերությունը սահմանափակվում էր ածխահանությամբ: Սակայն որոշ շրջաններում /Պրիմորյե/ սննդի հիմնական միջոցը մնում էր ձկնորսությունը, ծովային կենդանիների որսը, որսորդությունը, մորթու արտահանումը, առևտուրը: Զբաղվածության տարածված եղանակ էր աքսորյալների աշխատանքը անտառահատության և լեռնարդյունաբերության բնագավառում: Ամգուն գետի հովտում տարածված էր ոսկու արդյունահանումը: Տեղային որոշ նշանակություն ուներ նաև տնայնագործությունը:

Հայ բնակչության ճնշող մեծամասնությունը պատկանում էր հայ առաքելական եկեղոցուն՝ 503[29] մարդ /467-ը արական, 36-ը իգական սեռի/, 44 մարդ՝ հայ-կաթոլիկ եկեղեցուն /33-ը արական, 11-ը՝ իգական սեռի/: Սակայն հայերի նվազ քանակը և երկրամասում ժամանակավոր բնակվելու հանգամանքը բացառել է այս տարածաշրջանում նույնիսկ հայ հոգևոր աստիճանավորների գործունեությունը: Վերջիններս ներկայացված էին Ռուսական կայսրության գրեթե բոլոր տարածաշրջաններում, բացի Սիբիրից:

Ցավոք, հնարավոր չէ պարզել հայ ազգաբնակչության գրագիտության ստույգ տոկոսը վերը նշված հանգամանքների պատճառներով, սակայն, ելնելով մնացյալ նահանգների տվյալներից, կարելի է ենթադրել, որ գրագետ էր հայ բնակչության մոտ 40,54%-ը, ընդ որում հիմնականում արական սեռի բնակչությունը:

Այսպիսով, 1897թ. մարդահամարի տվյալները հնարավորություն են տալիս եզրակացնել, որ հայերը որոշակի ներդրում են ունեցել Սիբիրի տնտեսության զարգացման մեջ: Թեպետ նրանք նվազ էին քանակով և մեծ մասամբ տարածաշրջանում ժամանակավոր էին բնակություն հաստատել, այդուհանդերձ աչքի են ընկել գրագիտության բարձր մակարդակով և ներկայացված են եղել զբաղվածության գրեթե բոլոր կարևոր ոլորտներում՝ առևտրում, արդյունաբերությունում, ադմինիստրացիայում, ուսումնա - դաստիարակչական հիմնարկներում և այլուր:

---

[29] Նույն տեղում, էջ 96-97: Ըստ ПВПНРИ, Краткие общие сведения по империи-ի նրանց թիվը հասել է 528-ի:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻԼԱՅԵԹՈՒՄ 1890-1895 թթ.

19-րդ դարի 90-ական թվականների առաջին կեսը Հ. Յ. Դաշնակցության՝ Արևմտյան Հայաստան մուտք գործելու առաջին, նախնական ժամանակահատվածն էր: Այդ շրջանում Վասպուրական, Տարոն և Բարձր Հայք անցած կուսակցության լիազորներկայացուցիչների շուրջ ձևավորվում են Հ. Յ. Դաշնակցության առաջին ոչ մեծ կորիզները, որոնք արդեն 1890-ական թվականների երկրորդ կեսին ձեռք են բերում ավելի հստակ կազմակերպական կառույցի տեսք: 1890-ականների առաջին կեսին վերջիններիս շարքում առավել ուժեղ, բազմամարդ ու գործունյա միջուկը ձևավորվել է Էրզրումում /Կարին/ և նրա շրջակա գյուղերում: Դա պայմանավորված էր նրանով, որ Կարինում 1880-ական թվականների երկրորդ կեսին սկիզբ էր առել խոսքից գործի անցնելու և արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր խմբակներն ու կազմակերպությունները միավորելու բավականին ինքնաբուխ շարժում, որն անհրաժեշտ ենթահող էր ստեղծում Հ. Յ. Դաշնակցության ծավալման ու ընդարձակման համար: Այդ շարժման առանցքում 1886 թ. բանտից ազատված «Պաշտպան հայրենյացի» առաջնորդներն էին՝ Խաչատուր Կերեկեյանի գլխավորությամբ, որոնք որոշակի կապեր հաստատելով մի կողմից՝ Կ.Պոլսում գործող Վարիչ Մարմնի և նրա միջոցով՝ Հնչակյան կուսակցության հետ[1] և մյուս կողմից էլ նախապատրաստվելով 1890 թ. սեպտեմբերին էջմիածնում նախատեսված մյուռոնօրհնության առիթով Անդրկովկասում հավաքվելու հարմար պահին, ցանկանում էին այն օգտագործել՝ արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր կազմակերպություններին ու անհատներին համախմբելու համար:

«Պաշտպան հայրենյացի» առաջնորդ Խաչատուր Կերեկեյանը հասցրել էր անգամ կարգավորել անցագիր ձեռք բերելու հարցը՝ իբրև էրզրումից ընտրված պագամավոր՝ «...էջմիածին գնալու զանազան կուսակցությունների միացման խնդրի առթիվ...»[2], երբ 1890թ. հունիսի 6-ին տեղի ունեցավ Սանասարյան վարժարանի հայտնի խուզարկությունը:

---

[1] Թեև «Պաշտպան հայրենյացի» գործիչներից Գր. Չիլինկարյանը նամակագրական կապ էր հաստատել Հնչակյան կուսակցության առաջնորդներից մեկի՝ Ռուբեն Խանազատի հետ, բայց Էրզրումում Հնչակյան կուսակցության մասնաճյուղի ձևավորման մասին վերջինիս վկայությունը լուրջ կասկածներ է հարուցում: Եթե անգամ ստեղծվել էր նման մասնաճյուղ հիշեցնող մի բան, ապա միայն թղթի վրա, քանի որ 1890 թ. հունիսի 6-8-ի հայտնի ցույցի և ընդհարման առանցքում կրկին «Պաշտպան հայրենյացի» հին գործիչներն էին գտնվում:

[2] Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև ԳԱԹ), Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, թ. 38:

Այդ պատճառով Խաչատուր Կերեկցյանը մնում է Էրզրումում, իսկ նրա խորհրդով անմիջապես Կովկաս է մեկնում Տարոնում իր հայդուկային խմբի գործողությունների պատճառով հետապնդումների ենթարկված և Կարինում պատսպարված[3] Հակոբ Սարկավագը /Տեր-Ղևոնդյան/:

1890թ. հունիսի 6-8-ին տեղի ունեցած Էրզրումի առաջին ցույցն ու ընդհարումը դարձավ ոչ միայն «Պաշտպան հայրենյացի» հին գործիչների համախմբման և նրանց ժամանակավորապես նեղացած շրջանակի ընդլայնման լավագույն առիթը, այլև խթան հանդիսացավ Կ. Պոլսում հնչակյանների կազմակերպած «Գում Գափուի» ցույցի և վերջինիս անմիջական տպավորության տակ Թիֆլիսում սկիզբ առած Հայ Յեղափոխականների Դաշնակցության Հիմնադիր ժողովների համար: Այսպիսով, հայ ազատամարտի ղեկավար ուժը դարձած Հ. Յ. Դաշնակցության ձևավորման գործում հենց Էրզրումից հնչած ազդանշանն էր, որն առաջ բերեց մի յուրահատուկ շղթայական ռեակցիա՝ արագացնելով աշնանը՝ էջմիածնում նախատեսվող տարբեր կազմակերպությունների ու կուսակցությունների համախմբման ձեռնարկը:

1890թ. հուլիսի երկրորդ կեսին և օգոստոսին Թիֆլիսում տեղի ունեցած Հ. Յ. Դաշնակցության Հիմնադիր ժողովներից անմիջապես հետո՝ սեպտեմբերի սկզբներին իր գործունեությունն սկսած Հայ Յեղափոխականների Դաշնակցության «Կենտրոնը» կամ «Կենտրոնական Վարչությունը» իր անդամներից մեկի՝ Լևոն Սարգսյանի վկայությամբ, Էրզրումում ներկայացուցիչ նշանակեց «Պաշտպան հայրենյացի» նախկին ղեկավարներից Հովհաննես Աստուրյանին[4]: Դրանով պայմաններ ստեղծվեցին «Պաշտպան հայրենյացի» մեջ մտած գործիչների՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության շուրջ համախմբվելու համար: Սակայն այդ բնականոն գործընթացի ծավալման ճանապարհին լուրջ արգելք դարձավ այն փաստը, որ «Կենտրոնի» որդեգրած՝ Էրզրումի գործիչների վրա հենվելու մարտավարությանը զուգընթաց, արծանագրվեցին նաև Կովկասից ժամանող և տեղական պայմաններին անծանոթ «առաջին առաքյալների» ակտիվ ու հախուռն քայլերը, որոնք հակասություններ ծնեցին հայ ազատամարտը ներկայացնող երկու տարբեր սերունդների միջև:

Անդրկովկասից Էրզրում անցած Հայ Յեղափոխականների Դաշնակցության առաջին գործչի՝ Տիգրան Օքոնյանի /Շամիլ/ [5]

---

[3] Նույն տեղում, թ. 38-39:

[4] Լևոն Սարգսյան, Հուշեր 1889-1892 թվականներից /ՀՅԴ ծագումը, առաջին քայլերը և Ա. ընդ. ժողովը/, ՀՅ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների պատմության կենտրոնականպետական արխիվ (այսուհետև՝ ՀՅ ՀՔԿՊԿՊԱ), ֆ. 4047, ց. 2, գ. 9, թ. 132:

[5] Տիգրան Օքոնյանը ծնվել է 1868 թ. Ախալցխայում, Էրզրումից գաղթածների ընտանիքում: Նրա մայրը «Պաշտպան հայրենյացի», իսկ հետագայում՝ Հ. Յ. Դաշնակցության հայտնի դեմքերից մեկի՝ Դավաֆ Գրիգորի /Արշակ Գավաֆյան-Քեռու հոր/ քույրն էր: 1886-ից աշխատելով որպես հաշվապահ Կարսում, իսկ

ծեռնարկած հախուռն, իսկ հաճախ նաև՝ անհաշվենկլուտ քայլերն անմիջապես առաջ բերեցին լուրջ տարաձայնություններ՝ նրա և «Պաշտպան հայրենյացի» առաջնորդ Խաչատուր կերեկցյանի միջև:

Թեև Թիֆլիսի նահանգապետից արտասահմանյան անցագիր ստացած անձանց ցուցակում Տիգրան Օքոնյանի անունը հիշատակվում է 1890թ. հոկտեմբերի 9-ին, բայց Հ. Յ. Դաշնակցության էրզրումի հին գործիչների կենսագրական մանրամասներին քաջատեղյակ՝ Օ. Ճգնավորյանի վկայությամբ, վերջինս մուտք է գործել Կարին միայն 1890թ. դեկտեմբերի 15-ին՝ Արամ Արամյանի և Հաբեթ Նշկյանի հետ միասին[6]: Հիմնականում երիտասարդ գործիչներից կազմված այն շրջանակը, որը համախմբվեց Տիգրան Օքոնյանի շուրջը /Արամ Արամյան, Հաբեթ Նշկյան, Տիգրան Գևորգյան, Հմայակ Գալեմքերյան, Շերամ Ղազարյան և այլք/, մասամբ բաղկացած էր նաև նախկին «Պաշտպան հայրենյացի» անդամներից՝ Ղավաֆ Գրիգորն ու իր երեք որդիները, զինագործ-քահանա Ավետիս Վեմյանը, Հաջի Հակոբ Սերենկյուլյանը և Հովհաննես Աստուրյանը, վերջինիս Հայ Յեղափոխականների Դաշնակցության կենտրոնը համարում էր իր լիազոր-ներկայացուցիչը Կարինում: Այս շրջանակին հարում էին նաև էրզրումի դաշտավայրի /օվայի/ գյուղացիներից օգենցի Տեր Արիստակեսը, ծիթողցիներ Հարություն Տեր-Վարդանյանը և Սեդրակ Անանյանը, նորշենցի Թաթոսը, իլիջեցի Քյոսե Միքայելը և ուրիշներ[7]:

Այս շրջանակի և նախկին գործիչների միջև առաջ էին եկել սերունդների հերթափոխի փաստով ու դրանից բխող՝ գործելակերպի առանձնահատկություններով պայմանավորվող լուրջ հակասություններ, որոնք սպառնում էին բացահայտ ընդհարման վերածվել՝ Տիգրան Օքոնյանի շուրջ համախմբված երիտասարդության ու Խաչատուր Կերեկցյանի նման փորձառու անհատների միջև: Տ. Օքոնյանի հախուռն բնավորությունը և բացահայտ գործելակերպն առաջ էին բերել Խաչատուր Կերեկցյանի լուրջ դժգոհությունը: Իրենց հերթին երիտասարդներն ամբաստանում էին Խ. Կերեկցյանին՝ դրամական հաշիվներում, ինչպես նաև իբր՝ ռուսական հյուպատոսի հետ ունեցած գաղտնի կապերի մեջ: Իրականում այդ ամենը պարզ հերյուրանք էր: Իսկ պատճառը երիտասարդների կողմից որդեգրված գործելակերպի մեջ առկա՝ անհամբեր, տեղական պայմանները հաշվի չառնող, իսկ հաճախ էլ ուղղակի արկածախնդրական մղումներն էին: Նման պայմաններում Թիֆլիսում գտնվող Հայ Յեղափոխականների Դաշնակցության

1890-ից՝ մասնակցելով Հայ Յեղափոխականների Դաշնակցության Հիմնադիր ժողովներին, Տիգրան Օքոնյանը 1890թ. Հոկտեմբերի 9-ին ծեռք է բերում անցագիր՝ Թուրքիա մտնելու համար: Տե՛ս Վրաստանի Պատմության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 153, g. 1, գ. 95, թ. 80:

[6] Օ. Ճգնավորյան, Բարձր Հայք, Ա հ., Բ մաս, ինքնագիր մենագրություն, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 420, g. 16, գ. 11, թ. 29:

[7] Նույն տեղում, թ. 30:

«Կենտրոնը» նամակներ ու բացատրություններ էր ստանում՝ թե՛ մեկ և թե՛ մյուս կողմերից և փորձում էր հարթել հակասությունները: Բողոքելով Տ. Օքոնյանի որդեգրած գործելակերպի դեմ, Խ. Կերեկցյանը նամակներ էր ուղարկում Կովկաս, որոնք նրա եղբայրը՝ Տիգրանը հանձնում էր ոչ միայն «Կենտրոնին», այլև Գ. Արծրունուն, Կովկասի հին գործիչներին /Սև Սանդրո, Բ. Նավասարդյան և այլք/, ինչպես նաև հնչակյան կուսակցության ներկայացուցիչներին: Դիմելով ռուսահայ եղբայրներին՝ Խաչատուր Կերեկցյանը թախանձագին կերպով գրում էր. «... այսպիսի թեթևսոլիկ անձնաւորութիւններ մի ուղարկեք ... յետ կանչեցեք ձեր մարդիկը, մեզ թողուցեք մենք մեր իիւղովը տապակւինք, /մեր ցաւերով/ և մենք մեր ուժերով և մեր գիտցած կերպով գործեմք»[8]:

Այս թախանձագին խնդրանքին ի պատասխան՝ «Կենտրոնը» խոստանում է ուղարկել հարկ եղած մարդուն՝ մինչ այդ հորդորելով հաշտ լինել Տ. Օքոնյանի հետ[9]: Իր հերթին Տ. Օքոնյանն էլ ստորագրություններով ծանրաբեռնված նամակներ էր ուղարկում «Կենտրոնին»՝ հերքելով Խ. Կերեկցյանի մեղադրանքները: Նման տարաձայնությունները հանգուցալուծելու խնդիրը բարդանում էր նաև այն պատճառով, որ լուրջ հակասություններ կային հենց իր՝ Հայ Յեղափոխականների Դաշնակցության «Կենտրոնի» ներսում՝ արմատական-հեղափոխական գործելակերպի կողմնակիցների և չափավոր-ազատական գործիչների միջև:

Ի վերջո, ժամանելով Թիֆլիս, Տ. Օքոնյանը փորձեց ստանալ «Կենտրոնի» համաձայնությունը՝ ահաբեկման ենթարկելու Խաչատուր Կերեկցյանին: Այդ շրջանում «Կենտրոնի» գործերը գրեթե միանձնյա կերպով տնօրինող Լևոն Սարգսյանն իր հուշերում վկայում է, որ «Վրդովված Կենտրոնը արգելում է Տ. Օ. շարունակել իր ազգափրկչական փորձերը և հեռագրով իմաց է տալիս Յ. Ա. /Հովհաննես Աստուրյանին - Գ. Խ./ թե արգելվում է «օղի գնել»[10]: Սա նշանակում էր, որ էրզրումի կառույցը, որն այդ ժամանակ կոմիտեի կարգավիճակ ուներ, ոչ մի պարագայում իրավունք չուներ կայացնել և իրագործել մահվան վճիռ՝ Խ. Կերեկցյանի հանդեպ, քանի որ բացի այդ կարգադրությունից, գոյություն ուներ նաև Հայ Յեղափոխականների Դաշնակցության նախնական կանոնագրով սահմանվող հստակ նորմ, համաձայն որի՝ մահվան վճիռ կայացնելու իրավունքը պատկանում էր միայն

---

[8] Կարեկցյան Տիգրան, Խաչատուր Գևորգ Կարեկցյանի կենսագրությունը, ձեռագիր, ԳԱԹ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, վավ. 9-III, թ. 55:
[9] Նույն տեղում, թ. 61:
[10] Լևոն Սարգսյան, Հուշեր 1889-1892 թվականներից..., ՀՀ ՀՔԿՊԿՊԿԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 9, թ. 90:

«Կենտրոնին»»[11]: Սակայն, անտեսելով այդ ամենը, էրզումի կոմիտեի տաքգլուխ երիտասարդները՝ Տիգրան Օքոնյանի նախաձեռնությամբ, կայացնում են Խաչատուր Կերեկցյանին ահաբեկման ենթարկելու որոշում: Տեղեկանալով այդ մասին, Խաչատուր Կերեկցյանը շարունակում էր զսպել իր կողմնակիցների՝ կանխարգելիչ քայլերի դիմելու ցանկությանը, հայտարարելով «թողէք սպանեն ինձ որպէսզի սպանել սովորեն»[12]: Ահաբեկումն իրականացնելու խնդիրը վճռվում է վիճակահանությամբ, որն ընկնում է Խաչատուր Կերեկցյանի պահած-փայփայած, որբ հոգեզավակին՝ Արշավիր Հովասափյանին /նույն ինքը՝ Արամ Արամյան, Աշոտ, Թաթուլ/, որը վայելելով Խաչատուր Կերեկցյանի վստահությունը 1891թ. օգոստոսի 26-ին Խաչատուր Կերեկցյանին հրավիրում է էրզրումի մոտակա բանջարանոցները և թիկունքից կրակելով՝ ծանր վիրավորում նրան: Սեպտեմբերի 2-ին Խաչատուր Կերեկցյանը մահանում է՝ պատվիրելով չհայտնել Արամ Արամյանի անունը, որին նա մինչև մահն էլ համարում էր ազնիվ ու խաբված երիտասարդ:

Ի պատասխան Խաչատուր Կերեկցյանի եղբոր՝ Տիգրանի բողոքների, Հայ Յեղափոխականների Դաշնակցության «Կենտրոնը» այդ տխուր առիթով հանդես է գալիս հատուկ հայտարարությամբ, ուր ասվում էր. «Յանուն ընդհանուր գործի և բազմաչարչար ազգի ազատութեան գաղափարի մենք դիմում ենք հայ յեղափոխականներին, մանավանդ մեր կոմիտէներին, երբէք չդիմել այդպիսի միջոցի: Մենք բարձրաձայն յայտնում ենք, որ այդպիսի սպանութիւնը մենք համարում ենք յանցանք, ուղղուած ազգի շահերի դէմ, որի անունով կատարվում է նա»[13]:

Խաչատուր Կերեկցյանի սպանությունը ծանր հարված էր հայ ազատամարտին[14]: Սակայն դրանով Տիգրան Օքոնյանի արկածալից գործունեությունը չավարտվեց: Նրա հանձնարարությամբ ձիթողցի Հ. Տեր-Վարդանյանը մեկնում է Օլթի՝ զենքերի փոխադրության գործն սկսելու համար: Հենց վերջինիս ջանքերով բացվել է դեպի էրզրում զինատար խմբերի անցման առաջին՝ Կարս-Օլթի-Նարիման-Ձիթող-Կարին գիծը: Առաջին անգամ հաջողվում է տեղափոխել 40 ատրճանակ, 4000 փամփուշտ, որը հասցվում է Նարիմանի գավառի Վեգիխաս գյուղ, իսկ այնտեղից էլ՝ Շիփեկ:. Այդ զինամթերքը բաշխվում է էրզրումի կոմիտեին, իսկ երկրորդ անգամ նույն գծով տեղափոխված 25 հրացանով

---

[11] Այդ մասին քիչ անց «Կենտրոնը» ստիպված էր անգամ «Դրօշակի» առաջին համարում «Դաշնակցութեան կանոնադրութիւնից» վերտառությամբ հատուկ բացատրություն տպագրել, ուր նշվում էր. «Մահու պատիժը հայերի վերաբերմամբ ընդունվում է միմեայն անպայման ապացուցված դաւաճանութեան դէպքերում: Վարչական Կենտրոն», տե՛ս «Դրօշակ», «Հայ Յեղափոխակ. Դաշնակցութեան» օրգան, 1892, փետրուար, թիւ 3, էջ 12:

[12] Կարեկցյան Տիգրան, նույն տեղում, թ. 67:

[13] Յայտարարութիւն, Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, Պոսթըն, 1934, էջ 94-95:

[14] Երկու տարի անց Խաչատուր Կերեկցյանի եղբայրը՝ Տիգրան Կերեկցյանը գտնում և սպանում է Տիգրան Օքոնյանին՝ ոչ մի հետապնդման չարժանանալով Հ. Յ. Դաշնակցության կողմից:

և շուրջ 4000 փամփուշտով Տիգրան Օքոնյանը ձեռնամուխ է լինում 17 հոգանոց հայդուկային խմբի ձևավորմանը: Խմբի անդամներից մեկը՝ Հարություն Տեր-Վարդանյանը, հետագայում գրած իր հուշերում մանրամասն տեղեկություններ է հաղորդել Տ. Օքոնյանի գլխավորած արշավանքի մասին[15]. Նա վկայել է, որ խումբը հիմնվել է Օլթիի Թանպուրատ գյուղում՝ հագնվելով լազի, քրդի, թուրքի հագուստներ և, գյուղի քահանա տեր Նիկոլոսի օրհնությունն ստանալուց ու երդվելուց հետո, 1891թ. սեպտեմբերին մտել Նարիմանի գավառը՝ տեղի հայությանը հարստահարող Փաշա բեկին և Իդրիս բեկին ահաբեկելու համար: Սակայն, շուրջ երկու ամիս տևած անօգուտ ու վտանգաշատ ձեռնարկը, որին Տիգրան Օքոնյանից զատ մասնակցություն ունեցան հետագայում մեծ հեղինակություն ձեռք բերած՝ Հ. Յ. Դաշնակցության առաջին հայդուկներից՝ Ղազախեցի Սեխակը, Նարիմանի Ագրակ գյուղացի Որսորդ Գևորգը, ալեքսանդրապոլցի Ուսուլ Գրիգորը, կարսեցի Հարություն Կիրակոսյանը /Տուրբախ/ և ուրիշներ՝, ոչ միայն չհասավ իր նպատակին, այլև ճիշտ հակառակ արդյունքն ունեցավ Նարիմանի գավառի հայության համար: Նիխազից ժամանած թուրքական բանակի մի ամբողջ գումարտակի կողմից պաշարվելով, խումբը կարողացավ Քիրեջլի լեռան վրայով անցնել Դեվելի լեռը ու իջևանել Իթ կոչվող յայլայում՝ կասկած անգամ չառաջացնելով իրենց հայ լինելու մեջ: Այդտեղ նրանք սպանեցին մի քանի թուրքերի, իսկ քիչ անց, Ախա լեռան վրա կռվի բռնվելով վրացիների հետ, ընդհարման ժամանակ բացահայտեցին իրենց հայ լինելը: Դրանից հետո խումբը վերադարձավ Թանպուրատ գյուղը, լուծարքի ենթարկվեց և Տիգրան Օքոնյանը, վերցնելով իր երեք հայրենակիցներին, Չոլախ Ստեփանին, Փելնեկ Ենովքին ու Հակոբ վարժապետին՝ մեկնեց Ախալցխա: Ու թեև «Դրօշակի» երրորդ համարում տեղ գտած «Նամակ Կարինից» ընդարձակ թղթակցության մեջ[17], ուր ներկայացվում էր Շամիլ ծածկանունի տակ թողարկվող Տիգրան Օքոնյանի խմբի գործողությունների համառոտ պատմությունը, փորձ էր արվում քողարկել ձեռնարկված արշավանքի կապը նորաստեղծ կուսակցության հետ, սակայն ինչպես Նարիմանի գավառի հայության, այնպես էլ թուրքական իշխանությունների համար տեղի ունեցածը արագորեն պարզվեց: Հարություն Տեր-Վարդանյանի վկայությամբ, «...Նարիմանի Վէգիխաս և Ագրակ գիւղացիներէն 60 հոգի կալանաւորուելով խոշտանգուեցան և 35-ը չը դիմանալով գործ դրուած վայրագութիւններուն դիտապաստ ինկան բանտին մէջ»[18]: Դրանով սակայն, գործը չփակվեց: 1893թ. փետրվարի 20-ին Էրզրումի ռուսական

---

[15] Օ. Ճգնավորյան, նույն տեղում, թ. 37-39:
[16] Այս հայդուկային խմբի զինվորների ցանկը տե՛ս Օ. Ճգնավորյան, նույն տեղում, թ. 55:
[17] «Դրօշակ», Հայ Յեղափոխակ. Դաշնակցութեան» օրգան, 1892, փետրուար, թիւ 3, էջ 6-7:
[18] Օ. Ճգնավորյան, նույն տեղում, թ. 39:

հյուպատոս Վ. Աքսիմովը հաղորդում էր Կոստանդնուպոլսում իր երկրի դեսպանին, որ Նարիմանի կազայի Իդա գյուղի յայլայում 1891թ. սեպտեմբերին 3 թուրքերի սպանության առիթով ոչ պակաս 60 հայ է դատաքննության ենթարկվել; Ռազմական դատարանը՝ Թեվֆիկ փաշայի գլխավորությամբ «...առանց երկար մտածելու, ս. թ. փետրվարի 13-ին մեկ նիստի ընթացքում որոշեցին մեղադրյալներից 25-ին, մեկ այլ տեղեկությամբ՝ 27-ին դատապարտել մահապատժի՝ կախաղանի միջոցով, իսկ մյուսները, բացի խոլերայից բանտում մահացած ինը հոգուց, ենթարկվել են ցմահ աքսորի»[19]:

Տ. Օքոնյանի նախաձեռնած արշավանքը էրզրումցիների շուրթերին վերածվեց երգի, իսկ ինքը՝ նրա կազմակերպիչը, իր մղած կռիվների փորձն ամփոփելով՝ կազմեց մի փաստաթուղթ՝ «Հրահանգ հրոսակային խմբերին» վերտառությամբ, որը փաստորեն Հ. Յ. Դաշնակցության պատմության մեջ առաջին մարտական կանոնագրի նախագիծն էր[20]: Սակայն ակնհայտ էր, որ նման հարձակողական մարտավարության որդեգրումն անպաշտպան ժողովրդին դարձնում էր քավության նոխազ՝ հանգեցնելով հակառակորդից անհամեմատ ավելի մեծ կորուստների: Ուստի, պատահական չէ, որ թեև Հ. Յ. Դաշնակ-ցության՝ 1892 թ. ամռանը կայացած առաջին ընդհանուր ժողովում հեղափոխական-արմատական թևի ներկայացուցիչները վերջնական հաղթանակ արձանագրեցին կուսակցության ներսում, սակայն հաջորդ տարիների ընթացքում ոչ միայն էրզրումի վիլայեթում, այլև ողջ Արևմտյան Հայաստանում մենք չենք հանդիպում նման հախուռն ու անկազմակերպ գործելակերպի: Ընդհակառակը, էրզրումի կոմիտեն, որը 1894-ից հետո վերածվեց կենտրոնական կոմիտեի, սկսեց հետևողական աշխատանք ծավալել կուսակցության շարքերն ընդլայնելու ուղղությամբ՝ Հ. Յ. Դաշնակցության մեջ լայնորեն ներ-գրավելով ինչպես քաղաքի զանազան վարժարանների /Սանասարյան, Արծնյան/ շրջանավարտներին, այնպես էլ դաշտավայրի /օվայի/ գյուղերի բնակիչներին: Սանասարյանցիներից Հ. Յ. Դաշնակ-ցության շարքերը ներգրավվեցին Գարեգին Փաստրմաճյանը /Արմեն Գարո/, Արամ Արծնյանը, Արծնյան վարժարանի շրջանավարտներից՝ Հովհաննես Աբրենկուլյանը, Աիհրան Թեռլեմեզյանը, Լևոն Մազմանյանը, Վահե Թոգաճյանը, Տիգրան Օամիուրը և ուրիշներ: Կուսակցության մեջ մտան նաև էրզրումի և շրջակա գյուղերի առավել ակտիվ ու գործունյա երիտասարդները՝ Դարբին Ստեփանը, Անտոն Պոյաճյանը, Աինաս Օզպեքյանը և ուրիշներ: Դաշտի /Օվայի/ գյուղերից առավել ուժեղ ու

---

[19] Архив внешней политики России, ф. "Политархив", 1889-94гг., оп. 482, д. 1630, л. 163.

[20] Վրաստանի ՊԿՊԱ, ֆ. 17, ց. 2, գ. 706, թթ. 283-284: Փաստաթղթի տպագիր օրինակը տե՛ս Գևորգ Խուդինյան, Հայ Յեղափոխական Դաշնակցության ծրագրի և կանոնագրի պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2002, թիվ 1, էջ 63-64:

գործունյա կառույց ձևավորվեց Չիթողում՝ Սեդրակ Անանյանի, Հ. Տեր-Վարդանյանի և այլոց ջանքերով: Այստեղից Հ. Յ. Դաշնակցությունը տարածվեց Հինձք, Թվանջ, Մուտուրկա, Սովուկջերմուկ, Խետե Մելեք, Դինարի գոմ, Արծրքի, Ումուտում, Խաչկաց վանք, Երկնիստ, Ըղտաձոր ու Պատիշեն գյուղերում[21]:

Էրզրումի Կենտրոնական կոմիտեի հետապնդած հիմնական առաջադրանքը զենքի հայթայթումն ու ժողովրդի զինումն էր: Այդ նպատակով օգտագործվում էին զենքի փոխադրության միաժամանակ մի քանի գծեր: Դրանք էին ա/ Կարս-Օլթի-Նարիման-Չիթող-Էրզրում, բ/ Ղալա-Բողազ-Հասան Դալա-Հերթև-Խնուս-Սասուն, գ/ Ղալա-Բողազ-Իսպիր-Կիվ-Լսոնք -Բաբերդ-Դերջան-Երզնկա-Դերսիմ:

Միաժամանակ, Հ. Յ. Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովից հետո ժամանակավորապես մի կողմ քաշված Արամ Արամյանը 1894-ից սկսած կրկին ակտիվացնում է իր գործունեությունը՝ Կովկասից երկիր անցնող Հրայրի /Արմենակ Դազարյան/ հորդորների շնորհիվ: Վերջինս կարևորում էր Բասենի ու Խնուսի դերը՝ Մուշ-Սասուն զենք փոխադրելու գործում: Այդ նպատակով Արամ Արամյանը հաստատվում է Բասենի Քյոփրի-Քյոյ գյուղում՝ դառնալով կապող օղակ Էրզրումի կենտրոնական կոմիտեի, Կովկասի և Տարոնի գործիչների միջև:

1895թ. օգոստոսին՝ ռուսական սամովարի վաճառականի անվան տակ Էրզրում է մտնում նաև Հ. Յ. Դաշնակցության առաջնորդներից մեկը՝ Ռոստոմը /Ստեփան Զորյան/: Այստեղից նա մեկնում է Տրապիզոն՝ զենքի փոխադրության գործը կարգավորելու համար: Նույն շրջանում Հ. Յ. Դաշնակցության կողմից մատնիչների և դավաճանների հանդեպ կազմակերպել են մի շարք ահաբեկչական գործողություններ:

Այսպիսով, 1895 թ. աշնանը սկիզբ առած արևմտահայերի զանգվածային ջարդերի նախօրեին Հ. Յ. Դաշնակցությունն արդեն հասցրել էր իր կազմակերպական կառույցը ձևավորել Էրզրումի վիլայեթում: Սկսվել էր նաև զենքի ու զինամթերքի տեղափոխման երկարատև ու դժվարին գործը: Սակայն, այդ քայլերի արդյունավորման համար անհրաժեշտ ժամանակ էր պահանջվում, մինչդեռ 1895 թ. սեպտեմբերի 18-ին՝ ի պաշտպանություն 1895 թ. «Մայիսյան բարենորոգումների» ծրագրի Կ. Պոլսում հնչակյանների կազմակերպած ցույցը դարձավ մայրաքաղաքում ու կայսրության տարբեր վայրերում, այդ թվում և Էրզրումի վիլայեթում, զանգվածային ջարդերի առիթ: Էրզրումում Հ. Յ. Դաշնակցությունը՝ դիմադրելով ջարդարարներին, կորցրեց Ավետիս Վեմյանի և Հովհաննես Կորկոտյանի նման կարող ուժերի, բայց ավելին անելու և փաստորեն սուլթանի ծրագրերի իրականացմանը նպաստած՝ հնչակյանների այդ հախուռն ձեռնարկի հետևանքները կանխելու հնարավորություն չունեցավ: Ուժերի հարաբերակցությունն ակնհայտորեն շարունակում էր մնալ հակառակորդի օգտին:

---

[21] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 420, ց. 16, գ. 11, թ. 41:

ՌՈՒԲԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

ԿԻԼԻԿԻԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ
19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին

19–րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին կրթական համակարգը օսմանյան կայսրությունում գտնվում էր բարձիթողի վիճակում: Աբդուլ Համիդ սուլթանի վարչակարգի կողմից կրթությանը տրամադրված ֆինանսական միջոցները երիցս անբավարարն էին պահանջվող ծախսերը դույզն իսկ հոգալու համար: Այսպես՝ 1887թ. կրթության համակարգին հատկացվել էր Թուրքիայի պետական բյուջեի 0,6% ը, որը տարիների ընթացքում պակասելով, 1904 թ. կազմել էր ընդամենը 88.000 լիրա կամ բյուջեիբ 0.4 %-ը: Ընդսմին, այդ գումարը նախատեսվել էր միայն պետական ուսումնական հաստատությունների համար:

1898-1899 թթ. օսմանյան պետությունում գործում էին կրոնական համայնքների կողմից ղեկավարվող 28.615 մահմեդական և 5982 ոչ մահմեդական դպրոցներ: Անթույլատրելի էր քրիստոնյաների և մահմեդականների համատեղ կրթությունը: Կային միայն որոշ բացառություններ: Բավական է նշել, որ ողջ Թուրքիայի տարբեր պետական ուսումնական հաստատություններում 1900 թ. սովորում էին ընդամենը 300 հայեր:[1]

Այս պայմաններում հայկական դպրոցները գործում էին եկեղեցուն կից: Հարկ է նշել, որ հայոց առաքելական եկեղեցին կիրառվող հալածանքներին և բռնություններին հակազդում էր նաև կրթա-մշակութային աշխույժ գործունեությամբ, դրանով իսկ, կամա թե ակամա, նպաստելով ազգային զարթոնքին և ազգային գաղափարախոսության ձևավորմանը: Ազատագրական պայքարի գաղափարները, արևմտահայության սահմանադրական շարժումը, հայ ժողովրդի ազգային համախմբման գործընթացի աշխուժացումը նոր խնդիրներ էին առաջադրում նաև եկեղեցու կրթա-մշակութային գործունեությանը:

19–րդ դարի 50-60-ական թվականներից Հայաստանում գործող բազմաթիվ միությունների, ընկերությունների և կազմակերպությունների հետ և կողքին հայ առաքելական եկեղեցին, ժամանակի ոգուն և պահանջներին համահունչ, կրթական գործունեությունը ծավալում և ամրապնդում էր նաև հայկական գավառներում:

1870 - ական թվականներից գործում էր դպրոցների նոր տիպ՝ հոգևոր կամ վիճակային դպրոցը, որտեղ դասավանդումը ծխական

---

[1] Желтяков А.Д., Петросян Ю. А., История просвещения в Турции (конец XVIII – начало XX вв.), Москва, 1965, с. 71.

դպրոցների ծրագրերից բացի, ներառում էր որոշակի գիտելիքներ հայոց և ընդհանուր պատմությունից, ֆիզիկայից, հանրահաշվից և բնագիտությունից՝ ուսման 6-8 տարվա տևողությամբ: Աստիճանաբար լայն տարածում էին ստանում նաև իգական հոգևոր դպրոցները:

Ընդհանրապես՝ 1860-70 ական թթ. շրջադարձային էին արևմտահայ կրթական կյանքում: Ազգային սահմանադրության հաստատումից հետո, 1863 թ. Կ. Պոլսում ընտրված Ռիսումնական խորհուրդը քննարկեց և 1864 թ. ընդունեց Ատ. Փափազյանի հեղինակած ազգային վարժարանների բարեկարգությանը ընդհանուր կանոնադրությունը, ըստ որի ազգային դպրոցները բաժանվում էին երկու կարգի՝ նախակրթարան /տարրական/ և երկրորդական /միջնակարգ/՝ ուսման համապատասխանաբար 4 և 5 տարի տևողությամբ:

1870-ական թթ. Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ շրջաններում գործում էր ավելի քան 450 հայկական դպրոց՝ 24.000 աշակերտներով, իսկ 20–րդ դարի սկզբին՝ 813 դպրոց՝ 60.000 արական և 22.000 իգական սեռի աշակերտներով: Ժամանակակիցների վկայությամբ՝ հայկական յուրաքանչյուր մեծ գյուղում և քաղաքում, բոլոր բնակավայրերում, որտեղ հայերը մեծ թիվ էին կազմում, գործում էին տարբեր ուսումնական ծրագրերով բազմաթիվ դպրոցներ: «Եթե հաշվի առնենք, որ բազմաթիվ հայ երեխաներ սովորում էին հայկական մասնավոր դպրոցներում, ապա 1901 թ. հայ աշակերտների ընդհանուր թիվը հասնում էր 104.500-ի»:[2]

Հարկ է նշել, որ դպրոցներ բացելու և հայ մանուկներին կրթելու համար արևմտահայությունը հատուկ հարկ էր վճարում: Այդ մասին Կ.Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանը 1895 թ. գրել է. «Հայոց ազգը՝ պետության գանձարանին վճարած տուրքերեն զատ՝ կը վճարե նաև կրթական տուրք մը, սակայն առանց այդ տուրքեն բաժին մը ստանալու և իր վարժարանաց համար՝ անոնց պետքերը կը հոգա կամավոր հանգանակությամբ: Իսկ թե՛ վարժարանաց, և թե՛ եկեղեցյաց այս պետքերուն համար եղած հանգանակությունք մեծ դժվարությանց մատնված էին Տերության վերջին մեկ կարգադրության պատճառով և այժմ բոլորովին արգելված են»:[3]

Կրթության զարգացման համար, անկասկած, որոշ նշանակություն ունեցավ երիտթուրքական հեղաշրջումը: Դա պայմանավորված էր համիդյան վարչակարգի տապալման, բռնության կապանքների կարծեցյալ վերացման, քաղաքական ու տնտեսական վերափոխումների հրամայական անհրաժեշտության հետ, քանզի, և երիտթուրքերը դա ըմբռնում էին, բարեփոխումներն առանց կրթության և գիտության զարգացման՝ անհնար էին: «Քաղաքական կյանքի առաջընթացը, - գրել է

---

[2]. Նույն տեղում, էջ 81:

[3] Հայաստանի ազգային արխիվ /այնուհետև՝ ՀԱԱ/, Ֆ.Պ – 57, ց. 2, գ. 3, թ. 7:

ականատեսներից մեկը, - իրեն անմիջապես զգացնել տվեց դպրոցներում»:[4] Արդեն 1910 թ. Թուրքիայում գործում էին 36230 դպրոցներ՝ 1.331.200 սովորողներով:[5]

Քաղաքական ժամանակավոր (ընդամենը մի քանի ամիս) և անկատար ազատություններն օգտագործեցին նաև հայերը՝ նոր թափ հաղորդելով կրթական գործին: Բայց շուտով երիտթուրքերը, դեն նետելով դիմակը, սկսեցին ընդգծված ձևով վարել թուրքացման քաղաքականություն, որը նշանակում էր վերջ օսմանյան կայսրության տարածքում ապրող ոչ թուրք ժողովուրդների ազգայինի ցանկացած դրսևորման: 1915 թ. թուրքական կառավարության հատուկ որոշմամբ արգելվեց բոլոր մասնավոր դպրոցների, ներառյալ և ամենակարևորը՝ ազգային փոքրամասնությունների ուսումնական հաստատությունների գործունեությունը: Մասնավոր դպրոցի գոյությունը թույլատրելի էր միայն այն դեպքում, եթե ուսուցումն իրականացվեր թուրքերեն, դասավանդվեր Թուրքիայի պատմություն և աշխարհագրություն:[6]

Հայկական դպրոցների լայն ցանցի ստեղծումը, կրթական գործի զարգացումը էլ ավելի կարևորվում էր Կիլիկիայում, որի հայությունը, անջրպետված լինելով Արևմտյան Հայաստանից, ենթարկվելով բազմաթիվ ճնշումների, հայերենի արգելման պայմաններում հիմնականում դարձել էր թրքախոս: «Տաճիկ լեզուն ընդհանրապես, մանավանդ դաշտային Կիլիկիայում և Տավրոսի մեկ մասին մեջ կ՝տիրե մեր եկեղեցիներում. քարոզը միշտ, ճաշու ավետարանը, ընթերցվածներ գրեթե տաճկերեն պիտ ըլլան. թարգմանիչ քահանաներ հարգի են: Գրաբարը անմատչելի է նույնիսկ հայերենախոս լեռնցիներուն, որոնց առտնին խոսվածքն իսկ գյուղե գյուղ բոլորովին կ'տարբերին»:[7]

Դրությունը որոշակիորեն փոխվում է 1870-1880 ական թվականներից՝ կապված ազգային ինքնագիտակցության զարթոնքի, հայկական հարցի՝ միջազգային դիվանագիտության ասպարեզ բարձրանալու, ազգային ազատագրական շարժումների ծավալման, ազգային գաղափարախոսության ձևավորման հետ, երբ հայ հասարակական - քաղաքական շրջանակները, որպես ժողովրդի ազատագրության առաջին քայլ սկսեցին մեծ ուշադրություն դարձնել հայեցի կրթությանն ու դաստիարակությանը: Կրթական խնդիրների իրականացմանն էին հետամուտ 1870 թ. ստեղծված Դպրոցասիրաց ընկերությունը, 1871թ. սեպտեմբերի 1–ին Նուբար– Շահնազարյան վարժարանի սաների կողմից Հաճընում վարժարան բացելու համար հիմնված Վարդանյան ընկերությունը և 1876 թ. բացված Արարատյան

---

[4] Buxton Roden C., Turkey in Revolution, London - Leipsic, 1909, p 81:
[5] Желтяков А. Д., Петросян Ю. А., նշվ. աշխ., էջ 101:
[6] Նույն տեղում , էջ 103:
[7] Մատենադարան «Արաքսի», Կիլիկիա, Փորձ աշխարհագրության արդի Կիլիկիո /այսուհետև՝ Կիլիկիա.../ , Պետերբուրգ, 1894, էջ 23 -24:

ընկերությունը: 1878 թ. փետրվարի 18 –ի որոշմամբ Վարդանյան ընկերությունն իր գործունեության ասպարեզ է ընտրում բովանդակ Կիլիկիան՝ վերանվանվելով Կիլիկյան ընկերության: Վերջինս 1880 թ. միանում է Արարատյան ընկերության հետ՝ հիմք դնելով Միացյալ ընկերությանը, որն էլ ձեռնամուխ է լինում դպրոցների բացմանը Կիլիկիայում, բայց, կապված ֆինանսական և տնտեսական բազմաթիվ դժվարությունների հետ, գործն առաջ էր գնում դանդաղ տեմպերով:

Դեռևս 1860 - ական թթ. քննարկվում էր Կիլիկիայում բարձրագույն վարժարան բացելու հարցը: Հայտնի է, որ Կարապետ վարդապետ Շահնազարյանն իր ողջ հարստությունը՝ 1000 օսմանյան ոսկի, կտակել էր Կիլիկիայում ժառանգավորաց վարժարան հիմնելու համար: Նույն նպատակի համար 3000 օսմանյան ոսկի էր տրամադրել եգիպտահայ մեծահարուստ Նուբար փաշան, բայց ինչ–ինչ նկատառումներով, նա և Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը վարժարանը բացում են Կ. Պոլսում՝ հայտնի Առաքել–Նուբար–Շահնազարյան անունով: Եվ չնայած Կիլիկիո կաթողիկոս Մկրտիչ Քեֆսիզյանը քանիցս դիմել էր Կ. Պոլիս՝ Շահնազարյանի կտակը Կիլիկիայում գործադրելու համար, մասնավորապես՝ երբ Նուբար- Շահնազարյան վարժարանը դադարել էր գործելուց, սակայն նրա ջանքերն արդյունք չեն տվել:

1880 - ական թթ. վերջին և 1890 ական թթ. սկզբին Ադանա քաղաքում գործում էին Արամյան տարրական վարժարանը, երկսեռ Աբգարյան և Աշխենյան վարժարանները /150 – 200 սաներով/, կաթոլիկ եկեղեցու կողմից բացված և ճիզվիտների հովանավորությամբ գործող մեկ արական դպրոց /200 աշակերտներով/, բողոքական հարանվանության մեկ երկսեռ դպրոց, ինչպես նաև երկու հունական և այլ ազգերին պատկանող մի քանի դպրոցներ: Նույն աղբյուրի վկայությամբ՝ 1890-ական թթ. սկզբներին Ադանայի վիլայեթում /ծխական դպրոցները չհաշված/ գործում էր հայկական 10 դպրոց՝ 1200 երկսեռ աշակերտներով, ինչպես նաև կաթոլիկ հարանվանության 4 դպրոց՝ 200 աշակերտներով, հունական և արաբական 10 դպրոց՝ 303 սաներով , ընդամենը՝ 31 դպրոց 1923 աշակերտներով: [8]

1913 թ. Կիլիկիա այցելած Ա. Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող Մ.Ցիցիկյանը նշում է, որ, չնայած կիլիկիահայության համեմատաբար բարքով դրությանը, դպրոցները « սարսափելի» վիճակում էին: Նրա տվյալներով՝ 1913 թ. Ադանայի ազգային դպրոցում 10-ամյա դասընթացով սովորում էին 688 տղաներ, իսկ օրիորդաց վարժարանում՝ 515 աղջիկներ 6 ամյա դասընթացով, տարրական դպրոցում կամ մանկապարտեզում՝ 170 երկսեռ աշակերտներ 3 - ամյա դասընթացով: Այդ երեք դպրոցների

---

[8] Գալուստյան Գր. Հ., Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու-Յորք, 1934, էջ 20:

տարեկան բյուջեն կազմում էր 1800 թուրքական լիրա, որից 500 – ը որպես ուսումնավարձ մուծվում էր սովորողների ընտանիքների կողմից, իսկ մնացածը հոգացվում էր թեմական միջոցներից: Դպրոցներում դասավանդում էին 46 ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնց տարեկան աշխատավարձը կազմում էր 150 ռուբլի: Առավել ծանր էր գյուղական ուսուցիչների վիճակը: Այսպես, Ադանայի շրջակա գյուղերում նրանց տարեկան աշխատավարձը 60 - 80 ռուբլի էր, իսկ հեռավոր, լեռնային շրջաններում՝ ընդամենը 5 – 6 ռուբլի:[9]

Խոսելով Ադանայի կրթական վիճակի մասին, Մուշեղ եպիսկոպոս Աերոբվյանը գրում է, որ սեպտեմբերին աշակերտների ընդամենը 10 – 20 տոկոսն է հաճախում դասերին, մեծ մասը դպրոց են գնում հոկտեմբեր - նոյեմբեր ամիսներին, երբ «երկու ամիս արդեն կորսնցուցած կ՝ըլլանք դպրոցական տարեշրջանեն»:[10] Պատճառը բամբակի հավաքումն էր, որին ծնողները մասնակից էին դարձնում իրենց զավակներին:

Կրթական գործը Հաճընում սկսում է աշխուժանալ 1860 - ական թթ., երբ «Անձնվեր ընկերության» կողմից Հաճընն են ժամանում եղիա Տնտեսյանը, Նազարեթ Տեպեճյանը, Հակոբ և Մինաս Թուրսարգսյանները՝ հիմք դնելով աշխարհաբար ուսուցմանը:

1890 - ական թթ. հաճընցիները Ս. Աստվածածին և Ս. Գևորգ եկեղեցիներում սեփական միջոցներով դպրոցներ են բացում /200 երկսեռ աշակերտներով/, որոնք գոյատևում են մինչև Կիլիկիո 1909 թ. կոտորածները: Սուրբ Աստվածածին եկեղեցու արական դպրոցում դասավանդում էր զատագրական շարժման հայտնի գործիչ Համբարձում Բոյաջյանի /Մեծն Մուրադ/ եղբայր Մարտիրոս Բոյաջյանը / ժիրայր / հայ պատանիների հոգում ազատագրական գաղափարների ծիլեր սերմանելով: 1912 – 1913 թթ. կառուցվեց Սահակ - Մեսրոպյան իգական վարժարանը, որը, ցավոք, չգործեց հայտնի պատճառներով, իսկ հետագայում, 1920 թ. հոկտեմբերի 15– ին, Հաճընի գրավման օրը, հրդեհվեց թուրքերի կողմից: Դպրոցի կառուցման նախաձեռնությունը պատկանում էր Հաճընի հայության հոգևոր առաջնորդ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանին: Կրթօջախի կառուցման համար 600 դոլար էին տրամադրել ԱՄՆ – ում բնակվող հաճընցիները :[11]

«Արաքս»-ի Կիլիկիայի վկայությամբ՝ 1890 - ականների սկզբին Հաճընում գործում էին մասնավոր, առանձին ընտանիքների կողմից պահվող հայկական դպրոցներ, ինչպես նաև՝ բողոքական հարանվանության մեկ դպրոց՝ 30 աշակերտներով: [12]

---

[9] « Մշակ », 1913, թիվ 166, 31 հուլիսի:

[10] Սերովբյան Մուշեղ եպիսկոպոս, Հովիվին խրատները ուղղված Ատանայի ու ամբողջ թեմական ժողովրդին, Կ. Պոլիս, 1908, էջ 29-30:

[11] Պողոսյան Հ. Դ., Հաճընի ընդհանուր պատմությունը և շրջակա Գօզան-Տաղի հայ գյուղերը, Լոս Անջելես, Կալիֆոռնիա, 1942, էջ 453:

[12] Կիլիկիա..., էջ 35:

Հաճընում կրթական արդյունավետ գործունեություն էր ծավալել անգլոհպատակ կանադացի դոկտոր Ս. Մարթինը, որը 1892 թ. որպես միսիոներ հաստատվել էր Հաճընում: Նա էր, որ հիմնադրեց բողոքական եկեղեցուն կից դպրոցը, իսկ ավելի ուշ, Քեսաբենյանների տան բակում կառուցեց հինգ հարկանի շքեղ և արդիական դպրոց: Այդ նորակառույց, «Ակադեմիա» բարձրագոյ անունը կրող դպրոցում ուսանում էին ոչ միայն հայ բողոքական, այլև հայ առաքելական եկեղեցուն դավանող երեխաներ: Գործում էր 4 դասարան՝100-150 աշակերտներով: Դպրոցի շրջանավարտներն առանց քննության ընդունվում էին Այնթապի կենտրոնական վարժարան, Տարսոնի Սենթ Փոլ քոլեջ,Գոնիայի Ջենանյան քոլեջ:[13]

Դպրոցին կից Ս. Մարթինն անգլիական միսիոներական ընկերության դրամական օժանդակությամբ հիմնել էր մասնուծա-գործության և կահույքագործության փոքրիկ արտադրություններ, որոնց արտադրանքն արտահանվում էր ԱՄՆ և արժանացել էր Մեծ Բրիտանիայի Վիկտորիա թագուհու հավանությանը:[14]

1898թ. Հաճընում հաստատված միսիոներուհիներ Մարի Գերբերը և Ռոզա Լեմբրրթը ԱՄՆ-ում հանգանակած նվիրատվություններով և «Մեն Օնայթ» միսիոներական ընկերության աջակցությամբ քաղաքում արական և իգական վարժարաններ են բացում, որոնք, կարճ ժամանակ անց մեծ ճանաչում են ձեռք բերում: Ինչպես նշել է ժամանակակիցներից մեկը՝ «...օտար վարժարաններու մրցումը կարևոր դեր մը կատարած է մեր կրթական գործին մեջ: Օտար կաթոլիկ և ամերիկյան միսիոներությանց վարժարանները խթան մը եղան հայ վարժաններու համար: Օտար վարժարաններ ալ հայ ուսանողներու ազգայնական տրամադրությանց մասամբ գոհացում տալու համար հայերենի ուսումը նվիրագործեցին: Այս մասին նշանակելի են ամերիկյան Գոլեջներն ու Բարձր. վարժարանները»:[15]

Միսիոներները, անկասկած, հետապնդում էին ոչ միայն կրոնական, դավանաբանական և գաղափարախոսական խնդիրներ, այլև քաղաքական նպատակներ՝ հանդես գալով իրեն պետությունների քաղաքական, տնտեսական և մշակութային շահերի պաշտպանության դիրքերից, այնուամենայնիվ, նրանց գործունեությունը կրթության բնագավառում արժանի է բարձր գնահատականի, քանզի հայ երիտասարդությունը, համապատասխան կրթություն ստանալով, ծանոթանում էր համաշխարհային մշակույթին, հասունանում գաղափարապես և քաղաքանապես:

Նույն 1898թ. հաճընցի հայ երիտասարդները Ս.Հակոբ եկեղեցում բացում են Հաճընի առաջին որբանոց-դպրոցը, որը գործում է 4 տարի:

---

[13] Պողոսյան Հ. Պ., նշվ. աշխ., էջ 390-391:
[14] Նույն տեղում, էջ 394:
[15] ՀԱԱ, Ֆ. Պ-57, ց. 2,գ. 3, թ. 8:

Ադանայի 1909 թ. կոտորածներից հետո վանեցի Խաչատուր Գռուզյանի տնօրինությամբ սկսում է գործել «Ազգային երկսեռ որբանոցը»: Նմանատիպ ուսումնական հաստատություններից էր հայ կաթոլիկների ջանքերով բացված Ալայան վարժարանը: Եվ այս բոլոր հայկական կրթօջախների կողքին Հաճընում գործում էր թուրքական ընդամենը երկու դպրոց:[16]

Կրթական գործը Զեյթունում զարգանում էր դանդաղ և աննպաստ պայմաններում: 1848թ. Զեյթունի հոգևոր առաջնորդ, գառնեցի Հովհաննես վարդապետի նախաձեռնությամբ և բնակչության նվիրատվություններով կառուցվում է դպրոց, որտեղ սովորում էին 150 աշակերտներ: Ավելի ուշ, 1856թ. Կ. Պոլսից Զեյթուն ժամանած «Հարություն Յուբուրճյանը կառուցել է տալիս Զեյթունի վարժարանը»:[17] 1865թ. Զեյթունում ուսուցիչ է նշանակվում Կ. Պոլսում կրթություն ստացած, բնիկ զեյթունցի Հարություն Չագրյանը, որը, տնօրինելով Զեյթունում կրթության զարգացման համար կահիրեցի Պողոս Կարապետյանի 400 և ալեքսանդրիացի Թագվոր Հակոբյանի 200 օսմանյան ոսկի տրամադրած գումարը, հասնում է որոշ դրական տեղաշարժերի:

1878-1879թթ. Զեյթունում երկսեռ վարժարաններ են բացվում Կիլիկյան ընկերության կողմից: 1879թ. հուլիսի 20-ին ընկերությունը Կ. Պոլսից պաշտոնական գրությամբ դիմում է Շուշիի հոգևոր առաջնորդ Արիստակես վարդապետ Սեդրակյանին՝ խնդրելով հանգանակություն կատարել «ի նպաստ Զեյթունի կիլիկյան վարժարանի... ամեն ջանք ի գործ դնել ընկերության զարգացման համար ի հառաջադիմություն Կիլիկիո հայ մանկտոյն»:

1880թ. Զեյթունի և գավառակի կրթական գործի կազմակերպումը ստանձնում է Միացյալ ընկերությունը՝ հաջորդաբար որպես ուսուցիչներ ուղարկելով Բարսեղ Վարդուկյանին, Սմբատ Բյուրատին (Տեր-Ղազարյան) և Ավետիք Կեսխանյանին, որը հերոսաբար զոհվեց Զեյթունի 1895թ. ապստամբության ժամանակ:

Հայտնի արձակագիր և հրապարակախոս Սմբատ Բյուրատը Հ. Չագրյանի մերձավոր զինակիցն էր:Իր ծննդավայրում որոշ ժամանակ գործելուց հետո նա վարժարան է հիմնում Ասում, 1885-1887թթ. «Միացյալի» կողմից նշանակվում է Զեյթունի դպրոցների տնօրեն, ապա իր հայրենանվեր գործունեությունն է ծավալում Կ. Պոլսում:[18] Նոր դարի շեմին «Միացյալը» Զեյթունում տնօրինում էր 1 վարժարան, 4 ծաղկոց (մանկապարտեզ-տարրական դպրոց)՝ 12 ուսուցիչներով և 455 աշակերտներով, որոնց տարեկան ծախսը կազմում էր 200 օսմանյան ոսկի:

---

[16] Պողոսյան Հ.Պ., նշվ. աշխ., էջ 474:
[17] Պողոսյան Հ.Մ., Զեյթունի պատմությունը, Երևան, 1969, էջ 150-151:
[18] Գալուստյան Գր. Հ., նշվ. աշխ., էջ 117:

Վարժարան-դպրոցներ էին բացվել գավառակի Ֆռնուզ, Կոկիսոն, Թաշ-օլուգ Քիրեճ, Շիվիլկի, Մխալ, Կապան, Ալպիսթան գյուղերում և այլուր:1890-ական թթ.գավառակի 28 վարժարաններում սովորում էին 1592 երկսեռ աշակերտներ, որոնց դասավանդում էին 57 ուսուցիչներ:[19] Նշենք, որ Զեյթունում կրթական գործի նվիրյալներից և երախտավորներից էր Մնացական Սեմերճյանը (սկզբնաղբյուրի նշանակություն ունեցող «Զեյթունի անցյալեն և ներկայեն» գրքի հեղինակը):

Մարաշի ամենավաղ ուսումնական հաստատություններից էր աստվածաբանական ճեմարանը, որը 1854թ. հիմնադրվել էր Այնթապում և 1865թ. տեղափոխվել Մարաշ՝ամերիկյան միսիոներուհի միսս Շնայդերի կողմից: 1850-ական թթ. Մարաշի վեց հայկական եկեղեցիներում գործում էին «Ծաղկոց» կոչվող վեց նախակրթարաններ:[20] Դրանցից ամենահայտնին և հինը Հովհաննես Գառնեցի վարդապետի կողմից 1848թ. Ս. Հովհաննես եկեղեցում բացված Օաղկոց-դպրոցն էր: Կրթական գործի զարգացումն էին հետապնդում Մարաշում ստեղծված Կիլիկյան, Ռուբինյան, Մամիկոնյան, Ընթերցասիրաց ընկերությունները, որոնց ջանքերով բացվեցին տեղական նշանակություն ունեցող մի քանի կրթօջախներ և, այսպես կոչված, դպրոց-ընթերցարաններ, բայց, չունենալով նյութական միջոցներ, նաև չստանալով Կիլիկիո կաթողիկոս Մ. Քեֆսիզյանի աջակցությունը, որոշ ժամանակ անց դադարեցին գործել:[21] Միայն երկարատև ջանքերից հետո 1888-1889թթ. մարաշցիները Մ.Քեֆսիզյանին համոզում են հոգալ Ս. Գևորգ եկեղեցուն կից բացված գիշերօթիկ դպրոցի ծախսերը:[22]

1880թ. Կիլիկյան Հայրենասիրաց ընկերության նախագահ Նահապետ Տեր-Կարապետյանի անմիջական ջանքերով բացվում է Մարաշի կենտրոնական վարժարանը: Վարժարանին նոր շունչ և ոգի է հաղորդում 1882թ. Միացյալ ընկերության կողմից Կիլիկիո դպրոցների տեսուչ նշանակված Բարսեղ Վարդուկյանը՝ «դպրոցական նոր մեթոդներ ներմուծելով վարժարաններեն ներս»: Այստեղ տարբեր տարիներին դասավանդել են Միսաք Էլմասյանը, Դավիթ Տեր-Ղազարյանը, Սմբատ Բյուրատը և ուրիշներ: 1910թ. Մարաշի հայոց հոգևոր առաջնորդ Մկրտիչ արքեպիսկոպոս Վեհապետյանը կառուցել է վարժարանի երկրորդ հարկը, բարեկարգել քաղաքի երկու իգական վարժարանները, որտեղ սովորում էին 200 աշակերտուհիներ:[23]

---

[19] Զեյթունի պատմագիրքը, Բուենոս-Այրես, 1960, էջ 648:
[20] Գալուստյան Գր. Հ., նշվ. աշխ., էջ 433:
[21] Առաքելյան Հ., Զեյթուն, Թիֆլիս, 1896, էջ 55-56:
[22] Գալուստյան Գր. Հ., նշվ. աշխ., էջ 608:
[23] Նույն տեղում, էջ 441-443:

Մեծ համբավ էր վայելում 1882թ. Մարաշի հայ ավետարանական համայնքի նվիրատվություններով բացված ամերիկյան իգական քոլեջը, որն առանձնակի ծաղկում ապրեց միսիոներուհի էլեն Բլեյքլի տնօրինության տարիներին:Մինչև 1905թ. քոլեջն ունեցել էր 96 շրջանավարտ: 1905-1906 ուս. տարում քոլեջում սովորում էին 89 ուսանողուհիներ ոչ միայն Մարաշից, այլև Ադանայից, Հալեպից, Հաճընից, Զեյթունից և Եդեսիայից, իսկ 1912թ.՝ 117 ուսանողուհիներ:[24]

1897թ. Մարաշում բացվել էր նաև Հռիփսիմյան իգական նախակրթարանը, որտեղ հայերենի հետ միաժամանակ ուսուցանում էին ֆրանսերեն:

Դեռևս 1891թ. Մարաշում բացվել էր «Ակադեմիա» բարձրագույն վարժարանը, որի հիմնադիր տնօրենը և տեսուչը միսիոներ Թոմաս Դևիդսոն Քրիսթին էր: 1893-1908թթ. վարժարանն ավարտած 92 շրջանավարտներից շատերն իրենց ուսումը շարունակել էին Այնթապի և Տարսոնի քոլեջներում: Վարժարանում աշակերտներն ուսանում էին հայերեն, անգլերեն, թուրքերեն, հայ ժողովրդի պատմություն, աշխարհագրություն, կրոն և այլն:

Ընդհանուր առմամբ, 19-րդ դարի վերջերին Մարաշի սանջակի 552 գյուղերում գործում էին 153 հայկական տարրական դպրոցներ 6567 աշակերտներով:[25] Կային նաև բազմաթիվ դպրոց-որբանոցներ:

1890-ական թթ. ջարդերից հետո, 1896թ. ԱՄՆ-ում բնակվող ոմն Ճենանյանի նպաստով որբանոց է բացվում Ա. Ստեփանոս եկեղեցում, որը գոյատևում է մինչեւ 1914թ.: 1898թ. դպրոց-որբանոց է հիմնում Իսահակ ժամհարյանը, որի խնամքին հանձնված 90 հայ մանուկների ծախսերը հոգում էին Մոսկվայի հայ վաճառականները՝ Կ. Պոլսի պատրիարքարանի միջոցով ամեն ամիս Մարաշ ուղարկելով 30 ռուբլի:[26] Ադանայի կոտորածներից հետո Կ. Պոլսի Ազգային խնամակալության հանձնաժողովի կողմից բացվում է այսպես կոչված «Ազգային որբանոցը», որտեղ ապաստան էին գտել 115 տղաներ և 90 աղջիկներ: Այն, շնորհիվ տնօրեն Հարություն Տեր-Ղազարյանի անհավատալի ջանքերի և գերմանացի միսիոներների օգնության, իր գոյությունը պահել է նույնիսկ եղեռնի և տարագրության ահասարսուռ տարիներին: Ավելի ուշ որբանոցը հանձնվում է Մերձավոր Արեւելքի նպաստամատույցի տնօրինությանը:

Մարաշում հայտնի էին նաեւ գերմանական «Բեյթ Շալոմ» և «Բեյթել» որբանոց-դպրոցները, որոնք 1899 թվականից ղեկավարում էին միսիոներուհի Ռուբախը և միսիոներ Սփիքրը: Վերջինս հայերի հետ ունեցած ջերմ բարեկամությունը եւ նրանց ցույց տրվող օգնությունը շարունակում էր նաեւ 1915-1916թթ: Նրա հովանավորությամբ էր

---

[24] «Կոչնակ», 1912, թիվ 6, 10 փետերվարի:
[25] Желтяков А. Д., Петросян Ю. А., նշվ. աշխ., էջ 66:
[26] Գալուստյան Գր. Հ., նշվ. աշխ., էջ 470:

գործում Ագնես Սալմոնդի՝ 500 հայ որբերի խնամակալությունը ստանձնած «Աբբենեզեր» որբանոցը:[27]

Կիլիկիայի կրթական խոշոր կենտրոններից էր Այնթապը: 1873թ. մարտի 1-ին Մկրտիչ Քեֆսիգյանի նախաձեռնությամբ և Նշան Թերզյանի տնօրինությամբ բացվում է «Կիլիկիո գիշերօթիկ հոգևոր վարժարանը», բայց, չորս տարի անց, ֆինանսավորման բացակայության պատճառով, փակվել է:

Այնթապում էր գտնվում Թուրքիո կենտրոնական վարժարանը, որն իրականացնում էր բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր: Ամերիկյան միսիոներների եւ այնթապցի հայերի համատեղ ջանքերով 1876թ. հոկտեմբեր ամսին 55 ուսանողներով բացված այդ քոլեջը նախատեսված էր միայն հայ պատանիների համար: Այստեղ դասավանդում էին ԱՄՆ-ում կրթություն ստացած աստղագետ և երկրաբան Սարգիս Լևոնյանը (սպանվել է 1909թ. կոտորածների ժամանակ Օսմանիեի մոտ), պրոֆեսոր Ալեքսան Պեզճյանը, Ֆրանսիայում իրավաբանի որակավորում ստացած պրոֆեսոր Զենոբ Պեզճյանը, Արմենակ Չամչյանը եւ ուրիշներ: 1878թ. քոլեջին կից բացվել են բժշկական վարժարան եւ հիվանդանոց, որը անվանվել է Այնթապում առաջին միսիոներ Ազարիա Սմիթի անունով: Քոլեջի վերջին տնօրենն էր Ջոն է. Մերիլը, որը ցեղասպանության դժնդակ տարիներին բազմիցս սատարել էր տարագիր հայերին, շատերին ապաստան տվել քոլեջում՝ փրկելով ստույգ մահից:

Այնթապում գործում էին Ներսեսյան (արական) եւ Հայկանուշյան (իգական) վարժարանները, որոնք «կառավարվում էին կալվածներու հասույթով»:[28]

Այնթապում էին գտնվում նաև Վարդանյան և Արդենական երկրորդական վարժարանները, ամերիկյան իգական սեմինարիան, ավելի քան 20 մանկապարտեզներ:[29]

1912թ. սեպտեմբերի 19-ին բացվում է «Կիլիկյան բարձրագույն վարժարանը», որը Կիլիկիո կաթողիկոս Սահակ Խապայանի հատուկ կոնդակով 1913թ. օգոստոսի 11-ին վերանվանվում է Կիլիկյան Ճեմարանի:Այն «իր ընդհանուր մանկավարժական և եկեղեցագիտական դասընթացներով կոչված էր մեծ ծառայություն մատուցելու Կիլիկիո հայությանը»:[30] Զուտ հայկական ճեմարանի բացումը կարևոր երևույթ էր կիլիկիահայ իրականության մեջ, քանզի «մեր կրթական եւ կրոնական պաշտոնյաներեն մեծագոյն մասը օտար (միսիոներական եւ փրոփականդիստական) հաստատությանց մեջ կրթված ըլլալով՝ ըստ արժանավոյն եւ արդյունալի չեն կրնար ծառայել ազգային ինքնատիպ

---

[27] Նույն տեղում:
[28] Գուտուլյան Գր. Հ., Կիլիկյան աշխարհագրություն, Կ. Պոլիս, 1922, էջ 29:
[29] Պողարյան Գր., Ցեղասպան թուրքը, Բեյրութ, 1973,էջ 120:
[30] ՀԱԱ, Ֆ.Պ-57, ց. 2, գ. 1029, թ. 1:

դաստիարակության և տոհմային ինքնուրույն գոյության ու ինքնապաշտպանության նվիրական գործին»,- իրավացիորեն նշել է Ս. Խապայանը:[31] Ցավալի էր, որ, չնայած ճեմարանի տնօրեն Հակոբ Ղազարյանի գործադրած ջանքերի, այնուամենայնիվ, անբավարար էր հայ ուսուցիչների թիվը:

Ոչ միայն Կիլիկիայի, այլև Թուրքիայի կրթական հայտնի կենտրոններից էր Տարսոնը, որտեղ գործում էր Ս. Պողոսի (Սենթ Փոլ) 5-ամյա դասընթացով քոլեջը և 4-ամյա դասընթացով տարրական դպրոցը: Հաստատությունը կառուցվել էր 1888թ. ԱՄՆ-ի Նյու-Յորքի նահանգային իշխանության արտոնագրով՝ ամերիկյան միսիոներների նախաձեռնությամբ:

Քոլեջի առաջին տնօրեն Ս. Ճենանյանի (1888-1893թթ.) պաշտոնավարության տարիներին կրթօջախին 100.000 դոլար էր նվիրել ամերիկացի մեծահարուստ գնդապետ Շեփըրտը: Քոլեջը մեծ ծաղկում ապրեց ծագումով իռլանդացի Թոմաս Քրիսթիի տնօրինության տարիներին (1893-1919թթ.): Կրթօջախի այլազգի դասախոսներից էին շվեյցարացի Հեյլ Բրիվը, անգլիացի Հերբերտ Գիբբոնսը (նա 1909թ. գտնվելով Ադանայում՝ անգլիական և ամերիկյան թերթերին մանրամասն տեղեկություններ է հաղորդել կոտորածների վերաբերյալ), ամերիկացի Դ.Ռոջերսը (զոհվել է 1909թ. Ադանայում՝ամերիկյան իգական վարժարանի հրդեհը մարելիս): Քոլեջի հայ դասախոսներից էին Սարգիս Տոնիկյանը, Միհրան Գալաճյանը, Թորոս Եսայանը, Սամուել Մելքոնյանը և այլք: Բացման օրից մինչ 1910թ. քոլեջն ունեցել էր 144 շրջանավարտներ, որոնցից շատերը կրթությունը շարունակել են Բեյրութի ամերիկյան համալսարանում: Ուսանողների ճնշող մեծամասնությունը հայեր և հույներ էին: Գր. Գալուստյանի հավաստմամբ՝ 20-րդ դարի սկզբին քոլեջում սովորող 100 ուսանողներից հույներ էին 15-20-ը, մնացածը՝ հայեր:[32] 1890-ական թվականներին Տարոնում գործում էին նաև 4 հայկական դպրոցներ, որոնցից առավել հայտնի էր Ս. Աստվածածին եկեղեցուն կից Լուսինյան երկսեռ տարրական դպրոցը:

Կիլիկիո այլ բնակավայրերում դրությունն առանձնապես բարվոք չէր: Մերսինում կային հայ երեք հարանվանություններին պատկանող հինգ արական և իգական դպրոցներ, մոտ երկու հարյուր աշակերտներով:[33] Առանձնապես վատ էր վիճակը Կիլիկիո կաթողիկոսական նստավայրում՝ Ասում: Մկրտիչ Խրիմյանին 1904 թ. փետրվարի 18-ին գրած նամակում Կիլիկիո կաթողիկոս Սահակ Խապայանը նշում է. «Սսո մեջ բարգավաճ դպրոց պահել անկարելի է, որովհետև կլիման չը ներիր, հազիվ ուսումնական տարին յոթն ամիս կը լինի, այնուհետև

---

[31] Նույն տեղում, g. 2, գ. 278, թ. 74:
[32] Գալուստյան Գր.Հ., նշվ. աշխ.,էջ 526:
[33] Նույն տեղում, էջ 20:

ամբողջ ժողովուրդը կը քաշվի ամառանոցները և վարձյալ պահապաններեն ու մի քանի ջարդ ու փշուր վանականներեն զատ մարդ մը չը մնար: Ամբողջ դպրոց մը ամեն տարի գաղթեցնել այս կամ այն հովասուն վայրը, ըստ իս, նպատակին չը ծառայելե զատ՝ վարողին ալ մեծամեծ և անօգուտ զոհողություններ տալեն ավելի անասելի դժվարությանց պատճառ կ'ըլլայ, ուստի հարմար կը սեպեմ Պապովի (խոսքը վերաբերում է Նոր Նախիջևանցի Մարգար Պոպովին, որը զգալի գումար էր կտակել Կիլիկիայում դպրոց հիմնելու համար-Ռ. Գ.) դպրոցը բանալ կամ Անթեպի, կամ Մարաշի և կամ Անտիոքի մեջ, որ ամենեն ավել անխնամ և մարդ որոնելու կեդրոն և բոյն եղող վիճակն է»:[34]

Ինչպես տեսնում ենք, Սահակ Խապայանը մտահոգ էր ոչ միայն ուսումնական հաստատության բացման խնդրով, այլև այն դիտարկում էր որպես արտագաղթը կասեցնելու կարևորագույն գործոն:

Հարկ է նշել, որ Կիլիկիայում հայ աշակերտների մեծ մասն ուսանում էին օտարերկրյա կրթական հաստատություններում, որոնց թիվն անհամեմատ շատ էր մրցակցությանը չդիմացող և ֆինանսական միջոցներից զուրկ հայկական դպրոցներից: Եվ, հայկական «բարձրա-գույն վարժարանների» բացակայության պարագայում, ինչպես գրել է 1901թ. հունիսի 12-ի նամակում Կիլիկիո կաթողիկոսական տեղապահ Կիրակոս եպիսկոպոսը Մ. Խրիմյանին. «հարուստներն ստիպված են օտար վարժարան ղրկիլ իրենց զավակները. այս վտանգին առաջքն առնել պետք է, մանավանդ որ պապականք /կաթոլիկները-Ռ. Գ./ հոն դպրոց բացած են... ահա մեծագոյն վտանգը, զոր Ձեզ մատնանիշ կընենք».[35]

Խիստ ծանր էր հայ ուսուցիչների նյութական վիճակը, որոնք իրենց հայրենանվեր աշխատանքի դիմաց ստանում էին չնչին աշխատավարձ, ենթարկվում իշխանությունների հալածանքներին: Ուսուցիչներին դիտելով որպես հայ պատանիների սրտում ազգային գաղափարախոսության և ազատագրական պայքարի սերմնացաններ, թուրքական կառավարությունը կեղծ փաստերի, տարբեր զրպարտությունների հիման վրա ձերբակալում էր նրանց, աքսորում կամ արգելում մանկավարժական գործունեությունը: Այսպես, Կ. Պոլսից Ադանա ժամանելուն պես ձերբակալվել էր հայտնի ուսուցիչ Համբարձում Ամատունին:

Եվ իրոք, ազային ոգով դաստիրակությունն ու հայեցի կրթությունը չէր համապատասխանում իր քաղաքական նպատակներին հետամուտ օսմանյան կառավարության շահերին: Հայկական դպրոցներում ազգայինի յուրաքանչյուր դրսևորում դիտելով որպես ազատագրական գաղափարախոսության և շարժման օջախ, վարելով բռնի թուրքացման և ուծացման քաղաքականություն, թուրքական իշխանություններն ամենասանձարձակ հալածանքն էին իրականացնում ազգային գործիչների, կրթական գործի նվիրյալների դեմ:

---

[34] ՀԱԱ, Ֆ.Պ-57, ց.2, գ.1824, թ.10:
[35] Նույն տեղում, ց.2, գ.80, թ.17:

ԱԲՄԱՆ ՍԱՀԱԿՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

ՏԻՎՐԻԿԻ ԳԱՎԱՌԱԿԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ 19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին

Սեբաստիայի /Սվազ/ նահանգը /վիլայեթ/ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայրության կազմում գտնվող Արևմտյան Հայաստանի ընդարձակ վարչատարածքային միավորներից էր: Այն հիմնականում համապատասխանում էր Փոքր Հայքի տարածքին: Սեբաստիայի վիլայեթը 19-րդ դարի վերջին և 20- րդ դարի սկզբին բաժանված էր 4 սանջակների /գավառ/ ՝ Սեբաստիայի, Ամասիայի, Թոխատի /Եվդոկիա/, Շապին Գարահիսարի:

Իր հերթին, Սեբասիայի սանջակը բաժանված էր 10 գավառակների /կազա/ ՝ Սեբաստիայի /կենտրոնական կազա/, Հաֆիքի /Հաֆիգ, Գոչ-Հիսար/, Զառայի /Գոչկիր/, Եըլտըզ-էլի /Ենիխան/, Տիվրիկի /Դիվրիկ/, Գանկալի /Կանգալ/, Թոնուսի /Շարգշլա/, Կյուրինի, Տարենտեի, Ազիզեի[1]:

Տիվրիկի /Դիվրիկ/ կազան, գտնվելով Սեբաստիայի սանջակի մեջ, 19-րդ դարի վերջին և 20- դարի սկզբին սահմանակից էր հյուսիսից Զառայի կազային, հարավից՝ Դիարբեքրիրի /Մամուրեթ-ուլ-Ազիզի/[2] վիլայեթին, արևմուտքից՝ Հաֆիքի կազային, արևելքից՝ Երզրումի վիլայեթին:

Գավառակի կենտրոնը բարձր լեռներով շրջապատված, Ալիս գետի աջ ափին կառուցված Տիվրիկ քաղաքն էր[3]:

1882թ. «Մասիս» թերթի հաղորդած վիճակագրության համաձայն քաղաքն ուներ 3500 տուն բնակչություն, որից 450-ը հայեր էին [4]: 1895թ. արդեն այն ուներ 500 տուն, կամ 4000 շունչ հայ բնակչություն[5]:

---

[1] Հայաստանի Հանրապետության Ազգային արխիվ /այսուհետև՝ ՀՀԱԱ/, ֆ. 398, ց. 1, գ. 14, թ. 104, ֆ. 439, ց. 1, գ. 483, թ. 1: «Հայկազյան հայագիտական հանդես», հ. 15, Բեյրութ, 1995, էջ 499: Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի, Կ.Պոլիս, 1903, էջ 187:

[2] ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Ազգագրության բաժնի արխիվ, թղթապանակ 121/1, էջ 2:

[3] 855թ. Տևրիկ քաղաքը հիմնադրվել է պավլիկյան շարժման առաջնորդ Կարբեասի կողմից և դարձել շարժման կենտրոն: Հետագայում այն ենթարկվել է Սենեքերիմ Արծրունուն և միաժամանակ Սեբաստիայի էյալեթին: 1397թ. այն նվաճվել է սելջուկ-թուրքերի կողմից, բայց այդ ժամանակ քաղաքում գոյություն ուներ իշխանություն, որը մինչև 19-րդ դարի կեսերը գտնվում էր քուրդ դերեբեյների տիրապետության տակ:

[4] «Մասիս», Կ.Պոլիս, 1882, թ. 3491, մայիս 22:

[5] «Դրօշակ», Թիֆլիս, 1895, դեկտեմբերի 15, թիվ 21:

Հայությունը զբաղվում էր առևտրով, արհեստներով, երկաթագործությամբ, դարբնությամբ և այլն:

Քաղաքի հայությունը ծանր դրության մեջ հայտնվեց 1895թ. թուրքերի և քրդերի հարձակման ժամանակ: Այդ է վկայում 1895թ. հոկտեմբերի 24-ին Տիվրիկի առաջնորդարանից կաթողիկոսին ուղղված նամակը, որում մասնավորապես ասված էր. «Քաղաքիս 500 տուն է ավելի հայ բնակիչք գործք բոլորովին հիսնախափ սարսափով պաշարված վայրկյանաբար իրենց տան կրակին կողոպտման կամ բացարձակապես մահվան կսպասին»[6]:

Իրոք, այդ ժամանակ եղավ և թալան և կոտորած: Այդ մասին նույն տեղում, ասվում է. «Տիվրիկ, որ միայն տասն գիւղ ունի հայաբնակ, քրդաց առաջին հարձակմամբ կորսնցուց չորս հազար հինգ հարիւր ոչխար, երկու հարիւր ջորի և հինգ հարիւր եզն և կովեր, երկրորդ հարձակման կորսնցուց քսան կտրիճներ և հարիւրէ ավելի վիրավորներ որոց շատերը ավաղ մահացու կերպով վիրավորված են...»[7]:

Պետք է նկատել, որ այդ կոտորածի հետևանքով քաղաքի հայ բնակչության մի մասն արտագաղթել էր, այնպես որ 19-րդ դարի վերջին քաղաքում հայ բնակչության աճ տեղի չի ունեցել: Այդ է վկայում 1899թ. «Բյուզանդիոն» օրաթերթի հաղորդած տեղեկությունն այն մասին, որ նույն ժամանակ քաղաքի հայ և թուրք բնակիչների ընդհանուր թիվը կազմում էր 9000, որից 500 տունը հայերն էին[8]:

Թուրքերը զբաղեցնում էին քաղաքի հարավային և հարավ-արևմտյան մասերը, որոնք ավելի լայնարձակ և ծառավետ այգիներ ունեին:

Թեև 1895-1896թթ. կոտորածի հետևանքով Տիվրիկ քաղաքի ժողովրդագրական պատկերը որոշ փոփոխություն կրեց, սակայն բնական աճի հետևանքով արդեն 1914թ. հայերը կազմել են 1000 տան և 7000 շունչ[10]:

Բացի այդ խոշոր կենտրոնից հայերը կազայում բնակվում էին Տիվրիկի շուրջ տարածված մոտ մեկ տասնյակ գյուղերում:

Կազայի հարավ-արևմտյան մասում Լիկ գետի երկու ափերին էր տարածվում Օտուռ նահիեն: Նահիեի կենտրոնն էր Օտուռ խոշոր հայաբնակ գյուղը: Աղբյուրները, ինչպես այդ գյուղի, այնպես էլ նահիեի այլ գյուղերի մասին վիճակագրական տեղեկություններ են հաղորդում հիմնականում նախապատերազմական շրջանի վերաբերյալ:

Բնակչության տեղաշարժերն այս գյուղին ևս խիստ բնորոշ էին: 1906թ. գյուղից գաղթած հայերի թիվը հասնում էր 90-100 անձի, որոնց

---

[6] ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ. Լեոյի ֆոնդ 1, ց. 1, գ. 135, թ. 5:
[7] Նույն տեղում, թ. 4:
[8] «Բյուզանդիոն», Կ.Պոլիս, 1899, հունիս, թիվ 818, էջ 1:
[9] «Մասիս», Կ.Պոլիս, 1882, մայիս 22, թ. 3491:
[10] ՀՀԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 500, թ. 1: Գաբիկյան Կ., Եղեռնապատում Փոքրուն Հայոց և Նորին մեծի մայրաքաղաքին Աբեաստիո, Բոստոն, 1924, էջ 605:

մոտ կեսն ապրում էր Ամերիկայում, իսկ մնացածը ցրված էին Կ. Պոլսում, Եգիպտոսում, Բուլղարիայում[11]:

Այնուհանդերձ, 20-րդ դարի սկզբին գյուղը զուտ հայաբնակ էր և 1914թ. բաղկացած էր 102 տներից և ուներ 610 բնակիչ, որից 300-ը՝ արական, 310-ը՝ իգական սեռի[12]:

Նահիեի հայկական բնակավայրեր էին նաև Ս. Հակոբ գյուղը, որն այդ անունը կրում էր համանուն վանքի անունից: Այն փոքրիկ գյուղ էր. 20-րդ դարի սկզբին ևս զուտ հայաբնակ էր: Սեբաստիայում լույս տեսնող «Հողդար» շաբաթաթերթը գյուղի համար 1914թ. վիճակով ցույց է տալիս 15-20 տուն[13] բնակիչ, իսկ Գ. Մուրադյանը՝ 12 տուն, 114 բնակիչ[14]: Բնակիչների նույն թվաքանակն է ցույց տալիս նաև Թեոդիկն իր աշխատության մեջ[15]:

Նույն ժամանակաշրջանի հեղինակ Կ. Գաբիկյանի մոտ այդ թիվը հասնում է 70 տան, 560 անձի[16]: Սակայն մեր կարծիքով այդ թիվը այս փոքրիկ գյուղի համար չափազանցված էր: Պետք է ընդունել, որ գյուղն ունեցել է 12-20 տուն, շուրջ 114 բնակիչ, քանի որ արդեն 1919թ. գյուղում կոտորածից փրկվածների թիվը կազմում էր երկու մարդ[17]. նման փոքրիկ գյուղի համար բնակչության այդ թվաքանակը ճշմարտացի է, մանավանդ, որ աղբյուրների հիմնական մասն այդ են վկայում:

Աշուշեն[18] գյուղը, գտնվելով Օտուռի նահիեի մեջ, տեղակայված էր Օտուռ գյուղից հյուսիս-արևելք: Գյուղն ուներ խայտաբղետ ժողովրդագրական կազմ: Ըստ մի վիճակագրության այն 1914թ. բաղկացած էր 83 տնից, որից 7-ը՝ կզլբաշ 40 բնակիչներով և 76 հայ տուն՝ 686 բնակիչներով[19]:

Գյուղի բնակիչների թվում էին նաև 10 տուն թուրքերը[20]: Փաստորեն, գյուղն ուներ 93 տուն, որից 76 տունը՝ հայ /686 շունչ/, 10 տունը՝ թուրք /յուրքանչյուր տան անձերի նվազագույն քանակն ընդունելով 6 շունչ՝ 60 շունչ/, 7-ը՝ կզլբաշ /40 շունչ/: Գյուղը, այսպիսով, նախքան Մեծ եղեռնն ուներ 786 բնակիչ:

---

[11] Մուրադյան Գ., Հայրենիքին ուխտավորները, Կ.Պոլիս, 1920, էջ 23:
[12] Նույն տեղում: «Հողդար», Սեբաստիա, 1914, թիվ 3: Տիվրիկի շրջակա հայ գյուղերը, էջ 4:
[13] «Հողդար», նույն տեղում:
[14] Գաբիկյան Կ., նշվ. աշխ., էջ 605:
[15] Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղետալի 1915 տարին», Նիւ Եորք, 1985, էջ 130:
[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում:
[18] Վերջինս, հաստատված լինելով 1768 թ., հարևան գյուղերի մեջ ամենահինն էր:
[19] Սուրադյան Գ., նշվ. աշխ., էջ 43: Թէոդիկ, նշվ. աշխ., էջ 130:
[20] «Հողդար», Սեբաստիա, 1914, թիվ 3, էջ 4:

Նահիեի հաջորդ հայաբնակ գյուղը Բաղրամն էր[21], որը գտնվում էր Օտուռ գյուղից դեպի արևմուտք: Այն շրջակա գյուղերի մեջ ամենաբարձր դիրքն ուներ: Դեռ 19-րդ դարի վերջին Բաղրամ գյուղը զուտ հայաբնակ էր և 1895-1896թթ. դրությամբ բաղկացած էր 20 տուն ազգաբնակչությունից[22]: 1914թ. արդեն գյուղն ուներ 44 տուն, շուրջ 450 շունչ հայ բնակիչ, որից շուրջ 50-ը պանդուխտներ էին հանդիսանում Կ.Պոլիսում և Ամերիկայում[23]:

Նահիեի հայաբնակ գյուղերից էր Կյուրեսինը /Կուրասիս/, որը գտնվում էր Օտուռ գյուղից հարավ: Այն 20-րդ դարի սկզբին 40 ծուխ ունեցող գյուղ էր, որից 20-ը տունը հայեր էին, 20-ը թուրքեր[24]:

Հայերն ընդամենը 800 շունչ էին[25] :

Հայկական գյուղերի մի մասն էլ տեղավորված էր կազայի արևելյան և հյուսիսարևելյան մասերում: Հյուսիս-արևելքում տեղաբաշխված հայկական գյուղերը միավորված էին Կասմայի նահիեում: Վերջինիս կենտրոնը համանուն գյուղն էր: Վերջինս հանդիսանում էր Նորատունկյաց տոհմի ծննդավայրը, որոնք ժամանակին գաղթել էին Կ.Պոլիս: 20-րդ դարի սկզբին այս գյուղի բնակիչները հայերն ու թուրքերն էին: Հայերն իրենց թվաքանակով գերակշռում էին թուրքերին: Գյուղի ընդհանուր բնակիչների թիվը կազմում էր 700 մարդ, որից 500-ը՝ հայ /100 ընտանիք/ և 200-ը /40 ընտանիք/ ՝ թուրքեր էր[26]: Իսկ արդեն 1914թ. հայերի թիվը հասավ 150 տան և 1200 անձի, որոնք զբաղվում էին երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ[27]:

Այս նահիեի մեջ ընկած խոշոր հայաբնակ գյուղերից էր Եփրատի ափին ընկած Զիմառան /Զրմառան/: Այս գյուղը նախքան 1895թ. կոտորածներն ուներ 80 տուն[28] հայ բնակիչ: Սակայն շուտով սկսված կոտորածի և հալածանքի հետևանքով եղան բնակչության տեղաշարժեր և ժողովրդագրական պատկերը փոխվեց: Այդ մասին է ին վկայում մի պետական փաստաթղթում[29] տեղ գտած նյութերը, որոնցում մասնավորապես ասված էր. «1895թ. հոկտեմբերի 8-ին 300-ի չափ քրդական հրոսակախումբը, բաժանված երկու մասի, հարձակում գործեց

---

[21] Այս գյուղի այլ անվանումը եղել է Ագրակ կամ Ագարակ, ուստի կարելի է ենթադրել, որ տարիների ընթացքում ընդլայնվելով դարձել է գյուղ:
[22] «Դրօշակ», Թիֆլիս, 1896, հունվարի 25, թիվ 3, էջ 23-24:
[23] Մուրադյան Գ., նշվ. աշխ., էջ 33:
[24] Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 33:
[25] Նույն տեղում: Գաբիկյան Կ., նշվ. աշխ., էջ 605: Թեմուրճյան Կ., Գամիրքի հայ ազգաբնակչության թիվը Համաշխարհային առաջին պատերազմի նախօրյակին, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», հ. 1, Երևան, 1970, էջ 138:
[26] Աղեքսանդրյան Ա., Պատմություն Ականավոր քաղաքին Աեբաստիո, Վենետիկ, 1911, էջ 370:
[27] Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 33:
[28] ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի ֆոնդ 1, ց. 1, գ. 144, թ. 2, 25:
[29] Նույն տեղում:

Եփրատի ափին գտնվող 170 տնից բաղկացած հայաբնակ Բինկա և 80 հայ ընտանիք ունեցող Ձիմառա գյուղերի վրա: Չորս ժամ շարունակ այս գյուղերի վրա կրակ տեղաց: Քրդերը Ձիմառա գյուղի մեջ սպանեցին մեկ հայ երիտասարդի և վիրավորեցին մի հայ կին: Բինկա գյուղի բնակիչներից շուրջ 1000 հոգու թուրքերը և քրդերը տեղափոխեցին Ձիմառա»[30]:

Հավանաբար հայ բնակչության այս ներհոսքն էր հետևանքը, որ արդեն 1914թ. գյուղն ուներ 150 տուն, 1200 հոգի հայ բնակիչ:

Նահիեի հաջորդ հայաբնակ գյուղը Խուռնավիլն էր[31]: Գյուղը զուտ հայաբնակ էր: Նշված ժամանակահատվածում գյուղը բաղկացած էր 130 տուն, 1500 շունչ[32] հայ բնակչությունից: Գյուղն ուներ նաև 240 անձ պանդուխտ, որոնք դեգերում էին Կ. Պոլսում, Եվրոպական տարբեր երկրներում[33]:

Նահիեի հայաբնակ գյուղերի շարքին էր դասվում նաև Բինկյանը /Բենկան/ : Վերջինս 19-րդ դարի վերջին ուներ հոծ հայկական բնակչություն: Դա մենք արդեն նշեցինք Ձիմառա գյուղի նկարագրության ժամանակ, երբ թուրք և քուրդ խուժանը 1895թ. հոկտեմբերին հարձակվել էր Ձիմառա և Բինկյան գյուղերի վրա:

Այդ հարձակման հետևանքը եղավ այն, որ 1000 հոգի հայ բնակիչ Բինկյան գյուղից տեղափոխվեց Ձիմառա: Թեպետ, այս տեղաշարժի հետևանքով գյուղի հայ բնակչությունը նվազեց, բայց դարասկզբին նրանց թիվը գյուղում ևս մեծ էր: Ըստ որոշ աղբյուրների, այն հասնում էր մինչև 80 տան: Մեկ այլ վիճակագրության համաձայն՝ 1914թ. նրանց թիվը հասնում էր 125 տան և 1000 անձի[34]: Կ. Գաբիկյանը նշում է հետևյալ տվյալը՝ 300 տուն, 2400 անձ[35]:

Մեր կարծիքով վերջին տվյալը փոքր ինչ չափազանցված է, քանի որ դժվար թե այդ գյուղը 1895-1896թթ. կոտորածից և տեղաշարժից հետո այդպիսի աճ ուներ: Այս պատճառով մեզ ավելի վստահություն է ներշնչում այն վիճակագրությունը, որի համաձայն գյուղն ուներ 125 տուն, կամ 1000 շունչ հայ բնակիչ:

Ինչպես նշեցինք, կազայի արևելյան հատվածում ևս տեղաբաշխված էին հայկական գյուղեր: Նրանք գտնվում էին Չալդա

---

[30] Նույն տեղում:
[31] Գյուղի անունը հավանաբար եկել է «Խուռնավեր կամ Խուռնավան»՝ բոլորովին ավերակ գյուղի իմաստով: Այդ ավերակները հելլենական կամ հռոմեական տիրապետության հետքերն էին, որը հաստատվում է մի քանի հունարեն գրերով ու արձանագրություններով: Այս գյուղը հիմնադրվել է Սենեքերիմ թագավորի ժամանակ:
[32] Մուրադյան Գ., նշվ. աշխ., էջ 46: Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 131:
[33] Պատրիկ Ա., Պատմագիրք հուշամատյան Աբբաստիո, հ. 1, Բեյրութ, 1974, էջ 391:
[34] Թեմուրճյան Կ., նշվ. աշխ., էջ 138:
[35] Գաբիկյան Կ., նշվ. աշխ., էջ 605:

գետի աջ ափին: Վերոհիշյալ գյուղերի թվում էին Արմութաղը /Արմտան/, Բալանկան /Բալանդա/, Միրվանան /Մրվանա/, Շիկիմը, Սինճանը:

Արմութաղը 1908թ. դրությամբ ուներ 76 տուն կամ 620 հայ բնակիչ, որոնցից 85-ը մինչև 1914թ. գաղթեցին Կ.Պոլիս, Ամերիկա, Եգիպտոս[36]:

Հավանաբար արտագաղթն ընդունել է ավելի մեծ չափեր, քանի որ 1914թ. գյուղում արդեն հաշվվում էր 32 տուն[37] /յուրաքանչյուր տան նվազագույն անձերի քանակը ընդունելով 8 շունչ ստացվում է 256 մարդ/ բնակիչ:

Բալանկա գյուղի հայ բնակչությունն այստեղ էր հաստատվել դեռևս 18-րդ դարում, երբ Տիվրիկի կազայի այլ գյուղերից հողազուրկ ընտանիքները տեղափոխվել էին այստեղ՝ իբրև հողի վարձակալներ[38]: Մեծ եղեռնի նախօրյակին նրանց թիվը գյուղում կազմում էր 30 տուն, 240 մարդ[39]:

Միրվանա գյուղում 20-րդ դարի սկզբին ապրում էին հայերն ու կզլբաշները: Գյուղն այս ժամանակամիջոցում բաղկացած էր 54 տնից, 290 բնակիչներով, որից 30 տունը կամ 210 հոգին հայեր[40] էին, 24 տունը /80 հոգի/՝ կզլբաշներն էին և ազդեցիկ դիրք ունեին գյուղում[41]:

Շիկիմ /Շիկի/ փոքրիկ գյուղը, որը 20-րդ դարի սկզբին ուներ 20 տուն կամ 160 շունչ[42] հայ բնակիչ:

Սինճան հայաբնակ գյուղը, որը հայտնի էր իր Ս. Գևորգ եկեղեցիով, 20-րդ դ. սկզբին ուներ 12 տուն կամ 100 շունչ բնակիչ[43]:

Բացի վերոհիշյալ գյուղերից գոյություն ունեին նաև այլ հայաբնակ գյուղեր, որոնց մասին տեղեկությունները սակավաթիվ են: Դրանցից են Արտեմենտը, Բագրատունը: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Արտեմենտն ուներ 15 տուն կամ 120 շունչ[44], իսկ Բագրատունը՝ 8 տուն կամ 75 շունչ[45] հայ բնակիչ:

Այսպիսով, մեր հաշվարկներով նախքան մեծ եղեռնը Տիվրիկի կազայում հայ բնակչության թիվը կազմում էր 15721 մարդ:

Ինչպես տեսանք առանձին գյուղերի օրինակով, գավառակում բացի հայերից ապրում էին նաև թուրքեր ու կզլբաշներ: Տիվրիկ քաղաքից Վանք անունով գյուղն էր, որը նախկինում հայկական էր, իսկ

---

[36] Մուրադյան Գ., նշվ. աշխ., էջ 35:
[37] Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 130:
[38] Մուրադյան Գ., նշվ. աշխ., էջ 41:
[39] Թեմուրճյան Կ., նշվ. աշխ., էջ 138: Գաբիկյան Կ., նշվ. աշխ., էջ 605:
[40] Նույն տեղում: Թեոդիկ, նշվ. աշխ., էջ 130: «Հայ ազգագրություն և բանահյուսություն», էջ 138 /վերջին երկու աղբյուրում շնչերի քանակը հասնում էր 240-ի/:
[41] Նույն տեղում:
[42] Գաբիկյան Կ., նշվ. աշխ., էջ 605:
[43] Թեմուրճյան Կ., նշվ. աշխ., էջ 138:
[44] Նույն տեղում:
[45] Նույն տեղում:

խնդրո ուսումնասիրության ժամանակամիջոցում բնակիչները կզլբաշներ էին: Նրանից ոչ այնքան հեռու էր գտնվում Արակա կոչվող գյուղը, որը 19-րդ դ. վերջին լիովին թուրքաբնակ էր: Պետք է նշենք նաև, որ կազայի բնակչության մեջ 19-րդ. դ. վերջին բացի վերոհիշյալ էթնիկ տարրերից մտնում էին նաև քրդերը: 1881թ. դրությամբ հայոց առաջնորդարանի հաղորդած վիճակագրության համաձայն նրանց թիվը գավառակում կազմում էր 2000 հոգի[46]: Նույն վիճակագրության համաձայն թուրքերի և կզլբաշների ընդհանուր թիվը 43278 էր[47]:

Սակայն կարծում ենք, որ առաջնորդարանի հաղորդած տվյալները, որոնք վերաբերում են թուրքերին և կզլբաշներին չի համապատասխանում իրականությանը, քանի որ ըստ 1881-1882 թթ. թուրքական պաշտոնական վիճակագրության /սալնամե/ Տիվրիկի կազայի մահմեդական բնակչության թիվը հասնում էր 25178, որից 12158-ը կին էին, իսկ 13020-ը՝ տղամարդ[48]:

Այս տվյալը կարելի է ճշմարիտ համարել, քանի որ արդեն 1914-1915թթ. կազայում բնակվում էին մոտ 30630 մահմեդականներ[49]: Իսկ հայերի թիվը, ինչպես արդեն նշեցինք, կազմում է մոտ 15721:

Այսպիսով, 1914-1915թթ. ընթացքում Տիվրիկի կազան ուներ մոտ 46351 բնակիչ, որից 34%-ը կազմում էին հայերը, որոնք այս գավառակի կարևոր էթնիկ տարրերից էին:

---

[46] «Մասիս», Կ.Պոլիս, 1881, հոկտ. 13, թ. 3015:
[47] Նույն տեղում:
[48] Karpat K. H. Ottoman population 1830-1914. Demographic and Social Characteristics. Paris, 1985, p.136
[49] Mac Carthy J. The Arab world, Turkey, and the Balkans 1878-1914. A Handbook of historical statistics. Boston, 1982, p.77

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔՆՆԻՉՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՊՈՂՈՍ ՆՈՒԲԱՐԸ

1912 թ. Բալկանյան պատերազմում Թուրքիայի պարտությամբ բարենպաստ պայմաններ ստեղծվեցին Հայկական հարցի վերաբացման համար: Նորից դառնալով տերությունների միջև երկարատև քննարկման առարկա՝ այն իր հանգուցալուծմանը հասավ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման վերաբերյալ 1914 թ. հունվարի 26-ին կնքված ռուս-թուրքական համաձայնագրում: Նախատեսված բարենորոգումները կյանքի կոչելու համար առաջին հերթին պետք է լուծվեր հայկական վիլայեթներից կազմված երկու սեկտորների ընդհանուր քննիչների ընտրության հարցը: Ըստ ձեռք բերված բանավոր համաձայնության օտարերկրացի ընդհանուր քննիչների թեկնածությունները թուրքական կառավարության հաստատմանը պետք է ներկայացվեին մեծ տերությունների կողմից: Թեկնածուները պետք է ընտրվեին եվրոպական փոքր և չեզոք պետություններից /Հոլանդիա, Դանիա, Բելգիա, Նորվեգիա, Շվեյցարիա/, քանի որ ոչ մի մեծ տերություն թույլ չէր տա, որպեսզի այդ պաշտոնը զբաղեցվի որևէ այլ տերության հպատակի կողմից:

Ընդհանուր քննիչների ընտրության հարցով բնականաբար ամենից շատ շահագրգռված էին հայությունն ու նրա ղեկավար շրջանները: Նրանք, քաջ գիտակցելով, որ բարենորոգումների արդյունավետ իրականացումը մեծապես պետք է կախված լինի ընդհանուր քննիչների գործունեությունից, կարևորում էին, որպեսզի այդ պաշտոնի համար ընտրվեին կարող և ձեռնհաս մարդիկ: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ ռուսական կառավարությունը գտնում էր, որ հարմար թեկնածուների որոնման աշխատանքներին պետք է մասնակցեն նաև հայության ներկայացուցիչները: Այդ իմաստով՝ շնորհիվ եվրոպական երկրներում ունեցած կապերի ու ծանոթությունների, լավագույն ծառայություն կարող էր մատուցել եգիպտահայ ականավոր հասարակական-քաղաքական գործիչ, Ազգային Պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը, որը տակավին 1912 թ.-ից տերությունների ղեկավար շրջանների մոտ եռանդուն գործունեություն էր ծավալում՝ պաշտպանելով արևմտահայերի բարենորոգչական պահանջները: Եվ պատահական չէ, որ Ռուսաստանի արտգործնախարար Ս.Սազոնովը Ֆրանսիայում ռուսական դեսպան Իզվոլսկուն հղած նամակում խնդրում էր իմանալ, թե Պ.Նուբարն աչքի առջև ունի արդյոք ընդհանուր քննիչների

պաշտոնի համար հարմար թեկնածուներ[1]: Ռուսական կառավարուրության Պ.Նուբարի աջակցությանը դիմելը պայմանավորված էր նրա բարենորոգումների հարցի շուրջ ծավալվող իրադարձություններում ունեցած անմիջական մասնակցությամբ, դրանց քաջատեղյակությամբ, ինչպես նաև խնդրի լուծման մեջ Ռուսաստանի դերի հանդեպ ունեցած վերաբերմունքով: Հետագայում հայ գործիչներից մեկի հետ հանդիպման ժամանակ Ս. Սազոնովը նշել էր, որ Պ.Նուբարին նման հանձնարարական տալն արտացոլում էր Ռուսաստանի և հայերի շահերի համընկնումը և վերջիններիս նկատմամբ ունեցած վստահությունը[2]: Իր հերթին Պ.Նուբարը, զգացված Ս.Սազոնովի առաջարկից, նշում էր, որ այն արվել էր ի նշան իր անձի նկատմանբ ունեցած վստահության և ռուսական կառավարության բարենորոգումների իրականացումն ապահովելու անաչառության[3]: Միայն ռուսական կառավարությունը չէր արժեքավորում այն օժանդակությունը, որ կարող էր ցույց տալ Պ.Նուբարը տվյալ խնդրում: Ազգային Պատրիարքարանն ու հայ ղեկավար շրջանները ևս կարևորում էին Պ.Նուբարի մասնակցությունն անհրաժեշտ թեկնածուների որոնման աշխատանքներին և ամբողջովին վստահում նրա ընտրությանը: «Ընդհանուր քննիչները,- գրում էր Վ.Փափազյանը,- պետք է հիմնովին ծանոթ լինեն Ազգային Պատվիրակությանը /իմա՝ Պ.Նուբարին- Հ.Բ./, որը լրիվ տեղեկություններ պետք է ունենար նրանց վարչական կարողության, պարկեշտության, հայերի հանդեպ ունեցած տրամադրությունների և զգացումների մասին»[4]:

Ս.Սազոնովի վերոհիշյալ նամակը, փաստորեն, հարկադրում էր Պ.Նուբարին անմիջականորեն ներգրավվել ընդհանուր քննիչների պաշտոնի համար թեկնածուների որոնման գործընթացին: Պ.Նուբարը բնականաբար չէր կարող անտարբերություն ցուցաբերել առաջին հերթին իր պաշտոնի բերումով, քանի որ այդ աշխատանքը սերտորեն կապված էր մի խնդրի հետ, որի պաշտպանությամբ նա հանդես էր եկել տերությունների ղեկավար շրջանների մոտ: Բացի այդ, Պ.Նուբարին չէր կարող չմտահոգել այն հարցը, թե ովքեր կընտրվեն հայկական վիլայեթների ընդհանուր քննիչների պաշտոնում: Նա ևս խիստ կարևորում էր վերջիններիս դերը բարենորոգումների իրականացման խնդրում: «Քննիչները,- ասում էր նա,- բարենորոգումների շենքին

---

[1] Сборник дипломатических документов. Реформы в Армении 26 ноября 1912 г.-10 мая 1914 г., Петроград, 1915, стр. 128.

[2] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, g. 5, գ. 53, թ. 11:

[3] Bibliotheque d'Armenologie Nubar de l'UGAB, Paris, Archives de la Delegation Nationale Armemenne 1913-1923, Liasse ½, p. 188.

[4] Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Բ, Պէյրութ, 1952, էջ 264:

անկիւնաքարը պիտի դառնան և մանաւանդ նրանց արժեքէն կախում պիտի ունենայ բարենորոգումների յաջողութիւնը»[5]: Այդ նկատառումներով էլ Պ.Նուբարը, ընդունելով արված առաջարկը, իր ջանքերն ուղղում է հայկական վիլայեթների ընդհանուր քննիչների պաշտոնի համար թեկնածուների որոնմանը: Պ.Նուբարը գիտակցում էր, որ պահանջվող թեկնածուներ գտնելը դյուրին գործ չէր: «Տարօրինակ կրնայ երևալ,- Գ.Զոհրապին հղած նամակում այդ մասին գրում էր Ա.Չոպանյանը,- բայց դա այդպես է»[6]: Այդ հանգամանքը պայմանավորված էր ընդհանուր քննիչների ստանձնելիք պաշտոնի բարդ և պատասխանատու բնույթով: Անհրաժեշտ էր ընտրել այնպիսի անձնավորությունների, որոնք ի վիճակի լինեին հաղթահարելու իրենց գործունեության հետ կապված բոլոր դժվարությունները և արդարացնելու արևմտահայության հույսերն ու սպասումները: Պ.Նուբարի պատկերացմամբ հայկական վիլայեթների ընդհանուր քննիչները պետք է լինեին գործունյա, հեղինակավոր, անկողմնակալ, համբերատար՝ ունենալով կառավարելու, հրամայելու և տիրելու հմտություն[7]: Այդ հատկանիշների հետ մեկտեղ պակաս կարևորություն չուներ նաև ապագա ընդհանուր քննիչների ազգության հարցը: Այդ խնդրում Պ.Նուբարը որոշ նկատառումներով ավելի մեծ հուսեր էր կապում բելգիացիների հետ, որոնք, ըստ նրա, «շնորհիվ աֆրիկյան գաղութներում ձեռք բերած արժեքավոր փորձի՝ ունակ են ավելի հաջողությամբ կենսագործել ծրագրված բարենորոգումները»[8]: Սրա հետ մեկտեղ Պ.Նուբարը գտնում էր, որ բելգիական կառավարող շրջաններում ունեցած ազգակցական կապերի շնորհիվ /նրա դուստրը ամուսնացած էր Բելգիայի կառավարության նախագահի հետ/, իրեն ավելի հեշտ կլինի գտնել անհրաժեշտ թեկնածուներ և որոշակի ազդեցություն ունենալ նրանց վրա: Այդ նկատառումներով էր, որ դեռևս 1913 թ. նոյեմբերի վերջերին նա բելգիացի հնարավոր թեկնածուների մասին խորհրդակցել էր Բելգիայի թագավոր Ալբերտի հետ, որը խոստացել էր իր աջակցությունը[9]:

Ընդհանուր քննիչների ազգության խնդրի շուրջ որոշակի տարակարծություններ կային Պ.Նուբարի և Ազգային Պատրիարքարանի միջև, որը, ընդհակառակը, դեմ էր բելգիացիների, ինչպես նաև շվեյցարացիների նշանակմանը, գտնելով, որ նրանք, իրենց պետությունների՝ Թուրքիայում ունեցած տնտեսական, առևտրական,

---

[5] «Արմենիա», Մարսել, 1914, թիվ 33:
[6] ՀՀ Ե.Չարենցի անվան Գրականության և Արվեստի Թանգարան, Գ.Զոհրապի ֆ., գ. 67, թ. 31:
[7] ADNA, Liasse ½, p. 319. «Հորիզոն», Թիֆլիս, 1914, թիվ 43:
[8] АВПР, ф. Политархив, г. 1913, д. 3465, л. 106.
[9] Նույն տեղում, թ. 106:

ֆինանսական շահերի պատճառով կարող էին որոշակի զիջումներ ցուցաբերել հայկական բարենորոգումների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու խնդրում[10]:

Տեղեկանալով Ս.Սազոնովի ցանկության մասին՝ Պ.Նուբարն անմիջապես դիմում է գործնական քայլերի: Սկզբում նա իր ջանքերը հիմնականում կենտրոնացնում է Շվեյցարիայից և Բելգիայից թեկնածուներ որոնելու ուղղությամբ: Իրենց երկրից հարմար թեկնածուներ մատնանշելու խնդրանքով՝ Պ.Նուբարը նամակով դիմում է Շվեյցարիայի հայասիրական կոմիտեի անդամ Լեոպոլդ Ֆավրին, ինչպես նաև Փարիզում հանդիպում է շվեյցարացի գործիչներից մեկի՝ Գուստավ Ադորի հետ: Սակայն որևէ շոշափելի արդյունք ձեռք չի բերվում: Ավելի արգասավոր եղան Պ.Նուբարի Բելգիայում կատարած պրպտումները: 1913 թ. դեկտեմբերի վերջերին ժամանելով Բրյուսել՝ նա, երկրի ղեկավար շրջանների և տեղի ռուսական դեսպանորդ Կուդաշևի օժանդակությամբ, ձեռնամուխ է լինում անհրաժեշտ անձնավորությունների որոնմանը: Շուտով առաջադրվում են 10 թեկնածու: Հապճեպորեն կատարված թեկնածուների առաջադրումը համարելով «պաշտոնի համար որս»[11]՝ Պ.Նուբարը 8 հոգու հանում է ցուցակից և թողնում միայն երկուսին՝ բելգիական Կոնգոյի նախկին փոխկառավարիչ Հենրիին և գեներալ Դեգիսին, որոնք հետագայում ընդգրկվում են տերությունների կողմից կազմված ընդհանուր քննիչների թեկնածուների ցուցակում: Հ.Զավրիևին հղած նամակում Պ.Նուբարը վերջիններիս բնորոշում էր որպես արժեքավոր և ընդհանուր քննիչի պաշտոնի համար անհրաժեշտ հատկություններով օժտված անձնավորությունների[12]:

Վերադառնալով Բրյուսելից՝ Պ.Նուբարն ընդհանուր քննիչների պաշտոնի համար այլ թեկնածուների որոնման նկատառումով որոշում է հարցում անել նաև Դանիա և Հոլանդիա: Նա նամակներով դիմում է դանիացի հայասեր գործիչ Ջորջ Բրանդեսին ու Հոլանդիայի Գլխավոր Շտաբների /օրենսդիր օրգան/ ստորին պալատի նախկին նախագահ Բյուլանտին՝ խնդրելով իրենց երկրներից մատնանշել հարմար անձնավորությունների: Սակայն վերջիններս չեն կարողանում օգտակար լինել Պ.Նուբարին:

Այսպիսով, ձեռնարկած այս նախնական ջանքերի շնորհիվ ընդհանուր քննիչների պաշտոնի համար Պ.Նուբարին հաջողվում է գտնել միայն երկու բելգիացի թեկնածուների: Սրա հիմնական պատճառն այդ

---

[10] Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. Բ, էջ 270: АВПР, ф. Политархив, г. 1914, д. 3472, л. 56.

[11] Westenenk L.C., Diary Concerning the Armenian Mission. "Armeman Review," Boston, 1986, Vol. 39, No. 1, p. 32.

[12] ADNA, Liasse ½, p. 194.

կարևոր պաշտոնի համար արժանի թեկնածուներ գտնելու դժվարությունն էր: Այդ իրողությունը շատ էր մտահոգում Պ.Նուբարին: «Խիստ ցավալի կլինի,- գրում էր նա,- որ երկար ժամանակ բարենորոգումներ սպասելուց հետո, հայերը չկարողանան գտնել անհրաժեշտ մարդկանց՝ դրանք գործադրելու համար»[13]:

Ընդհանուր քննիչների պաշտոնի համար հարմար թեկնածուների որոնման խնդրում իր ունեցած որոշակի դժվարությունների մասին պատրիարքին հաղորդելուց հետո, Պ.Նուբարը վերջինիս կողմից հանձնարարություն է ստանում անմիջապես մեկնել Հաագա՝ «գտնելու համար նրանց, ովքեր իրենց պաշտոնական դիրքով ու փորձով կարող են հաջողությամբ իրագործել պատասխանատու խնդիրը»[14]: Հոլանդիա մեկնումը և երկրի ղեկավար շրջանների հետ վերոհիշյալ հարցի շուրջ հանդիպումը նախապատրաստելու համար Պ.Նուբարը հանդիպում է Ֆրանսիայում հոլանդական դեսպան Սթայերսին և նրա միջոցով ստանում արտգործնախարար Լուդենի մոտ ունկնդրություն ունենալու հնարավորություն[15]: 1914 թ. փետրվարի սկզբներին ժամանելով Հաագա՝ Պ.Նուբարը տեղի ռուսական դեսպանորդ Սվեչինի հետ, որն իր կառավարությունից հրահանգ էր ստացել աջակցել վերջինիս, այցելում է Լուդենին: Հանդիպման ընթացքում Պ. Նուբարը, նախարարին խնդրի էության ու ընդհանուր քննիչների իրավասությունների հետ ծանոթացնելով, հատկապես ընդգծում է այդ պաշտոնի համար կարող և ձեռնհաս անձնավորությունների ընտրության անհրաժեշտությունը: «Ես դժվարութիւն չունեցայ փոքր տերութիւններու կառավարութիւններին հասկցնելու մեզի ամենէն առաջնակարգ մարդիկ ցուցնելու կարևորութիւնը, որոնք կարող լինին այս կարևոր և միանգամայն փափուկ ձեռնարկը գլուխ հանել»,- հետագայում նշում էր Պ.Նուբարը[16]: Արդյունքում նախարար Լուդենը, հայտնելով հայերին աջակցելու իր պատրաստակամությունը, մատնանշում է երկու անձնավորությունների՝ հոլանդական Հնդկաստանի նախկին կառավարիչ վան Հեյցին և պատերազմական նախկին նախարար Կոլինին[17]: Սակայն վերջիններս իրենց ցանկության համաձայն հետագայում հանվեցին թեկնածուների ցուցակից և նրանց փոխարեն առաջադրվեցին Արևելյան Հնդկաստանում Հոլանդիայի մշտական ներկայացուցչի օգնական Լուիս

---

[13] Նույն տեղում, էջ 273.
[14] АВПР, ф. Политархив, г. 1914, д. 3472, л. 75.
[15] Dussen W. van der, The Question of Armenian Reforms in 1913-1914. "Armenian Review," Boston, 1986, Vol. 39, No. 1, p. 26.
[16] «Արմենիա», Մարսել, 1914, թիվ 34:
[17] АВПР, ф. Политархив, г. 1914, д. 3473, л. 11. ADNA, Liasse ½, p. 195.

Վեստենենկն ու Հոլանդիայի ռազմական նախարարության գլխավոր քարտուղար Դուրմանը:

Վերադառնալով Հոլանդիայից՝ Պ.Նուբարն Իզվոլսկու միջոցով Ս.Սազոնովին է հղում երկու հուշագիր: Այստեղ նա ներկայացնում էր ընդհանուր քննիչների պաշտոնի համար թեկնածուների որոնման ուղղությամբ իր կատարած ձեռնարկները, բելգիական և հոլանդական կառավարությունների հետ վարած բանակցություններն ու ձեռք բերած արդյունքները: Նշելով, որ Շվեյցարիայից, Դանիայից և Նորվեգիայից հնարավոր չէր գտնել հարմար անձնավորությունների, Պ.Նուբարը եզրակացնում էր, որ ընտրությունը պետք է կատարվի հոլանդացիների և բելգիացիների միջև[18]: Այս հուշագրերը, փաստորեն, Պ.Նուբարի հաշվետվություններն էին ռուսական կառավարության կողմից իրեն հասցեագրված հանձնարարության կատարման վերաբերյալ:

Հայկական վիլայեթների ընդհանուր քննիչների պաշտոնի համար թեկնածուների որոնման ուղղությամբ՝ փոքր պետություններում իրենց դեսպանների միջոցով, ակտիվ ջանքեր էին գործադրում նաև մեծ տերությունները և հատկապես Ռուսաստանը:1914 թ. մարտի կեսերին վերջապես կազմվում է թեկնածուների անվանացուցակը ներկայացնում է Բ.Դռանը, որի ընտրությունն էլ 1914 թ. ապրիլի 2-ին կանգ է առնում հոլանդացի Լուիս Վեստենենկի և նորվեգացի Նիկոլաս Հոֆֆի վրա[19]:

Ընդհանուր քննիչների ընտրությունը, որը փաստորեն բարենորոգումների իրագործման սկիզբն էր, էլ ավելի ամրապնդեց արևմտահայության հավատքն իր անտանելի կացության բարելավմանն ուղղված ձեռնարկների կատարմանը: Նման լավատեսությամբ էր լցված նաև Պ.Նուբարը: Նա միամտորեն գտնում էր, որ թուրքական կառավարության կողմից համեմատաբար կարճ ժամանակահատվածում ընդհանուր քննիչների ընտրությունն ապացուցում էր, թե վերջինս որոշել է «ոչինչ ընել բարենորոգումներու գործադրութիւնը յետաձգելու համար»[20]: Սակայն դեպքերի հետագա զարգացումն ակնհայտորեն ցույց տվեց, թե որքան վաղաժամ և սին էին նման սպասումները: Շուտով թուրքական կառավարությանը հաջողվում է զգալի չափով սահմանափակել ընդհանուր քննիչների իրավասությունն ու նրանց գցել իր ազդեցության տակ: Իսկ այնուհետև, օգտվելով առաջին համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից, Բարձր Դուռը ոչ միայն չեղյալ է հայտարարում բարենորոգումների ծրագիրը, այլև կազմակերպում է արևմտահայերի ցեղասպանությունը:

---

[18] ADNA, Liasse ½, p. 189- 190.
[19] Реформы в Армении, стр. 178.
[20] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, g. 5, գ. 58, թ. 38:

ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունն առաջին աշխարհամարտի նախօրյակին մի շարք քաղաքական քայլեր է կատարել: Կուսակցության Վասպուրականի կենտրոնական մարմինը հանդես է գալիս տեղի դաշնակցական, ռամկավարական և հնչակյան կուսակցությունների տեղական կազմակերպություններին ուղղված մի շրջաբերականով, որտեղ նշված էր. «Մեր հայրենիքին այս պահուս անցուցած պատմական մեծ տագնապը հրամայական պարտականութիւն մը կդներ գործող կուսակցութիւններուն վրայ, մնալով հանդերձ իւրաքանչիւն իր ծրագրին եւ տակտիկին սահմաններուն մեջ, համաձայնութեան մը գալ համազգային բնոյթ ունեցող հրատապ խնդիրներու շուրջը»[1]: Շրջաբերականում մշակված և ներկայացված էին մի շարք հրահանգներ և երաշխիքներ, որոնք նպատակամղված էին արևմտահայության վրա կախված ահավոր վտանգը կանխելուն[2]: Դժբախտաբար այդ վտանգը հնարավոր չեղավ կանխել: Երիտթուրքական պարագլուխների վաղօրոք մշակած արևմտահայության բնաջնջման ծրագրի իրագործման համար առաջին աշխարհամարտի տարիներին նպաստավոր պայմաններ ստեղծվեցին:

Հայության առջև իրենց պարտքի և պատասխանատվության բաժինը ունեին բոլոր հայ քաղաքական կուսակցություններն և հոսանքները: Հայ քաղաքական կուսակցությունները և հասարակական հոսանքներն ակտիվորեն աջակցում էին Անտանտի տերություններին և զգալի դեր խաղում ինչպես հայ կամավորական ջոկատների կազմակերպման, այնպես էլ ռուսական բանակին ցույց տրվող օգնության գործում:

Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը համայն հայության ամենանվիրական իղձն էր: Դրա համար հազարավոր հայորդիներ պատրաստ էին իրենց կյանքը զոհաբերել: Այդ նպատակով ամբողջ աշխարհով սփռված հարյուր հազարավոր հայեր համոզված լինելով, որ Արևմտյան Հայաստանի ազատագրումը հնարավոր է միայն ռուսական զենքի միջոցով, մեծաքանակ խմբերով աշխարհի տարբեր անկյուններից գալիս էին Ռուսաստան, որպես կամավորներ մտնում ռուսական բանակի շարքերը և պատրաստակամություն էին հայտնում ամեն կերպ նպաստել ռուսական բանակի հաջողություններին: 1915 թ.

---

[1] Հ.Հ. ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4045, ց.1, գ.1, թ.1:
[2] Նույն տեղում:

հայկական կամավորական ջոկատներ էին մտնում ԱՄՆ-ից, Ռումինիայից, Բուլղարիայից և այլ երկրներից ժամանած հազարավոր հայեր:

Զորավար Անդրանիկի և մյուս խիզախ հայորդիների կողքին կովկասյան ռազմաճակատում ծավալված մարտերում իրենց ամենաակտիվ մասնակցությունն էին բերում նաև հնչակյանները: Հայրենիքի ազատագրության սուրբ գործին զինվորագրված հնչակյան կամավորներից ձևավորվեց 6-րդ կամավորական խումբը: Արտմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան գաղթած հնչակյանների մի խումբ անցավ Անդրանիկի ղեկավարությամբ մարտնչող 1-ին կամավորական խմբի շարքերը: ԱՄՆ-ում բնակվող հնչակյաններն իրենց կառույցներով հանդերձ ակտիվորեն մասնակցեցին կամավորական շարժմանը: ԱՄՆ-ի Ռեյսին քաղաքում գործող հնչակյան կառույցի կողմից կամավորական շարժմանը ցույց տված համակողմանի օգնության վերաբերյալ կան բազմաթիվ վկայություններ: Դրանցից մեկում գրված է, որ Հնչակյան Կուսակցության կամավորները. «գերազանց ցանկութիւն ունէին կռուիլ թրքական բռնակալութեան դեմ: Ընկ. Վահան Ասրլեանը պաշտօն ունէր կամաւորներ արձանագրել: Մարքուեցաւ՝ հրապարակային ժողով. հանգանակուեցաւ 1200 տոլար և հրապարակաւ կամաւոր արձանագրուեցան քաջակորով Հնչակեան ընկերները հուրա~ներու և խանդավառ ծափերու ներքեւ: Նոյն խանդավառութիւնը յառաջացաւ հետագային Կիլիկիոյ ճակատը մեկնող կամաւորներու ժամանակ»[3]: Թե ինչպիսի եռանդուն գործունեություն է ծավալել Պանդուխտը Ամերիկայում կամավորներ հավաքագրելու ժամանակ, վկայում է նրա հետևյալ ձեռագիր նամակը, որը գրվել է 1914 թ. դեկտեմբերի 1-ին Սփրինգֆիլդ քաղաքից՝ Ներսես Փիլիկյանին. «Սիրելի՛ ընկեր, ստացայ ձեր 28 թուակիր նամակը, որու մեջ շատ մը կարեւոր խնդիրներ շօշափած էիք. Ընկե՛ր, միջազգային համատարած պատերազմին «շնորհիվ» ճանապարհները անանցանելի դարձած են, սակայն Գործադիր Յանձնախումբը արդէն հրաւեր կարդացած է մեկնելու, այո՛, ժամանակը հասած է: Ամեն անոնք, որ հայրենասիրական տենչով կ'այրուին, պէտք է իրենց պարտականութիւնը կատարեն, նամանավանդ Ձեզ պէս ընկեր մէ, որ ծանօթ է ռազմագիտութեան: Ինձ կը թուի թէ Գործադիրը խորհած է ճանապարհների մասին և կարգադրած է. ուրեմն պատրաստուիր մեկնելու: Գալով Միջկուսակցական Յանձնանախումբին կատարելիք դերի մասին, ան մի բան ընելու անկարող պիտի ըլլայ. ընդհակառակը՝ ներկայ համերաշխութիւնը հացի խնդիր է. եթէ մեր ընկերները չէ մխրճուէին համերաշխութեան մեջ, Ամեր. Հնչակեան շրջանակը ի վիճակի էր մինչեւ 50.000 տոլար հանգանակելու, որովհետեւ չեզոք ժողովուրդի համակրութիւնը մեզ հետ է ներկայիս: Վերջապես Գործադիր

[3] Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան, 1887-1963, Բ. հատոր, Պեյրութ, 1963, էջ 38:

Յանձնախումբը իր այդ անխոհեմ քայլով կենդանութիւն պիտի տայ Վերակազմեալներուն և Դաշնակցութեան, որոնց պիտի ազատէ անկումէ, որ այս վեց տարուայ ընթացքում Ժեօն-թուրքերի ձեռք գործիք ծառայեցին, ամբողջ Հայ կեանքը փոթորկեցին եւ այդ համերաշխութեան «շնորհիվ» մեր բոլոր ընկերների մեջ թուլութիւն յառաջ եկած է, լքումի մատնելով մասնաճիւղերը: Ընդունեցէք ընկերական սիրալիր բարեւներս. Մ. Պանդուխտ»[4] :

Հարկ է նշել, որ Թիֆլիսը դարձել էր կամավորների հավաքագրման և կազմակերպման հիմնական դարբնոցը: Հնչակյանների բոլոր կառույցներն իրենց ամբողջ եռանդով ու նվիրումով ոչ մի ջանք չէին խնայում կամավորական շարժմանը զորակցելու գործում: Այդ շարժումը կազմակերպելու և զորացնելու հարցերն էր շոշափում 1915թ. Թիֆլիսում կայացած հնչակյանների միջշրջանային ժողովը: Ժողովի աշխատանքներին է անդրադարձել Ս. Սապահ-Գուլյանը 1915 թ. հուլիսի 17-ին Կահիրեից ուղարկած իր նամակում: Նա գրում է, որ «Պարսկաստանի մասնաճիւղերը խորհրդաժողով են կազմել, Լազոյին պատգամաւոր են ուղարկել, նա եկել է Կովկաս, Թիֆլիսի մեջ ժողով են կազմել-պատգամավորներ են եկել Պաքուից, էջմիածնից, Երեւանից, Կարսից, Նախիջեւանից և ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ խնդիրները հաստատ հիմունքների վրայ դրել, ընտրել են ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԻՉ ԿՈՎԿԱՍԻ, որոնք Կեդրոնի իրաւունքով գործերը վարում են»[5]:

Կամավորական շարժմանը հատկապես ակտիվորեն օժանդակեցին Բուլղարիայում գործող հնչակյան կառույցները: Բազմաթիվ բուլղարահայ կամավորներ Բուլղարիայից անցան Բուխարեստ (Ռումինիա), որտեղից էլ նրանք դարձյալ հնչակյան կառույցների նյութական օժանդակությամբ ճանապարհվեցին Կովկաս:

Կամավորական շարժմանը մեծ եռանդով զորավիգ եղավ ռումինահայությունը: Տեսնելով Ռուսաստանին և նրա դաշնակիցներին ամեն կերպ աջակից լինելու ռումինահայության պատրաստակամությունը, Ռումինիայի ռուսական դեսպանն արտոնություն է շնորհել հնչակյաններին, որպեսզի նրանք կազմեն կամավորական խմբեր և ուղարկեն Կովկասյան ռազմաճակատ: 1915 թ. սկզբների տվյալներով միայն Ռումինիայից և Բուլղարիայից Կովկաս ուղարկված կամավորների թվաքանակը հասնում էր մոտավարապես 850-ի[6]:

Հայտնի է, որ կամավորների 6-րդ գունդը ձևավորվել էր միայն հնչակյանների հավաքած միջոցներով: Այդ պատճառով էլ այն իրավացիորեն անվանում էին հնչակյան 6-րդ գունդ: Հնչակյան

---

[4] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 408, ց. 1, գ. 32, թ. 1-2:
[5] Ս.Դ. Հնչ. Դատաստանին, Պոսթոն, 1920, էջ 242 :
[6] «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթերթը, Փրավիտենս, 2 մարտի, 1915:

կամավորների պատասխանատու Արտեմիսի օգնականներն էին Սարգիս Սարգսյանը (Մաթևոս Սարգսյանի (Փարամազ) եղբայրը) և Հաջի Նազիքը: Նրանք հնչակյան կամավորներին փոքրաթիվ խմբերով ուղարկում էին ռազմաճակատ: 1915-ին Թիֆլիս են գալիս նաև Ամերիկայից մոտավորապես 350 կամավոր, որոնք Պանդուխտի գլխավորությամբ մեկնում են Կարս և սկսում են զբաղվել զինավարժություններով: Երբ Հնչակյան 6-րդ գնդի հրամանատար է դառնում Հովհաննես Ջանփոլադյանը, Պանդուխտը իր ջոկատի հետ միասին մտնում է այդ զորամիավորման մեջ: Դրա մասին է վկայում էջմիածնի կաթողիկոսարանի դիվանապետ Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանին ուղղված Ս.Դ.Հ.Կ. Կովկասի և Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Սյունիքի նամակը, որը գրված է 1915 թ. մարտի 13-ին: Նամակի մեջ Սյունիքը պահանջում էր կուսակցությանը տրամադրել հնչակյան կամավորների համար ուղարկված «Ամերիկայի Ազգային Պաշտպանության Հանձնախմբի» 1500 դոլարը: Նա գրում էր նաև հետևյալը. «Կարևոր եմ համարում յատնել ձեզ, որ Հնչակեան 1000 կամաւորներից բաղկացած 6-րդ հայկական կամաւորական տրուժինայի հրամանատարն է ռուս բանակի սպայ հայազգի Յովհաննես Ջանփոլատեանը, որի օգնականն է Ամերիկայից եկած գործիչ Պանդուխտը, որոնք ճանչցուած եւ հաստատուած են ինչպէս ռուսական սպայակոյտի, նոյնպէս եւ Կուսակցութեան կողմից»[7]: 6-րդ գնդի կազմի թվաքանակաևի վերաբերյալ ճշգրիտ տեղեկություններ չեն պահպանվել: Ա. Կիտուրը «Պատմութիին Ա.Դ. Հնչակեան Կուսակցութեան» գրքում գրում է, որ գունդը բաղկացած էր 1500 կամավորներից: Այս առումով մեկ այլ տվյալ կա 1915 թ.-ի մայիսի 13-ին կաթողիկոսի դիվանին ուղղված «Աշակ»-ի խմբագիր Համբարձում Առաքելյանի նամակում: Նրանում նշված է, որ հնչակյան 6-րդ գնդի մեջ կային, ոչ միայն հնչակյաններ այլ նաև ոչ կուսակցական կամավորներ[8]: Հնչակյան 6-րդ գնդի նկատմամբ զարմանք է առաջացնում Սիմոն Վրացյանի վերաբերմունքը: Նա 1915 թ. դեկտեմբերի 20-ին Ամերիկայի իր բարեկամներին ուղղված նամակի մեջ գրում էր, որ 6-րդ գնդում խառնաշփոթ վիճակ է տիրում[9]:

Այնուհետև նա գրում է. «Պանդուխտն իր մարդոց հետ հեռացուցած են և նորէն կանչած են Ջանփոլատեանը»[10]: Փաստերի ուսումնասիրությունները վկայում են, որ Պանդուխտը երբեք չի հեռացել իր գնդից: Խնդրո հարցի վերաբերյալ միանգամայն հստակ նշված է ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի «Անդրանիկի ժամանակը»

---

[7] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, g.5, գ.104, թ.1-2:
[8] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, g. 5, գ. 20, թ. 26-27:
[9] Ճերէճեան Ե., Պանդուխտ, Պէյրութ, 1999, էջ 20:
[10] Հետագայում պարզվում է, որ Ս. Վրացյանի գրած նամակը ընկնում է ցարական գաղտնի ծառայության ձեռքը: Ներկայումս այն պահվում է Մոսկվայի Կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվում (МЦГВИА), Ֆ. 2100, գ.1, գ. 646, թ. 11-13:

աշխատության առաջին հատորում: Այնտեղ նշվում է. «Հատկապես բազմամարդ էր Գրիգոր Ավշարյանի (Ավշարով) հրամանատարությամբ ստեղծված հնչակյան 6-րդ գունդը: Հնչակյաններից կազմված կարևոր զորամասերից էր նաև 350 հոգուց բաղկացած Պանդուխտի (Միքայել Սեֆերյան, հմա՝ Սերյան – Մ. Ս.) խումբը, որը հետագայում միացավ 6-րդ գնդին»[11] :

Կամավորական շարժմանն ու հայ ժողովրդի ազատագրության գաղափարին ողջ էությամբ նվիրված էր առասպելական Հայկ Բժշկյանը (Գայ): Հատկանշական է, որ նա 17 տարեկանում արդեն հնչակյան էր, իսկ 1918 թ.-ից մտնում է կոմունիստական կուսակցության շարքերը[12]: Առաջին աշխարհամարտի տարիներին, 1914 թ. վերջին, նա ներգրավվել է հայկական կամավորական շարժմանը: Սկզբում եղել է հեծյալ վաշտի և այնուհետև 6-րդ կամավորական խմբի հրամանատարը: Ակտիվորեն մասնակցել է էրզրումի, Մուշի և Խլաթի ազատագրման մարտերին: Հայկ Բժշկյանը 1916 թ. հնչակյան «Գաղափար» թերթում հրապարակված «Կարին», «Դեպի էրզրում», «Նամակներ էրզրումից» վկայություններում պատկերել է արևմտահայության մեծագույն ողբերգությունը՝ 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը: Նա հավաստի փաստերով ցույց է տվել երիտթուրքական իշխանությունների հայասպան քաղաքականությունն ու գործողությունները:

1915 թ. իր բարեկամ Մելքոնին ռազմաճակատից ուղարկած նամակում Հ. Բժշկյանը գրում է. «Միք մեղադրեք ինձ սիրելի ընկեր Մելքոն - Ձեր արևով երդվում եմ, մի րոպե անգամ ժամանակ չեմ ունենում ազատ շունչ քաշելու, երևակայեցեք իմ դրությունը՝ թե՛ շտաբի կառավարիչ եմ, թե՛ ատրյադի հրամանատար, թե՛ քարտուղար, թե՛ բանակի հաշվապահ, թե՛ հարյուրյակի հարյուրապետ և թե՛ բոլոր գործերի հսկող, ահա թե ի՞նչն է պատճառը, որ չեմ կարողանում Ձեզ հետ նամակագրվել»: Ամեն օր հրացանաձգարան ենք գնում և Ղարսի մթնոլորտը դղրդացնում ռազմի երգերով: Շատ ուրախալի տեսարան է, ընկեր Մելքոն, երբ մոտ 600 հնչակյան զինվորներ միատարազ, լավ մարզված անցնում ենք քաղաքի փողոցներից «Հեռավոր երկիրը»-ը թնդացնելով: Տեսնել է պետք: Այժմ պարզ ճակատով, հնչակյան դրոշը պարզած կատարում ենք մեր պարտքը և զարմացնում մարդկանց, թե ինչպես մենք քաղցած, տկլոր և անփող բանակ կազմեցինք ահռելի ու չափազանց օրինակելի»[13]:

Պատերազմի ընթացքում հնչակյան 6-րդ գունդը դառնում է Պարադովի գլխավորած ռուսական բանակի առաջապահ զորամիավորումը, որը 1915թ. գարնանը Ալեքսանդրապոլից մեկնում է

---

[11] Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, երևան, 1996, գիրք Ա, էջ 388:
[12] Հետագայում ՌԿ(բ)Կ հատուկ հանձնաժողովի որոշմամբ Գայի կուսակցական ստաժը համարվեց 1903 թվականից:
[13] ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 4045, ց.1, գ.179, թ. 99-100:

Կարս: Այնտեղ Առաքելոց եկեղեցու մեջ տեղի է ունենում գնդի երդման արարողությունը: Որոշ ժամանակ անց գունդը Կարսից Բասենի դաշտով ուղևորվում է էրզրում: Ղարաղութ, Բաշ, Չըլըգան գյուղերն անցնելուց հետո գունդը 1915 թ. ապրիլին առաջին անգամ մարտի մեջ է մտնում թուրքական ուժերի դեմ: Դրանից հետո գնդին սպասում էին բազմաթիվ դաժան ու անզիջում մարտեր, ինչպես Բռնաշենի, Տեկերի, Քեռքդաղի, Չորագյուղի, Էսմերի, Բռնակապանի, Վաթոքի, Հեռպեքդաղի, Բագառիճի, Մամախաթունի, Թուքախի, Այգեպայի մարտերը[14] :

Հ. Բժշկյանը հետևյալ կերպ է պատկերել 1915 թ.-ի հունիսի 22-ին Վերին Բասենի հովտում թուրք-քրդական զինված ուժերի դեմ տեղի ունեցած մարտը: «Համիդյան հեծյալների հինգ հարյուրյակ Գզլդաղ սարի ստորոտից հանկարծակի սլացան մեզ վրա: Քարատրոփ արշավով նրանք շրջանցեցին մեր թևը: Դրությունն ավելի բարդացավ: Մեկ ելք կար՝ նահանջել: Բայց այստեղ ծխի և փոշու քուլաների մեջ մենք տեսանք Ավշարյանին: Մեկ շղթայից մյուսը վազելով, նա հանգստացնում և քաջալերում էր զինվորներին: Եվ նրանք շարունակում էին կրակել, չնայած ծխի և փոշու մեջ ոչինչ չէին տեսնում: Ավշարյանը տեղից-տեղ վազելով հրամաններ էր արձակում, գոռում էր, հորդորում, ձեռքով ցույց էր տալիս թշնամու հեծյալների կողմը և կրկնում, - Փախչու՛մ են, փախչու՛մ, սիրելիներս, խփեցե՛ք նրանց: Դե, մեկ էլ տեսեք, արդեն փախան»[15]:

1915 թ. հունիսի 22-ին Շայան գետի ափերի մոտ տեղի ունեցած մարտի ժամանակ հերոսի մահով ընկավ խմբի անձնազոհ հրամանատար Գրիգոր Ավշարյանը: Դրանից հետո խմբի հրամանատարի պաշտոնը ստանձնում է Հ. Բժշկյանը: Գնդի փայլուն վճռական գործողությունների շնորհիվ Ալաշկերտի հովտի մեծ մասը և Բասենի ամբողջ դաշտը ազատագրվում են թուրքերից: 6-րդ խմբի մարտիկները հետապնդելով նահանջող թուրքական զորքերին 1916 թ. փետրվար-մարտ ամիսներին դուրս են մղում նրանց էրզրումի շրջակայքում գտնվող դիրքերից և «Կարսի Դուռ» կոչված վայրից հաղթականորեն մտնում են էրզրում: Հ. Բժշկյանը հետևյալ կերպ է ներկայացրել այդ պատմական իրադարձությունը. «Ռուս զորքը, որի հետ նաև մեր անձնազոհ կամավորական խմբերը, գերմարդկային ճիգեր թափելով, մի ձեռքով կռվելով, մյուսով ճանապարհ շինելով, հարյուրավոր թնդանոթներ իրենց ուսերի վրա ծյունապատ լեռները բարձրանալով, միմյանց հետևից, բուք ու բորանի մեջ գրավեցին այնպիսի բարձրություններ, ինչպիսիք են Դևեպոյունի բարձունքները, Փալան-Թոքանի ամրոցները և Կարինի անառիկ բերդը: Հեշտ է այս մասին միայն ասել»[16]:

---

[14] Ճերէճեան Ե., նշվ., աշխ., էջ 22-23:
[15] Հայրապետյան Հ., Լեգենդար Գայ, Երևան, 1997, էջ 26:
[16] Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 442:

Ոգևորված Էրզրումի ազատագրումով՝ խումբը շարունակում է իր վստահ գործողությունները: Խմբի հաջորդ փորձությունը Մամախաթունի մոտ տեղի ունեցած մարտերն էին: Երրորդ անգամ վիրավորված Հ. Բժշկյանին խմբի հրամանատարության մեջ փոխարինում է Պանդուխտը:

Հնչակյան 6-րդ խմբի ամենածանր և կատաղի մարտերը տեղի ունեցան 1915 թ. հունիսի 20-ից 29-ը: Այդ արյունահեղ կռիվներում հնչակյան խումբը թշնամուց գրավեց ռազմավարական խիստ կարևոր նշանակություն ունեցող Չախմախլը լեռը: Այդ հաղթանակը ծանր գնով ձեռք բերվեց, զոհվեցին, վիրավորվեցին և անհայտ կորան հարյուրից ավելի կամավորականներ: Հայկական կամավորական խմբերի անձնակազմի մասին բերվում են տարբեր թվեր: Փոխարքա Վորոնցով-Դաշկովին, 1915 թ. հոկտեմբերին ուղղված զեկուցագրում Մեսրոպ արքեպիսկոպոսը, Ս. Հարությունյանը, Ա. Խատիսյանը, հայտնում էին, որ կազմակերպված 6 խմբերում հաշվվում էր 5000 կամավոր[17]:

Հայ կամավորական խմբերը մեծ ներդրում ունեցան ռուսական բանակի տարած հաղթանակներում: Կամավորները ոչ միայն իրենց ծանրակշիռ մասնակցությունն ունեցան Ռևանդուզի, Սարիղամիշի, Դիլմանի, Էրզրումի մարտերին, այլև զգալի դեր խաղացին Բերկրի-Կալայի, Բիթլիսի, Վանի, Խնուսի ազատագրման գործում, մեծ ծավալի աշխատանք կատարեցին արևմտահայերի կյանքը փրկելու գործում:

Հայ կամավորների խիզախությունն ու անձնազոհությունը միշտ էլ արժանացել է ռուսական կառավարության բարձր գնահատականին: Հայ կամավորական խմբերի բազմաթիվ մարտիկներ պարգևատրվել էին Գեորգիևյան խաչի շքանշաններով ու մեդալներով[18]:

Ինչպես հայտնի է, 1916 թ. մարտին ռուսական հրամանատարության կողմից որոշում ընդունվեց հայկական կամավորական խմբերի լուծարման վերաբերյալ: Դրանց փոխարեն ռուսական գլխավոր հրամանատարությունը մինչև նույն տարվա հունիս ամիսը ձևավորեց հայ սպաների հրամանատարությամբ գործող վեց կանոնավոր հայկական գումարտակներ[19]: Մեր կարծիքով, այսպիսի վերակառուցումը չի կարելի համարել որպես ռուսական իշխանությունների կողմից հակահայկական տրամադրությունների դրսևորում: Ընդհակառակը, կովկասյան կանոնավոր բանակի կազմում վեց հայկական գումարտակներ ձևավորելու որոշումը պետք է համարել ռուսական հրամանատարության կողմից հայ ռազմիկների մարտական բարձր ոգու և նվիրվածության արժանի գնահատական:

---

[17] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 288, ց.1, գ.3, թ. 7:
[18] ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 3, գ. 16, թ. 3:
[19] Կարապետյան Մ., Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները կովկասյան ռազմաճակատում (1914-1917 թթ.), Երևան, 1999, էջ 92:

Սոցիալ-Դեմոկրատ Հնչակյան Կուսակցությունը ձգտում էր կամավորական շարժումը զերծ պահել նեղ կուսակցական քարոզչությունից և խտրականությունից՝ համարելով, որ այն պետք է կրի վերկուսակցական, համազգային բնույթ: Աշխարհի մի շարք երկրներում գոյություն ունեցող հայ գաղթօջախներում կամավորական շարժման ծավալման ու հզորացման ուղղությամբ Հնչակյան Կուսակցության եռանդուն և հետևողական աշխատանքները պսակվեցին լուրջ հաջողություններով:

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-ՈՒՄ

«...Որքան անհրաժեշտ է Հայ ցեղին համար ունենալ տեսիլք մը, բեւեռային աստղ մը, անոր ուղղելու համար մեր բոլոր քայլերը»:
«...Ինծի համար հայրենասիրութիւնը արժանապատուութեան խնդիր է».[2]
(Միհրան Սվազլյան*)

---

[1] Ի յիշատակ Միհրան Սվազլեանի. Նօթեր եւ տպաւորութիւններ, քաղաքական եւ ազգային տեսութիւններ, Պոստոն, 1944, էջ 151:
[2] Մեսիաեան Ե., Դրօշին տակ, Նիւ Եորք, 1918, էջ 156:
* Հմուտ ազգային, հասարակական, քաղաքական գործիչ, իրավաբան, դիվանագետ, հրապարակախոս, գրող Միհրան Սվազլյանը (Սվազլը) (1863, Զմյուռնիա - 1935, Բոստոն) սովորել է Զմյուռնիայի անգլիական կոլեջում: Դեռևս 18 տարեկանին անգլերենի իմացության շնորհիվ քարտուղարի և գանձապետի պաշտոնով ծառայել է Կիպրոսի անգլիական կառավարական պալատում: Ավարտել է Ֆրանսիայի էքսի համալսարանի իրավաբանական բաժինը: Մ. Սվազլյանը նախքան ԱՄՆ-ում հասարակական-քաղաքական եռանդուն գործունեություն ծավալելը նմանատիպ շարժում էր ծավալել նաև Եվրոպայում: Դեռևս 1888 թ. Լոնդոնում նա հրատարակել էր Հայ դատը Եվրոպային առաջին անգամ ներկայացնող «Հայաստան» թերթը, որտեղ իրենց հոդվածներն են տպագրել և հայասիրությամբ թրծվել անգլիացի և ֆրանսիացի քաղաքական գործիչներ Լորդ Ջեյմս Բրայսը, Էմիլ դը Լավլեն, ինչպես նաև թերթի շուրջ են համախմբվել եվրոպացի առաջավոր մտածողներ Ռոլեն Ժաքմենսը, Լյունչելին, Ժյուլ Սիմոնը, Բարթելեմի Սենթ Հիլերը, Ուիլյամ Էվարթ Գլադստոնը, Մարտենսը և ուրիշներ: Լորդ Ջեյմս Բրայսի նախագահությամբ Միհրան Սվազլյանը մարդաշատ հավաքներ է կազմակերպել Լոնդոնում, աշխատակցել "Daily News," "New Review" պարբերականներին: Արդյունքում հիմնադրվել է Անգլո-հայկական ընկերությունը, որին անդամակցել են Սըր Էդուարդ Գրեյը, Ջեյմս Բրայսը, Շուան և ուրիշներ: Ս. Սվազլյանը մասնակցել է եվրոպայի հեղափոխական շարժումներին՝ ձգտելով Հայկական հարցը ծանոթացնել օտարներին և հայասեր բարեկամներ ձեռք բերել, եվրոպական և ամերիկյան մամուլում հրատարակել է հասարակական-քաղաքական բնույթի հայերեն, ֆրանսերեն, անգլերեն բազմաթիվ հոդվածներ: 1908 թ. մեկնել է ԱՄՆ: Նա աջակցել է Հնչակյան կուսակցությանը (1887 թ.), եղել Վերակազմյալ Հնչակյան (1896 թ.), ապա՝ միացյալ Ռամկավար-Ազատական (1921 թ.) կուսակցությունների հիմնադիր-ղեկավարներից: Մ. Սվազլյանը եղել է 1917 թ. մարտին (Բոստոն) հիմնադրված ԱՄՆ-ում հայ առաջին լոբբիստական կազմակերպության՝ Ամերիկայի հայ ազգային միության նախագահ, Փարիզի Հայ ազգային պատվիրակության ներկայացուցիչը Ուաշինգտոնում, իսկ զինադադարից հետո նաև Աթենքում: Նրա ժամանակակից Հ. Դարբինյանի բնորոշմամբ, Մ. Սվազլյանը եղել է «հայ ազատագրական պայքարի առաջին ռահվիրաներէն՝ մինչեւ վերջը մնացած է պատնէշին վրայ անդրդուելի, առաջին շարքերուն մէջ, երիտասարդի մը խանդավառութիւնով ու տարեցի մը փորձառութիւնով» (Ի յիշատակ Միհրան Սվազլեանի, էջ 125): Իսկ Արշակ Չոպանյանը նրա մասին գրել է. «Միհրան Սվազլը ... ժամանակակից հայ կեանքի ամենէն ինքնուրոյն ու սիրելի դէմքերէն մին է: Վճիտ ու թրթռուն սիրտ մը, խանդավառ ու ազնիւ միտք մը, հայ ցեղին - լաւագոյն աւանդութեանց շունչով կազմուած, ...անշահախնդիր գորովով մը, մշտադալար աւիւնով մը հայրենիքի կրօնքին նուիրուած, - այս է էութիւնը ազգային դատի այդ վեթերան ախոյեանին բարոյական դիմագծութեան: Գերազանցապէս համակրելի մարդ, բնութենէն ճոխապէս օժտուած՝ կեանքին մէջ յաջողելու, փայլելու եւ սիրուելու համար, ամուր կրթութեամբ մը մարզուած միտք, կարող փաստաբան, բոցաշունչ ճարտասան ... անկեղծ, սրտագին, կրակոտ գործիչ, ինքզինքը իր պարտականութեան կատարմանը մէջ ամբողջապէս դնող, ազգին շահը ամէն բանէ վեր դասող, իր շուրջ՝ հայ եւ օտար միջավայրերուն մէջ իր անձին եւ իր ցեղին համար յարգանք ու սէր ներշնչող» (Ի յիշատակ Միհրան Սվազլեանի, էջ 122, 123, 124, 132-133: Մեսիաեան Ե., նշվ. աշխ., էջ 156, 161, 162, 163, 170, 173):

Պատմական հանգամանքների բերումով Ամերիկայի Միացյալ Նահանգներ մեկնած հայության կապը հայրենի բնօրրանի հետ եղել է մշտական, անընդհատ ու անկապտելի: Այն դրսևորվել է հենց սկզբից՝ XIX դ կեսից, երբ ԱՄՆ մեկնածներից շատերը զգալի ջանքեր էին գործադրում ասիական հետամնացության մեջ խարխափող հայրենի երկրի հոգևոր ու տնտեսական զարգացումն ու բարգավաճումն ապահովելու ուղղությամբ: Առաջին աշխարհամարտի ընթացքում ու դրան հաջորդած տարիներին հայրենի ժողովրդի սատարմանն ուղղված ամերիկահայերի համագաղութային ջանքերը դարձել են ավելի գործուն ու ծանրակշիռ՝ կրելով ինչպես հասարակական, տնտեսական ու ռազմական, նույնպես և քաղաքական ու դիվանագիտական բնույթ:

Ֆրանսիական հրամանատարության ներքո Կիլիկիայում արևմտահայության ծավալած կամավորական շարժումը կանոնավորելու նպատակով և հայանպաստ այլ ձեռնարկներ իրականացնելու և վերահսկելու հատուկ միտումով 1917 թ. սկզբին Եգիպտոսում հայ քաղաքական երեք կուսակցությունների (Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան, Հայ Հեղափոխական Դաշնակցություն, Հայ Սահմանադրական Ռամկավար), ազգային երկու եկեղեցիների (առաքելական, ավետարանական) և Հայ Բարեգործական Ընդհանուր Միության ներկայացուցիչների ջանքերով ստեղծվել էր Հայ ազգային միությունը, որը մշտական կապի մեջ էր Փարիզի Ազգային պատվիրակության հետ՝ ոանդիսանալով դրա յուրատեսակ ներկայացուցչական մարմինը Եգիպտոսում: Միությունը ամերիկյան հետզհետե ստվարացող ու զորացող հայ գաղութում ևս իր լիազոր ու համախմբող մարմինն ունենալու նպատակով Պողոս Նուբարի հանձնարարագրով մարտի սկզբին այդտեղ էր առաքել ազգային երեք կուսակցությունները ներկայացնող պատգամավորություն (Ս. Սապահ-Գյուլյան՝ ՍԴՀ-ից, Ա. Հանըմյան՝ ՀՅԴ-ից, Մ. Տամատյան՝ ՀՍՌ-ից):[3]

Եգիպտահայ պատվիրակության ջանքերով և համախմբման նկատմամբ ամերիկահայ ազգայինների դրսևորած բարձր գիտակցության շնորհիվ հնարավոր էր դարձել 1917 թ. մարտի 16-26-ը Բոստոնում անցկացնել քաղաքական չորս կուսակցությունների միջև համերաշխության բանակցությունների յոթ նիստեր, որոնց ընթացքում էլ կազմակերպվել էր Ամերիկայի հայ ազգային միությունը (ԱՀԱՄ): Միությունը բաղկացած էր համերաշխ գործելու պատրաստակամություն դրսևորած հայ քաղաքական չորս կուսակցությունների (ՍԴՀ, Վերակազմյալ հնչակյան, ՀՅԴ, ՀՍՌ), ազգային երկու եկեղեցիների (առաքելական, ավետարանական) և ՀԲԸՄ ներկայացուցիչներից:

---

[3] Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.), Երևան, 2000, էջ 114, 116: Ճիզմէճեան Մ. Գ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925), Ֆրէզնօ, 1930, էջ 344: Յուշամատեան Մեծ Եղեռնի. 1915-1965, Պէյրութ, 1965, էջ 895:

Առաջին աշխարհամարտի սկսվելուց ի վեր առաջին անգամ էր, որ հայ քաղաքական կուսակցությունները (մասնավորապես՝ ՀՅԴ) միասնականություն էին հանդես բերում ազգային կարևոր ձեռնարկների իրականացման գործում: Ընտրվել էր միության 18 անդամներից բաղկացած կենտրոնական մարմին՝ Միհրան Սվազլյանի նախագահությամբ:[4]

Միությունը, հանձինս նախագահ Մ. Սվազլյանի, իր գործունեությունը համաձայնեցնում էր Փարիզի Ազգային պատվիրակության հետ հանդիսանալով նրա լիազոր ներկայացուցչական մարմինը ԱՄՆ-ում:

Միության նպատակն էր ամերիկահայ համայնքի նյութական ու բարոյական ուժերը համախմբել և դրանք ի սպաս դնել Հայաստանի ազատագրմանը, ինչպես նաև՝ հայանպաստ պրոպագանդա և դիվանագիտական ձեռնարկներ իրականացնել:

Ամերիկայի հայ ազգային միությունը Մ. Սվազլյանի խմբագրությամբ լույս է ընծայել "The Armenian Herald" (1917-1919 թթ., Բոստոն) պաշտոնաթերթը:

Կարճ ժամանակում ԱՄՆ-ում արդեն ստեղծվել էր միության 187 մասնաճյուղ:[5]

Միության հասույթը ձևավորվում էր անդամավճարներից, հանգանակություններից և նվիրատվություններից: Հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած ժամանակահատվածում հեռավոր հայրենիքին ու թշվառության մեջ հայտնված հայրենակիցներին սատարելու նպատակով նշանակալից գործունեություն ծավալած Ամերիկայի հայ ազգային միության ընդհանուր դրամագլուխն իր գոյության հինգ տարիների ընթացքում կազմել է շուրջ 930.000 դոլար:

Մ. Սվազլյանի կողմից ղեկավարվող Ամերիկայի հայ ազգային միության իրականացրած կարևոր ձեռնարկներից էր ամերիկահայության շրջանում կամավորական շարժման կազմակերպումը: Կարճ ժամանակում՝ 1917 թ. հունիսի 9 – նոյեմբերի 3, Ֆրանսիայի հովանավորության ներքո Կիլիկիայի ազատագրման համար սկսված կամավորական շարժմանն իրենց մասնակցությունը բերելու նպատակով ԱՄՆ-ի գրեթե բոլոր հայաշատ նահանգներից արձանագրվել էր 5.000 ամերիկահայ, սակայն փոխադրական միջոցների սղության պատճառով մեկնելու հնարավորություն էր ընձեռնվել միայն 1.172-ին: Առաջին աշխարհամարտին ԱՄՆ-ի ներքաշումով նրանցից շատերն իրենց ուժն ու

---

[4] Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի. 1917-1921 թթ., Պոստոն, 1922, էջ 11, 12: Սահմանադրութիւն եւ կանոնագրութիւն Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, Պոստոն, 1917, էջ 2, 19, 20: Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, ԺԶ տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 286:

[5] Ճիզմէճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 352, 353, 376: Սահմանադրութիւն եւ կանոնագրութիւն Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 1, 2: Ավագյան Ք., նշվ. աշխ., էջ 116-120, 144, 154:

կարողությունը ծառայեցրել են նաև հանուն որդեգրած հյուրընկալ երկրի պաշտպանության անդամագրվելով դաշնակցային զինված ուժերին: Պատերազմի ավարտից հետո ԱՄՆ-ի կառավարությունը, գնահատելով հայերի նվիրվածությունը, նրանցից շատերին արժանացրել էր բարձր պարգևների, շնորհել մեծ արտոնություններ ու նպաստներ: Ամերիկայի հայ ազգային միության շնորհիվ էր, որ ամերիկահայ շատ ու շատ վիրավոր ու կարիքավոր կամավորներ ստացել էին նյութական օգնություն, բազմաթիվ կամավորների շնորհվել էր Միության Պատվո Վկայագիր:[6]

Միությունը 1918 թ. մարտին ձեռնակել է 1 մլն դոլարի հանգանակություն, իսկ 1919 թ. փետրվարի 1-ին՝ գաղութի պատմության մեջ առաջին անգամ իրականացրել ազգային մակարդակի ընտրություններ պատերազմի ավարտից հետո Փարիզում գումարվելիք Համազգային ժողովին ներկայացնելով 4 պատգամավոր:

Ամերիկայի հայ ազգային միությունն ամերիկյան մամուլում և հասարակության շրջանում հայանպաստ շարժում սկզբնավորելու նպատակով 1918 թ. նոյեմբերի սկզբին Նյու Յորքում հիմնել է Հանրականության գրասենյակ, որը հետագայում դարձել է Մամլո գրասենյակ, ապա՝ Հանրականության կոմիտե: Վերջինս իր ծրագրերի իրականացման համար 1920 թ. մարտին որոշել էր ստեղծել կազմակերպված մի միավոր, որը պետք է միջազգային շրջաններում ջատագովեր Հայաստանի անկախության ճանաչումն իր պատմական սահմաններում, հայ կարիքավորներին ապահովեր ամերիկյան օգնությամբ մինչև որ Հայաստանի Հանրապետությունը (1918-1920 թթ.) դառնար ինքնաբավ երկիր, ինչպես նաև՝ աջակցեր հայ կանանց ու աղջիկների ազատագրմանը մահմեդական հարեմներից ու տներից և այլն: Ազգային Միությունը, հավանություն տալով Հանրականության կոմիտեի այդ ծրագրին, դրա իրագործմանն ի խնդիր տրամադրել էր 15.000 դոլար:[7]

Միությունը ԱՄՆ-ի, ինչպես նաև եվրոպական երկրների անտեղյակ հասարակայնությանը Հայ դատին ծանոթացնելու նպատակով հրատարակել ու տարածել է քաղաքական, պատմական ու գեղարվեստական բնույթի մի շարք աշխատություններ:

ԱՄՆ-ի ղեկավարության ու կոնգրեսականների շրջանում Ամերիկայի հայ ազգային միության և անձամբ Մ. Սվազլյանի ծավալած հայանպաստ գործունեությունը շուտով տվել է իր դրական արդյունքները. ԱՄՆ-ի նախագահ Ուդրո Ուիլսոնը Հայաստանի Հանրապետություն է առաքել գեներալ Ջեյմս Հարբորդի

---

[6] Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 27, 28: Ավագյան Ք., նշվ. աշխ., էջ 117-119:

[7] Ճիզմէճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 360, 366-367, 368, 370, 371, 372, 377-378: Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 30, 31:

ղեկավարությամբ քննիչ հանձնախումբ՝ տեղում ուսումնասիրելու հայերի տեղահանումներն ու կոտորածները, ինչպես նաև՝ Հայաստանի նորահաստատ պետությանը տնտեսական օգնություն ցույց տալու առաջնահերթ հարցերը, իսկ Կոնգրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովը (նախագահ՝ Ուորրն Հարդինգ) 1918 թ. սեպտեմբերի 29-ին և հոկտեմբերի 2-ին ու 10-ին ունկնդրության էր դրել հայ ներկայացուցիչների և հայասեր ամերիկացիների Հայոց հարցին առնչվող հաղորդումները: Ելույթ էին ունեցել Ամերիկայի հայ ազգային միության ատենապետ Միհրան Սվազլյանը, նրա գործակից Վարդան Մելքոմը, ԱԱՆ-ի Արտաքին գործերի քարտուղարի օգնական Ու. Ֆիլիպսը, Նպաստամատույց կոմիտեի քարտուղարի օգնական Հ. Ջեքուիթը և ուրիշներ:

Միության կազմակերպված ջանքերի շնորհիվ 1919 թ. մարտին ամերիկյան առաջավոր հասարակայնության 15.300 ներկայացուցիչներ (15.000 բողոքական և 75 եպիսկոպոսական եկեղեցականներ, 35 նահանգների կառավարիչներ, 200 կոլեջների ու համալսարանների նախագահներ) խնդրագիր են ներկայացրել ԱՄՆ-ի նախագահին՝ փութացնելու Ազատ Հայաստան ստեղծելու ուղղությամբ Փարիզի Խաղաղության ժողովում ծեռնարկվելիք ջանքերը և դրանք վերածելու գործուն քայլերի:[8]

Միությունը գաղութի հայրենանվեր ազգային ու կուսակցական գործիչների հետ միասին ոչ մի ջանք չի խնայել հարթելու ՀՀ ստեղծումով Փարիզի Ազգային պատվիրակության ներսում առաջացած երկփեղկվածությունը, երբ նախագահ Պողոս Նուբարի կողքին ազգային խնդիրների իրականացման համար որպես նորաստեղծ պետության ներկայացուցիչ 1919 թ. սկսել էր հանդես գալ նաև դաշնակցական գործիչ Ավետիս Ահարոնյանը:

Այդ մասին Մ. Սվազլյանը մասնավորապես գրել է. «Ունենալ Բարիզի մէջ երկու տեղեկատու պիւրօներ առ երեւոյթս նոյն նպատակի ձգտող երկու պատուիրակութիւններու յարակից, ամենատարօրինակ երեւոյթներէն մէկն էր մեր ժամանակակից պատմութեան մէջ: Դրամի եւ ժամանակի կորուստ լինելէ զատ, երկու պատուիրակութեանց միջեւ արտաքին աշխարհի առջեւ աչքի զարնող անհերդաշնակութեան կենդանի ապացոյցն էր»:[9]

Ամերիկայի հայ ազգային միությունը երկրի ողջ հայության հետ միասին իր գործուն մասնակցությունն է ունեցել ամերիկյան Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կոմիտեի կողմից եղեռնից հրաշքով վերապրած հայ որբերին ու կարոտյալներին օգնություն ցույց տալու գործին, ՀՀ առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունու կողմից ԱՄՆ-ում ի նպաստ հայոց բանակին կազմակերպված հանգանակությանը, ինչպես նաև Փարիզի Ազգային պատվիրակության նախագահ Պ.

---

[8] Ճիզմէճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 372, 373, 374, 375, 376:
[9] Ի յիշատակ Միհրան Սվազլեանի, էջ 24-25:

Նուբարի հանձնարարությամբ 1919 թ. նոյեմբերին Զորավար Անդրանիկի և հրամանատար Հակոբ Բոնապարտյանի Ամերիկա կատարած ազգանպաստ առաքելությանը, քաջալերել ու նյութապես օգնել է նաև նույն ժամանակ կազմավորված Ամերիկահայ տիկնանց միությանը, որը ամերիկացի քվեատու կանանց և բարձրաստիճան պաշտոնյաներին լուսաբանում էր Հայ դատը՝ փորձելով նրանց միջոցով ազդել Կոնգրեսի վրա վավերացնելու հայանպաստ որոշումները:[10]

Ամերիկայի հայ ազգային միության և ամերիկահայ համայնքի երևելիների ջանքերի շնորհիվ հնարավոր էր դարձել համախմբել հայասեր ամերիկացիներին՝ 1919 թ. հունվարին կազմելով Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն, որն իր առջև խնդիր էր դրել բոլոր միջոցներով օգնել Հայաստանին, ամերիկյան ժողովրդին ու քաղաքական բարձրաստիճան շրջաններին լուսաբանել Հայկական հարցը, հայերի հանդեպ համակրանք ստեղծելու նպատակով փաստացի ներկայացնել Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի կրած տառապանքները, ինչպես նաև ճնշում գործադրել ամերիկյան կառավարության վրա՝ ճանաչելու Հայաստանի լիակատար անկախության իրավունքը: 60 հեղինակավոր անդամներից բաղկացած հիշյալ կոմիտեի նախագահն էր ամերիկացի երևելի փաստաբան, Բեռլինում ԱՄՆ-ի նախկին դեսպան, սենատոր Ջեյմս Ջերարդը:[11]

Կազմավորված Հայաստանի ամերիկացի բարեկամների Հայաստան-Ամերիկա ընկերությունը ֆիլադելֆիացի հայտնի իրավաբան, հայասեր Ուոլթեր Ջորջ Սմիթի նախագահությամբ (քարտուղար՝ Ջ. Մոնթգոմերի)՝ իր հայկական հանձնախմբի խորհրդատվությամբ, մինչև Լոգանի վեհաժողովը (1922 թ. նոյեմբեր 20 – 1923 թ. հուլիս 24) ամերիկյան հասարակության և կառավարության առջև իրականացրել է Հայ դատին ի նպաստ ձեռնարկներ:[12]

Ամերիկայի հայ ազգային միության նախագահ Մ. Սվազլյանի անմիջական գործուն ջանքերի շնորհիվ էր, որ ԱՄՆ-ի հայասեր նախագահ Ու. Ուիլսոնը հայկական վիճելի տարածքների նկատմամբ ԱՄՆ-ի մանդատային վերահսկողություն հաստատելու առաջարկով 1920 թ. հանդես էր եկել երկրի Կոնգրեսի առջև:

Առաջին աշխարհամարտից հետո միությունը ԱՄՆ-ի և եվրոպական պաշտոնատարների կողմից ճանաչված անցագիր-վկայականներ է տրամադրել դեպի հայրենիք մեկնող իր հայրենակիցներին:[13]

---

[10] Ճիզմէճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 376, 417-419: Տեղեկագիր Հայ Ազգային Միութեան Ամերիկայի, էջ 39:
[11] Ավագյան Ք., նշվ. աշխ., էջ 120: Հայաստանի Հանրապետության Ազգային Արխիվ (ՀՀ ԱԱ), ֆ. Պ - 57, ց. 5, գ. 222, թ. 8ա-8բ:
[12] Ճիզմէճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 372:
[13] Նույն տեղում, էջ 376:

Հմուտ դիվանագետ, «յառաջդիմող իմաստութեան կատարեալ մարմնացում»[14] Միհրան Սվազլյանի ղեկավարած Ամերիկայի հայ ազգային միությունն իր հետամտած հայանպաստ լուրջ խնդիրների իրականացումը համագաղութային, մինչև անգամ միջազգային և հատկապես ամերիկյան կառավարական ու հասարակական մակարդակներով կազմակերպելու կարողությունների համար ամերիկյան պաշտոնական շրջանների կողմից ճանաչվել է որպես ամերիկահայ գաղութը ներկայացնող մարմին՝ դառնալով հայկական առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում:

[14] Մեսիաեան Ե., նշվ. աշխ., էջ 167:

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ
(ԵՊՀ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1918թ. հունիս – նոյեմբեր)

Ավելի քան 500 -ամյա ընդմիջումից հետո 1918 թ. մայիսի 28 -ին Արևելյան Հայաստանի կենտրոնում, ռուսական կայսրության նախկին Երևանի նահանգի մի մասում վերականգնվեց հայկական պետականությունը՝ Հայաստանի Հանրապետությունը: Այն ծնունդ առավ ներքին ու արտաքին չափազանց ծանր ու հակասություններով լի պայմաններում: Նորաստեղծ Հանրապետության առաջ ծառացած անհապաղ լուծում պահանջող և անկանխատեսելի հետևանքներով հղի խնդիրները բազմաթիվ էին՝ վերաբերում էին երկրի թե՛ ներքին կյանքին, թե՛ արտաքին քաղաքականությանը: Երկիրն անելանելի վիճակից դուրս բերելու համար անհրաժեշտ էր քաղաքական կամք, վիթխարի ջանքեր ու հետևողական աշխատանք:

Հայաստանի առաջին հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին կազմել էր մի ծրագիր՝ հայտագիր, որը ներկայացնում էր նրա գլխավորած ժամանակավոր կառավարության տնտեսական ու քաղաքական կուրսը:

Հ. Քաջազնունու հայտագիրը հանրապետության առաջ ծառացած խնդիրները վերլուծում է բաժանելով դրանք երկու խմբի՝ ներքին և արտաքին: Հայտագրում արտաքին քաղաքականության վերաբերյալ ասվում է հետևյալը. «... Ես կհետևեմ մի գերակա սկզբունքի՝ հաստատել բարիդրացիական հարաբերություններ հարևան պետությունների հետ, բոլոր հնարավոր միջոցներով խուսափելով նրանց հետ ընդհարումից: Դա թելադրված է այն հանգամանքով, որ մեր ժողովրդին, մեր երկրին անհրաժեշտ է հանգիստ, անհրաժեշտ է խաղաղություն, թեկուզ և անկայուն: Մենք հյուծված ենք, ուժասպառ և ի վերջո կազմալույծ: Մենք ընդունակ չենք ուժերի հետագա լարման, մենք չենք դիմանա նոր փորձությունների: Արտաքին իրավիճակի ցանկացած նոր բարդացում սպառնում է մեզ անխուսափելի և վերջնական կործանմամբ: Մենք ջախջախված, պարտված կողմ ենք: Մենք դա պետք է հստակ գիտակցենք, միշտ հիշենք և քաջություն ունենանք համապատասխան ենթադրություններ անելու:

Այս պահին մենք կարող ենք ունենալ մեկ նպատակ՝ փրկել հայ ժողովրդի բեկորները և հերոսական փորձ անել դեռևս մեր ձեռքին մնացած փոքր տարածքի վրա պետություն հիմնել»:

Հայտագրից ակնհայտ է դառնում, որ արտաքին հարաբերությունների ասպարեզում Հայաստանի Հանրապետության

համար հրատապն ու առաջնահերթը Թուրքիայի նկատմամբ վարելիք քաղաքականությունն էր: Հ. Քաջազնունին իրավացիորեն գտնում էր, որ բոլոր հնարավոր միջոցները պետք է գործադրվեն Թուրքիայի հետ հաշտության եզրեր գտնելու համար: Վարչապետը քաջատեղյակ էր Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ Թուրքիայի վարած քաղաքականությանը. «...Մենք հիմքեր չունենք բարեկամական զգացմունքներ տածելու Թուրքիայի նկատմամբ նրա ոչ անցյալի և ոչ էլ ներկա գործունեության համար»[1]: Նա իբրև պետական քաղաքական գործիչ թերևս ամենասթափ ու ճշմարտացի գնահատական է տալիս թուրքական քաղաքականության նպատակներին. «...Թուրքիան Անդրկովկասում ևս, ինչպես Արևելյան Անատոլիայում ձգտում է քաղաքականապես ոչնչացնել հայկական տարրը և խոչընդոտել հայկական պետության կայացմանը»[2]:

Սակայն ի վիճակի՞ էր արյունաքամ հայ ժողովուրդն այլ ուղի ընտրել, այսինքն՝ պայքարի մեջ մտնել Թուրքիայի հետ: Այս էր խնդիրը, և իրատես վարչապետը գտնում էր, որ՝ ոչ: Եվ նա եզրակացնում է. «Եթե դեռևս ինչ որ մի հնարավորություն կա փրկելու հայ ժողովուրդի բեկորները, ապա այդ հնարավորությունը պետք է փնտրել Թուրքիայի հետ ցանկացած գնով համաձայնության գալու մեջ »[3]:

Երկրի ներքին քաղաքական ու տնտեսական վիճակը, հիրավի, որոշակիորեն ազդում էր նրա վարած արտաքին քաղաքականության վրա: Իսկ Քաջազնունու հակիրճ բնութագրմամբ. «Երկրի ներսում դրությունը հուսահատական էր»: Այնուհետև նա մանրամասնում է. «Ազգաբնակչության կեսից ավելին կազմում էին փախստականներ և գաղթականներ, անտուն, մերկ ու քաղցած:

Գյուղերը քանդված ու ավերված, դաշտային աշխատանքները դադարեցված: Հացի բացակայության և մյուս կենսամթերքների սակավության պատճառով գյուղացիները կերել էին իրենց սերմացուն և սկսել էին ուտել լծկան անասունները: Տիրում էր սով բառի բուն իմաստով: Սովի հետևանքով առաջ էին եկել տարափոխիկ հիվանդություններ, մասնավորապես՝ բծավոր տիֆ, իսկ դեղերը սպառված էին արդեն, դեղատները՝ դատարկ:

Հաղորդակցությունը արտաքին աշխարհի հետ կտրված էր միանգամայն, որովհետև միակ երկաթուղային գիծը բռնել էին թուրքական զորքերը, ապրանքների ներմուծումը դադարած էր, որովհետև կտրված էին կապերը թե՛ Ռուսաստանի, թե՛ Պարսկաստանի և Եվրոպայի հետ: Այս պատճառով տիրում էր սուր պակասություն ամենանհրաժեշտ ապրանքների: Տիրում էր կատարյալ քաոս և

---

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ.Պ-199, ց.1, գ.10. թ.8 – 9:
[2] ՀԱԱ, ֆ.Պ-199, ց.1, գ.10, թ.8 – 9:
[3] Նույն տեղում, թ.11:

անիշխանություն: Ամեն բան պետք էր վերսկսել սկզբից, ավերակների վրա կառուցանել նոր պետական շենք»[4]:

Հանրապետության ներքաղաքական, տնտեսական աղետալի վիճակը շարունակվեց մինչև տարվա վերջ. «Հայաստանը ամեն կողմից շրջապատված է թշնամիներով, և մենք բոլորովին կտրված ենք արտաքին աշխարհից, - գրում է Սիմոն Վրացյանը: Սովն ու համաճարակը, հիվանդությունները շարունակում են իշխել մեր երկրում. տկարները մեռնում են և ուժեղները տկարանում են մեռնելու համար: Եթե այսպես վեց ամիս էլ շարունակվի, Հայաստանի ժողովրդի մեծ մասը կը կոտորվի»[5]: Հայաստանը կտրված աշխարհից, անօգնական և շրջապատված թշնամիներով, մի քանի ամսվա ընթացքում՝ մինչև հոկտեմբեր, սպառեց իր հացի աղքատիկ պաշարը: «Կառավարութեան հաւաքած ցորենը սպառուեց, - գրում է բժիշկ Արտաշես Բաբայանը, - եւ սովը իր անողոք ճանկերը խրեց հայ գյուղացու կրծքին: Մեռան հազարներով, տասնեակ հազարներով»[6]:

1918 թվականից երկրի տարածքում մոլեգնում էր բծավոր տիֆի համաճարակը, որը մարդկային հազարավոր կյանքեր խլեց: Երևանում օրեր էին լինում, երբ մեռնողների թիվը մի քանի հարյուրից անցնում էր: Ծանր վիճակ էր տիրում նաև բանակում. «... Ջինվորական հիվանդանոցները բերնէ բերան լիքն էին, եւ հիվանդապահներն ավելի շատ դիակներ կրելով էին զբաղվում, քան հիվանդներին խնամելով: Իսկ այն ինչ կատարվում էր այդ ժամանակ Սարդարապատում, Ղամարլուում և Իգդիրի շրջանում և գաղթականական բարակներում՝ վեր է ամէն երեւակայությունից: Հարյուրավոր դռներ այս շրջաններում ընդմիշտ փակ մնացին, որովհետև նրանց բոլոր բնակիչները մեռել էին: Մեռելների թիւը այնքան շատ էր եւ նրանց տէրերն այնքան ուժասպառ, որ թաղման գործողություններն էլ չէին կարողանում կատարել: Դիակները օրերով անթաղ մնալով նեխում էին եւ նոր համաճարակների աղէտը պատրաստում: Սովահար շրջաններում կենդանի, շուն, կատու չմնաց եւ մարդիկ ձեռնամերձ եղան անասունների լեշերին եւ մինչև իսկ մարդկային դիակներին ...», - գրում է Արշակ Չամալյանը[7]: Մինչև 1919 թ. ամռանը, ըստ ներքին գործերի նախարարության տվյալների Հայաստանի Հանրապետությունը բծավոր տիֆի համաճարակային հիվանդությունից և սովից կորցրեց շուրջ 192 հազար մարդկային կյանքեր[8]:

---

[4] ՀԱԱ, ֆ.Պ-200, ց.1, գ.498, թ.48 - 50:
[5] Վրացեան Ս., Հին թղթեր նոր պատմութեան համար, Պէյրութ, 1962, էջ 274:
[6] Բաբալեան Ա., էջեր՝ Հայաստանի անկախության պատմութիւնից, Գահիրէ, 1959, էջ19:
[7] «Հայրենիք» ամսագիր, Պոստոն, 1924, հունիս, էջ 72:
[8] Նույն տեղում:

Հանրապետության ներքին և արտաքին քաղաքական խնդիրների իրականացման գործում որոշակի բացասական դերակատարություն ուներ երկրում առկա բարոյահոգեբանական մթնոլորտը: Հայ ժողովրդի հոգեբանության մեջ պատմական ավանդույթի ուժով գործող ազգագրական, տեղային, խմբակային շահախնդրություններն ոչ միայն տարբեր էին, այլև՝ միմյանց հակասող ու իրարամերժ: Ներքին պառակտվածությունը որդի պես կրծում էր ազգի միասնական ոգին, թուլացնում դիմադրական ուժը, զրկում ընդհանուր պետական շահի տեսանկյունից դատելու կարողությունից:

500 տարի իր պետականությունը կորցրած ժողովուրդը, երբ հնարավորություն էր ստացել վերակերտելու իր անկախությունը, Հանրապետության «իւրաքանչյուր հատուած իր ներսում ունէր զանազան տեղացիական խմբավորումներ, որոնցից ամէն մեկը բոլոր խնդիրները դիտում էր իր առանձին շահերի անկիւնագծով եւ շարունակ իր ուրոյն տրամադրությունները մղում առաջին գծի վրա: Այս բոլոր Երեւանցիները, Վանեցիները, Սասունցիները, Ղարաբաղցիները, Շատախցիները, Նուխեցիները, Արէշցիները եւն. եւն. մի այնպիսի սումբուր էին առաջացնում մեր պետական-հասարակական գործերում, որ դժուար է նույնիսկ պատկերացնել, - գրում է Արշակ Ջամալյանը: - Երևանցիք դժգոհ էին Հայաստանի ղեկավարներից, որոնք բոլորն էլ դրսեցիներ լինելով՝ գործեր են կատարում իրենց քաղաքում՝ առանց տեղացիների պատշաճ մասնակցութեան: Այդ պատճառով էլ նրանք խռոված երեխաների պէս կողմնակի դիտողի դեր էին կատարում Հայաստանի իրադարձությունների մեջ: Վանեցիք կարծում էին, թե կառավարութիւնը բոլոր խնդիրներից վեր պիտի դասի «Վանայ քաղաքի» և շրջանի վերագրաւումը, որպէսզի ժողովուրդը ազատուի իր գրկալից կեանքից: Ղարաբաղցիք ընդհակառակը պնդում էին, որ առաջին հերթին Ղարաբաղի ազատագրութիւնը պիտի լինի կառավարութեան հոգածութեան խնդիրը, որովհետև Ղարաբաղը Հայաստանի ողնաշարն է հանդիսանում:

Սասունցիք մի ուրույն աշիրէթի պէս ապրում էին իրենց համար, չէին թոյլ տալիս, որ որեւէ մէկը իրենց ներքին գործերին միջամտի, ինչպես որ իրենք էլ չէին միջամտում ուրիշի գործերին, և կառավարական ոչ մի կարգադրութիւն իրենց համար պարտադիր չէին համարում, մինչև որ այդ կարգադրութիւնը չգար իրենց աչքում աշիրաթապետի հանգամանք առած «Ռուբէն փաշայի» անունով: Արէշցիք չէին կարողանում հասկանալ, թե Հայաստանի կառավարութիւնը ինչպես կարող է որևէ այլ գործով զբաղվուել, երբ նա դեռ չի սպանել վերջին թուրքին մեր երկրում: Չէ՞ որ այդ թուրքերը կամ նրանց ազգակիցները ոչնչացրել էին Արէշի և Նուխու 40 000 հայ ժողովուրդը: Եւ այդ պատճառով էլ, այն, ինչ որ կառավարութիւնը չէր անում, նրանք իրենք էին ուզում անել ...

Այսպէս և մնացած բոլոր տեղացիները: Բոլորն էլ իրենց առանձին ակնկալութիւններն ունեին Հայաստանի կառավարութիւնից եւ շատ դեպքերում իրենց պահաջների բաւարարումով էին պայմանաւորում այդ կառավարութեանը տալիք օգնութիւնը:

Էլ չեմ խոսում առանձին անհատների կամ փոքրիկ խմբակների մասին, որոնք Ռուսաստանից, Եւրոպայից, Ամերիկայից, Պոլսից, Թիֆլիսից, Բագուից մեծ մասամբ հարկադրաբար գալով մեր երկիրը՝ բերել էին իրենց հետ բազմաթիւ ծրագիրներ, խորհուրդներ, քննադատութիւններ: Սրանցից ամէն մէկը իր բաժին բազմազանութիւնն էր մտցնում մեր իրականութեան մեջ՝ ցանկանալով Հայաստանի գործերը ձեւել եւ կարել համաձայն իր տեսածի ու լսածի: Չեմ խօսում նաև արտասահմանի հայութեան պես-պես վերաբերմունքների մասին դէպի Հանրապետությունն ու նրա գործերը, որոնք, ի հարկէ, առանց ազդեցութեան չէին մնում մեր պետական շինարարութեան համար»[9]: Հանրապետության գոյության առաջին ամիսներին ձևավորված բարոյահոգեբանական մթնոլորտի Ա. Ջամալյանի բնութագրությունը միանգամայն համոզիչ է:

Հանրապետության ազգաբնակչության մոտ 30%-ը մահմեդականներ էին, որոնք մշտապես խոչընդոտ և սպառնալիք էին ստեղծում նորաստեղծ պետության գոյության համար: Ինչպես Հ. Քաջազնունին է վկայում. «Հայաստանի մահմեդական ազգաբնակչութիւնը, խրախուսուած Թիւրքիայի ու Ադրբեյջանի կողմից, հակապետական ընթացք է բռնած եղել»[10]: Հայաստանի «...մահմեդական ազգաբնակչութեան մեծամասնութիւնը եւ դրսի թելադրանքների եւ ներքին տրամադրութիւնների ազդեցութեամբ՝ բացարձակապէս չէր ճանաչում մեր իշխանութիւնը եւ չէր ուզում որեւէ գործ ունենալ պետութեան հետ.- գրում է Ա. Ջամալյանը: - Իսկ փոքրամասնութիւնը, որ տեղ տեղ, իր ուժի տկարութեան պատճառով չէր կարող բացարձակապէս դեմ գնալ մեր իշխանութեանը՝ թէեւ երեւոյթապես ճանաչում էր նրան, բայց որեւէ ձեւով աջակից եւ նեցուկ լինել նրան չէր կամենում»[11]:

Ռուսները Հայաստանում թեև քանակով քիչ էին՝ մոտ 10 հազար, սակայն ազդեցիկ ուժ էին թե պետական մարմիններում և թե բանակում: Ռուսները բաժանվում էին երկու խմբի. գյուղացիներ, որոնք մշտական բնակություն էին հաստատել ցարական կառավարության գաղութային քաղաքականության շնորհիվ, և պետական պաշտոնյաներ ու ծառայողներ՝ գլխավորապես զորական, դատական և հաղորդակցության

---

[9] Նույն տեղում, էջ 70 - 71:
[10] Քաջազնունի Յովհ., Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս, Վիեննա, 1923, էջ 36:
[3] «Հայրենիք» ամսագիր, Պոստոն, 1924, հունիս, էջ 69:

բնագավառներում: Սակավ բացառությամբ թե՛ առաջինները և թե՛ երկրորդները, որոնք ռուսական տիրապետության ժամանակ հատուկ արտոնյալ դիրք ունեին Հայաստանում, «շատ վատ էին տրամադրուած մեր պետականութեան հանդէպ: Անկախ այն բանից, որ նրանք հոգեբանօրէն չէին կարող հաշտվել այն մտքի հետ, որ ռուսի երէկուայ հպատակը այսօր տէր ու տիրական է դարձել իր երկրում՝ նրանց դիւրը չէր գալիս մեր պետութեան ձգտումը՝ հաւասարեցնել հայ գիւղացու եւ ռուս գիւղացու վիճակը հողաբաժանման խնդրում և հայոց լեզուն պետական լեզու դարձնել հանրային բոլոր գործերում: Առաջինը դիւր չէր գալիս ռուս գիւղացիներին, որովհետեւ խախտում էր նրանց առանձնաշնորհեալ դիրքը, իսկ երկրորդը դիւր չէր գալիս մասնաւորապես ռուս պաշտօնեաներին, որովհետև դժուարացնում էր նրանց պաշտօնավարութիւնը Հայաստանում: Այսպիսով՝ յանձին ռուս ազգաբնակչութեան՝ ընդհանուր առմամբ մենք ունեինք մեր պետականութեանը առնուազն անբարեացակամ մի տարր»[12]:

Երկրի ներքին և արտաքին դրությանը համապատասխան քաղաքականության վարելուն խոչընդոտում և մեծապես խանգարում էր նաև որոշակի ձևավորված հակասությունը Օրենսդիր մարմնի՝ Հայաստանի խորհրդի, գործադիր մարմնի՝ կառավարության և գերակա քաղաքական ուժի՝ Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության միջև:

Այդ կապակցությամբ հանրապետության վարչապետ Հ. Քաջազնունին, գրում է. «Գործնականօրէն՝ մեր կուսակցութիւնը ձգտում էր իրան ենթարկել, իր հսկողության տակ առնել թե՛ օրենսդիր մարմինը, թե կառավարութիւնը: Մենք քաջութիւն չունէինք (ոչ էլ կարողություն) բացէ ի բաց կուսակցական դիկտատուրա յայտարարելու, բայց եւ չէինք ուզում՝ մնալ պարլամենտական կարգերի սահմանի մեջ ու փորձ էինք անում իրականացնել Հայաստանում իթթիհատականների գործելակերպը. կուսակցական դիկտատուրա ռամկավարական ձեւերի տակ քողարկած:

Իշխանութեան անհանդուրժելի երկվութիւն էր առաջ եկել. հրապարակում՝ Խորհրդարանն ու իր կառավարութիւնը, ստուերի մեջ՝ կուսակցությունն ու իր օրգանները:

Հասկանալի է, որ այդ երկու կարգի իշխանութիւնները՝ պաշտօնականն ու անպաշտօնը՝ կարող էին միայն խանգարել ու կաշկանդել մեկը միւսին. ձեւական պահանջները թոյլ չէին տալիս, որ կուսակցութիւնը ազատ ու արագօրեն շարժուի, իր կամքը լրիւ արտահայտի, իսկ կուսակցութեան միջամտիւնը թույլ չէր տալիս, որ կառավարութիւնը իր գիտցածն անի, իր գիծը տանի:

Հասկանալի է նաև, որ այս դրութիւնը շատ էր դժվարացնում մի լուրջ ու անկեղծ կօալիսիօն կազմելու գործը. եւ իրօք. Կօալիսիօնի մեջ

---

[12] Նույն տեղում, էջ 68:

մնող օտար տարրերը հարկադրվում էին վարել մի քաղաքականութիւն, որ իրանցը չէր, մշակւում էր ու նախագծւում կառավարութիւնից դուրս, կուսակցական մարմինների մեջ, որ իրանք չէին կարող ունենալ մուտք ու մասնակցութիւն»[13]:

Երկրի կառավարման վիճակի Հ. Քաջազնունու հակիրճ գնահատականը դիպուկ է. պետականության հաստատումից հետո դաշնակցությունը պետք է ասպարեզը թողներ խորհրդարանին և կառավարությանը: Սակայն Հ. Քաջազնունուն չհաջողվեց հաղթահարել կուսակցության ազդեցությունը և հետևանքը եղավ նրա մեկուսացումը պետական կառավարման գործերից: 1919 թ. փետրվարի 4 -ին Հայաստանի խորհուրդը ընդունեց օրենք՝ Սինիստր-նախագահ Հ. Քաջազնունուն Եվրոպա և Ամերիկա գործուղելու մասին՝ Հայաստանին հաց, պարեն և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ մատակարարելու համար[14]: Սակայն անգլիական հրամանատարության կողմից մուտքի արտոնությունը միտումնավոր ձգձգելու պատճառով Հ. Քաջազնունին Ամերիկա մեկնեց միայն 1919 թ. մայիսի 29 -ին:

Հանրապետությունում ստեղծված ներքին և արտաքին բարդ քաղաքական իրադրությունը ժողովրդի մեծամասնության շրջանում անվստահության մթնոլորտ էր ձևավորել անկախ Հայաստանի գոյության նկատմամբ: Ռուսահայերի մեծամասնության համար անկախությունն անհասկանալի, արհամարհական և անբովանդակ խոսք էր. «Ռուսահայ գյուղացին և քաղքենի մանր բուրժուան, - գրում է Ա. Ջամալյանը, - որոնք վերջին տարիների վերիվայրումներից շատ էին տուժել եւ տնտեսապես ծանր վիճակի մեջ էին գտնւում՝ երազում էին Ռուսաստանի վերադարձի մասին, որ իր հետ պիտի բերեր էժան հաց, շաքար, կերպասեղեն եւ կեանքը նորից դարձներ այնքան դիւրալի, ինչպես առաջ ...»[15]: Գրիգոր Չալխուշյանի հավաստմամբ անկախացման առաջին ամիսներին Հայաստանում ոչ ոք չէր հավատում, որ անկախությունը մնայուն է: Ժամանակի հարց էր թվում նրա գոյությունը, որովհետև պետությունը հիմք չուներ: Ռուսահայերը հավատացած էին, որ վերջ ի վերջո ռուսը պիտի գա և տիրի իր նահանգին, իսկ արևմտահայերի համար Հայաստանը Անատոլիա էր[16]: Հայաստանի խորհրդի առանձին անդամներ նույնիսկ չէին ընդունում Անկախ Հայաստանի գոյությունը, պահանջում էին երկրի վերամիավորումը Ռուսաստանի հետ: Օրինակ, 1918 թ. օգոստոսի 6 -ին Հայաստանի Խորհրդի չորրորդ նիստում պատգամավոր Ս.Մամիկոնյանը դիմելով խորհրդարանականներին հարցնում է. «Արդեօք հենց Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը

---

[13] Քաջազնունի Յովհ., նշվ. աշխ., էջ 32:
[14] ՀԱԱ, ֆ.Կ-4033, ց.2, գ.962, թ.103:
[15] «Հայրենիք» ամսագիր, Պոստոն, 1924, հունիս, էջ 69:
[16] ՀԱԱ, Ֆ.Կ-4033, ց.6, գ.293, թ.26:

ինքնին մի կատաստրոֆա չէ»[17]: Դեմ արտահայտվելով երկրի անկախությանը Ս. Մամիկոնյանը, պահանջում է «վերականգնել միությունը Ռուսաստանի հետ»[18]:

Կարծում ենք, պատահական չէր, որ Հայաստանի Հանրապետության գոյության առաջին շրջանում Հայաստանի խորհուրդը և կառավարությունը նպատակահարմար չհամարեցին պաշտոնապես հայտարարություն անել երկրի անկախության հռչակման մասին, սակայն որը նաև առիթ տվեց «մտածելու, որ մեր կասկածոտ հարեւաններին. - եւ ոչ միայն հարեւաններին՝ (ի նկատի ուներ նաև Ռուսաստանին - Գ.Պ.) որ հայերը կողմնակից չեն անկախութեան», - գրում է Ս. Վրացյանը[19]: Այդ պայմաններում Հայաստանի խորհուրդը և կառավարությունը չէին կարող հիմնավոր կերպով համակարգված զբաղվել երկրի ոչ ներքին և ոչ էլ արտաքին քաղաքականությամբ: Երկրի արտաքին քաղաքականությունը բնականաբար թելադրված էր ներքին ծանր դրությամբ:

Այսպիսով, հանրապետության անկախացման առաջին ամիսներին երկրում ստեղծված ներքաղաքական, անկայուն, բարդ իրադրությունն իր կնիքը դրեց երկրի արտաքին քաղաքական կողմնորոշման իրագործման վրա: Բնականաբար Հանրապետության արտաքին անկայուն, անորոշ, բարդ վիճակն էլ իր բացասական ազդեցությունն ունեցավ երկրի ներքին կյանքի վրա:

Բաթումի պայմանագրով Թուրքիան Հայաստանի համար գծել էր մի շրջան, որը պատռելու ու արտաքին աշխարհ դուրս գալու համար պահանջվում էին ուժ, ժամանակ ու գերմարդկային վիթխարի ջանքեր: Բաթումի պայմանագրով Թուրքիան, առաջինը ճանաչելով Հայաստանի Հանրապետության անկախությունը, հունիսի վերջին մամուլի էջերում «ողջունելով Հայկական հարցի վերջնական լուծումը» հայտնում է, որ «... իրենք (թուրքերը - Գ.Պ.) ստեղծել են Հայաստանը և այդպիսով Հայկական Հարցի վերջնական լուծումը համարում են փակված»[20]:

12 հազար քառակուսի կիլոմետր տարածքի վրա կուչ եկած Հայաստանի Հանրապետությունը ավելի շուտ նման էր ընդարձակ բանտի, քան թե անկախ պետության: Թուրքիան երկիրը շրջապատել ու մեկուսացրել էր արտաքին աշխարհից. «Հայաստանը մնացել էր մենակ, չորս կողմից շրջապատված թշնամի կամ անբարյացակամ ուժերով, առանց որևէ արտաքին նեցուկի և օգնության», - գրում է Հ. Քաջազնունին[21]: Հուլիսի 7 – 9, թուրքերը խախտելով Բաթումի հաշտության պայմանագիրը, առանց որևէ առիթի ու առանց

---

[17] «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1934, սեպտեմբեր - հոկտեմբեր, էջ 98:
[18] ՀԱԱ, ֆ.Պ-200, գ.1, գ.7, թ.80:
[19] Վրացեան Ս., Խարխափումներ Յ.Քաջազնունու «Հ.Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլեւս» գրքի առթիվ, Պոսթըն, 1924, էջ 64:
[20] ՀԱԱ, ֆ.Պ-200, գ.1, գ.8, թ.116-117:
[21] ՀԱԱ, ֆ.Պ-200, գ.1, գ.498, թ.48:

նախազգուշացման, մինչև անգամ կանոնավոր ռազմական գործողություններ սկսեցին Սարդարապատի և էջմիածնի հայկական զորամասերի դեմ և գրավեցին Խաթունարխ, Չոբանքեւարա, Նեչշիլու գյուղերը[22]: 1918 թ. հունիս - օգոստոս և հետագա ամիսներին Հայաստանի Հանրապետության տարածքների կեսից ավելին լցված էր թուրքական զորքերով, «մնացեալ մասը խճողուած ու խռովայոյզ վիճակի մեջ էր: Հայ ժողովուրդը ապրում էր գերագույն տագնապի օրեր: Մտավորականութեունը կծկուել ու խեղճացել էր: Հոգեկան հավասարակշռությունն ու կորովը պահած գործիչները մատների վրայ էին համարվում»[23]: Թուրքերը գտնվում էին Երևանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա և առիթի դեպքում կարող էին շարժվել դեպի Երևան, ծանր ու վերջնական հարված հասցնելով երկրին: Ճիշտ է, նրանց դեմ կանգնած էր, հայկական հուսալի մի զորամաս, «Մեր թէ թւով ու թէ ներքին կազմակերպութեամբ ու դիսցիպլինով համեմատաբար ուժեղ զօրքը, - գրում է Ա. Ջամալյանը, - սակայն վերջինս ռազմամթերքի սաստիկ պակաս է զգում և այդ պատճառով երկարատև կռուի դիմանալ չի կարող»[24]:

Հայաստանի Հանրապետության փոխհարաբերություններն անորոշ ու հակասական էին հարևանների՝ Վրաստանի ու Ադրբեջանի հետ՝ նրանց միանգամայն տարբեր քաղաքական նպատակների ու կողմնորոշումների պատճառով: Երեք հանրապետությունների քաղաքական նկրտումները ոչ միայն տարբեր էին, այլև միմյանց հակասող ու միմյանց բացառող. «... երեք պետությունների մեջ կային սահմանային շատ կնճռոտ վեճեր, կար հնուց սնված հակասություն, փոխադարձ անվստահություն, կասկած ու երկյուղ, և ապա՝ արմատական տարբերություն արտաքին օրիանթասիոնի վերաբերմամբ: Ադրբեջանը (անվերապահորեն) և Վրաստանը (աննշան վերապահումներով), - գրում է Հ. Քաջազնունին, - ձգտում էին կապվել Թուրքիայի հետ՝ Ռուսաստանի դեմ ընդհանուր ճակատ կազմելու համար, մինչդեռ Հայաստանը նկատում էր Թուրքիայի գերիշխանությունը Անդրկովկասում ոչ միայն վտանգավոր, այլև պարզապես մահացու իր գոյության համար»[25]:

Առաջին աշխարհամարտի հենց սկզբից կովկասյան թաթարները (ադրբեջանցիները) ամբողջովին հակված էին իրենց ցեղակից և կրոնակից Թուրքիայի կողմը, երբ «1917 թվականի վերջերին՝ ռուսական զորքերը լքեցին կովկասյան ճակատը և տաճկական բանակը սկսեց իր հաղթական արշավանքը դեպի հյուսիս, թաթարները՝ համարյա առանց քողարկելու՝ անցան Թուրքիայի կողմը,- գրում է Հ.Քաջազնունին: -

---

22 «Հայրենիք» ամսագիր, Պոստոն, 1928, թիվ 11, նոյեմբեր, էջ 119:
23 Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 156-157:
24 ՀԱԱ, ֆ.Պ-276, ց.1, գ.22, թ.6, գ.37, թ.19:
25 Քաջազնունի Հ., Բաց նամակ Z -ին, Թուրքիա ? թե Ռուսաստան, Երևան, 1990, էջ15:

Նրանք ոչ միայն չէին ուզում շարունակել պատերազմը Թուրքիայի դեմ, այլ անում էին ամեն իրանց ձեռքից եկածը, որպեսզի Թուրքիան օր առաջ տիրապետի Անդրկովկասին»[26]: Հայաստանի Հանրապետության ստեղծումից հետո, գրում է Հ. Քաջազնունին, «Ադրբեջանը (Անդրկովկասյան Թաթարստանը), յենելով թուրք բանակի ներկայության վրա, նեղում էր Հայաստանի արևելյան (մասամբ էլ հյուսիսային) սահմաններին ու սպառնում էր սրի քաշել այդ կողմերի հայ ազգաբնակչությանը»[27]: Ոչ միայն սպառնում էր, այլև հենց նշված ժամանակաշրջանում սրի քաշեց տասնյակ հազարավոր հայերի[28]:

Վրաստանի անկախության հռչակումից հետո վրաց կառավարությունը հստակ արտահայտեց իր արտաքին քաղաքական դիրքորոշումը հարևան երկրների և Ռուսաստանի նկատմամբ. վրացիների համար թուրքական կամ ադրբեջանական վտանգ գոյություն չուներ, որ սպառնար նրանց ֆիզիկական գոյությանը և հարկադրեր հուսահատորեն փրկության ուղիներ որոնելու. «... վրացիների օբյեկտիվ պայմաններն այնպես էին դասավորվել, որ նրանք ոչ մի սուր հրամայական կարիք չունեին դրսի օգնության», - գրում է Ռուբեն Դարբինյանը[29]:

Հայաստանի ժամանակավոր կառավարության հայտագրում Հ. Քաջազնունին ասում է, որ «Վրաստանը արդեն արել է իր ընտրությունը. նա բացահայտորեն տրվել է Գերմանիային: Նա կարող է դա անել առանց ռիսկի, քանի որ Գերմանիան հիմնավորվել էր նրա տարածքում և պաշտպանում էր նրա սահմանները. Վրաստանին հասնելու համար Թուրքիան պետք է անցնի գերմանական զինվորի դիակի վրայով, քայլ, որին նա հեշտությամբ չի դիմի: Մեր իրավիճակը այլ է: Մեր տարածքում դեռևս ոչ մի գերմանական զինվոր, ոչ մի գերմանական դրոշ չկա և կարելի է հուսալ, որ երբեք էլ չի լինի: Գերմանացիներին հետաքրքրում են Բաթում-Բաքու և Փոթի - Բաքու երկաթուղագծերը, բայց ոչ Երևանի նահանգը: Հնարավոր է, որ Գերմանիայի և Թուրքիայի միջև համաձայնությունը կկայանա հենց Հայաստանի հաշվին և Թուրքերը կշարունակեն տիրել Հայաստանի հողերը: Դրա համար էլ մեր մերձեցումը Գերմանիայի հետ պետք է ընթանա այնպես, որ չառաջացնի Թուրքիայի զայրույթը»[30]:

Օգտվելով արտաքին նպաստավոր պայմաններից, 1918 թ. հունիսի առաջին կեսին Նոյ Ժորդանիան և Նոյ Ռամիշվիլին Վրաստանի

---

[26] ՀԱԱ, Ֆ.Պ-200, ց.1, գ.498, թ.40:
[27] Նույն տեղում, թ.48:
[28] Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918 - 1920 թթ., կազմ. Ս. Միրզոյան, Ա. Ղազիյան, Երևան, 2003:
[29] Դարբինեան Ռ., Ռուսական վտանգը, Երևան, 1991, էջ 74:
[30] ՀԱԱ, Ֆ.Պ-199, ց.1, գ.10, թ.13:

Ազգային խորհրդի և կառավարության անունից Թիֆլիսում հրավիրեցին Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչներ Ավ. Ահարոնյանին, Հ. Քաջազնունուն, Ալ. Խատիսյանին, Խ. Կարճիկյանին, Հ. Հախվերդովին Հայաստանի և Վրաստանի միջև Բորչալուի գավառը էթնիկական սկզբունքով բաժանելու հարցը քննարկելու նպատակով: Դիմավորելով հայ պատվիրակներին Օերեթելին Վրաստանի Ազգային խորհրդի անունից հայտարարեց, որ, «... հայ վրացական խառը բնակչությամբ բոլոր վիճելի տարածքները պետք է անցնեն Վրաստանին: Ռուսական հեղափոխական դեմոկրատիայի երբեմնի առաջնորդը բերում էր հետևյալ պատճառաբանությունները՝ հայերը Բաքումի համաձայնությունից հետո չեն կարող քիչ թե շատ կենսունակ պետություն ձևավորել.- գրում է իր հուշերում Ռուսաստանի Հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Ա. Ի. Դենիկինը.- և նրանց համար շահավետ է հզորացնել Վրաստանը, որպեսզի Կովկասում քրիստոնյա ուժեղ պետություն լինի, որը գերմամացիների օգնությամբ կպաշտպանի և իրեն, և հայերին»[31]:

Վրացական իշխանությունների անբարյացակամ ու անհարգալից վերաբերմունքը Հայաստանի հանդեպ դրսևորվեց նույնիսկ Հայոց Ազգային խորհրդի նորերս կազմած անդրանիկ կառավարության անդամների Թիֆլիսից Երևան վերադառնալու հարցում: 1918 թ. հուլիսին, երբ կառավարությունը, վարչապետ Հ. Քաջազնունու գլխավորությամբ, ուղիներ էր որոնում արագ ու ապահով տեղ հասնելու համար, վրացական իշխանությունները միտումնավոր խանգարեցին իրենց իրավասության ներքո գտնվող Թիֆլիս - Երևան երկաթուղով նրանց գնալու հնարավորությունը: Հայաստանի պատվիրակությունը հարկադրված էր ընտրել Աղտսաֆա - Երևան խճուղին, ճանապարհը հաղթահարել օրերով, մինչդեռ երկաթուղով այն կտևեր ընդամենը 15 ժամ:

Վրաստանի ներքին և արտաքին քաղաքական վիճակն ավելի բարելավվեց, երբ ընդունեց Գերմանիայի հովանավորությունը: 1918 թ. մայիսի 28 -ին Փոթիում Գերմանիայի և Վրաստանի միջև գաղտնի կնքվեց «ժամանակավոր համաձայնություն Գերմանիայի և Վրաստանի միջև նախնական փոխհարաբերություններ որոշելու մասին»: Գերմանական կայսերական կառավարության կողմից համաձայնագիրն ստորագրեց զորավար ֆոն Լոսովը, իսկ վրացական կառավարության կողմից՝ արտաքին գործերի նախարար Ակակի Չխենկելին[32]:

---

[31] ՀԱԱ, ֆ.Պ-198, ց.1, գ.15, թ.18: Ֆ.Պ-223, ց.1, գ.113, թ.27: Ֆ.Պ-276, ց.1, գ.96, թ.125-126: Деникин А.И., Очерки русской смуты, Москва, 1991, с.141, "Вопросы Истории", № 3, 1992, с.94 - 95.

[32] «Վէմ» ամսագիր, Փարիզ, 1938, թիւ 1, էջ 84, «Հայրենիք» ամսագիր, Պոստոն, 1935, փետրվար, թիւ 4, էջ 103:

Ըստ այդ նախնական համաձայնագրի Գերմանիան մեծ զորախումբ ուղարկեց Թիֆլիս՝ երկրի ներքին կարգ ու կանոնը պահպանելու և վրացական զորքերի հետ ապահովելու Վրաստանի սահմանների անվտանգությունը: Համաձայնագրով պատերազմի ողջ ընթացքում Վրաստանի կառավարությունը թույլ էր տալիս, որ Գերմանիան և Ավստրիան օգտվեն Վրաստանի տարածքով գործող երկաթուղային ցանցից, զորքեր և ռազմական հանդերձանք փոխադրելու համար: Այդ նպատակով Թիֆլիսում Գերմանիայի ղեկավարության ներքո հիմնվում էր զինվորական հանձնախումբ, որը և պետք է վրացական կառավարության հետ համախորհուրդ կանոնավորեր երկաթուղու հաղորդակցությունը: Երկաթուղային կայարանները և ռազմական նշանակություն ունեցող օբյեկտները հսկելու էին գերմանական պահակային զինվորները[33]: Փոթիի նավթահանգիստը 60 տարով օգտագործման էր հանձնվելու Գերմանիային: Գերմանիան ստորագրեց նաև համաձայնություն, որով Վրաստանին տրամադրում էր 50 միլիոն ռուբլի վարկ[34]:

Հուլիսի 24-ին Վրաստանի Ազգային խորհրդում գաղտնի ուրվագծեցին Գերմանիայի և Վրաստանի համագործակցությունը ռազմական, տնտեսական, առևտրային, ֆինանսական և այլ բնագավառներում[35]:

Վրաց - գերմանական համաձայնագիրը նոր որակ ու նպաստավոր ընթացք հաղորդեց նաև Գերմանիայի դաշնակիցներ Թուրքիայի և Վրաստանի փոխհարաբերություններին: Այդ կապացությամբ բնութագրական է Կովկասյան ճակատի թուրքական զորքերի հրամանատար Խալիլ փաշայի պատվին «Վրացական ակումբի» շենքում կազմակերպված խնջույքում Վրաստանի ռազմական նախարար Գեորգաձեի արտասանած բաժակաճառը, որով նա մաղթեց «հաջողություններ թուրքական քաջարի զորքերին և նրանց դաշնակիցներին»: Պատասխան խոսքում Խալիլ փաշան նշեց, որ Թուրքիան Վրաստանի նկատմամբ լավագույն զգացմունքներով է լցված և եթե արտաքին թշնամին սպառնա Վրաստանի անկախությանը, ապա նրանք պետք է միասին պայքարեն նրա դեմ»[36]:

Վրացական մամուլը ևս չէր թաքցնում Վրաստանի հակառուսական դիրքորոշումը: Այդ դիրքորոշումը դրսևորվեց Վրաստանում բնակվող ռուսների հանդեպ տարվող քաղաքականության մեջ: Վրաստանի կառավարությունը ելնելով քաղաքական շարժառիթներից ծերբակալեց

---

[33] «ՎԷՄ» ամսագիր, Փարիզ, 1938, №1, էջ 84:
[34] Российский Государственный Военный Архив (այսուհետև՝ РГ ВА), ф.39720, оп.1, д.49, л.5.
[35] РГ ВА, ф.39720, оп.1, д.49, л.1-4.
[36] Там же, л.2.

Ռուսաստանի նախկին բարձրաստիճան զինվորական ու քաղաքական «կասկածելի» մի խումբ գործիչների: Այսպես, գեներալներ Ռուբենաուի, Զունկովսկու, Դուրնովի և այլոց ծերբակալությունից հետո «Сакартвелось Республика» պաշտոնաթերթը 1918 թ. հուլիսի 8-ի համարում հայտարարել է, որ «... ներքին գործերի նախարարը Թիֆլիսում հայտնաբերել է Վրաստանի անկախության դեմ պայքարող կազմակերպություն, որը նպատակ ուներ ... Վրաստանում վերականգնել ինքնակալական կարգեր»: Այնուհետև թերթը շարունակում է, որ այդ կազմակեպության մեջ իբրև թե մտնում էին «ռուս սպաներ, պաշտոնյաներ, բոլշևիկներ և այլ շրջանակների ներկայացուցիչներ: Գործունեության միջոցներից պետք է լինեին մի շարք հաստատությունների պայթեցումը, ահաբեկչական գործողություններ և այլն»[37]:

Նույն թերթը 1918 թ. օգոստոսի 18-ի համարում, քննադատելով հայերի ռուսական կողմնորոշումը, հայտարարել, որ «... Վրաստանի և Հայաստանի հարաբերությունները լարված կմնան այնքան ժամանակ, քանի դեռ հայ ժողովրդի ղեկավարները կտրուկ չեն հայտարարել, որ իրենց կողմնորոշումը և քաղաքականությունը արմատապես փոխվել է»[38]:

Արխիվային վավերագրերն ու նյութերը համոզիչ կերպով հաստատում են, որ Անդրկովկասի երեք ժողովուրդների անկախացումից հետո, միանգամայն բարենպաստ ներքին և արտաքին քաղաքական իրադրություն էր ստեղծվել Վրաստանի և Ադրբեջանի համար: Հստակ էր նաև նրանց արտաքին քաղաքականության ուղղվածությունը: Գերմանիան պաշտպանում էր Վրաստանի, իսկ Թուրքիան Ադրբեջանի շահերը, և երկուսն էլ ի վնաս Հայաստանի Հանրապետության: Հայ ժողովրդի քաղաքական վիճակն արմատապես տարբեր էր թաթար և վրաց ժողովուրդների վիճակից, այն պատմական պահից, երբ ռուսներն սկսեցին հեռանալ Անդրկովկասի սահմաններից:

Հայտնվելով մեկուսացման ու շրջափակման մեջ, Հայաստանն իր հայացքն ուղղեց դարձյալ դեպի Ռուսաստանը, իսկ Ռուսաստանում քաղաքական իրադրությունն երերուն էր, խառն ու տակավին անկանխատեսելի:

---

[37] „Сакартвелось Республика", Тифлис, 8 июля, 1918.

[38] Նույն տեղում, 18 августа, 1918.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՋԱԶՆՈՒՆՈՒ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՊՈՐԾՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունը կազմավորման առաջին իսկ օրից գտնվում էր սոցիալ-տնտեսական ծանր դրության մեջ: Օսմանյան Թուրքիայի 1918թ. արշավանքի հետևանքով երկրի տնտեսությունը մեծապես քայքայվել էր: Գյուղացիությունը ցանք չէր կատարել կամ տեղահանվել էր հնձից առաջ: Վրա էր հասել անխուսափելի սովը, որի ուղեկիցում էր համաճարակը: Որոշ տվյալների համաձայն 6 ամսվա ընթացքում սովի և համաճարակային հիվանդությունների հետևանքով մահացել էր 180 հազար մարդ: Միայն արտակարգ միջոցները կարող էին փրկել ժողովրդին, սակայն երկրի ներքին հնարավորությունները չնչին էին: Միակ միջոցը դրսի օգնությունն էր: 1919թ. հունվարի 27-ին Հայաստանի կառավարությունը, քննարկելով «մինիստր-նախագահի զեկուցումը և օրինագիծը Եվրոպա և Ամերիկայի Միացյալ Նահանգներ մինիստր-նախագահի գլխավորությամբ պատվիրակություն ուղարկելու մասին» որոշեց «օրինագծին հավանություն տալ և ներկայացնել Հայաստանի խորհրդին՝ ի հաստատություն, հայտնելով շտապողականություն»: Փետրվարի 4-ին Հայաստանի խորհուրդը (խորհրդարան) ընդունեց հետևյալ օրենքը.

«1. Հանձնարարել մինիստր-նախագահին ուղևորվել Եվրոպա և Ամերիկա: Դիմել Հայաստանի խորհրդի անունից Համաձայնության պետությունների և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ նահանգների կառավարություններին և խնդրել նրանց օգնությունը՝ ներմուծելու Հայաստան պակասող պարենը և առաջին անհրաժեշտության ուրիշ ապրանքները:

2. Ուղևորության ծախսերը ծածկելու համար բացել մինիստր-նախագահին 550000 ռուբլու վարկ»[1]:

Փետրվար 13-ի լրացուցիչ օրենքով մինիստր-նախագահ Հովհ. Քաջազնունուն իրավունք տրվեց Հայաստանի Հանրապետության կառավարության անունից ստորագրել «ամեն տեսակ պայմաններ, պայմանագրեր, պարտավորություններ, վարկային գործողություններ ու գործարքներ և այլ ակտեր, որոնք առնչվում են փետրվարի 4-ի օրենքով նրա վրա դրված առաքելության կատարման հետ, այլ անձանց վերավստահելու իրավունքով»[2]:

---

[1] Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ.199, ց.1, գ.21, թ.150
[2] Նույն տեղում, գ.21,թ.151, Կառավարության լրաբեր, թիվ 9, 26 փետրվարի. 1919:

Փետրվարի17-ին Հովի. Քաջազնունին մեկնեց Թիֆլիս՝ թույլտվություն ստանալու արտասահմանյան ուղևորության համար: Վրաստանում անգլիական ներկայացուցչության միջոցով համապատասխան դիմում հղվեց Անգլիայի կառավարությանը, սակայն պատասխանը ծգծգվեց և Քաջազնունին առժամանակ վերադարձավ Երևան: Հայաստանի կառավարությունը խնդրին նորից անդրադարձավ 1919թ. մայիսին: Մայիսի 7-ին քննարկվեց Փարիզում գործող Հայաստանի պետական պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանից ստացված Ապրիլի 22-ի և 27-ի հեռագրերը[3] (հավանաբար վերաբերվել է թույլտվությանը) և կայացրեց որոշում. անհրաժեշտ համարել մինիստր – նախագահ Հ. Քաջազնունու ուղևորումը Համաձայնության պետությունների երկրներ, վերապահելով նրան իր հետ երկու քարտուղար վերցնելու իրավունքը: Քաջազնունուն պարտավորեցվեց առաջիկա նիստին ներկայացնել ուղևորության ծախսերի նախահաշիվը և հաստիքները, իսկ նախարարներին՝ կազմել Հայաստանի համար անհրաժեշտ պարենամթերքների ցուցակը՝ Փարիզ ուղարկելու համար: (Հիշյալ որոշման մեջ արձանագրված է, որ Փարիզից Հայաստան է մեկնել «Անատոլ» նավը, 100000 ֆրանկ արժողությամբ ապրանքներով: Դա արտասահմանից ստացված առաջին օգնությունն էր):

Երկու օր անց, մայիսի 9-ին, Հայաստանի կառավարությունը, արձակուրդում գտնվող խորհրդի փոխարեն, օրենք ընդունեց Եվրոպա և Ամերիկա մեկնելու համար Հ. Քաջազնունու առաքելությանը 300000 ֆրանկ գումարով վարկ տրամադրելու մասին: Հ. Քաջազնունին Փարիզ հասավ հունիսի 14-ին[1]: Նա արտասահմանում մնաց բավական երկար, չնայած մեկնել էր երեք ամսով: 1919թ. հունիսի 22-ին Փարիզից՝ իր կնոջն ուղարկած նամակում հայտնում է. «Տնտեսական հարցը բարեհաջող կերպով լուծվում է հենց այժմ և ետ: Ըստ երևույթին մենք հնարավորություն պիտի ունենանք բավականին խոշոր գումարի (25-30 միլիոն ֆրանկի) ապրանքներ գնել ամերիկացիներից բավականին մատչելի գներով, և որ մեզ համար ամենից կարևորն է՝ ոչ կանխիկ դրամով, այլ մի քանի տարվա վարկով»[2]: Իսկ օգոստոսի 7-ին Քաջազնունին Հայաստանի կառավարության անունից պայմանագիր է ստորագրել «Չիկագոյի ինտերնացիոնալ միացյալ ընկերության» ներկայացուցիչների հետ, որով ընկերությունը պարտավորվել էր մինչև 50 միլիոն դոլլար գումարի ապրանքներ մատակարարել Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

---

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.183, թ.32:

[1] Մինչև այժմ ուսումնասիրողներին հայտնի չէր Քաջազնունու Փարիզ հասնելու օրը:

[2] Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հ. Քաջազնունու ֆոնդ, թիվ 4212, գ. 143, թ. 1:

Ըստ այդ պայմանագրի, իրենք՝ ներքո ստորագրողները, մի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որի լիազոր ներկայացուցիչն է Մինիստրների Խորհրդի նախագահ պ. Քաջազնունին, իսկ մյուս կողմից Չիկագոյի միջազգային միացյալ ընկերությունը, որի ներկայացուցիչներն են պ. Ռենարը և պ. Ժյունկեյը և ունեն հավաստագրեր վերատեսուչ պ. Լագոկեից, Փարիզում կնքում են հետևյալ պայմանագիրը, ըստ որի, հոդված 2-ում ասվում է, որ Հայաստանի կառավարությունը մատակարարվող ապրանքի համար գանձարան է վճարելու բոնդերով՝ նկատի առնելով, որ այդ բոնդերը դեռ բաց չէր թողնված, քանի որ Չիկագոյի միջազգային միացյալ ընկերությունը ապրանքների մատակարարումը ժամանակավորապես կատարում է մուրհակներով: Մինիստրների Խորհրդի նախագահը պարտավորվում է հնարավորին չափ կարճ ժամանակամիջոցում Հայաստանի պառլամենտին ներկայացնել պետական բոնդեր բաց թողնելու նախագիծ: Իսկ մուրհակները 6 ամսվա ընթացքում պիտի երեք անգամ վերանորոգվեն, որոնք ներկայացնելու են ապրանքի դրամագլուխը՝ պայմանավորված գնով, և երկամյա օգուտը՝ 12%-ով հաշված, որը մի տարվա համար կանխավճարվելու է: Մուրհակները Չիկագոյի միջազգային միացյալ ընկերությունը կարող է զեղջել: Մուրհակներին փոխարինող բոնդերը բաց են թողնվելու սույն պայմանագրի մեջ հիշատակված պայմաններով[3]:

Այս կապակցությամբ Քաջազնունու Փարիզից ուղարկած սեպտեմբերի 30-ի հեռագրում, որը ստացվել է հոկտեմբերի 3-ին, ասվում է, թե Չիկագո ընկերությունը պայմանագիր է կնքել: 50 միլիոն դոլարի արժողությամբ ապրանք կարելի է հանձնել Բաթումում: Վարկի ժամկետը 3 տարի է: Նախնական համաձայնությունը մուրհակով և Հանրապետության բոնդով է: Պետք է շտապեցնել մուրհակով և գանձարանի բոնդով որոշումը: Հ. Քաջազնունին Ամերիկա էր մեկնելու հոկտեմբերի 1-ին[4]: Հայաստանի կառավարությունը այդ 50 միլիոն դոլարի դիմաց նրանց տրամադրության տակ է դնում համապատասխան թվով արտաքին փոխառության օբլիգացիաներ, որն իսկույն իրացվում է ամերիկյան բանկերում:

Քաջազնունին դիմել էր ամերիկյան կառավարությանը Հայաստանին օգնելու համար: Հոկտեմբերին նա արդեն Ամերիկայում էր:

Ֆրանսիայից Ամերիկա նրա ճանապարհվելու վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում Փարիզում Հայաստանի կառավարական պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանը 1919 թ. հոկտեմբերի 28-ի վարչապետ և արտգործնախարար Ալ. Խատիսյանին ուղարկած

---

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.20, թ.152-155:
[4] Նույն տեղում. գ.355,թ.210:

նամակում: Մեկնումը էնֆիաջյանի և Փիրալյանի՝ հետ տեղի է ունեցել հոկտեմբերի 1-ին: Ընդ որում տնտեսական-ֆինանսական խնդիրներից զատ, գրել է Ավ. Ահարոնյանը, «պ. Քաջազնունին մեր պնդումի վրայ յանձն առաւ զբաղուել նոյնպէս քաղաքական խնդիրներով»: Այնուհետև նամակագիրը ավելացնում է, թե մեր քաղաքական խնդիրը ղեկավարելու համար ուղարկվում է նաև զինվորական առաքելություն գեներալ Բագրատունու գլխավորությամբ «որոնք Ամերիկայում պիտի պարզեն մեր զինվորական կարիքների չափը և խնդրեն զինվորական անմիջական օգնություն» (այս առաքելությունը մեկնելու էր նոյեմբերի 1-ին):[2]

Եվրոպայում և Ամերիկայում գտնվելու տևական ժամանակաշրջանում Հովի. Քաջազնունին լայն գործունեություն ծավալեց Հայաստանին պետությունների ու ընկերությունների կողմից տնտեսական օգնություն կազմակերպելու, ինչպես նաև սփյուռքահայ շրջանակների հետ կապեր հաստատելու՝ այդ ուղին ևս օժանդակության գործին ծառայեցնելու համար: Բավական է ասել, որ նա ստորագրել է 37 հազար տոննա ալյուրի պարտամուրհակ, մոտ 4.5 միլիոն դոլար արժողությամբ: Հետաքրքրական է նաև Նյու-Յորքից Քաջազնունու նամակը ուղղված Ալ. Խատիսյանին (փետրվար 23, 1920թ.) որտեղ հայտնում է. «Փոխառության թողարկման գործի մասնատումը երկու մասի՝ բաժնետոմսերի տպագրությունը Եվրոպայում, Ահարոնյանի պատվիրակության ջանքերով և դրանց իրացումը Ամերիկայում՝ իմ միջոցով, տեխնիկական բնույթի բացահայտ դժվարություններ է առաջ բերում: Ահարոնյանը չի կարող թողարկման հատուկ օրենքներ մշակել (սահմանված կարգի համաձայն), քանի որ այդ օրենքները պետք է մշակվեն՝ նախապես համաձայնության գալով նրանց հետ, ովքեր կհամաձայնեին իրենց մոտ ներդնել մեր բաժնետոմսերը, ասել է թե՝ փոխանակել դրանք ապրանքի հետ (ինչ խոսք, կանխիկ դրամ ստանալու որևէ հույս չենք տածում): Այս հարցով կապ եմ պահպանում Ահարոնյանի հետ: Ստիպված եմ այս տեղից նրան ուղարկել պատրաստի «օրենքներ»: Ամենագլխավոր հարցը այնպիսի բանկատերեր գտնելն է, որոնք համաձայնության գալով խոշոր առևտրական տների հետ, կհամաձայնեին իրենց վրա վերցնել մեր փոխառության իրացումը: Այս ուղությամբ աշխատանք տանում ենք արդեն, բայց հաջողության երաշխիքները չնչին են: Կա երկու հանգամանք, որ արմատապես խափանում է մեր բոլոր ջանքերը: Նախ, այս տեղ այն համոզմունքն է ձևավորվել, թե առանց մանդատների մեր պետությունը չի կարող գոյատևել, իսկ մանդատներ վերցնել ոչ ոք չի ուզում: Այն, որ Միացյալ Նահանգները, մինչև այսօր չեն ճանաչել մեր ինքնուրույնությունը, ուղղակիորեն վկայում է (նրանց տեսակետից) մեր անկենսունակությունը:

---

[1] Էնֆիաջյան – ՀՀ Ֆինանսների նախարար: Փիրալյան - տնտեսության և վիճակագրության մասնագետ:
[2] ՀՀ ԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 395, թ. 6-7:

Եվ երկրորդ, մենք կայունորեն ծեռք ենք բերել սնանկացած ու աղքատ, բացարձակապես ոչինչ չունեցող, ապրանքափոխանակության որևէ ձևի անընդունակ երկրի համբավ: Մեզ պետք է օգնություն, բայց՝ անվերադարձ ու անշահախնդիր: Այս տեսակետը հիմնականում տարածում է Մերձավոր Արևելքի Կոմիտեն, որն ուզում է գութ արթնացնել մարդկանց սրտերում: Պարզ է, որ դա կարող է բարի մարդկանց մղել բարեգործության, բայց առևտրականը կամ բանկատերը բնավ չի խրախուսի նման անվստահելի վարկատուին վարկ բաց թողնելը: Այնուհանդերձ, դեռ մի քիչ (շատ փոքր) հույս ունենք գտնելու մեր բաժնետոմսերի ներդրման տարբերակը: Փորձում ենք վստահություն ներշնչել մեր ու մեր ապագայի հանդեպ: Փորձում ենք հավատացնել, որ թեև աղքատ ենք հիմա, բայց բոլոր տվյալներն ունենք, որպեսզի արագորեն ոտքի կանգնենք և արդարացնենք մեզ շնորհված վստահությունը:

Սպասելով պարտապանի, որի միջոցով հնարավոր կլիներ իրացնել ողջ փոխառությունը (կամ էլ դրա զգալի մասը), մենք լրջորեն մտածում ենք, անգամ պատրաստվում, իրականացնել դրա մասնակի թողարկումը (առաջին սերիան, 5 միլիոն գումարի չափով), այն փոքր գումարներով ներդնելու և ամերիկացի հայերի ու հենց ամերիկացիների համար, և բուն Հայաստանում: Սա կունենա (բաժնետոմսերի գնորդների համար) ոչ այնքան ֆինանսական գործարքների, որքան հայրենասիրական նախաձեռնության բնույթ: Այս հարցով օրերս խորհրդակցություն ունեցանք Դաշնակցության Կենտրոնական Կոմիտեում: Որոշ լավատեսներ պնդում են, թե այս եղանակով հնարավոր կլինի ներդնել 5 միլիոնն՝ ամբողջությամբ: Հոռետեսները (դրանց թվում և ես) չեն հավատում նման հաջողությանը, բայց ենթադրում են, որ մոտ մեկ միլիոնը կարելի է վաճառել: Այսպես, թե այնպես, ուզում ենք փորձ անել և արդեն պատրաստվում ենք դրան:

Նախապես գրել էի Ձեզ իմ և «Equipement Company»-ի միջև կնքված պայմանագրի մասին: Այդ ընկերության մարդիկ մեծ ոգևորությամբ աշխատում են Վաշինգտոնում: Մեր սեփական իրավախորհրդատու Քեբաբյանը նուն պես երկու անգամ մեկնել է Վաշինգտոն: Հաջողության որոշ հույսեր կան: Եթե այս գործը գլուխ գա, մեր երկիրը կարճ ժամանակում կմատակարարվի զգալի քանակությամբ ապրանքներով: U. S. Shipping Board C°-ի (նույն այն ընկերության, որը հիմա իրականացնում է մեր փոստային առաքումները) վարչությունը հայտարարել է, որ եթե Ռազմական նախարարությունը համաձայնի մեզ, «Equipement C°» -ի միջոցով, վարկով բաց թողնել ապրանքներ, ապա նա, իր հերթին, կպարտավորվի դրանք հասցնել Բաթում, դարձյալ վարկով: Դա հսկայապես կթեթևացնի մեր հոգսերը, քանի որ ծովային փոխադրումների համար մեզանից կպահանջվի առնվազն մեկ-մեկուկես միլիոն դոլար կանխիկ գումար: (Ի դեպ, վերջերս ես եղա «Ռոքֆելերի ֆոնդի» տնօրենի մոտ և մեր կառավարության անունից

շնորհակալություն հայտնեցի այն բանի համար, որ ֆոնդն իր վրա է վերցրել մեր 35 հազար տոննա ալյուրը ծովով փոխադրելու բոլոր ծախսերը: Հնարավոր է, որ ապագայում ևս ֆոնդը օգտակար լինի մեզ):

Այսօր Ծովային նախարարությունից գնել եմ 300 հազար անգլիական ֆունտ (մոտավորապես 8.100 փութ) բիսկվիտ, ֆունտը՝ 4 ցենտ կանխիկ դրամով: Գայթակղվեցի էժանությամբ (իրեն՝ կառավարության վրա ֆունտը նստել է 18 ցենտ):

Հուսով եմ, սա լավ նվեր կլինի մեր զորքերին: Համը շատ անուշ է: Փաթեթավորումը՝ հոյակապ. ամեն 25 ֆունտը տեղավորված է անագով հալափակված թիթեղյա տուփերի, իսկ ամեն զույգ տոփը՝ փայտյա արկղի մեջ: Կշիռը հաշվված է առանց տարայի (Netto), այսպիսով մետաղյա տուփերը (թվով՝ 12 հազար հատ) և փայտյա արկղերը (6000 հատ) ծրի են նստել մեզ վրա: Մուծել եմ 1200 դոլար կանխավճար (համարյա՝ վերջին կոպեկներս): Գնել եմ այն հաշվարկով, որ Դաշնակցության Կենտրոնական Կոմիտեն խոստացել է մեզ 100 հազար դոլարի փոխատվություն տալ: Սպասում եմ փոխանցումին, որպեսզի վճարեմ մնացած գումարը և զբաղվեմ ընդունում-առաքումով: Մտածում եմ ուղարկել նույն՝ U. S. Shipping Board C°-ի շոգենավերով, որոնք բերելու են մեր ալյուրը:

(Ի հաշիվ Դաշնակցության կողմից մեզ համար բացվող 100 հազար դոլար վարկի, Ահարոնյանին է փոխանցվել մոտ 23 հազար դոլար (6.500 անգլիական ֆունտ)՝ Լոնդոնում մեր թղթադրամանիշների տպագրության պարտքերը մարելու համար: Դաշնակցության պարտքը մտադիր եմ վերադարձնել ամերիկացի հայերից մեր ստանալիք փոխառության գումարներից)»[1]:

Ամփոփելով Հ. Քաջազնունու Եվրոպա և Ամերիկա առաքելության մասին մեր քննարկումը, նշենք, որ այն ունեցավ դրական նշանակություն, քանի որ նրա դիմումներն ու խնդրագրերն արագացրեցին Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից սովահար հայ ժողովրդին ուղարկվելիք օգնությունը: Այնուհանդերձ Հ. Քաջազնունուն չհաջողվեց ԱՄՆ-ի հետ լուրջ պայմանագիր կնքել Հայաստանին վարկ տրամադրելու գործում: Ինչպես նշում է Սիմոն Վրացյանը, Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը (Հ. Քաջազնունի և Զոր. Բագրատունի) Ամերիկայից մեկնեցին առանց շոշափելի արդյունքների: Իրենց առաքելության անհաջողության գլխավոր պատճառներից մեկը ԱՄՆ-ում կուսակցական պայքարն էր: Հանրապետականներն ամեն առիթով հակառակվում էին Վ. Վիլսոնի առաջարկներին, իսկ վեջինիս և գործադիր իշխանության ու կոնգրեսի հարաբերություններն այնքան լարված էին, որ գործադիր իշխանությունը չէր կարողանում որևէ քայլ անել չնայած որ գործադիր մարմնի իրավասության սահմանների մեջ էր Հայաստանին

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 34-40:

թէ՛ նյութական և թէ՛ ռազմական օգնություն ցույց տալը: Այդ է հավաստում Հ. Քաջազնունին 1920թ. հունիսի 26-ին Համո Օհանջանյանին ուղղված իր նամակում. «(ԱՄՆ – Հ. Մ.) Նախագահական ընտրությունների շուրջ կատարվող պայքարը օրհասական եղավ մեր գործի համար»:[2] Արտասահմանում բազմաթիվ խոչնդոտներից և դժվարություններից հետո էլ, Հ. Քաջազնունին մնում էր լավատես իր երկրի ապագայի հանդեպ: «Օայրահեղ թշվառությունը այն աստիճան խեղել է մեզ,- գրել է նա իր կնոջը՝ Սաթենիկին, - որ անընդունակ ենք դառել գնահատելու արդեն կատարված իրողությունը և հավանական հեռանկարները: Հինգ տարի առաջ Հայաստանը լոկ աշխարհագրական տերմին էր, իսկ իբրև քաղաքական միավոր՝ հեռավոր երազ էր, որի մասին ամենահանդուգն մտքերն անգամ չէին համարձակվում բարձր խոսել: Այսօր Հայաստանի Հանրապետությունը փաստ է արդեն: Թող որ այդ հանրապետությունը փոքր ու աղքատ լինի, թող ժողովուրդը ենթարկված լինի սովի ու համաճարակի, դա անցողակի բան է: Փաստը արդեն կատարվել է, և չկա աշխարհիս երեսին այն ուժը, որ կարողանա բնաջինջ անել պատմության էջերից կատարված փաստը: 500 տարի ստրուկ լինելուց հետո, մի ժողովուրդ վերածնվում է ազատ և ինքնուրույն կյանքի համար»:[3]

Այսպիսով, սովամահության դատապարտված հայ ժողովրդի համար դրսի օգնությունն ունեցավ փրկարար նշանակություն, որի կազմակերպման գործում իր համեստ լուման ունեցավ Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին:

---

[2] Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 431, թթ. 102-128:
[3] ԳԱԹ, Հ. Քաջազնունու ֆոնդ, թիվ 4212, գ. 139, թ. 6:

ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄՆ ԿՈՆԳՐԵՍԻՆ

1919թ. հունվարի 18-ին, առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակ տարած դաշնակից տերությունների թվում, ԱՄՆ-ը ևս մասնակցեց Փարիզի խաղաղության խորհրդաժողովի բանակցություններին պարտված տերությունների հետ պայմանագրեր կնքելու և հետպատերազմյա խնդիրներին լուծումներ գտնելու համար: Առաջին աշխարհամարտում դաշնակից տերությունների հաղթանակը հուսադրել էր համայն հայությանը: Ակնկալվում էր, որ Արևմտյան Հայաստանը վերջապես ձեռք կբերի իր ազատությունն ու անկախությունը:

1919թ. հունվարի 30-ին Փարիզում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ դաշնակիցները որոշեցին, որ Փարիզի խորհրդաժողովի նպատակն է Թուրքական կայսրության որոշ տարածքներ, այդ թվում նաև Հայաստանը դնել առանձին տերությունների հովանավորության ներքո, որոնք պետք է գործեին որպես Ազգերի լիգայի մանդատատարներ: Մանդատատար երկրների գլխավոր խնդիրն էր նպաստել մանդատի տակ վերցվող երկրների զարգացմանը: Նույն խորհրդակցության ընթացքում անգլիական պատվիրակության կողմից ԱՄՆ-ի ներկայացուցիչներին առաջարկվել էր ստանձնել Հայաստանի մանդատը[1]: Դրան էին ձգտում նաև աշխարհի տարբեր երկրներում ցրված հայերը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը հեռագրել էր Վ.Վիլսոնին՝ խնդրելով ստանձնել Հայաստանի մանդատը: ՀՀ կառավարությունը դիմել էր ԱՄՆ նախագահին Հայաստանի անկախությունը ճանաչելու խնդրանքով, իսկ ավելի ուշ՝ մայիսին, ԱՄՆ-ում ՀՀ պատվիրակության միջոցով ռազմական օգնություն էր խնդրել Հայաստանի համար[2]:

Չնայած պրեզիդենտ Վ. Վիլսոնի հայանպաստ ելույթներին և կոչերին[3], ԱՄՆ-ի կառավարությունում որոշակիություն չկար Հայաստանի մանդատը ստանձնելու վերաբերյալ: Վ. Վիլսոնը, 1919թ. մայիսի 14-ին Փարիզի խաղաղության խորհրդաժողովի Գերագույն խորհրդի կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու առաջարկին տալով իր համաձայնությունը, միաժամանակ հայտնում էր, որ ինքը թերահավատ էր Կոնգրեսի կողմից մանդատը ստանձնելու շուրջ: Այնուամենայնիվ Վ.

---

[1] Papers Relating to the Foreign Relations of the United States.1919. Paris Peace Conference, vol. 3, Washmgton, 1942, p. 807.
[2] Documents on British Foreign Policy, vol.12, London, 1962, pp. 557-559.
[3] New York Times, Febr.25, 1919.

Վիլսոնը ԱՄՆ-ի կողմից լիազոր ներկայացուցիչներ նշանակեց Հ.Քինգին և Չ.Քրեյնին, որոնք հունիսին մեկնեցին Թուրքիա ուսումնասիրելու և անհրաժեշտ տեղեկություններ ստանալու կայսրության այն վայրերի վերաբերյալ, որոնք նախատեսվում էր վերցնել մանդատի տակ: Վ.Վիլսոնին և Փարիզի խորհրդաժողովին լիազորների ներկայացրած զեկուցագրում տեղ էր գտել նաև «Անջատ Հայաստանի» խնդիրը: Չբավարարվելով Քինգ-Քրեյնի ներկայացրած տեղեկություններով՝ Վ. Վիլսոնը սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Գեներալ Հարբորդի գլխավորությամբ նոր հանձնախումբ է ուղարկում Մերձավոր Արևելք և Անդրկովկաս՝ Հայաստանի մանդատին առնչվող հարցերի համակողմանի ուսումնասիրման համար: Հոկտեմբերի 16-ին Հարբորդի զեկուցագիրը ներկայացվում է Կոնգրեսին: Սակայն Հայաստանի մանդատի հարցը Կոնգրեսում չէր ներկայացվում: ԱՄՆ-ի Կոնգրեսը ձգձգում էր նաև Հայաստանի անկախության ճանաչումը, որը տեղի ունեցավ միայն 1920 թ. ապրիլի 23-ին:

Մեկ ամիս անց՝ 1920 թ. մայիսի 24-ին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում ընթերցվեց ԱՄՆ պրեզիդենտ Վ.Վիլսոնի «Մանդատ Հայաստանի համար» ուղերձը: Պրեզիդենտ Վ. Վիլսոնը դիմում էր կոնգրեսին՝ առաջարկելով համապատասխան լիազորություններ տալ գործադիր իշխանությանը՝ Հայաստանի մանդատը ստանձնելու համար: Ուղերձն ընթերցումից հետո այն պետք է փոխանցվեր Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովին և ենթակա էր հրապարակման:

Իր ուղերձում պրեզիդենտը տեղեկացնում էր նաև 1920թ. մայիսի 14-ին Հայաստանի և հայ ժողովրդի վերաբերյալ ԱՄՆ Սենատի քարտուղարության կողմից երկրի գործադիր մարմնին՝ հղված պաշտոնական տեղեկագրության մասին:

Մենատի տեղեկագրության մեջ տեղ գտած ներածականներն ու որոշումները, ինչպես նաև պրեզիդենտի ուղերձը ներկայացնում ենք ստորև.

«Պարոնայք կոնգրեսականներ,

Մայիսի 14-ին գործադիր մարմինն ԱՄՆ Սենատի քարտուղարությունից ստացել է պաշտոնական տեղեկագրություն, որն ընդգրկում է հետևյալ ներածականներն ու որոշումները.

Նկատի ունենալով, որ Սենատի Արտաքին Հարաբերությունների Կոմիտեին կից ենթակոմիտեի կողմից վարած լսումների ընթացքում ներկայացված տեղեկությունները բացահայտ հաստատում են հայ ժողովրդի հանդեպ իրագործվող կոտորածների և ջարդերի մասին ստացված տեղեկագրությունների ճշմարտությունը,

Նկատի ունենալով,որ Միացյալ Նահանգների ժողովուրդը խորապես ցնցված է Հայաստանում տիրող անվտանգության բացակայության, սովի, տառապանքի սարսափելի պայմաններից,

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության անկախությունը պատշաճ կերպով ճանաչվել է Խաղաղության վեհաժողովի Գերագույն Խորհրդի, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության կողմից

Որոշվել է. ԱՄՆ Սենատի կողմից շնորհավորագիր հղել հայ ժողովրդին Հայաստանի Հանրաաետության անկախության ճանաչման կապակցությամբ անվերապահորեն ճանաչելով նրա /Հայաստանի Հանրապետության-Ա.Ղ./ ընդգրկած տարածքային սահմանները,

Որոշվել է. որ ԱՄՆ Սենատը հույս է հայտնում, որ հայ ժողովուրդը շուտով ձեռք կբերի կայուն կառավարություն, անձնական ազատությունների և իրավունքների անհրաժեշտ պաշտպանություն, ազգային ազատագրական ձգտումների լիակատար իրականացում,

Որոշվել է. սույնով առաջարկել պրեզիդենտին, հանրության շահերին չհակասելու դեպքում, ԱՄՆ քաղաքացիների կյանքի և գույքի անհրաժեշտ պաշտպանությունը Բաթումի նավահանգստում և Բաքու տանող երկաթուղու երկայնքով հաստատելու նպատակով, ԱՄՆ ռազմանավ և ծովային ուժ ուղարկել այդ նավահանգիստ բեռնաթափումների և ամերիկացիների կյանքն ու սեփականությունը պաշտպանելու կարգադրությամբ:

Ես մեծ հետաքրքրությամբ և իրական բավարարվածությամբ ստացել և ընթերցել եմ այս փաստաթուղթը ոչ միայն այն պատճառով, որ փաստաթուղթն արտահայտում է իմ սեփական համոզմունքներն ու զգացումները Հայաստանի և նրա ժողովրդի նկատմամբ, այլ մասնավորապես նաև այն պատճառով, որ իմ կարծիքով, դա ամերիկյան ժողովրդի ձայնն է, որ հնչում է՝ արտահայտելով նրա անկեղծ համոզմունքներն ու խորը քրիստոնեական համակրանքը, ներկայացնելով այն պարտականությունների շարքը, որը, ինչպես նրան է թվում, դրված է մեզ վրա:

Ես նախախնամություն, այլ ոչ թե պատահական զուգադիպություն եմ համարում այն, որ գրեթե միևնույն ժամանակ ես ստացել եմ այն տեղեկությունը, որ դաշնակից պետությունների ներկայացուցիչները, որոնք հավաքվել էին Սան Ռեմոյում Կենտրոնացված տերությունների հետ կնքվելիք պայմանագրերի մանրամասնությունները մշակելու համար, ինչը հնարավոր չէր եղել անել Փարիզում, պաշտոնապես որոշել են դիմել ամերիկյան կառավարությանը՝ Հայաստանի մանդատը ստանձնելու կոնկրետ առաջարկով: Նրանք ջանասիրաբար բացատրել էին, թե դիմել են այդ քայլին «ամենևին չցանկանալով խույս տալ հնարավոր պարտականությունները ստանձնելուց, այլ ելնելով նրանից, որ այն պարտականությունները, որ ժամանակին նրանք ստանձնել էին նախկին Օսմանյան կայսրության հանդեպ, նվազեցնում էին նրանց իրավասությունները այժմ, ինչպես նաև այն համոզմունքից, որ հին աշխարհի նախապաշարումներից ազատված տերության ասպարեզ

գալն ավելի խոր վստահություն կներշնչի և ավելի հզոր երաշխիք կհանդիսանա ապագա կայունության համար, քան որևէ եվրոպական տերության ընտրությունը:

Ավելի վաղ՝ Փարիզում կոնֆերանսի աշխատանքների ընթացքում կայացվել էր համաձայնություն, ըստ որի, այն գաղութների և տարածքների նկատմամբ, որոնք վերջին պատերազմի արդյունքում ազատվել էին նախկինում իրենց կառավարումն իրականացնող տերությունների իշխանությունից, սակայն որոնց բնակչությունը, ժամանակակից աշխարհի լարված իրավիճակի պայմաններում դեռևս ի վիճակի չէր ինքնակառավարման, պետք է կիրառվեր այնպիսի սկզբունք, համաձայն որի այդ ժողովուրդների բարեկեցությունն ու զարգացումը համարվում էր քաղաքակրթության սուրբ պարտք, որի իրականացման երաշխիքներն է որ պետք է ապահովվեին:

Ընդունվել էր, որ նախկինում թուրքական կայսրության մաս կազմող միավորումները, որոնք հասել էին զարգացման այն աստիճանի, որ նրանց գոյությունը, որպես անկախ պետություններ, կարող էր պայմանականորեն ճանաչվել, կօգտվեին մանդատը ստանձնած տերության վարչական խորհրդատվությունից և օգնությունից՝ մինչև ինքնուրույն գոյատևելու ընդունակ դառնալը: Համաձայն այս որոշման, ինչպես նաև Հայաստանին վարչական խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու ծգտումից, Սան Ռեմոյում կոնֆերանսի մասնակից պետական այրերը պաշտոնապես դիմեցին ամերիկյան կառավարությանը Հայաստանի մանդատը ստանձնելու խնդրանքով: Կոնգրեսին տեղեկացնելու նպատակով, կարող եմ ավելացնել նաև, որ այդ նույն նստաշրջանի ժամանակ էլ որոշվել էր ԱՄՆ պրեզիդենտին առաջարկել հանդես գալ որպես միջնորդ դատավոր Թուրքիայի և Հայաստանի՝ էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթների /Հայաստան ասելով նշվում էր Արևմտյան Հայաստանի տարածքը - Ա.Ղ./ միջև՝ սահմանների որոշման բարդ խնդրում: Ըստ կայացված համաձայնության պետք է ընդունվեր նրա /պրեզիդենտի - Ա.Ղ./ կողմից կայացվելիք որոշման ցանկացած տարբերակը, ինչպես նաև Անկախ Հայաստանին դեպի ծով ելք տալու պայմանը:

Ի կատարումն այս գործողությունների, դաշնակիցները որոշել էին Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրում, որը քննարկումների վերջին փուլում էր, ընդգրկել մի կետ, համաձայն որի Թուրքիան, Հայաստանը և պայմանագիրը կնքող մյուս Գերագույն կողմերը համաձայն էին սահմանային խնդրի լուծման հարցում միջնորդ դատավորի դերն առաջարկել ԱՄՆ պրեզիդենտին և ընդունել նրա կայացրած որոշումը, այդ թվում նաև նրա ներկայացրած՝ Անկախ Հայաստանին դեպի ծով ելք տալու պայմանը: Մինչ այդ որոշման իրագործումը Թուրքիայի և Հայաստանի միջև ներկայիս սահմանը պետք է պահպանվեր անփոփոխ:

Ես կարծում եմ, իմ պարտքն է ընդունել այդ դժվար և բարդ հանձնարարությունը:

Ի պատասխան Սան Ռեմոյի խորհրդի առաջարկի, առանց հապաղելու ներկայացնում եմ այն և դիմում Կոնգրեսին՝ Հայաստանի մանդատն ընդունելու կապակցությամբ ԱՄՆ-ի կողմից Գործադիր իշխանությանը լիազորություն տալու համար: Ես այս առաջարկն անում եմ՝ լիովին համոզված լինելով, որ Միացյալ Նահանգների ժողովուրդը կցանկանա, որ այդ առաջարկն ընդունվի: Կարեկցանքը հայ ժողովրդի նկատմամբ բխում է ոչ թե մի խումբ մարդկանցից, այլ այս երկրի բացառիկ ինքնակամությամբ և անկեղծությամբ լցված քրիստոնյա ողջ զանգվածը կազմող տղամարդկանցից և կանանցից, որոնց կամավոր նվիրատվությունների շնորհիվ Հայաստանը, փաստորեն, փրկվել էր իր գոյության ամենատագնապալի պահին: Մեր մեծ և վեհանձն ժողովուրդը հոգու խորքում Հայկական հարցին վերաբերվում է ինչպես իր սեփական խնդրին: Տվյալ պահին այս ժողովրդին ու նրա կառավարությանն էլ ուղված են աննկարագրելի տառապանքների և վտանգալից շրջանից փրկված, պայքարող հայ ժողովրդի հույսերն ու անկեղծ սպասումները: Ես հուսով եմ, որ Կոնգրեսն ամենայն շրջահայացությամբ ողջմիտ կգտնի այդ հույսերին և սպասումներին ընդառաջելը: Անկախության և խաղաղ կյանքի համար կրկին պայքարող տարբեր ժողովուրդների պատասխանատու ներկայացուցիչների անառարկելի փաստարկներից ես գիտեմ, որ Միացյալ Նահանգների կառավարությանը նրանք վերաբերվում են արտակարգ հավատով և վստահությամբ: Ես համոզված եմ, որ առաջնորդելու և աջակցելու հեղինակավոր և պաշտոնական առաջարկի դեպքում Ամերիկայի կողմից նման ժողովուրդներին օգտակար բարեկամ և խորհրդատու դառնալը մերժելը կհանդիսանա ոչ այլ ինչ, եթե ոչ քաղաքակրթության զարգացման հուսադրող ընթացքի խափանում:

Ես գիտակցում եմ, որ ծայրահեղ բարդ ընտրության առջև եմ դնում Կոնգրեսին: Սակայն, ես այս առաջարկն անում եմ՝ վստահ լինելով, որ հանդես եմ գալիս քրիստոնյա ժողովուրդներից ամենահզորի ոգուն և ցանկություններին համապատասխան: Հայ ժողովրդի նկատմամբ մեր ժողովրդի կարեկցանքը բխում է մաքուր խղճից, անբիծ քրիստոնեական հավատից և ամենուր քրիստոնյա ժողովուրդին տառապանքի պահին օգնության հասնելու, նվաստացած հնազանդումից և սարսափներից փրկելու, ոտքի կանգնեցնելու և աշխարհի ազատ ժողովուրդների շարքում իրենց տեղը գրավելու հնարավորություն ստեղծելու ամենաանկեղծ ձգտումից: Եթե մենք խիզախորեն ստանձնենք մանդատով նախատեսված առաջնորդի և օգնականի պարտավորությունները, ապա Հայաստանի անկախության ճանաչումը մեր կողմից կնշանակի իրական ազատություն և հաստատուն երջանկություն նրա ժողովրդի համար: Այդ իսկ պատճառով էլ,

ամենաանկեղծ լավատեսությամբ և համոզմունքով, որ Կոնգրեսը չի մերժի, ես պնդում եմ, որպեսզի ընդունվի առաջարկը, որն այժմ պաշտոնապես և հանդիսավորությամբ մեզ հղվել է Սան Ռեմոյի Խորհրդի կողմից, որին հանձնարարված է երբեմնի Օսմանյան կայսրության կառավարության բազմաթիվ խճճված հարցերի և բարդությունների լուծման գործը, կարգ ու կանոնի և կյանքի տանելի պայմանների պահպանումը կայսրության այն մասերում, որոնք քաղաքակրթության շահերից ելնելով այլևս հնարավոր չէ թողնել թուրքական իշխանությունների կառավարման տակ»:[4]

Պրեզիդենտ Վ.Վիլսոնը, նշելով ամերիկյան ժողովրդի համակրանքը հայ ժողովրդի հանդեպ և նրան օգնելու պատրաստակամությունը, արտահայտում է նաև իր սեփական՝ քաղաքացիական և մարդասիրական դիրքորոշումը հայ ժողովրդի և նրա խնդրի նկատմամբ:

Չնայած պրեզիդենտ Վ.Վիլսոնի հայանպաստ դիրքորոշմանը, ԱՄՆ-ի սենատորների մեծամասնությունը դեմ էին Հայաստանի մանդատը ստանձնելուն: Չմերժելով Հայաստանին օգնելու անհրաժեշտությունը՝ նրանք դեմ էին չափազանց մեծ ծախսերին, հայտարարելով, որ ԱՄՆ-ն այդքան դրամ չունի: Մանդատի հարցի քննարկումը տևեց մինչև մայիսի վերջ: Սենատորները պահանջեցին հրապարակել գեներալ Հարբորդի միսիայի զեկուցագիրը և հետաձգեցին քննարկումները՝ հարցի լրացուցիչ ուսումնասիրման համար: Վերջապես հունիսին օրեր տևած վիճաբանություն-քննարկումներից հետո ԱՄՆ-ի Կոնգրեսը որոշում ընդունեց հրաժարվել Հայաստանի մանդատից: Սենատը չընդունեց պրեզիդենտ Վիլսոնի առաջարկը: Մանդատը ստանձնելու առաջարկին կողմ էին քվեարկել 34, դեմ՝ 43, քվեարկությանը չէին մասնակցել 19 սենատոր[5]:

ԱՄՆ-ի Կոնգրեսի կողմից Հայաստանի մանդատի մերժումը ճակատագրական եղավ ոչ միայն «Նոր Հայաստան» ստեղծման գաղափարի, այլև արդեն գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետության համար: Պատերազմում պարտված Թուրքիան, լավ գիտակցելով, որ մանդատի մերժումը զրկեց Հայաստանին մեծ տերության հովանավորությունից, կարճ ժամանակ անց հարձակվեց և բռնազավթեց նրա տարածքի մեծ մասը:

---

[4] Ուղերձի բնագիրը տես՝ Congressional Record, Washington, 1920, vol. LIX, part 7- 8, p. 7549. "Mandate for Armenia." 66-th Congress, 2 Session, House of Representatives. Doc. No. 791, Washington.

[5] Congressional Record. Washington, 1920, vol. LIX, part 8, pp. 7964-7970.

ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ
(ԵՊՀ)

1919 թ. ՄԱՅԻՍԻ 28-ի ԱԿՏԸ ԵՎ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունը Հայաստանի Հանրապետության համար բացեց զարգացման նոր հորիզոններ: Բաթումի պայմանագրով ավանդական թշնամու կողմից պարտադրված սահմանների ընդարձակումը և պատմական տարածքներից միացյալ և անկախ պետության ստեղծումը դարձավ հայ քաղաքական մտքի գործունեության հիմնական առանցքը:

1919թ. մայիսի 28-ին, ՀՀ անկախության առաջին տարեդարձի օրը, կառավարությունը հրապարակեց «Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության մասին» և «Հայաստանի Խորհրդի համալրման մասին» օրենքները: Ինչքանո՞վ էր հասունացած մայիսի 28-ի ակտը և նրա հանդեպ ի՞նչ դիրքորոշում որդեգրեցին հայ քաղաքական կուսակցությունները:

Խոսելով Հայաստանը միացյալ հռչակելու անհրաժեշտության մասին՝ Ալ. Խատիսյանը նշում է, որ «Երևանը դարձած էր հայության քաղաքական կենտրոնը, որ պետք է միավորեր հայկական բոլոր հատվածները»[1]: 1919թ. ապրիլ-մայիս ամիսներին տեղի էր ունեցել Ռուսահայաստանի ամբողջացումը. հայկական զորքերը կանգնած էին Ջուլֆայում, Չինգիլում և Կարաուրգանում[2]: Իսկ ըստ Ռուբենի, մայիսի 28-ի ակտը «մասամբ ի նկատի ուներ թրքահայ բաղձանքներին բավարարել և վերացնել թրքահայ Ազգային Խորհրդի և Հայրենակցական միությունների այն գաղափարը, որ ներկա Հայաստանը իրենց խորթ «Արարատյան Հանրապետություն է»»[3]:

1919թ. մայիսի 7-ին ՀՀ անկախության առաջին տարեդարձի տոնակատարությանը պատրաստվելու համար ստեղծվել էր կառավարչական միջվարչական հանձնախումբ՝ Հանրային կրթության նախարար Գևորգ Մելիք-Ղարագյոզյանի գլխավորությամբ, որը մայիսի 23-ին կոչով դիմեց Հայաստանի քաղաքացիներին՝ արժանավայել կերպով նշելու տոնը[4]: Կառավարության մայիսի 26-ի և 27-ի նիստերում քննարկվեցին համապատասխանաբար «Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության մասին» և «Հայաստանի Խորհրդի համալրման մասին» օրինագծերը և հաստատվեցին: Մայիսի 27-ին թիվ 1427 գրությամբ վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանը տեղեկացրեց Արևմտահայոց Գործադիր Մարմնին, որ մայիսի 28-ից վերջինս իր 12

---

[1] Ալ. Խատիսյան, ՀՀ ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 150:
[2] Ա. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 262:
[3] Ռուբեն, Հայ յեղափոխականի մը հիշատակները, Թեհրան, 1982, էջ 151:
[4] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ.Պ - 199, ց.1, գ. 219, թ.1:

ներկայացուցիչներին ուղարկի խորհրդարան՝ նիստերին մասնակցելու համար[5]: Հաջորդ օրը՝ մայիսի 28-ին տոնակատարության ժամանակ կատարվեց ընդունված օրենքների հրապարակումը: Ալ. Խատիսյանը ընթերցեց Միացյալ Հայաստանի հռչակագիրը, որում մասնավորապես նշվում էր. «Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և Հայ ժողովրդի լիակատար ազատությունը ու բարգավաճումը ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի կամքի և ցանկության հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»[6]: Ակտի ընթերցումից հետո խորհրդարանն ընդունեց արևմտահայ 12 ներկայացուցիչներին[7]:

Միացյալ Հայաստանի հռչակագիրը ողջունեց ՀՅԴ Բյուրոն, որի հայտարարագրում նշվում էր. «Այսուհետև չկան այլևս «բռնավորների ձեռքով գծված սահմանները», այլ կա և պիտի մնա առհավետ մեկ Անբաժան ու Միացյալ Հայաստան ու մեկ և ամբողջացած Հայ ժողովուրդ»[8]: Դաշնակցական և պետական գործիչ Ս. Վրացյանը գտնում է, որ 1919թ մայիսի 28-ի ակտով «Անկախ և Միացյալ Հայաստանի գաղափարը միս ու արյուն ստացավ և սեփականությունը դարձավ բոլոր հոսանքների և կուսակցությունների, որոնք կանգնած էին Հայաստանի անկախության տեսակետի վրա»[9]:

Ի տարբերություն Դաշնակցության, հայ քաղաքական մյուս կուսակցությունները (խորհրդարանական և ոչ խորհրդարանական) սվիններով ընդունեցին Միացյալ Հայաստանի հռչակագիրը և արևմտահայ պատգամավորների մուտքը խորհրդարան:

1919թ. հունիսի 4-ին, շուրջ մեկամսյա արձակուրդից հետո, տեղի ունեցավ Հայաստանի Խորհրդի նիստը, խիստ լարված տրամադրությամբ: Սոցիալ-դեմոկրատների խմբակցության կողմից Գ. Ղարաջյանը կարդաց հայտագիրը, որով սոցիալ-դեմոկրատները հրաժարվեցին Հայաստանի Խորհրդի օրենսդրական աշխատանքներին մասնակցելուց՝ «արտաքին քաղաքականության ծայրաստիճան անզգույշ ու գրգռիչ, իսկ ներքին քաղաքականության միանգայն օրինազանց ու աշխարհավեր ընթացքի ամբողջ պատասխանատվությունը թողնելով այն հոսանքների վրա, որոնք հեղափոխական և ժողովրդական դիմակներով իրար դաշնակցած գործում են ժողովրդի գոյության և կենսական շահերի, այլև հեղափոխության նվաճումների դեմ»[10]: ՀԺԿ խմբակցության կողմից Գ. Տեր-Խաչատրյանը մայիսի 28-ի ակտը և 12 թրքահայ պատգամավորների

---

[5] ՀԱԱ, ֆ.Պ - 243, ց.1, գ.6, թ.164:
[6] ՀԱԱ, ֆ.Պ - 198, ց.1, գ.4, թ.3:
[7] Միացյալ և Անկախ Հայաստան. Պատմական քայլը, Կ. Պոլիս, 1919, էջ 81:
[8] Նույն տեղում, էջ 88-89:
[9] Ս. Վրացյան, Անկախ և Միացյալ Հայաստան, Երևան, 1920, էջ 21:
[10] ՀԱԱ, ֆ.Պ - 404, ց. 1, գ. 9, թ. 2:

մուտքը խորհրդարան որակեց պետական հեղաշրջում և սահմանադրության խախտում[11]: Սոցիալիստ-հեղափոխականների կողմից Լ. Թումանյանը փորձեց կարդալ հայտագիրը, սակայն համատարած աղմուկի պայմաններում սոցիալ-դեմոկրատ, սոցիալիստ-հեղափոխական և ժողովրդական պատգամավորները հեռացան խորհրդարանի դահլիճից[12]:

Սոցիալ-դեմոկրատներն ու սոցիալիստ-հեղափոխականները մերժում էին անկախությունը պաշտպանելով Ռուսաստանի հետ միության գաղափարը: Այսպես, 1919թ. օգոստոսին Ալեքսանդրապոլում կայացավ սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության հայաստանյան կազմակերպությունների 1-ին խորհրդակցությունը, որը, անկախության հարցի կապակցությամբ ընդունեց Ա. Խոնդկարյանի բանաձևը, որի համաձայն «Հայաստանի հարցը ոչ մի դեպքում չի կարող լուծվել այդ երկրի լիակատար անկախությամբ, որ անկախության հարցի վերաբերյալ ղեկավարող շրջանների քաշած ծրագրերն ու իրագործման ձևերը տանում են Հայաստանի դեմոկրատիային դեպի ֆիզիկական բնաջնջում ու լիակատար կործանում: Ուստի Հայաստանի դեմոկրատիայի շահերը պահանջում են վերամիացնել այս <u>եռկոմասը</u> (ընդգծումը մերն է) ռամկավար Ռուսաստանի հետ»[13]:

Առավել հակասական և երկակի դրսևորումներ ունեցավ ՀԺ կուսակցությունը: Դեռ 1918թ. նոյեմբերից ՀԺԿ-ն ՀՀԴ-ի հետ գտնվում էին կոալիցիայի մեջ և շատ հարցերում գործում էին համաքայլ: Այսպես. 1919թ. ապրիլի 27-ին դաշնակցական և ժողովրդական խմբակցությունների միասնական օրինագծի շնորհիվ խորհրդարանը ուղարկվել էր արձակուրդ[14], իսկ ապրիլի 27-ից հունիսի 4-ը ընկած ժամանակաշրջանում օրենսդրական լիազորություններ ստացած կոալիցիոն կառավարությունը հաստատել էր 99 օրինագիծ, որից 96-ը՝ միաձայն[15]: ՀԺԿ Հայաստանի Կոմիտեի պաշտոնաթերթ «Ժողովուրդը» մայիսի 28-ին զարդարված էր «Կեցցե Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանը» կարգախոսով[16], իսկ չանցած մի քանի օր նույն թերթը մայիսի 28-ի ակտը բնորոշել էր որպես պետական հեղաշրջում՝ կատարված քաղաքական և նեղկուսակցական շարժառիթներից դրդված[17]: Հունիսի 2-ին կառավարության նիստում Հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Ղարագյոզյանը հայտնել է, որ ներկա չի եղել այն նիստին, երբ որոշում է ընդունվել 12 տաճկահայերին խորհրդարան

---

[11] «Ժողովուրդ», 11 հունիսի 1919:
[12] Նույն տողում:
[13] «Սոցիալիստ-հեղափոխական», 4 սեպտեմբերի 1919:
[14] ՀԱԱ, ֆ.Պ - 404, ց. 1, գ. 63, թ. 3:
[15] «Ժողովուրդ», 11 հունիսի, 1919:
[16] «Ժողովուրդ», 28 մայիսի, 1919:
[17] «Ժողովուրդ», 1 հունիսի, 1919:

հրավիրելու մասին[18]: Հետագայում, 1934թ. գրած հուշերում Մելիք-Ղարագյոզյանը այն միտքն է հայտնել, թե «տոնակատարության օրը, երբ Խատիսյանը ընթերցել է հռչակագիրը, ինքը կարդացել է իր ազգը (ազգանունը-Վ.Բ.) և շատ հուզվել, որովհետև բացակա է եղել կառավարության այդ նիստում»[19]: Իսկ իր հարցին, իբր, Խատիսյանը պատասխանել է.«Ես ակտը Ձեր փոխարեն եմ ստորագրել: Վախենում էի, որ եթե չլիներ Ձեր ստորագրությունը՝ Վերմիշևը չէր ստորագրի»[20]: Արխիվային նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ կառավարության մայիսի 26-ի և 27-ի նիստերում իսկապես Մելիք-Ղարագյոզյանը ներկա չի եղել, նրան փոխարինել է փոխնախարար Հ. Հովհաննիսյանը[21]: Բայց միակողմանի չլինելու համար բերենք այլ փաստեր: Այսպես, «Ժողովուրդ» թերթի հաղորդմամբ, «Միացյալ և Անկախ Հայաստանի անկախության մասին» և «Հայաստանի Խորհրդի համալրման մասին» օրինագծերը հաստատվել են հետևյալ ձայներով՝ 5 կողմ, 1 դեմ, 1 ձեռնպահ և 6 կողմ 2 դեմ[22]: Իսկ 1919թ. հունիսի 25-ին Երևանում կայացած ՀԺԿ Հայաստանի Կոմիտեի նիստից պարզվում է, որ կառավարության անդամ ժողովրդական նախարարներից զույգ օրինագծերի տակ ստորագրել է միայն Արդարադատության նախարարի պաշտոնակատար Հ. Չմշկյանը, որի համար էլ հեռացվել է ՀԺԿ շարքերից[23]: Ուստի, անհիմն ենք գտնում Գ. Մելիք-Ղարագյոզյանի մեղադրանքը Ալ. Խատիսյանի հասցեին: Միաժամանակ իրականությունից հեռու է Ա. Վրացյանի այն տեսակետը, թե «ժողովրդական նախարարները հոժարակամ ստորագրել էին մայիսի 28-ի ակտը»[24]:

ՀԺԿ-ի դիրքորոշումը այս խնդրում ավելի շատ կրում էր հակադաշնակցական բնույթ: Ժողովրդականները դեմ էին ակտի կատարման ձևին և խորհրդարանի կազմը 12 արևմտահայ պատգամավորներով համալրելուն: Եթե դրան ավելացնենք, որ վերջիններս դաշնակցական էին, ապա միանգամայն պարզ է դառնում ՀԺ կուսակցության դժգոհության հիմնական պատճառներից մեկը. զոոեոազաձ ոաշնակցական խորհոդաոանաեաև խմբակցությունը մաոքե ուշ դառնալու էր կոալիցիոն կառավաոության «գեոեզմանատոոոո»: Պատահական չէր, որ ՀԺԿ 2-րդ համագումարը (1919թ. սեպտեմբեր) ընդունած ծրագրի Ազգային հարցին նվիրված բաժնում իր նպատակը

---

[18] ՀԱԱ, ֆ.Պ - 199, ց. 1, գ. 14, թ. 121:
[19] Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 2002,Ի-թիվ 1, էջ 94:
[20] Նույն տեղում:
[21] ՀԱԱ, ֆ.Պ - 199, ց. 1, գ. 14, թ. 112:
[22] «Ժողովուրդ», 11 հունիսի 1919:
[23] ՀԱԱ, ֆ.Պ - 404, ց. 1, գ. 38, թ. 2:
[24] Ս. Վրացյան, նշվ. աշխ., 1993, էջ 281:

հռչակեց Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծումը սեփական ծովային ելքով[25]:

Արտախորհրդարանական կուսակցություններից մայիսի 28-ի ակտին արձագանքեցին սոցիալ-դեմոկրատ հնչակյանները և հայ ռամկավարները: Սոցիալ- դեմոկրատ հնչակյանների Թիֆլիսի մասնաճյուղի պաշտոնաթերթ «Գործավորը» ակտը որակեց ծանր ոճիր թուրքահայ և ռուսահայ ժողովուրդների գերագույն և միահեծան իրավունքների դեմ[26]:

Հայ ռամկավարների Հայաստանի Կենտրոնական Խորհուրդը հունիսի 4-ին խորհրդարանի նախագահությանը ուղղած բողոքագրում նշում էր, որ ակտով կառավարությունը ոչ թե կմիացնի երկու Հայաստանները, այլ կխորացնի երկու հատվածների միջև վիհը[27]: Ռամկավարների նման դիրքորոշման պատճառներից մեկն էլ այն էր, որ «մենք Հայաստանի լուծված հարցը մեր ձեռքով կտանենք և կխրենք ռուսական հիվանդոտ տիղմի մեջ, քանզի դաշնակիցները դեռ չեն ճանաչել Անդրկովկասյան հանրապետությունների անկախությունը Ռուսաստանից»[28]: Ռամկավարների 2-րդ Շրջանային ժողովը (1919թ. դեկտեմբեր) «Միացյալ Հայաստանի գաղափարը ընդունեց որպես նյութական անհրաժեշտություն հայ ժողովրդի համար, սակայն նրա իրականացման ձևը՝ Մայիսի 28-ի ակտը որակեց որպես Երևանի կառավարության քաղաքական սխալ և բշնաբարություն թուրքահայ իրավունքների»[29]:

Այսպիսով, մայիսի 28-ի ակտը չընդունած քաղաքական կուսակցություններին կարելի է բաժանել երկու խմբերի: Նրանց մի մասը՝ սոցիալ-դեմոկրատ մենշևիկները և սոցիալիստ- հեղափոխականները չէին ընդունում Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը, քանզի հենց հիմքից դեմ էին Հայաստանի անկախությանը:

Մյուս մասը՝ ժողովրդականները, հայ ռամկավարները և սոցիալ-դեմոկրատ հնչակյանները, ընդունելով միացյալ պետության ստեղծման անհրաժեշտությունը, դեմ էին դրա կատարման ձևին՝ Մայիսի 28-ի ակտին: Այլ կերպ ասած, վերջիններիս բողոքը ավելի շուտ կրում էր նեղկուսակցական բնույթ:

Անդրադառնալով խնդրի իրավական կողմին՝ կարծում ենք, որ համազգային նշանակություն ունեցող Մայիսի 28-ի ակտը ավելի հեղինակավոր կլիներ, եթե ընդունվեր ոչ թե կառավարության, այլ խորհրդարանի կողմից: Գրչի մեկ հարվածով, առանց ընտրությունների օրենսդիր մարմնի անդամների թվի ավելացումը համարում ենք մասնակի նահանջ ժողովրդավարության դիրքերից և այդ

---

[25] ՀԱԱ, ֆ.Պ - 4033, ց. 7, գ. 17ա, թ. 3:
[26] «Գործավոր», 9 հունիսի, 1919:
[27] «Վան-Տոսպ», 8 հունիսի, 1919:
[28] «Հայաստանի Ձայն», 9 հոկտեմբերի, 1919:
[29] ՀԱԱ, ֆ.Պ - 424, ց. 1, գ. 45, թ. 17:

կապակցությամբ առանձին դեպքերում Ներեցին ենք համարում ընդդիմադիր կուսակցությունների դժգոհությունները:

Այս ամենով հանդերձ Մայիսի 28-ի ակտը հանդիսանում է հայոց պատմության նշանավոր իրողություններից: Բազմադարյա խարխափումներից հետո հայը, իր հայրենիքի մի անկյունում ստեղծելով անկախ պետություն, պատրաստակամություն էր հայտնում տեր կանգնելու մնացած պատմական տարածքներին:

ՀԱԿՈԲ ԳՐԻԳՈՐՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՐԿՐՆԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆԸ

Հայրենական մեծ պատերազմի ավարտին արցախահայ ռազմիկներն ակտիվ մասնակցություն են ունեցել Կենտրոնական և Հարավ-Արևելյան Եվրոպայի երկրների ազատագրման մարտերին: Անձնուրաց կռվելով Խորհրդային բանակի կազմում՝ նրանք նպաստել են Լեհաստանի, Ռումինիայի, Հարավսլավիայի, Հունգարիայի, Ավստրիայի, Չեխոսլովակիայի ազատագրմանը և Գերմանիայի գրավմանը:

1944թ. հուլիս-1945թ. ապրիլ ընկած ժամանակամիջոցում Առաջին, Երկրորդ, Երրորդ Բելոռուսական և Առաջին Ուկրաինական ռազմաճակատի զորքերը Լեհաստանն ազատագրեցին գերմանաֆաշիստական զավթիչներից: Լեհաստանի ազատագրման մարտերում Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած առաջին արցախեսհայը Առաջին Ուկրաինական ռազմաճակատի 13-րդ բանակի 350-րդ հրաձգային դիվիզիայի 1176-րդ հրաձգային գնդի 1-ին հրաձգային գումարտակի հրաձգային դասակի հրամանատար, լեյտենանտ Ռուբեն Քրիստաֆորի Բաղիրյանն էր (Շուշի): Խիզախ շուշեցին աչքի ընկավ հուլիսի 30-ին Վիսլա գետի հաղթահարման, ինչպես նաև օգոստոսի 1-ին Կապշեվնիցա բնակավայրի ազատագրման մարտերում, որտեղ նրա դասակը հետ մղեց հակառակորդի 9 կատաղի հակագրոհ, ոչնչացրեց 60-ից ավելի հիտլերական: Այդ մարտում Բաղիրյանը նռնակներով ոչնչացրեց գերմանական մեկ զրահատրանսպորտյոր, գերի վերցրեց մեկ մայորի: Լեհաստանի տարածքում տեղի ունեցած գործողությունների ընթացքում մարտական առաջադրանքները գերազանց կատարելու և պարբերաբար ցուցաբերած խիզախության համար լեյտենանտ Ռուբեն Բաղիրյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944թ. սեպտեմբերի 23-ի հրամանագրով արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման[1]: Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակից հետո նա 1945թ. զորացրվել է ԽՍՀՄ զինված ուժերի շարքերից, բնակություն հաստատել Պյատիգորսկ քաղաքում, աշխատել այնտեղ և մահացել 1978թ. փետրվարի 20-ին[2]:

Բացի Ռուբեն Բաղիրյանից Լեհաստանի ազատագրման համար Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց նաև Աուրեն

---

[1] Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվ, (այսուհետև՝ ՌԴ ՊՆԿԱ), ֆ. 33, g. 793756, գ. 4, թ. 51:

[2] Герои Советского Союза. Краткий биографический словарь, т. 1, М., 1987, с. 102.

Գասպարյանին, Կոնստանտին Նազարյանին (երկուսն էլ Ստեփանակերտից), Թեմիկ Ավքսենդիլյանին (Մարտակերտ) և Վաղինակ Զաքարյանին (Խանլար): Երեք հայորդիներ՝ Շահեն Սարգսյանը (Ստեփանակերտ), Աշոտ Մելքումյանը (Մարտակերտ) և Իսահակ Կարախանյանը (Խանլար) դարձան Փառքի շքանշանի լրիվ ասպետ: Լեհաստանի ազատագրման մարտերին ակտիվորեն մասնակցել էին՝ տանկային կորպուսի հրամանատար, գնդապետ Համազասպ Բաբաջանյանը (Չարդախլու), տանկիստներ՝ Աշոտ Բալայանը, Արկադի Մարտիրոսյանը (երկուսն էլ Մարտունուց), կապավորներ՝ Նարիման Ղահրամանյանը (Շահումյան), Սերգեյ Մալխասյանը (Խանլար) և շատ ուրիշներ, որոնք պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով: Հազարից ավելի արցախահայ զինվորներ ու սպաներ 1944թ. մայիսի 26-ից մինչև հոկտեմբերի 25-ը Երկրորդ և Երրորդ Ուկրաինական ռազմաճակատի զորքերի կազմում մասնակցեցին գերմանաֆաշիստական զորքերից Ռումինիայի ազատագրմանը և արժանացան կառավարական պարգևների: Ռումինիայի ազատագրման համար աչքի ընկավ 23-րդ տանկային կորպուսի 135-րդ տանկային բրիգադի մոտորացված գումարտակի տանկադեսանտային վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ էլդար Արտեմի Շահնազարյանը (Կարյադինո): Գումարտակի հրամանատար, մայոր Վոլոստովի վկայությամբ ավագ լեյտենանտ Շահնազարյանը հատկապես արիաբար էր մարտնչում 1944թ. օգոստոսի 21-26-ը տեղի ունեցած մարտերում՝ մշտապես գտնվելով վաշտի ստորաբաժանումների մարտակարգերում: Նա աչքի ընկավ Բակեու քաղաքի համար մղված մարտերում: Մարտական առաջադրանքը հաջողությամբ կատարելու համար ավագ լեյտենանտ է.Ա. Շահնազարյանը Երկրորդ Ուկրաինական Ռազմաճակատի զրահատանկային և մեքենայացված զորքերի հրամանատարի 1944թ. սեպտեմբերի 5-ի թիվ 30 հրամանով պարգևատրվեց Ալեքսանդր Նևսկու շքանշանով[3]: Դա խիզախ սպայի մարտական 4-րդ պարգևն էր. մինչ այդ նա 1943թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին Ուկրաինայի ազատագրման մարտերում կատարած սխրանքների համար պարգևատրվել էր Կարմիր աստղի 2 շքանշանով[4]: Հրետանային մարտկոցի հրամանատար, կապիտան Գուրգեն Խաչատրյանը (Չարդախլու) պարգևատրվեց Կարմիր Դրոշի շքանշանով, ավտովարորդ Անդրանիկ Ղահրամանյանը (Մարտակերտ), ավտոմատավոր Շահամիր Բեգլարյանը (Գյուլիստան), ականանետի նշանառու Ռուբեն Պողոսյանը (Մարտակերտ) արժանացան «Արիության համար» մեդալի և այլն: 1944թ. սեպտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 30-ը Երրորդ Ուկրաինական ռազմաճակատի զորքերն ազատագրեցին

---

[3] ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 33, ց. 690155, գ. 2233, թ. 18:
[4] Նույն տեղում, ց. 682526, գ. 1806, թ. 326; գ. 421, թ. 457:

Հարավսլավիայի զգալի մասը: Այդ մարտերում ցուցաբերած անօրինակ խիզախության համար հետմահու հերոսի՝ կոչում շնորհվեց վաշտի հրամանատար, լեյտենանտ Արամ Սաֆարյանին (Մարտունու շրջանի Հաղորդի գյուղ): Գնդի հրամանատար, գվարդիայի փոծգնդապետ Պենկովի վկայությամբ 1944թ. հոկտեմբերի 7-ին գվարդիայի լեյտենանտ Արամ Սաֆարյանը մարտական առաջադրանք ստացավ՝ Ռիտոպեկ գյուղի շրջանում իր վաշտի հետ առաջինն անցնել Դանուբ գետի աջ ափը և ամրանալ արևելքից Բելգրադ տանող խճուղու երկու կողմերում: Անհավասար մարտում քաջի մահով զոհվեց գվարդիայի լեյտենանտ Սաֆարյանը և նրա զինվորները մինչև վերջ հավատարիմ մնալով զինվորական երդման, չնահանջեցին ոչ մի քայլ: Հակառակորդը մարտադաշտում թողեց ավելի քան 150 սպանված զինվոր ու սպա: Գվարդիականների անձնազոհ գործողությունը հնարավորություն տվեց դիվիզիայի հիմնական ուժերին մեկ այլ վայրում առանց կորուստների գետանել Դանուբը և գրավել Բելգրադ տանող ճանապարհի մի զգալի հատվածը, ինչը մեծ չափով նպաստեց հոկտեմբերի 20-ին ազատագչելու Հարավսլավիայի մայրաքաղաքը[5]: Բելգրադի ազատագրման ժամանակ կատարած սխրանքների համար Կարմիր աստղի շքանշանով պարգևատրվեցին հրետանավոր Բագրատ Սարգսյանը (Մարտունի), հետևակային Վաչագան Բաղդասարյանը (Ստեփանակերտ), Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով՝ կապիտան Սայադ Սարկոսյանը (Շամխոր) և այլոք:

Ավելի քան 1500 արցախահայ ռազմիկներ 1944թ. հոկտեմբերից մինչև 1945թ. մայիս ակտիվորեն մասնակցեցին Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման մարտերին: Երկրորդ Ուկրաինական ռազմաճակատի 7-րդ գվարդիական բանակի 5-րդ զենիթահրետանային դիվիզիայի 743-րդ զենիթահրետանային գնդի 1-ին մարտկոցի հրամանատար, ավագ լեյտենանտ Էդուարդ Մելիքի Այանյանը (Խանլարի շրջան, գյուղ Գետաշեն) արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման՝ Բուդապեշտի գրավման ժամանակ կատարած սխրանքների համար: 1945թ. հունվարի 6-ի մարտում Այանյանը թշնամու հակագրոհը հետ մղելիս վիրավորվեց, սակայն մնաց շարքում և ղեկավարեց մարտկոցի գործողությունները: Բուդապեշտի արևելյան մասի՝ Պեշտի ազատագրման մարտում (Պեշտը ազատագրվեց հունվարի 18-ին), Այանյանի մարտկոցն առաջինների թվում հասավ Դանուբ գետին և իր գործողություններով նպաստեց հետևակի գետանցմանը: ԽԱՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1946թ. մայիսի 15-ի հրամանագրով Էդուարդ Այանյանին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Մինչև Հունգարիայում հերոսանալը հմուտ զենիթահրետանավորը ակտիվորեն մասնակցել էր Ուկրաինայի, Մոլդովայի և Ռումինիայի ազատագրման մարտերին և կատարած

---

[5] ՈԴ ՊՆԿԱ, ֆ. 33, ց. 793756, գ. 42, թթ. 364-365:

սխրանքների համար պարգևատրվել «Արիության համար» մեդալով, Կարմիր աստղի և Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով[6], իսկ գումարտակի հրամանատարի տեղակալ, կապիտան Վասակ Պողոսբեկյանը (Մարտունի, հետմահու) և տանկային գումարտակի հրամանատար, լեյտենանտ Հայրապետ Սարգսյանը (Հադրութ) պարգևատրվեցին Լենինի շքանշաններով:

Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի ազատագրման մարտում հերոսաբար զոհվեց հրածգային գնդի հրամանատար, փոխգնդապետ Բորիս Մուսաելյանը (Տող)՝ հետմահու պարգևատրվելով Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանով: Շքանշաններով պարգևատրվածների թվում էին ավիագնդի հրամանատար, մայոր Ռաֆայել Գաբրիելյանը (Շուշի, հետագայում Խորհրդային Միության հերոս), գումարտակի հրամանատարներ՝ մայոր Մամիկոն Առուստամյանը (Շամխոր), կապիտան Ներսես Հակոբյանը (Շուշի):

Հազարից ավելի արցախահայեր 1944թ. սեպտեմբեր-1945թ. մայիս ընկած ժամանակամիջոցում երկրորդ և Չորրորդ և մասամբ էլ Առաջին Ուկրաինական ռազմաճակատների զորքերի շարքերում ակտիվորեն մասնակցեցին Չեխոսլովակիայի ազատագրմանը: Նրանցից՝ գնդի հրամանատար, փոխգնդապետ Գրիգոր Բաղյանին (Խաչակապ) շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում, իսկ հետախույզ ավագ սերժանտ Մեխակ Ծատուրյանը (Շամխոր), դարձավ Փառքի շքանշանի լրիվ ասպետ: Մարտական պարգևների արժանացածների թվում էին՝ ավիագնդի շտուրման մայոր Կոնստանտին Գաբիրելյանը (Շուշի), գումարտակի հրամանատար, մայոր Առուստամ Հարությունյանը (Մարտունի), ավիոէսկադրիլիայի հրամանատար, ավագ լեյտենանտ Նորայր Դանիելյանը (Չարդախլու), դիվիզիայի քաղբաժնի պետ, փոխգնդապետ Վիկտոր Մուրադյանը (Հադրութ) և շատ ուրիշներ:

Զգալի թվով արցախահայեր Հունգարիայի, Ռումինիայի, Անստրիայի և Չեխոսլովակիայի ազատագրման մարտերին մասնակցեցին հայկական 409-րդ հրածգային դիվիզիայի շարքերում, որը Ալովակիայի մայրաքաղաքի ազատագրման համար արժանացավ «Բրատիսլավյան» անվան:

Հազարից ավելի արցախահայեր 1945թ. հունվար-մայիս ամիսներին Առաջին, Երկրորդ, Երրորդ Բելոռուսական և Առաջին Ուկրաինական ռազմաճակատների զորքերի շարքերում ակտիվ մասնակցություն ունեցան Գերմանիայի տարածքում տեղի ունեցած հաղթական մարտերին: Նրանցից՝ լեյտենանտ Հրանտ Ավագյանին (Շուշի) շնորհվեց Խորհրդային Միության հերոսի, իսկ սակրավորներ՝ Վաղարշակ Հայրապետյանին (Ստեփանակերտ) և Հովսեփ Հովսեփյանին (Մարտունի) Փառքի շքանշանի լրիվ ասպետի աստիճան: Արևելյան Պրուսիայի ազատագրման համար Սուվորովի 1-ին աստիճանի

---

[6] ՌԴ ՊՆԿԱ, ֆ. 33, ց. 793756, գ. 3, թ. 259:

շքանշանի արժանացավ Երրորդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյասը (Չարդախլու): Նման շքանշանի, Բեռլինի գրավման արժանացավ տանկային կորպուսի հրամանատար, հնդապետ Համազասպ Բաբաջանյանը (Չարդախլու), դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը (Շուշի) պարգևատրվեց Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանով: Սուվորովի 3-րդ աստիճանի շքանշանի արժանացավ հրաձգային գնդի հրամանատար, մայոր Սրտավազդ Մարտիրոսյանը (Գյուլաթաղ), Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանաշանի՝ հրետանային գնդի հրամանատար, փոխգնդապետ Գուրգեն Սանասյանը (Չարդախլու) և շատ ուրիշներ:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի ավարտական շրջանում ավելի քան 5000 արցախահայ ռազմիկներ իրենց կյանքի և արյան գնով պայքարել են՝ ակտիվ մասնակցություն ունենալով Կենտրոնական և Հարավ-Արևելյան Եվրոպայի երկրների ազատագրման մարտերին և իրենց արժանի ավանդը ներդրել ֆաշիստական Գերմանիայի ջախջախման գործում: Պատերազմի եզրափակիչ փուլի մարտերում կատարած սխրանքների համար և իրենց խիզախությամբ առավել աչքի ընկած 9 արցախահայի շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում, 6-ը դարձել են Փառքի շքանշանի լրիվ ասպետ, իսկ ավելի քան 3000-ը պարգևատրվել են մարտական շքանշաններով ու մեդալներով: Արցախահայերից մեկական հոգի եղել են՝ ռազմաճակատի, կորպուսի, դիվիզիայի, 5-ը գնդի հրամանատարներ և այլն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՅ ԴԱՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ
1960ական թ. երկրորդ կիսուն

Հայ Դատի յանձնախումբերու կողքին, 1960ականներուն շարունակեց գործել Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութիւնը (ասկէ ետք՝ ՀՊՊ)[1]: Եղեռնի 50ամեակին, 1965 Ապրիլ 24ին, ՀՀՊ-ն հայ ժողովուրդի հանդէպ մարդկութեան ունեցած բարոյական պարտաւորութիւնն ու Թուրքիոյ պատասխանատուութիւնը յիշեցնող հետեւեալ հեռագիր յղեց Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ասկէ ետք՝ ՄԱԿ) ընդհանուր քարտուղար Ու Թանին, Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի, Հնդկաստանի նախագահներուն, Անգլիոյ, Իտալիոյ, Գերմանիոյ վարչապետներուն, որ

---

[1] ՀՀՊ հիմնուած էր Հայաստանի Առաջին Հանրապետութեան խորհրդարանին կողմէ, 1918-ին: 1920ին, Սեւրի Դաշնագիրը ստորագրուելէն երկու ամիս ետք, Հայաստանի Առաջին Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Համօ Օհանջանեան, Ազգային Պատուիրակութեան (ասկէ ետք՝ ԱՊ) նախագահ Պօղոս Նուպարին գրած իր 28 Հոկտեմբեր 1920ի թուակիր նամակով կը տեղեկացնէ հետեւեալը. «Սեւրի դաշնագրի ստորագրուելէն վերջ բոլոր պատուիրակութիւնները կը կորսնցնեն իրենց գոյութեան իրաւունքը: Հայկական կառավարութիւնը իբրեւ միացեալ Հայաստանը ներկայացնող միակ օրինաւոր մարմին իր դիւանագիտական ներկայացուցիչների միջոցաւ կը հսկի Սեւրի Դաշնագրի գործադրման վրայ եւ կը պաշտպանէ բովանդակ հայութեան շահերը» (Վաւերագրեր Հայ Եկեղեցու Պատմութեան, խմբ. Ա. Մադոյեան, Գիրք Ե , Երեւան, 1999, էջ 915): Այդպէս չեղաւ սակայն: Երկու ամիս ետք, երբ Հայաստան խորհրդայնացաւ, Ազգային Պատուիրակութիւնը եւ ՀՀՊ-ն 1921-1923 տարիներուն շարունակեցին գործել եւ հայկական իրաւունքները պաշտպանել Լոնտոնի Խորհրդաժողովէն մինչեւ Լօզանի Դաշնագիր (Ալ. Խատիսեան, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 337-410): Լօզանի Խորհրդաժողովէն ետք, նկատի ունենալով որ այլեւս հայկական հարցի գծով ընելիք չէր մնացած, ԱՊ-ը ինքնալուծարք յայտարարեց 30 Նոյեմբեր 1924ին, իսկ հայ գաղթականներուն գործերը վարելու համար կազմուեցաւ Հայ Գաղթականաց Կեդրոնական Յանձնախումբը (Կ. Դալլաքեան, Ակնարկներ սփիւռքահայ հասարակական մտքի պատմութեան, Երեւան, 1994, էջ 145):

Դաշնակցութիւնը իր Ժ Ընդհանուր ժողովին (Դեկտ. 1924 - Փետ. 1925) պաշտօնապէս որդեգրեց ՀՀՊ-ն, և որոշեց զայն պահել այնքան ատեն, որքան քաղաքական պայմանները կը թոյլատրեն (Հ. Յ. Դ. 10րդ Ընդհանուր ժողովի որոշումներու գրքոյկ, ա.թ., ա.տ., էջ 16): 1925էն վաթսունական թուականներու սկիզբ ՀՀՊ-ն կապեր պաշպանեց միջազգային կազմակերպութիւններուն (Ազգերու Դաշնակցութիւն, Բ Միջազգայնական, ՄԱԿ) եւ Արեւմտեան պետութիւններու հետ՝ անոնց ներկայացնելով հայկական պահանջները:

անոնք զօրավիգ կանգնին Սեւրի Դաշնագիրով ճանչցուած Հայ Ժողովուրդի իրաւունքներուն:

«Այսօր յիսնամեակն է 1915ին թրքական կառավարութեան կողմէ հայ ժողովուրդին հանդէպ գործադրուած ցեղասպանութեան:

«Մէկ միլիոն հայեր կոտորուեցան, ուրիշ միլիոն մը աքսորուեցան, ցրուեցան աշխարհի չորս ծագերուն զրկուած իրենց հայրենիքէն եւ ինքնավար գոյութեան իրաւունքէն:

«Ցեղասպանութեան դատապարտումը անժամանցելի է:

«Բոլոր մեծ պետութիւնները, ինչպէս նաեւ Թուրքիան, 10 Օգոստոս 1920ին Սեւրի դաշնագրին տակ իրենց դրած ստորագրութիւններով պաշտօնական յանձնառութիւններ ունին հայ ժողովուրդի հանդէպ:

«Յանուն չորս ու կէս միլիոն հայերու կը խնդրենք ձեր վսեմութենէն եւ ձեր կառավարութենէն, որ բարեհաճիք ձեր ձայնը բարձրացնել, վերահաստատելու համար հայ ժողովուրդի օրինական եւ անջնջելի իրաւունքները»[2]:

Նոյն առիթով ՀՅՊ-ն պահանջատէր ներկայացաւ նաեւ Խորհրդային Միութենէն: Պատուիրակութիւնը նոյնիսկ հեռագիր յղեց Թուրքիոյ, այն առաջարկով որ Թուրքիա դատապարտէ Հայկական Ցեղասպանութիւնը և այդ ուղղութեամբ առաջին քայլը առնէ ճանչնալով հայութեան իրաւունքը Արեւմտահայաստանի վերաբերմամբ իբրեւ հայ և թուրք ժողովուրներու միջեւ կայուն խաղաղութեան երաշխիք[3]: Եղեռնի 50ամեակի առիթով հայ անհատներու և թէ պաշտօնական մարմիններու կողմէ պետութիւններու եւ միջազգային կազմակերպութիւններու յղած դիմումնագիրներուն նման, ՀՅՊ-ի այս դիմումները նոյնպէս մնացին անարձագանգ:

ՀՅԴ ԺԸ Ընդհանուր ժողովը (1963) որոշեց զօրացնել Հայ Դատի քարոզչութիւնը Թուրքիոյ տիրապետութեան տակ գտնուող հայկական հողերուն ազատագրումին ի նպաստ: Եւ այդ ուղղութեամբ իր աշխատանքները կեդրոնացուց Արեւմտեան երկիրներու քաղաքական եւ պետական շրջանակներու մէջ, յատկապէս Սեւրի Դաշնագիրը ստորագրած պետութիւններուն մօտ, հայութեան անունով անոնցմէ պահանջելով որ ճանչնան ազատ և անկախ Հայաստան ունենալու հայութեան իրաւունքը: Առ այդ, ՀՅԴ Բիւրօն մշակեց և հայ դատի իր յանձնախումբերուն տրամադրեց հայ դատի քարոզչութիւնը ընդարձակելու մասնաւոր ծրագիր մը, որուն իրականացման համար ալ զօրաշարժի ենթարկուեցան հայ դատի յանձնախումբերը: Նոյն նպատակով Բիւրօն 50ամեակէն ետք պատրաստեց Յուշագիր մը, որ ստորագրուեցաւ ՀՅՊ-ի կողմէ: 1966ի առաջին կիսուն, այդ յուշագիրը

---

[2] «Հայ Դատի աշխատանքները անցեալ հնգամեակին», Ազդակ Շաբաթ-օրեակ-Դրօշակ (ասկէ ետք՝ ԱՇԴ), 1970, Ա տարի, թիւ 42, 6 Սեպտեմբեր, էջ 667:

[3] Նոյն տեղը, ՀՅՊ-ի յղած հեռագիրը Խորհրդային Միութեան վարչապետ Ա. Կոսիգինին, էջ 668:

մասնաւոր պատուիրակութիւններու կողմէ յանձնուեցաւ պետութիւններու ներկայացուցիչներուն: Այսպէս, նոյն տարուան առաջին ամիսներուն 50ամեակի յուշագիրը ՀՅԴ-ի ներկայացուցիչները յանձնեցին Եթովպիոյ արտաքին քաղաքականութեան պաշտօնատարներուն, ՄԱԿ-ի մէջ Կիպրոսի ներկայացուցիչին, Խորհրդային Միութեան վարչապետ Ա. Կոսիգինին, Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի, Իտալիոյ նախագահներուն, Անգլիոյ և Գերմանիոյ վարչապետներուն եւ Հռոմի Պապին: Ինչպէս նաեւ Աւստրիոյ և Նորվեկիոյ կառավարութեանց արտաքին գործոց նախարարութեան Միջին Արեւելքի գործերու պատասխանատուններուն, Զուիցերիոյ նախագահին, Ֆիլանտայի և Տանիմարքայի վարչապետներուն, Հոլանտայի թագուհիին, Շուէտի և Յունաստանի կառավարութեանց: Երկու գերպետութիւններու ղեկավարներէն, իւրաքանչիւրին տարբեր բովանդակութեամբ նամակով, ինչպէս նաեւ միւս պետութիւններէն ՀՅԴ-ն խնդրեց, որ անոնք ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի օրակարգին վրայ դնեն հայկական հողային հարցը[4]:

16 Մարտ 1966ին ՀՅԴ-ն 50ամեակի յուշագիրը յանձնեց ՄԱԿ-ին(16), եւ նամակ մը նոյն կազմակերպութեան Ընդհանուր քարտուղար Ու Թանին, որ ան ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի օրակարգին վրայ դնէ Սեւրի դաշնագիրով ճանչուած հայկական իրաւունքները: ՄԱԿ-ի յղուած որեւէ յուշագիր, որպէսզի ուշադրութեան արժանանայ, նախ պէտք է որ տեղ գտնէ միջազգային այդ կազմակերպութեան մէկ մարմինի մը, եւ կամ յանձնախումբի (կամ ենթայանձնախումբի) մը օրակարգին վրայ: Այդպէս չէր ՀՅԴ-ի յուշագիրին պարագան: Հետեւաբար, ՄԱԿ-ի շրջագիծին մէջ, և ընդհանրապէս քաղաքական գետնի վրայ, ծանօթ յուշագիրը ուշադրութեան չարժանացաւ: Ու Թանի վտխարէն անով զբաղեցաւ անոր օգնականը նիւզելանտացի Ռ. Միլլը: Ան Պոսթընի մէջ իրեն ներկայացող ՀՅԴ պատուիրակութեան հաղորդեց, թէ ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովը օրակարգի նիւթ կրնայ դարձնել աշխարհի խաղաղութեան հետ կապ ունեցող որեւէ հարց, որ կը ներկայացնեն կազմակերպութեան անդամ երկիրները[5]: Ասիկա կը նշնակէր, թէ ՄԱԿ-ի համար Հայկական Հարցը հրատապ հարցերու շարքին չէր դասուեր: Իսկ հայութիւնը, որ ենթարկուած էր ցեղասպանութեան, որուն հայրենիքին մեծ մասը բռնագրուած էր Թուրքիան, ՄԱԿ-ի կանոնագրութեամբ,

---

[4] ՀՅԴ ԺԸ Ընդհանուր Ժողովի որոշումներու գրքոյկ, էջ 35-36, 49, 53: Այդ յուշագիրը առաջին անգամ սփիւռքահայ մամուլի մէջ լոյս տեսած է 14 մայիս 1966ին: Ազդակ օրաթերթ, Պէյրութ, 1966, Խ տարի, թիւ 59, 14 մայիս, էջ 2-4: ԱՇԴ, 1970, Ա տարի, թիւ 43, էջ 683-684: Նոյն, թիւ 42, 13 սեպտեմբեր, էջ 669, 683:

[5] Ազդակ, 1966, Խ տարի, թիւ 16, 23 մարտ, էջ 1: Պատուիրակութիւնը կը գլխաւորեն Անդրանիկ Վարժապետեան եւ Աեդրակ Մինաս (Հայաստանի Հանրապետութեան Նորագոյն Պատմութեան Պետական Կեդրոնական Արխիւ (ասկէ ետք՝ ՀՅ ՆՊՊԿԱ) ֆ. 326, Ց. 1, Գ. 385, թ. 1: Առաջինը ՀՅԴ բիւրոյի անդամ էր, իսկ վերջինը Հայ Դատի Ամերիկայի Կեդրոնական Յանձնախումբի ատենապետը: ՀՅ ՆՊՊԿԱ, ֆ. 326, Ց. 1, Գ. 385, թ. 2:

իրաւունք չունէր իր հարցը ներկայացնելու Միջազգային այդ կազմակերպութենէն ներս: Հայ քաղաքական կուսակցութիւնները իրազեկ էին ՄԱԿ-ի օրէնքով Հայ Դատի աշխատանքներուն առջեւ դրուած այս սահմանափակումին, եւ այդ պատճառով, անհրաժեշտ կը նկատէին գտնել պետութիւն մը, որ աջակցէր հայկական պահանջները ՄԱԿ-ին հասցնելու գործին: Այս գծով, անոնք մեծ պետութիւններու կողքին նկատի կ՚ունենային յատկապէս ՄԱԿ-ի անդամ փոքր պետութիւնները[6].

ՀՅԴ-ի յուշագիրը ուշադրութեան չարժանացաւ ոչ մէկ պետութեան կողմէ, բացի Թուրքիայէն, որ անմիջական եւ նկատառելի հակազդեցութիւն ցոյց տուաւ: Յուշագիրը ՄԱԿ-ի միջոցով հասած էր Թուրքիա: Ի դէպ, հակադարձելու համար Սփիւռքի տարած Հայ Դատի աշխատանքներուն, Թուրքիա եղեռնի 50ամեակէն սկսած ոչ միայն աշխուժացուց հայկական ցեղասպանութիւնը ուրանալու և հերքելու իր քաղաքականութիւնը, այլեւ, դիւանագիտական եւ գործնական գետնի վրայ յարձակողականի անցաւ հայկական գաղութներուն դէմ, օգտագործելով իր պետական լծակները: ՄԱԿ-ին յուշագիր յանձնելու առիթով, Թուրքիոյ հանրային կարծիքին ու պետական շրջանակներուն մտահոգութեան թարգմանը հանդիսացաւ թրքական մամուլը խեղաթիւրելով պատմական դէպքերն ու ժամանակակից իրողութիւնները: ՀՅԴ-ի ՄԱԿ-ին յուշագիր յանձնելէն քանի մը օր ետք, թրքական «Ենի Իսթանպուլ» օրաթերթը 19 Մարտ իր թիւին մէջ գրեց. «Ռուսերու լուծին տակ գտնուող հայերն ալ անկախութիւն կ՚ուզեն», իսկ 22 մարտ իր թիւին մէջ ՄԱԿ-ին հայկական յուշագիր յանձնելը նկատեց «Ռուսիոյ հայերուն ցնորական ընթացք»: Մինչդեռ նոյն ամսուն Մոսկուա հանդիսաւորապէս կը նշէր Մոսկուայի Դաշնագրին (Մարտ 1921) տարեդարձը, վերամրագրելով Թուրքիայէն ոչ մէկ հողային պահանջ ունենալու իր քաղաքականութիւնը: Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնն իր գործավարութեան բանբերին Օքթա Իշչէնի բերնով սպառնաց՝ «Ամէն ոք իր ուզած խնդրին մաչին կրնայ դիմել Ու Թանի: Անոնց պէտք եղած ատենը պէտք եղած պատասխանը կարելի է տալ»: «Ատալաթ» կուսակցութեան օրուան փոխնախագահ Օսման Թուրան նոյն առիթով յայտարարեց՝ «Թուրքիոյ մէջ Հայկական հարց մը գոյութիւն չունի այլեւս»: Թրքական մամուլը եւ պետական դէմքերն իրենց յայտարարութիւններուն ատեն օրինակ կունենային նոյն առիթով Թուրքիոյ նախագահ Իսմէթ Իւնիւնիւի այն յայտարարութիւնը, թէ՝ « Թուրքիա հասած է եղեռնական վտանգի մը դուռը»[7]:

---

[6] Գ. Ահարոնեան, Խոհեր Յիսնամեակի աւարտին, Պէյրութ, 1966, էջ 214: Ժ Նայիրի, Հնչակեան Կուսակցութիւնը եւ Հայկակեան Հողային դատը, 11րդ Համագումարի որոշումներու ուղիով, Պէյրութ, 1968, էջ 22: ՀՅԴ ԺԸ Ընդհանուր ժողովի որոշումներու գրքոյկ, էջ 53:

[7] ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 326, Ց. 1, Գ. 385, թ. 2: Ազդակ, 1966, Խ տարի, թիւ 17, 24 մարտ, էջ 1: Նոյն, թիւ 19, 26 Մարտ, էջ 1: Նոյն, թիւ 18, 25 Մարտ, էջ 1:

ՀՀՊ-ի կողմէ ՄԱԿին յուշագիր յանձնելը սփիւռքահայ քաղաքական կեանքին մէջ ընդունուեցաւ հակասական տրամադրութիւններով: Դաշնակցական մամուլը, առիթը նկատելով քաղաքական կարեւոր *աքտ*, ողջունեց այն, իսկ Ռամկավար Ազատական կուսակցութեան եւ Հնչակեան կուսակցութեան մամուլը վերապահութեամբ անդրադարձաւ այդ առթիւ: Այս վերջին երկու կուսակցութիւնները տակաւին քսանական թուականներուն, Լօզանի խորհրդաժողովէն ետք, այլեւս անիմաստ կը գտնէին ՀՀՊ-ի գոյութիւնն ու գործունէութիւնը: Ռամկավար Կուսակցութիւնը ՀՀՊ-ի անունով Դաշնակցութեան ներկայացուցած անկախ Հայաստանի պահանջը կը նկատէր անիրատես, անգործնական եւ անտրամաբանական, այն հիմնաւորումով, որ ատիկա կրնար խնդրոյ առարկայ դարձնել Հայաստանի եւ անոր ժողովուրդին անվտանգութիւնը, որովհետեւ նման պահանջ կ'ենթադրէր միաժամանակ պայքար մղել Թուրքիոյ եւ Խորհրդային Միութեան դէմ՝ ինչ որ վեր էր հայութեան ուժերէն: Իսկ Հնչակեան կուսակցութեան տեսակէտին համաձայն, ՀՀՊ-ն իրաւական առումով չէր կրնար ներկայացնել Հայութիւնն ու Հայաստանը: Կուսակցութիւնը այդ իրաւունքը կը վերապահէր Հայաստանի իշխանութեան: Այս տեսակէտին համաձայն էր նաեւ Ռամկավար ազատական կուսակցութիւնը: Այս կուսակցութիւնները կ'առաջարկէին կազմակերպել համագաղութային համագումար մը, եւ անկէ բխելիք կեդրոնական մարմինին վստահիլ Արեւմտահայաստանի հարցին հետապնդումը[8]:

Այս երկու կուսակցութիւնները իրաւացի էին, ինչ կը վերաբերի ՀՀՊ անունով հանդէս եկող մարմինի գոյութեան: Փաստօրէն, Սփիւռքի մէջ մարմինը մը կը գործէր Հայաստանի Հանրապետութեան անունով, սակայն զայն չէր, որ կը ներկայացնէր: Ամէն պարագայի, Եղեռնի 50ամեակին հետ, հայ քաղաքական հոսանքներու մօտ Սեւրի Դաշնագիրը կրկին անգամ միջազգային քաղաքականութեան սեղանի վրայ բերելու ընկալուած մօտեցումը սկսած էր հող շահիլ: Փաստօրէն, Թուրքիոյ բռնագրաւած Արեւմտահայաստանը իրաւական տեսակէտէն կարելի էր պահանջել միայն այդ դաշնագրին հիման վրայ: Դաշնագիր, որուն 88րդ յօդուածով Թուրքիա եւ Դաշնակից պետութիւնները Հայաստանը ճանչցան ազատ ու անկախ պետութիւն[9]: Ասկէ անկախ, պէտք է նաեւ նշել, որ ՀՀՊ-ի յուշագիրով ազատ անկախ Հայաստանի պահանջը Դաշնակցութեան հայ դատի տակաւին ոչ բիւրեղացած ռազմավարութեան հարցէն կը բխէր: Դաշնակցութիւնը այդ պահանջը արտաքին քաղաքական ճակատի վրայ արծարծեց մինչեւ1970 եւ անկէ

---

[8] Գ. Ահարոնեան, նշվ. աշխ., էջ 93,203-206,215,255: Ժ. Նայիրի, նշվ. աշխ., էջ 21-22: Հ. Գանգրունի, Յանուն հայրենիքի. 1887-1987, Պէյրութ, 1990, էջ 165:

[9] Գ. Լազեան, Հայաստան և Հայ դատը (Հայ եւ ռուս յարաբերութիւններու լուսին տակ), Երեւան, 1991, էջ 211:

ետք դադրեցաւ զայն հետապնդելէ և բացառապէս իր աշխատանքները կեդրոնացուց Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցնել տալու հարցին վրայ: Այսպիսով, այդ փոփոխութիւնը պայմանաւորուած էր կուսակցութեան Հայ դատի ռազմավարութեան հարցին բիւրեղացումով, եւ մանաւանդ, Հայաստանի · իշխանութիւն-Դաշնակցութիւն պաշտօնական կապի հաստատումով Սփիւռքի եւ Հայաստանի միջեւ հայ դատի շուրջ աստիճանաբար քաղաքական համախոհութեան հասնելու առաջադրութեամբ:

Հայաստանի կառավարութիւնը, նախքան ՀՅԴ-ը կցրուէ 50ամակի յուշագիրը, ծանօթ էր Դաշնակցութեան ԺԸ Ընդհանուր Ժողովի (1963) որոշումով որդեգրուած քաղաքական ուղեգիծի հիմնական ուղղութիւններուն Ֆրանսայի մէջ Խորհրդային Միութեան դեսպանութեան առաջին քարտուղար Լ. Սանասերեանի միջոցով: Ըստ այդ, Դաշնակցութիւնը Հայաստանի դէմ պայքար չի մղեր եւ Սփիւռքի մէջ անոր հայ դատի աշխատանքները նպատակ ունին պահպանելու Սփիւռքի ազգային ինքնութիւնը ու նաեւ, հայ ժողովուրդի իրաւունքները, եւ որ Դաշնակցութիւնը պատրաստակամ է Հայաստանի իշխանութեան հետ համագործակցելու հայ դատի խնդիրներուն շուրջ: Աւելի ուշագրաւը Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան ուղղակի հետաքրքրութիւնն էր ՀՅԴ-ի 50ամեակի յուշագիրով: Այդ ուղղութեամբ անիկա պաշտօնապէս տեղեկութիւններ կ՚ուզէր Մոսկուայի միջոցով Միացեալ Նահանգներու մէջ Խորհրդային Միութեան դեսպանատունէն եւ ՄԱԿ-ի մօտ Մոսկուայի ներկայացուցիչէն: Այս վերջինս, Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան տեղեակ պահեց, որ Յուշագիրին հեղինակը Դաշնակցութիւնն է, եւ թէ Հայկական հարցի լուծման համար կ՚առաջարկէ ՄԱԿ-ի հովանաւորութեան տակ ստեղծել «պուֆերային պետութիւն» մը[10]:

Վաթսունական թուականներու երկրորդ կիսուն ՀՅԴ-ի համար Հայ Դատի քարոզչութեան առիթ հանդիսացան միջազգային կարգ մը խորհրդաժողովներ: 1966 Մայիսին Աթոքհոլմի մէջ գումարուեցաւ Ընկերվար Միջազգայնականի համագումարը: ՀՅԴ-ի ներկայացուցիչներ կապ հաստատեցին ընկերվար անձնաւորութիւններու հետ, եւ անոնց յանձնեցին 50ամեակի յուշագիրը: Նոյն տարուան Նոյեմբերին Եթովպիոյ մայրաքաղաք Ատիս Ապապայի մէջ գումարուած ափրիկեան ազգերու մէկ համաժողովին 50ամեակի յուշագիրը յանձնեցին ժողովին մասնակից

[10] ՀՅ ՆՊՊԿԱ, ֆ. 326, Ց. 1, Գ. 379, թ. 7; Գ. 385, թ. 1:

երկիրներու պատուիրակութեանց[11]: 1967-1968 տարիներուն ՀՀՊ-ն շարունակեց իր աշխատանքները ՄԱԿ-ի շրջագիծին մէջ զօրակցելով ցեղասպանութիւնը գործադրողները դատելու համար միջազգային ատեան մը հիմնելու, եւ «նախայարձակում» բառը սահմանելու ՄԱԿ-ի աշխատանքներուն: ՄԱԿ-ը 1968ը յայտարարեց մարդկային Իրաւանց եւ Հիմնական Ազատութեանց Միջազգային Տարի, Մարդկային Իրաւանց Տիեզերական յայտարարութեան (1948) քսաներորդ տարեդարձին առիթով: ՀՀՊ-ն հայ ազգի անունով կոչ մը յղեց այդ հարցին մասին Թեհրանի մէջ գումարուած համաժողովին, որպէսզի անոր մասնակից պետութիւնները դատապարտեն Թուրքիոյ գործադրած Հայկական Ցեղասպանութիւնը:

1970ին ՀՀՊ-ն կարեւոր մասնակցութիւն ունեցաւ Ուրուկուէյի Խորհրդարանին կողմէ Սեւրի դաշնագիրին 50ամեակին առիթով հայանպաստ բանաձեւի որդեգրման աշխատանքներուն մէջ՝ ցամաքամասի Հայ Դատի յանձնախումբերուն հետ միասին[12]:

ՀՀՊ-ն գործեց մինչեւ 1972 իբրեւ Դաշնակցութեան քաղաքական-յարաբերական աշխատանքներն ու արտաքին յարաբերութիւնները վարող մարմին, եւ ապա, Դաշնակցութեան Ի Ընդհանուր Ժողովի (1972) որոշումով, դադրեցաւ գործելէ եւ զայն փոխարինեց Հայ Դատի Կեդրոնական Մարմինը, որ 1972-1977 շարունակեց Հայ դատի աշխատանքներուն հետապնդումը պետութիւններու մօտ և ՄԱԿ-ի շրջագիծին մէջ:

---

[11] ԱՇԴ, 1970, Ա տարի, թիւ 43, 13 սեպտեմբեր, էջ 684: Նոյն տեղը: Այդ համաժողովին մասնակցած երկիրներն են Սարոք, Ալժերիա, Թունուզ, Սուտան, Կամպոն, Թոկօ, Սիերա Լէոնէ, Լիպիա, Չատ, Նիկերիա, Քամերուն, Կեդրոնական Ափրիկէի Հանրապետութիւն, Քենիա, Շանա, Ուկանտա, Քոնկօ Քինշասա, Քոնօ Պրազաւիլ, Սոմալի, Մատակասկար, Զամպիա, Սալի, Սենեկալ, Քոթ Տիվուար: Այս երկիրներուն բացարձակ մեծամասնութիւնը անկախութեան տիրացած էր վաթսունական թուականներու առաջին կիսուն, երբ ցամաքամասին մէջ վերջ գտաւ անգլիական և ֆրասնական գաղութացումը:

[12] Genocide and Humain Rights. A Global Anthology. ed. Jack Nusan Porter, Lanham 1982, pp. 144,139,290. Կոչը տես ԱՇԴ, 1970, թիւ 45, 27 սեպտեմբեր, էջ 716: Նոյն, թիւ 48, 18 Հոկտեմբեր, էջ 764: Շ. Թորիկեան, ՀՅ Դաշնակցութիւնը և Հայկական Հարցի միջազգայնացման խնդիրը, Դրօշակ, 1993, ԻԴ տարի, թիւ 3, էջ 33:

МАРИНА ЧАЛЬЯН
(ИИ НАН РА)

ОСВЕЩЕНИЕ ВОПРОСА ОБЪЕДИНЕНИЯ ДВУХ АРМЯНСКИХ АПОСТОЛЬСКИХ ЦЕРКВЕЙ В АНГЛОЯЗЫЧНОЙ АРМЯНСКОЙ ПРЕССЕ США

(февраль, 1988 — август, 1990 гг.)

Даже самое общее знакомство с публикациями англоязычной армянской прессы США первой половины 1980-х гг., т.е. до начала Арцахского движения, свидетельствует о том, что в указанный период большую часть армянства Диаспоры волновали, преимущественно, вопросы внутренней жизни. С началом Движения в Армении и Арцахе, ситуация резко меняется. На фоне событий, происходящих на родине, внутренние проблемы Диаспоры, начинают казаться малозначительными и несущественными. Армянская Диаспора вдруг ощутила себя частью единого целого, на время были забыты споры и разногласия между различными партиями, организациями и группировками, на передний план вышли задачи общенационального характера.

Однако, что особенно важно, произошла своеобразная переоценка ценностей, значительно изменился угол зрения, сместились акценты. Мать—Родина для армянской диаспоры перестала быть неким абстрактным символом, этакой романтической мечтой, «Землей обетованной», о которой вспоминают лишь по определённым датам - в дни религиозных праздников или всеобщей национальной скорби. Отныне, Советская Армения стала совершенно конкретным понятием, страной, где живут самоотверженные и решительные люди, в одиночку выступившие против могущественной тоталитарной сверхдержавы, во имя исторической правды, для восстановления национальной гордости и самоуважения.

Карабахское движение было сразу же воспринято как составная общенациональной борьбы, борьбы за Ай Дат. Однако, если прежде в авангарде этой борьбы стояли радикально настроенные организации Диаспоры, то теперь вектор резко меняет свою направленность в сторону Восточной Армении. Именно поэтому, уже буквально с первых дней Движения усиливается ощущение единства нации, что нашло свое отражение во многих публикациях той поры. Эти изменения, безусловно отражали базовые изменения, происшедшие в сознании широких слоев армянства Диаспоры. Именно этим было обусловлено начавшееся почти одновременно с Арцахским движеним сближение двух армянских церквей — Эчмиадзинского Католикосата и

Великого Дома Киликии в Антилиасе. Совершенно очевидно, что совпадение во времени этих двух важнейших событий в жизни армянского народа отнюдь не случайно, более того, они взаимообусловлены и потому привлекли наше внимание и стали объектом нашего исследования.

Буквально с первых лет возникновения Диаспоры армянские традионные политические партии стремились использовать в своих целях церковь, имевшую немалое влияние на местное армянство и ставшую, пожалуй единственным, институтом сохранившим свой авторитет и способным воздействовать на все слои населения. Наиболее активно в этом плане действовала Дашнакская партия (АРФ), стремившаяся установить своё влияние на расположенный на территории Ливана Великий Дом Киликии, известный также как Антилиаский Католикосат, Католикосом Гарегином II-ым.

Гнчакская партия в вопросе о церкви придерживалась компромиссной точки зрения и выступала за сотрудничество всех религиозных армянских центров. Отдавая некоторое предпочтение Эчмиадзинскому католикосату, гнчаки полагали, что нельзя также лишать Антилиас его естественного права на руководство частью зарубежных армянских церквей. Рамкавары (РАК) проводила линию на поддержку Эчмиадзинского собора, считая, что именно ему должно повсеместно принадлежать верховенство в Армянской церкви. В церковном вопросе РАК придерживалась лозунга «Одна нация - одна церковь».

Само по себе, стремление тех или иных политических сил использовать Церковь в качестве союзника, а иногда и как инструмент для достижения своих целей, отнюдь не ново. Наша история изобилует такими примерами, причём особый интерес, в этой связи, представляет истории взаимоотношений Эчмиадзинского и Киликийского католикосатов (Великий Дом Киликии возник ещё в средние века).

В связи с ослаблением и намечающимся падением советского режима в Армении, стали стираться противоречия между двумя ветвями Армянской Аппостольской церкви - Эчмиадзинского католикосата и Великого Дома Киликии. Этот объективный процесс начал набирать обороты ещё в 1987г., однако, особенно остро вопрос интеграции двух церквей встал после землетрясения на севере Армении (1988 г.). Дело в том, что именно в указанный период возникла острая необходимость координации действий и в объединении усилий и ресурсов для решения этого самого злободневного, не терпящего отлагательств вопроса. Поэтому вполне естественно, что этот вопрос стал предметом обсуждения и даже острых споров со стороны журналистов как независимой прессы Армянской Диаспоры, так и партийных газет. Если отношение к этому вопросу, ведущей в Диаспоре Дашнакской партии было неоднозначным,

некоторые члены правления выступали против объединения двух ветвей Апостольской церкви, то позиция Армянской Ассамблеи к этому вопросу, уже с первых дней её существования, была совершенно определенной. Выражая настроения большей части армянства Диаспоры, Ассамблея настаивала на интеграции, в годы сталинского режима, искусственно расколотой Армянской Апостольской церкви. Эта позиция, недвусмысленно, была выражена в одной из статей Армена К. Бояджяна в официальном печатном органе этой организации «Арминиан репортер». Статья была напечатана в номере за 9-ое февраля 1989г. под рубрикой *«Комментарии»* и была озаглавлена «Как быть дальше, на данном историческом этапе?»[1].

Свои размышления на заданную тему нью-йоркский корреспондент начинает с сообщения о том, что 3-го февраля того же года в Нью-Йорк по приглашению нью-йоркской общины и, в первую очередь, Армянской Ассамблеи, прибыли Его Святейшество Верховный Патриарх и Католикос всех армян Вазген Первый, а также глава Киликийского Дома Католикос Гарегин Второй. Всё армянство Нью-Йорка с нетерпением ожидало встречи глав Эчмиадзинского и Киликийского католикосатов. Здесь обоим католикосам был оказан самый радушный прием, после чего, 5-го февраля ими был освящен нью-йоркский кафедральный собор св. Иоанна Предтечи. Безусловно, эту акцию, прежде всего, следует воспринимать как серьёзный шаг к примерению и интеграции двух католикосатов.

Корреспондент «Арминиан репортер» напоминает нам, что первую попытку реунификации Церкви Ассамблея предприняла ещё в 1982г. Однако, тогда по ряду причин "внутреннего и внешнего порядка" не удалось воссоединить оба католикосата. Надо полагать, что причинами "внутреннего" порядка были разногласия среди иерархов относительно степени подчинённости одного другому. Причинами "внешнего" порядка следует считать нежелание АРФ терять среди армянства Диаспоры столь авторитетную опору как Киликийский Католикосат. Однако, при этом, не учитывался тот факт, что раскол внутри Церкви порождает раскол внутри всего армянства и, по сути, вбивает клин между Диаспорой и Советской Арменией. Если в 1930-ые годы это, в какой то мере, было объяснимо и, даже, оправдано, то на нынешнем этапе, когда происходит активнейшая интеграция между Диаспорой и Родиной, раскол внутри Церкви является совершенным анахронизмом. В связи с этим, нью-йоркский корреспондент "Арминиан Репортер" предлагает Диаспоре активизировать усилия для

---

[1]The Armenian Reporter, Febr. 9, 1989, Vol. XXI, No. 31, p. 2. What`s Next after the Historic Moment?

воссоединения двух престолов, ибо этого требуют интересы нации. Сейчас не время для выяснения отношений и проявления амбиций. Особенно, когда на злобе дня стоят, такие, воистину судьбоносные, вопросы, как борьба за Карабах, преодоление последствий землетрясения 7 декабря 1988г., признание мировой общественностью Геноцида армян 1915г. и, конечно же, перспектива создания независимого суверенного Армянского государства[2]. Из всего сказанного явствует, что отношение к этому вопросу одной из ведущих в Диаспоре организаций - Армянской Ассамблеи, также как и отношение двух традиционных армянских политических партий - Гнчакской партии и РАК было совершенно однозначным. Выражая настроения большей части армянства Диаспоры, все они настаивали на интеграции Армянской Апостольской церкви.

Как уже говорилось, отношение к этому вопросу АРФ изначально было несколько иным, некоторые члены правления которой выступали против объединения двух ветвей Апостольской церкви. Ситуация коренным образом меняется с началом Арцахского движения. Начинается естественный процесс сближения двух апостольских церквей, что рано или поздно должно было прbвести к их слиянию или, вернее было бы сказать, к воссоединению. Эти процессы проходили настолько динамично и были настолько очевидны, что не заметить их было не возможно. Дашнакская партия более не могла противиться воссоединению церквей. Именно поэтому, начиная с 1988г. отношение АРФ к этому вопросу кардинальным образом меняется. Более того АРФ становится во главе движения к интеграции двух ветвей Армянской церкви. Безусловно всё это не могло не найти своего отражения в партийной прессе АРФ, в которой, среди прочих, особое место занимает еженедельник "Асбарез", издающийся как на армянском так и на английском языках. В «Асбарезе» даже существовала специальная рубрика под названием «Армянские Церкви» *(Armenian Churches)*, где рассматривались различные церковные вопросы, а также некоторые аспекты взаимоотношений между различными армянскими церквами.

Немаловажным фактором, способствующим объединению церкви стало рукоположение Католикоса Великого Дома Киликии Гарегина Второго, взошедшего на Антилиасский престол после смерти Зареха Первого. Среди армянской Диаспоры Зарех Первый был известен как непримиримый противник Эчмиадзинского католикосата и ярый протвник унии. В противоположность ему Гарегин Второй слыл человеком более широких взглядов, получившим разностороннее образование, знатоком теологии и философии и кроме того он был известен как деятель с одной

---

[2] Там же, стр.2.

стороны обладающий политической волей и с другой стороны, при необходимости, во имя главного, способный отбросить амбиции и пойти на компромисс. Как можно догадаться по некоторым достаточно прозрачным намёкам в прессе Диаспоры, избрание нового католикоса оказалось делом непростым и даже болезненным, не все отцы церкви в Диаспоре разделяли взгляды Гарегина Второго. Однако, симпатии многих видных деятелей Диаспоры были на стороне этого прелата церкви.

С учётом всего сказанного становится ясным и понятным повышенный интерес прессы Диаспоры к избранию нового Католикоса Великого Дома Киликии и всему тому, что сопутствовало этому событию. Отметим лишь несколько публикаций, посвящённых этой теме. Так, в газете за 23 января 1988г. в статье, озаглавленной «Поминовение усопшего Католикоса Зареха Первого»[3] сообщается о том, что по решению Его Святейшества новоизбранного Католикоса Великого Дома Киликии Гарегина Второго были запланированы празднества в честь «одного из величайших церковных деятелей двадцатого века, усопшего Зареха Первого».

Почти сразу, вслед за своим избранием, Гарегин Второй в новой должности, совершил свой первый визит в США, в ходе которого он имел встречи с видными деятелями Армянской колонии, представителями прессы и просто рядовыми прихожанами, членами различных церковных общин, оказавших ему поддержку во время избрания. В «Асбарезе» этому визиту был посвящён целый ряд статей, среди которых отметим лишь несколько. В частности, статью Астгик Кеюлян, посвящённую поездке новоизбранного Антилиасского Католикоса в Калифорнию. Статья так и озаглавлена: "Визит Его Святейшества Гарегина 2-ого в Калифорнию."[4] В ней подробно рассказывается о том, какие приходы посетил католикос, какие новые церкви освятил и где отслужил литургию и пр. Однако особое внимание в статье уделяется встречам католикоса с губернатором Калифорнии Дж. Дюкмеджяном и его супругой Глорией Дюкмеджян, Тамар и Вече Манукянами, лидерами различных религиозных и общественных организаций и пр. Приблизительно в том же духе выдержана другая статья из газеты "Асбарез", где рассказывется об официальной части визита новоизбранного католикоса. Статья озаглавлена:

---

[3] Asbarez. Jan. 23, 1988, Vol. LXXX, No. 8203, p. 23. Commemoration to be Held of the Late Catholicos Zareh I.

[4] Там же. June. 25, 1988, Vol. LXXX, No. 8305, pp. 22-23. H. H. Karekm II Visits California. Там же. Vazgen I: Now is Not the Time for Meetings and Strikes.

«Католикос Гарегин Второй и губернатор Дюкмеджян приняли участие на банкете Оменэтмена 17 июня»[5].

Встреча новоизбранного Католикоса Великого Дома Киликии с наиболее влиятельными деятелями Диаспоры США была пожалуй наиболее важной составляющей его визита в эту страну. От них зависели вопросы финансирования и многие другие аспекты деятельности церкви. Не случайно, что визит нового католикоса в США состоялся буквально через несколько месяцев его избрания. В поттверждение сказанного приведём весьма показательную статью, опубликованную в декабрьском номере "Асбареза" за 1987г., статью Микаела Папазяна, озаглавленную "Предложение об объединении армянской церкви"[6].

Автор статьи даёт довольно реалистический анализ сложной ситуации, в которой оказалась Армянская церковь на данном этапе. Камнем преткновения для объединения двух ветвей Армянской церкви является вопрос о том, какая из них станет доминирующей. По мнению автора статьи, предложение некоторых дашнакских лидеров о том, что центром объединённой Армянской церкви стал Ливанский город Антилиас звучит нелепо. Гораздо более логичным кажется предложение о том, чтобы Антилиас подчинился Верховной власти Эчмиадзина, который с начала 4-го века н.э был духовным центром Армении. Этого мнения придерживается большинство армян в Диаспоре.

Однако, помимо политических проблем, о чём уже говорилось выше, автор довольно серьёзным вопросом считает также финансовый вопрос. Дело в том, что Антилиаский католикосат дотируется различными армянскими организациями и частными лицами во всём мире и по мнению экспертов, материальная база Антилиаса в рассматриваемый период гораздо солиднее чем у Эчмиадзинского католикосата. Значительную часть этих денег Антилиасская церковь и дашнакская партия традиционно использовали на нужды дашнакской партии на Ближнем Востоке на поддержку движения Ай Дата. В случае если центр единой Армянской церкви будет перенесён в Эчмиадзин финансовые потоки из США и других армянских общин автоматически переместится в Советскую Армению. Всё это нежелательно как для дотируемых так и для дотирующих. Многие из состоятельных армян Диаспоры всё ещё скептически относились к Советской Армении, считая её российской колонией и не желали совершать пожертвования Эчмиадзинской церкви.

---

[5] Там же, Jun. 18, 1988, Vol. LXXX, No. 8304, p. 1. Catholicos Karekin II & Gov. Deukmejian Attend Homenetmen's June 17 Banquet.

[6] Там же, Dec. 19, 1987, Vol. LXXIX, No. 8178, p. 23. A Proposal for Armenian Church Unity.

Выход в подобной ситуации автор видит в том, что большинство американских армянских церковных общин США останутся под юрисдикцией Антилиаского католикосата, что даст им возможность как и прежде делать щедрые пожертвования в пользу Великого Дома Киликии. Антилиаский же католикосат признает верховенство Эчмиадзинского католикоса и по своему усмотрению будет часть пожертвований перечислять в казну Эчмиадзина. По мнению автора, только на такой основе, при условии сохранения некоторой, в частности, финансовой автономии Великого Дома Киликии от Эчмиадзина возможно объединение Армянской церкви. Обе стороны должны проявить политическую мудрость. Только объединив усилия нации возможно серьёзно взяться за разрешение других злободневных вопросов, таких как возвращение территорий и восстановления независимости.

К сожалению в армянской прессе Диаспоры не нашла отражения та сложная и кропотливая подспудная переговорная работа, проделанная различными национальными деятелями для объединения Армянской церкви. Зато триумф этой деятельности получил в американской прессе очень подробное освещение. Главным достижением в этом вопросе явился одновременный визит двух католикосов в США: в Нью Йорк и Калифорнию, поводом чему послужило открытие церкви Св. Ншата в Нью Йорке и другие аналогичные мероприятия. Однако, подлинной целью одновременного приезда в США обоих католикосов, безусловно являлось достижение соглашения об объединении на самом высоком уровне. Любопытно, что приезд обоих католикосов совпал с началом Арцахского Движения. Этому событию были посвящены многочисленные статьи в "Асбарезе" и других печатных органах АРФ в США.

Интересной статьёй, посвящённой этой же теме является редакционная статья из "Асбареза" за 25 февраля 1989г. озаглавленная "Отношения глав армянской Церкви в гармонии, но некоторая нервозность всё ещё сохраняется"[7]. В статье рассказывается о том, как проходила встреча глав двух ветвей армянской Церкви в Нью Йорке. Оба Владыки выразили свою признательность армянской общине США и в частности Нью Йоркской церковной общине за приглашение и её усилия, напраленные на сближение двух ветвей единой Апостольской церкви. Как заявил в одном из своих интервью Его Святейшество Католикос всех армян Вазген Первый: "Мы пришли к совместному соглашению о том, что необходимо предпринять шаги для дальнейшей кооперации, что гораздо важнее тех разногласий, которые существовали между нами в прошлом". В

[7] Там же, Feb. 25, 1989, Vol. LXXX, No. 8458, pp. 1, 22. Armenian Church Heads in Harmony but Strains Show in the Ranks.

другом своём интервью Его Святейшество добавил, что во время его встречи в Нью Йорке с главой Киликийского Дома "был взят курс на объединение двух церквей в ближайшем будущем". Во время того же интервью Гарегин Второй заявил, что "Мы находимся на верном пути. Тесное сотрудничество между главами двух церквей на нынешнем этапе ведёт к дальнейшему их объединению. Людям непонятен конфликт внутри единой конфессии ... Мы делаем всё, чтобы ликвидировать эти разногласия".

В статье недвусмысленно даётся понять о том, что следующим главой уже единой Армянской Апостольской церкви будет Его Святейшество Гарегин Второй. Отнюдь неслучайно здесь приводится возраст и образовательный ценз двух владык — получившего образвзование в Бухаресте восьмидесятилетнего Вазгена Второго и получившего образование в Оксфорде пятидесятишестилетнего, довольно энергичного Гарегина Второго. На вопрос корреспондентов о том, как оба Католикоса относятся к тому, что именно землетрясение и необходимость оказания помощи пострадавшим на Севере Армении, послужили поводом для объединения усилий двух Армянских церквей, Гарегин Второй ответил, что в этой жизни чаще всего так и бывает, в связи с чем процитировал известную латинскую пословицу "Сквозь терни к звёздам", что соответствует русской пословице "Не было счастья, да несчастье помогло". В статье подчёркивается, что объединение двух Церквей выгодно всему армянскому народу, однако, более всего в воссоединении Церквей заинтересована 700 000-ая армянская диаспора США, которая начиная с 1933 г. мечется между церковными общинами, находящимися под различными юрисдикциями. Так, община, возглавляемая архиепископом Месропом Ашчьяном находится под юрисдикцией Великого Дома Киликии, в то время как община во главе с архиепископом Торгомом Манукяном подчиняется Эчмиадзинскому Католикосату.

Вместе с тем, как отмечается в статье, не все прелаты Армянской церкви с одинаковым энтузиазмом относятся к перспективе воссоединения двух Церквей. Так к примеру, если архиепископ М.Ашчьян с воодушевлением говорит о том, что встреча двух католикосов положила начало "прекрасному слиянию сердец и Церквей", то архиепископ Т. Манукян же более осторожен в своих комментариях и утверждает, что встречу двух католикосов не следует рассматривать как "причину непременного объединения двух ветвей Церкви". Однако, тут же добавляется, что подобные пессимистичные голоса тонут в атмосфере всеобщего энтузиазма, царящего в американской Диаспоре в связи с перспективой слияния двух Церквей.

Однако, заметим, что на самом деле, вопреки тому, что писалось в

вышеприведённой и ещё в ряде других статей[8], отношение к воссоединению церквей далеко не всеми воспринималось однозначно. Об этом свидетельствует небольшая, но весьма показательная публикация Ара Балиозяна, автора, получившей в своё время большую известность в Диаспоре, книги "Отрывочные мечты: армяне в Диаспоре" ("Fragmented Dreams: Armenians in Diaspora"). Статья была опубликована под рубрикой "Точка зрения" (Viewpoint) ещё в ноябре 1987г. и имела весьма характерное название: "Иллюзии, порождаемые призывами к объединению"[9]. В статье, написанной лаконичным, но очень образным и выразительным языком, говорится о том, что вот уже длительное время не прекращающееся муссирование темы воссоединения двух церквей порождает радужные иллюзии, которые рано или поздно разобьются о реалии нашей жизни, что вызовет среди армян Диаспоры очередное, как всегда болезненное чувство разочарования и аппатии. Автор утверждает, что Киликийский Католикосат никогда не ставил под сомнение исторически сложившееся первенство и приореитетную роль Эчмиадзина и всё же не надо забывать, что за последние десятилетия именно Киликийский Католикосат сыграл решающую роль в деле поддержания высокого авторитета Армянской Церкви, особенно среди Диаспоры, которая внесла немалый вклад в развитие и процветание Великого Дома Киликии.

Далее в статье утверждается, что потеря автономии Киликийского Католикосата может вызвать серьёзное недовольство в Диаспоре и привести к серьёзному финансовому кризису в обеих церквах. Прямое подчинение Антилиаса Эчмиадзину многими армянами будет воспринято как "знак первенства восточных армян над западными". Нельзя, основываясь лишь на духе традиций, отдавать в подчинение Эчмиадзинскому Католикосату все американские церковные общины, в формировании и развитии которых он участия не принимал. В наше время нужно исходить прежде всего из соображений целесообразности, конечно, при этом, по мере возможностей, стараясь не забывать и о традициях. "Как бы там ни было,- заключает автор статьи,- решать должен народ". Т.е., вопрос о воссоединенении двух диоцезов следует оставить на

---

[8]Там же, Feb. 18, 1988, Vol. LXXX, No. 8464, pp. 1, 21. Catholicos Vazgen I Ends U.S.Trip with Visit to Prelacy Mother Church; 2 Catholicoses Meet with Bush. Там же. Feb. 11, 1989, Vol. LXXX, No. 8459, pp.1, 22. Catholicos Vazgen I, Karekin II Summit Meeting in N.Y.; Там же, Jan. 28, 1989, Vol. LXXX, No. 8450, p.1. Catholicoi to Arrive in N.Y. on Feb. 3 for Joint Meeting.

[9] Там же, Nov. 21, 1987, Vol. LXXX, No. 8459, p. 32. A Misleading Call to Unity.

усмотрение всего народа, вполне в духе американской демократии. Конечно трудно согласится с большей частью утверждений г-на Балиозяна, тем более, что как показали дальнейшие события, большая часть армян Диаспоры восприняли идею воссоединения двух церквей с большим энтузиазмом и не пыталась искать какую либо подоплёку в приоритетной роли Эчмиадзина в отношении Антилиаса.

Таким образом становиться совершенно очевидным, что уже в конце 1987 и в начале 1988г. возникли серьёзные предпосылки для объединения двух ветвей Армянской Апостольской церкви. Среди них, пожалуй в первую очередь, следует отметить такие события в Советской Армении как перестройка, ослабление влияние коммунистческой идеологии, изменение приоритетов, более трепетное отношение к традиционным ценностям ипр. В свою очередь, в Диаспоре стало менятся отношение к Советской Армении, появилось больше доверия и понимания. Вместе с тем, больше доверия и понимания появилось между различными политическими силами Диаспоры, которым к 1988г. удалось достичь общего видения проблемы и выработать единную тактику в отношении объединения двух католикосатов. Официально об этом было объявлено на саммите лидеров армянских политических партий, который уже давно запланировано было созвать в Бейруте, столице Ливана. Место для проведения саммита было выбрано не случайно. Ближний Восток и, в первую очередь, Ливан традиционно считался местом центросплетенпя серьёзных противоречий и разногласий относящихся к внутренним вопросам жизни Диаспоры и в осбенности церковным вопросам. Именно поэтому для достижения своеобразного консенсуса был выбран Бейрут.

На объединённом съезде партий в Бейруте в октябре 1988г. были представлены основные политические силы Западного армянства: Армянская Революционная Федерация (партия Дашнакцутюн), Гнчакистская Социал-Демократическая Партия и Армянская Либерально-Демократическая Партия. На саммите, кроме вопроса объединеия церквей, обсуждались события, происходящие в Советской Армении и Нагорном Карабахе, относительно которых был принят совместный меморандум. Этот меморандум, по сути, явился обращением к народу Советской Армении, где призывалось ослабить давление на политическое руководство республики и Центральную власть в Москве. Меморандум был передан в резиденцию Киликийского Католикоса Гарегина Второго, с просьбой переслать его через свои каналы в Европе Его Святейшеству Верховному Патриарху и Католикосу всех армян, Вазгену Первому. В особом обращении к Вазгену Первому выражалась надежда, на то что Эчмиадзинскому Католикосату удастся, своим авторитетом, повлиять на обстановку в республике и тем самым смягчить социальную и

политическую напряженность во всем регионе[10]. Такое событие как объединённый съезд политических партий и организаций в Бейруте, безусловно можно назвать знаковым. Здесь было достигнуто сближение позиций, традиционно стоящих на различных платформах армянских партий, что в конечном счёте привело к фактическому объединению церкви и выработке единой стратегии и тактики партий в отношении развенувшегося в Армении Арцахского движения.

[10] Это обращение, с небольшими выдержками и комментариями, было напечатано в номере "Арминиан репортер" за 6-ое октября в статье «Армянские политические партии призывают Советских армян не впадать в крайности» (The Armenian Reporter, Oct. 6, 1988, Vol. XXI, № 50. Armenian Political Parties Call on Soviet Armenians Not to be Extreme). Как показал дальнейший ход событий, опасения лидеров традиционных армянских политических партий оказались не напрасны (по-видимому, здесь сыграло роль и то обстоятельство, что многие из них имели связи в политических кругах США и были весьма осведомлены о планах Кремля относительно Армении).

ԼԻԼԻԹ ԶԱՔԱՐՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1990-ական ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

1980-ական թվականների վերջին-1990-ական թվականների սկզբին Հայաստանում արտաքին և ներքին տարբեր հանգամանքների բերումով սկսվեց մի գործընթաց, որի նպատակն էր անկախ ժողովրդավարական պետության ստեղծումը: Կարճ ժամանակահատվածում փորձ էր արվում անցնել այն ուղին, որ արևմտյան պետություններն անցել էին 1-2 հարյուրամյակների ընթացքում: Առանց այն էլ չափազանց բարդ փոխակերպման այդ գործընթացն ավելի էր դժվարանում մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:

Երկրի ժողովրդավարացումը զուգորդվում էր մեկ համակարգից սոցիալիստականից, մեկ այլ համակարգի՝ կապիտալիստականին, անցմամբ: Անցում էր կատարվում ԽՍՀՄ-ից, որն իր կառուցվածքով դաշնային էր, ունիտար պետության: Մոտ 7 տասնամյակների ընթացքում ձևավորված քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ բնույթի կապերը հանկարծ կտրվել էին, և Հայաստանը հայտնվել էր նոր աշխարհաքաղաքական իրողության մեջ: ԽՍՀՄ-ի և սոցիալիստական ճամբարի փլուզումն առաջացրեց նաև գլոբալ փոփոխություններ աշխարհում, ուժերի նոր հարաբերակցություն և դրա հետ կապված հակասություն՝ Հայաստանում դեռևս 18-րդ դարի սկզբին ձևավորված և ավանդական դարձած ռուսական կողմնորոշման և արևմտյանի միջև: Ռուսաստանը փոխակերպման բարդ գործընթացների մեջ էր և ժամանակավորապես թուլացրել էր իր ազդեցությունը տարածաշրջանում, զրկվել «ավագ եղբոր» իր դերից: Արևմուտքը, որն անցել էր ժողովրդավարացման երկարատև ուղի, ավելի գրավիչ էր թվում, բայց արևմտյան (ավելի շատ ֆրանսիական) մոդելի փոխադրումը հայ իրականության մեջ դրական արդյունք չտվեց: Անցման շրջանի համար մեծ դեր է խաղում պատմական փորձը և ժողովրդավարությանը նախորդող ավտորիտար վարչակարգի բնույթը: Կարևոր էր նաև քաղաքական էլիտայի ներսում ուժերի հարաբերակցությունը: Այդ տեսակետից Հայաստանն այդքան էլ նպաստավոր պայմաններում չէր, ուստի մեծ բացթողում էր,որ չմշակվեց անցումային փուլն արագ հաղթահարելու ազգային մեխանիզմը: Անցումային շրջանում պետք էր՝

1. իրականացվեր ժողովրդավարական համակարգի քաղաքական ինստիտուցիոնալացումը, կարգավորվեին փոխհարաբերությունները քաղաքական համակարգի հիմնական կողմերի միջև /պետություն-կուսակցություններ-հասարակական կազմակերպություններ/,

2. ստեղծվեր ժողովրդավարական պետության իրավական դաշտը,

3. կիրառվեին քաղաքական գործընթացների կարգավորման որակապես նոր մեթոդներ,

4. կայունացվեր սոցիալ-տնտեսական զարգացումը, պլանային տնտեսությունից անցում կատարվեր շուկայական տնտեսության,

5. պայմաններ ստեղծվեին քաղաքացիական հասարակության զարգացման համար:

Անցումային փուլը հաղթահարելու մեխանիզմի առաջադրումը խիստ անհրաժեշտ էր, քանի որ արտակարգ ներքին և արտաքին պայմաններն ամենևին էլ չէին նպաստում ժողովրդավարության զարգացմանը: Արտակարգ պայմանները հաճախ դրդում էին ծայրահեղ լուծումներ որոնել, իսկ ծայրահեղականությունը երբեմն ինքնին արդեն նշանակում է նահանջ ժողովրդավարությունից: Դժվար էր ստեղծել ժողովրդավարական պետություն, բնույթով ավտորիտար հասարակությունում, որի բոլոր օղակները, սկսած ընտանիքից և վերջացրած քաղաքական էլիտայով, կառուցված էին ավտորիտար սկզբունքով: 1988թ. ժողովրդի միասնությունը, նրա աճած ակտիվությունը և բարձր կրթական մակարդակը, լավ նախապայման էին քաղաքացիական հասարակության զարգացման համար, սակայն նորաթուխ իշխանությունները չնպաստեցին, իսկ հետագայում նաև խոչընդոտեցին դրան: Ժողովրդավարական ինստիտուտների ստեղծումը /ժողովրդավարության «ինստիտուցիոնալ դիզայնը»/ կարճ տևեց, բայց դեռ ժամանակ էր պետք, որ դրանք սկսեին լիարժեք գործել: Ժողովրդավարական մշակույթը ձևավորված չէր, և քաղաքական համակարգի հիմնական կողմերի միջև ծավալված թեժ պայքարը ընթացավ «խաղի կանոնների» խախտումներով: Ընդհանրապես յուրաքանչյուր ժողովրդավարական պետության մեջ քաղաքական պայքարը տարբեր կուսակցությունների միջև բնականոն և նույնիսկ անհրաժեշտ երևույթ է: Դեռևս Մոնտեսքիոն էր նկատել, որ եթե որևէ պետության մեջ չկա պայքար տարբեր խմբավորումների միջև և ամեն ինչ հանգիստ է, ապա այդ պետության մեջ չկա ազատություն: Եվ իսկապես, բոլոր ժողովրդավարական պետություններում քաղաքական պայքարը ընդունելի է և անհրաժեշտ, եթե համապատասխանում է «քաղաքական խաղի» կանոններին, սակայն ամբողջատիրությունից ժողովրդավարության անցման պայմաններում, երբ չկա ձևավորված նոր սոցիալ-քաղաքական կառուցվածք, քաղաքացիական հասարակությունը թույլ է, և եթե երկիրը գտնվում է պատերազմական վիճակում, ապա այդ պայքարը կարող է խիստ վտանգավոր լինել, հատկապես, երբ քաղաքական պայքարը կուսակցությունների կամ իշխանության և ընդդիմության միջև վեր է ածվում ծայրահեղ անհանդուրժողականության: ՀՀՇ-ն, որպես իշխանության կուսակցություն, չունենալով ժողովրդավարական զարգացման երկարամյա փորձ, չէր կարող հանդիսանալ ժողովրդավարական մշակույթը ձևավորող ուժ: Եթե մինչ իշխանության գալը ՀՀՇ-ի

ղեկավարները խոսում էին բոլոր ուժերի համախմբման մասին, ապա այժմ գտնում էին, որ ՀՀՇ-ն միակ ուժն է, որ կարող է լուծել հանրապետության առջև ծառացած խնդիրները: Հատկապես մեծ բացթողումներ եղան կադրային քաղաքականության մեջ: Իհարկե ՀՀՇ-ն չէր կարող երկու-երեք տարվա ընթացքում ստեղծել պետության բոլոր պահանջները բավարարող կադրեր, բայց մեծ սխալ էր, որ կադրային քաղաքականության մեջ ավելի հաճախ հաշվի էր առնվում ոչ թե պրոֆեսիոնալիզմը, այլ՝ անձնական նվիրվածությունը:

Իշխանության եկած ուժերը պատրաստ չէին դրան: Հայտնվելով անսահմանափակ հնարավորությունների և ֆինանսական ռեսուրսների առջև, նրանք չդիմացան այդ մեծ գայթակղությանը: Սկսվեց այլասերման մի գործընթաց, որը շատ նման էր Ասիայի և Աֆրիկայի ազատագրված երկրների նմանատիպ գործընթացներին: ՀՀՇ-ն, որը ստեղծվել էր ազգային-ազատագրական պայքարի ընթացքում, ենթարկվեց փոխակերպման: Նրա շարքային անդամների ակտիվությունը նվազեց, նրանից անջատվեցին և նոր կուսակցություններ ստեղծեցին առավել արմատական տրամադրված խմբերը: Երկրի քաղաքական և տնտեսական էլիտան ձևավորվեց գանձագողության, արտասահմանյան վարկերի յուրացման, կոռուպցիայի խորացման միջոցով:

Ժողովրդավարացման գործընթացների համար վատ նախապայման էր պատերազմը: Բոլոր պատերազմող երկրներում, հատկապես, եթե չկան ժողովրդավարության կայուն կառույցներ, պատերազմական գործոնը խիստ բացասական հետևանքներ է ունենում: Այսպես՝

1. Իշխանությունների սխալները և կամայականությունները արդարացնում էին դարաբաղյան պատերազմով: Հասարակության ակտիվ խմբերը, որոնք ունակ էին խոչընդոտել այլասերմանը «զինաթափվում էին» նորանկախ պետության անվտանգության ապահովման և այդ իսկ պատճառով իշխանություններին արտակարգ լիազորություններով օժտելու, իսկ երբեմն նաև հանցագործ ամենաթողության, «անհրաժեշտության» առջև:

2. Հայաստանը հայտնվեց շրջափակման մեջ, որը աղետալի երկրաշարժ ապրած հանրապետության համար, տնտեսական և վառելիքաէներգետիկ ճգնաժամի պայմաններում կրկնակի հարված էր: Սակայն նկատվում էր նաև այդ հարցի շահարկումը իշխանությունների կողմից:

3. Պատերազմում զոհվում էր ազգի սերուցքը: Հանուն գաղափարի, հայրենասիրական ազնիվ մղումով ճակատ մեկնած տղաները զրկվեցին Հայաստանում հասարակաան-քաղաքական կյանքին մասնակցելու հնարավորությունից, իսկ պատերազմից վերադառնալուց հետո պարզվեց, որ «խաղից դուրս են» հայտնվել: Դա հետագայում ներքաղաքական գործընթացների և ձևավորված կառույցների քայքայման պատճառ դարձավ և քաղաքական կյանքում

աստիճանաբար աճեց ազգային ռազմա-քաղաքական էլիտայի դերը, որը ձևավորվել էր Ղարաբաղյան պատերազմի ընթացքում: Դրա դրսևորումները ակնհայտ դարձան 1996 թվականին իշխանություն-ընդդիմություն սուր հակամարտության և հատկապես 1998 թվականի նախագահական ընտրությունների ընթացքում:

4. Պատերազմը ստեղծում է «ուժի պաշտամունք», որն արդարացված լինելով հանդերձ, պատերազմական պայմաններում գտնվող երկրի արտաքին քաղաքականության մեջ, կործանարար է, եթե փոխադրվում է ներքին քաղաքականության մեջ: Իսկ այդպիսի փոխադրումը սովորաբար անխուսափելի է:

«Պատերազմական գործոնի» բացասական ազդեցությունից խուսափելու շատ փոքր հնարավորություն կար՝ հասարակության մեջ բարոյականության մթնոլորտի ապահովումը: Դա հնարավոր կլիներ միայն այն դեպքում, երբ իշխանությունը կրող վերնախավը ժողովրդի հետ հավասարապես կիսեր դժվարությունները: Սակայն դա տեղի չունեցավ: Սկսվեց սոցիալական ուժեղ շերտավորում: Հասարակության մի մասի չքավորացումը, զուգորդվում էր մյուս մասի, որը մեծ մասամբ իշխանությանը մոտ կանգնած մարդիկ էին, հարստացմամբ: Բոլոր աղետներից ամենասարսափելին բարոյականության ճգնաժամն էր: Նույնիսկ, կարծես թե պետական կառույցներն սկսեցին հարմարեցվել իշխանություն կրող առանձին անձանց: Վերակառուցման ենթարկվեց Ազգային անվտանգության պետվարչությունը: Ներքին գործերի նախարարությունը, որը պետք է լիներ օրինականության ապահովման երաշխիքը, ինքը սկսեց աղմկալի խախտումներ կատարել: Այն ղեկավարվում էր «Ղարաբաղ» կոմիտեի նախկին անդամներից մեկի՝ գրող և հասարակական գործիչ Վ.Սիրադեղյանի կողմից և ըստ նույն կոմիտեի անդամ Ա. Մանուչարյանի գնահատականի՝ «դուրս էր հսկողությունից, դուրս էր իշխանությունից»: «Ղարաբաղ» կոմիտեն հասարակության որոշ մասի մեջ մեծ հեղինակություն ունեցող կազմակերպություններից էր: Ճիշտ է, այն ՀՀՇ-ի ստեղծումից հետո լուծարվել էր, բայց դրանից հետո դեռ որոշ ժամանակ նրա ղեկավարները ժողովրդի կողմից դեռ ընկալվում էին որպես մեկ միասնական ուժ: Իրավախախտումների մեջ փոխադարձ մեղադրանքները, անպարկեշտ արտահայտությունները միմյանց հասցեին, խորացնում էին քաղաքական ճգնաժամը: Ընկնում էր ոչ միայն կառավարող կուսակցության վարկանիշը, այլև՝ ընդհանրապես բոլոր կուսակցությունների: Այսպես, ՀՀ ԳԱԱ սոցիալական հետազոտությունների կենտրոնի տվյալների համաձայն 1994թ. սկզբին ՀՀՇ-ին համակրում էր երևանցիների 3 %-ը, Կոմկուսին՝ 13,7 %-ը, ՀՅԴ-ին՝ 11,3 %-ը, ԱԻՄ-ին՝ 3 %-ը, ՌԱԿ-ին՝ 2%-ը, ՀԴԿ-ին՝ 1,7%-ը[1]: Նույն

[1] «Ազգ», 1994, փետրվարի 5,

թվականի օգոստոսին /զինադադարի կնքումից հետո/ ՀՀՇ-ին համակրում էր՝ 7%-ը, ՀՅԴ-ին՝ 15 %-ը, ՀԿԿ-ին՝ 18%-ը, ԱԻՄ-ին՝ 1,52% ը[2]:

Իշխանության կողմից հաստատած ստվերային հարկերի պատճառով գործարար մարդիկ նախընտրում էին հեռանալ Հայաստանից: Հայաստանում մնում էին միայն իշխանության հետ «կլիենտական հարաբերություններով» կապված գործարարները, որոնք հսկայական հարստություն կուտակելով, դառնում էին խոշոր մենատերեր: Պաշտոնյաները չէին էլ թաքցնում, որ մեզանում «պետությունն ու պետականությունը խիստ անձնավորված են, և գործում է միայն խմբակայնության սկզբունքը»[3]: Ղարաբաղյան հիմնահարցի երկարատև շահարկումը սոցիալ-տնտեսական արտակարգ ծանր պայմաններում գտնվող հայաստանցիների համար աստիճանաբար արժեզրկեց գաղափարը, և պատահական չէ, որ 1994 թվականին զինադադարից հետո առաջին պլան մղվեցին սոցիալական արդարության հիմնահարցերը: Սոցիալական արդարության ապահովման և դարաբաղյան հարցի լուծման շուրջ առաջացած հակասությունները ոչ միայն սրեցին իշխանություն-ընդդիմություն, իշխանություն-ժողովուրդ հակասությունները, այլև ներիշխանական ճգնաժամ առաջացրին: Այդ իրավիճակից դուրս գալու համար քաղաքական վերնախավը, փաստորեն, բռնազավթեց իշխանությունը:

Ժողովրդավարացման գործընթացի կասեցման մասին էր վկայում մամուլի օրգանների, լրագրողների վրա հարձակումները և ծեծկրտոցը /օրինակ՝ «Ազգ»-ի, «Գոլոս Արմենիի» թղթակիցների, որոշ հեռուստալրագրողների/, ինչպես նաև տարբեր կուսակցությունների անդամների ահաբեկումն ու ծեծը /օրինակ՝ ԱԺՄ-ի անդամներ Դ. Վարդանյանի, Ա. Սադոյանի, Ս. Ավագյանի, Շ. Քոչարյանի/, հայտնի գործիչների սպանությունը /օրինակ՝ 1993թ. Ղանդիլյանի սպանությունը, 1994թ. դեկտեմբերին Հ. Գալստյանի սպանությունը/:

Ժողովուրդն աստիճանաբար օտարվում էր և դառնում անտարբեր: Բաց թողնվեց քաղաքացիական հասարակության ստեղծման հնարավորությունը, որը ժողովրդավարական պետության կարևորագույն նախապայմաններից էր: Իշխանություններն այլևս չէին կրում ժողովրդի քաղաքական ազդեցությունը աստիճանաբար դառնալով ավելի ինքնասպասարկող և կոռումպացված: Ընտրությունները, մրցակցության տեսակետից լինելով մեծ մասամբ ազատ, ընտրարշավի անցկացման հնարավորությունների և արդյունքների առումով արդարացի չէին: Սկսեցին խախտվել մարդու իրավունքները: Մի խումբ մարդիկ օրենքից վեր կանգնեցին: Երկրում ստեղծվեց «ավտորիտար իրադրություն», որը հատուկ է հետխորհրդային որոշ հանրապետություններին: Տիրապետող ուժը երկրում ՀՀՇ-ն էր, դրա հետ մեկտեղ աստիճանաբար սկսեցին գերակշռել ոչ ֆորմալ

---

[2] «Ազգ», 1994, օգոստոսի 10,
[3] «Ազգ», 1994, փետրվարի 4:

քաղաքական ինստիտուտները: Խախտվում էր իշխանության տարբեր ճյուղերի տարանջատվածության սկզբունքը: Ձանգվածային լրատվության միջոցների ազատությունը դառնում էր ձևական: Կուսակցությունների դերը նվազում էր: Ընդդիմությունը ձևավորվում էր ոչ թե միասնական գաղափարական հենքի վրա, այլ՝ «ընդդեմ իշխանության» սկզբունքով: Այդպիսի ընդդիմությունը ընդունված է անվանել «բացասական կոնսենսուսի ընդդիմություն»: Այն ժամանակավոր բնույթ է կրում և անհաջողության դեպքում կարող է պառակտվել (դրա վառ օրինակն է 1996թ. սեպտեմբերյան դեպքերից հետո ստեղծված իրադրությունը): Իշխանափոխությունը ժողովրդավարական մեխանիզմներով անհնարին դարձավ: 1995 թ. մայիսի 30-ի ընտրությունները վատ նախադեպ դարձան և այնուհետև բազմիցս կրկնվեցին այլ սցենարներով: Ժողովրդավարությունը սկսեց «տեղապտույտ» ապրել:

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԸՆԹԱՑՔԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ 1998-2003 թթ.

Երկրաշարժից տաս տարի անց աղետի գոտու վերականգնման գործընթացի վերլուծության արդյունքները և հանրապետությունում իրականացվող բարեփոխումները կանխորոշեցին աղետի գոտու բնակավայրերի վերականգնման քաղաքականության ճշգրտման անհրաժեշտություն: Արդյունքում ՀՀ կառավարության 1998թ. նոյեմբերի 11-ի 701 որոշմամբ[1] հավանության արժանացավ աղետի գոտու վերականգնման Առաջնահերթ ծրագիրը, որով պետական ուղղակի միջամտությամբ և ռեսուրսներով առաջնային դարձան երկրաշարժից տուժած բնակավայրերի բնակարանային և սոցիալական ոլորտի խնդիրների լուծումը:

Այդ ծրագրով սահմանվեցին անօթևան մնացած ընտանիքների նկատմամբ բնակարանների ապահովման և սոցիալական ոլորտի օբյեկտների վերականգնման պետության ստանձնած պարտավորությունների իրականացման ուղիները: Բնակարանային շինարարությունից բացի, ըստ էության առաջին անգամ կիրառվեց բնակարանների գնման վկայագրերի տրամադրման գաղափարը, որը բնակչությանը հնարավորություն տվեց ազատորեն ընտրելու իր բնակության վայրը և բնակարանի որոկը: Սակայն բնակարանների շուկայական արժեքի և տրամադրված բնակարանների գնման վկայագրերի արժեքների միջև հաճախ նկատվում են էական տարբերություններ:

«Բնակարանի գնման վկայագրեր» ծրագիրն իրագործվում է աղետի գոտում 2001-2003թթ. ԱՄՆ ՄԶԳ/ՀՀ «Երկրաշարժի գոտու վերականգնման ծրագրի» շրջանակներում, որը հովանավորվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության /ՄԶԳ/ և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ Գյումրու, Վանաձորի, Սպիտակի և Ստեփանավանի քաղաքապետարանների աջակցությամբ:[2]

Բնակարանի գնման վկայագիրը /«ԲԳՎ»/ փաստաթուղթ է, որը վկայում է ծրագրի մասնակցի փոխհատուցում ստանալու իրավունքի մասին, ինչը ենթակա չէ օտարման, գրավադրման, բռնագանձման և այլ անձի փոխանցման: Այն կարող է օգտագործվել բացառապես պատրաստի մասնավորեցված բնակարան ձեռք բերելու համար: «ԲԳՎ»-ների ծրագիրն իրականացվում է 1988թ. երկրաշարժի հետևանքով իրենց

---

[1] Աղետի գոտու վերականգնման Առաջնահերթ ծրագիր, Երևան, 1998, էջ 3:
[2] "Urban Institute," Gumri, 2003. No. 7, p. 1.

բնակարանը կորցրած ընտանիքներին մշտական բնակարաններով ապահովելու նպատակով: «ԲԳՎ»-ն կարող է օգտագործվել միայն Հայաստանի տարածքում պատրաստի մասնավորեցված բնակարան ձեռք բերելու համար, որը համապատասխանում է բնակարանային նորմերի ու ստանդարտների միջին մակարդակին: «ԲԳՎ»-ն չի կարող օգտագործվել անավարտ կառուցման ընթացքում գտնվող բնակարան ձեռք բերելու համար: «ԲԳՎ»-ում նշված փոխհատուցման չափը որոշվում է ըստ ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի քաղաքացուն հասանելիք սենյակների թվի և տվյալ բնակավայրում ձևավորված բնակարանի շուկայական արժեքի համապատասխան: Երբ բնակարանի արժեքը գերազանցում է «ԲԳՎ»-ով սահմանված առավելագույն գումարին, այդ դեպքում ծրագրի մասնակիցները կարող են օգտագործել իրենց սեփական միջոցները՝ ձեռք բերվող բնակարանի արժեքի տարբերությունը լրացնելու համար: Այդ միջոցները պետք է փոխանցվեն լիազորված բանկերից մեկում քաղաքացու անունով բացված փակ, նպատակային հաշվին, ինչը հնարավորություն կտա պլանավորել և իրականացնել գործարքի «ավարտը» /վկայագրի մարումը/:[3]

Չնայած աղետի գոտու վերականգնման շրջանակներում իրականացվող շարունակական ծավալուն աշխատանքներին, աղետի գոտու բնակավայրերը և հատկապես Գյումրին դեռևս պահպանում են աղետյալ բնակավայրերի տեսք: Դա պայմանավորված է բնակավայրերի հին թաղամասերում տարերայնորեն տեղակայված մեծաքանակ ժամանակավոր կայարանների, տնակների և մինչ այժմ քանդման ենթակա և վթարային տների ու շինությունների առկայությամբ: Որպես ժամանակավոր կայարաններ են օգտագործվում նաև որոշ քանդված դպրոցների և արդյունաբերական օբյեկտների շենքերը:

Հարկ է նշել, որ երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքները նախկինում իրականացվել են քաղաքաշինական նոր թաղամասերի տարածքներում՝ սակավ ուշադրություն դարձնելով քաղաքներում գոյություն ունեցող թաղամասերի վերականգնման աշխատանքների իրականացմանը:

Արդյունքում անավարտ բազմաբնակարան շենքերը և սպասարկման ենթակառույցները գտնվում են Գյումրիի և Վանաձորի նոր շրջանների մեծ, անկառավարելի /քաղաքաշինական առումով/ տարածքներում և դրանց մեծ մասի ավարտը չի համապատասխանում քաղաքների զարգացման ներկա չափանիշներին:

Հասկանալի է, որ նախկինում ընդունված բազմաթիվ նոր քաղաքների հատակագծերը չափազանց ծավալուն էին նաև նախագծման և իրականացման արժեքի գնահատման տեսակետից: Ժամանակին հարմար էր Խորհրդային Միության բոլոր հանրապետություններից ժամանած նախագծողներին ներկայացնել մեծածավալ բյուջե:

---

[3] Նույն տեղում, էջ 3-4:

Երկրաշարժից հետո անցած տարիների ընթացքում աղետի գոտու բնակավայրերի ժողովրդագրական փոփոխությունները և վերականգնողական աշխատանքների իրականացման ընթացքը նոր հարցադրումներ են առաջադրել վնասված քաղաքաշինական օբյեկտների նախկին ծավալներով կառուցման նպատակահարմարության առումով:

«Աղետի գոտու վերականգնման մասին» ՀՀ օրենքի դրույթների համաձայն կազմվեց «Աղետի գոտու վերականգնման համալիր» (այսուհետև՝ Համալիր ծրագիր)[4] որով նախատեսվում էր աղետի գոտում, նախկինում ընդունված որոշումների համաձայն վերականգնողական աշխատանքների շարունակում, կիրառելով իրականացման նոր մոտեցումներ, որոնք նպատակաուղղված են երկրաշարժի հետևանքով բնակարանային պայմանների բարելավմանը, ինչպես նաև բնակավայրերում բնակության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Ծրագրի հիմնական կատարողներն են ՀՀ տարածքային կառավարման, քաղաքաշինության, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունները:

Համալիր ծրագիրը նախատեսվում է իրականացնել ՀՀ պետական բյուջեի «համաշխարհային բանկի վարկի» ԱԱՆ-ի կառավարության կողմից տրամադրված, «Հայաստան» համահայկական, «Լինսի», սոցիալ ներդրումների հիմնադրամների միջոցների և այլ արտաբյուջետային աղբյուրների հաշվին:

Համալիր ծրագրով կրթության և առողջապահության ոլորտների օբյեկտների վերականգնումը նախատեսվում է ավարտել 2002թ. բնակարանային (նախկին պետական) խնդիրները լուծել 2003թ.:

ՀՀ պետական բյուջեի մասով Համալիր ծրագրի վերականգնողական աշխատանքների իրականացման հիմնական պատվիրատուներն են աղետի գոտու բնակավայրերի պետական կառավարման տարածքային մարմինները:

Այդ մարմինները շահագրգիռ նախարարությունների, գերատեսչությունների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ մշակում են տարեկան ծրագրերի նախագծերը՝ ելնելով Համալիր ծրագրով նախատեսված ծավալներից և ժամկետներից:

Վերականգնողական աշխատանքների կապալառու կազմակերպությունների ընտրությունը, դրանց ֆինանսական գործընթացի վերահսկողությունը և ֆինանսավորման վճարահաշվարկային սպասարկումն իրականացվում է ՀՀ օրենքով:

Համաձայն ՀՀ նախագահի 03.08.1999թ. թիվ ՆՀ-360 և 17.01.2001թ. թիվ ՆՀ 794 հրամանագրերի[5] աղետի գոտու վերականգնողական աշխատանքների համակարգումն իրականացվում է

---

[4] Աղետի գոտու վերականգնման Համալիր ծրագիր, Երևան, 2001, էջ 2:
[5] Նույն տեղում, էջ 12:

ՀՀ քաղաքաշինության նախարարը՝ ՀՀ նախագահին առընթեր շինարարության և աղետի գոտու վերականգնման հարցերի հանձնաժողովի միջոցով:

Բնակչությունը և տնտեսավարող սուբյեկտներին տրամադրվող արտոնությունները սահմանվում են ՀՀ հարկային, մաքսային և այլ օբյեկտներով:

Համալիր ծրագրի իրականացումը հնարավորություն կտա բարելավել 14345 ընտանիքների (Շիրակի մարզում 10393) բնակարանային պայմանները, վերականգնել 61 դպրոցներ՝ 16828 աշակերտական տեղով (Շիրակի մարզում՝ 25 դպրոց՝ 8026 աշակերտական տեղով):[6]

Նախատեսվում է նաև վերականգնել Գյումրիի մանկավարժական ինստիտուտի մասնաշենքը՝ հաշվի առնելով օբյեկտի քաղաքաշինական և կրթական մեծ նշանակությունը: Վերականգնումը նախատեսվում է իրականացնել այդ ինստիտուտի սեփական միջոցների և այլ արտաբյուջետային աղբյուրների հաշվին: Այդ ուղղությամբ նախատեսվում է ներդնել 160 մլն դրամ:

Առողջապահության ոլորտի խնդիրների լուծման համար անհրաժեշտ ծախսերն ըստ Համալիր ծրագրի կազմում են 0.94 մլն դրամ (Շիրակի մարզում՝ 0.46 մլն դրամ):[7]

Այսօր հանրապետության իշխանությունների ուշադրությունը բևեռված է Շիրակի մարզի՝ մասնավորապես Գյումրիի արտադրական հզորությունները վերագործարկելուն: 2001թ. դրությամբ Տեքստիլ կոմբինատը, թեև ոչ լրիվ բեռնվածությամբ գործվածքային և մանվածքային արտադրամասերով սկսել է աշխատել:

Շիրակի մարզպետարանի 1999թ. մարտի պաշտոնական տվյալների համաձայն, մարզում արտադրվում է 65 տեսակի արդյունաբերական ապրանքներ:[8]

Այսպիսով, թեև 90-ական թվականների կեսերին Շիրակի մարզի աղետի հետևանքները վերացնելու ուղղությամբ որոշակի աշխատանքներ էր կատարված, սակայն հիմնականում այն ծրագրված և հետևողական գործընթացի մեջ մտավ 1998թ. թիվ 701 որոշումից հետո:

---

[6] Նույն տեղում, էջ 13, աղյուսակ թիվ 1:
[7] Նույն տեղում, էջ 24-27, աղյուսակ թիվ 4:
[8] Շիրակի մարզի պաշտոնական տեղեկագիր, Գյումրի, 1999, մարտ, էջ 2-7:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կարեն Թոխաթյան
Ժայռապատկերաբանության ակունքները Հայաստանում 3

Ռոբերտ Ղազարյան
Հայասա-Ազզիի տեղադրության հիմնահարցը
հայ պատմագրության մեջ 11

Սուրեն Մարտիկյան
Վահան Մամիկոնյանը՝ հայոց մարտավարության բարեփոխիչ 17

Կարինե Մելիքյան
Հովհան Մայրագոմեցու կյանքի և գործունեության
մի շարք փաստերի մասին՝ ըստ «Narratio de Rebus Armeniae»-ի 25

Արսեն Ազիզյան
Հայաստանի վերաբերյալ տեղեկություններ «Սըր Ջոն Մանդևիլի
ճանապարհորդությունները» երկում (XIV դ.) (համառոտ ակնարկ) 31

Արտակ Մաղալյան
Զրաբերդ գավառի տիրակալ Մելիք-Իսրայելյանների
տոհմածառը (Նյութեր հայոց մելիքությունների մասին) 36

Сергей Минасян
К вопросу об участии армян в Кавказской войне XIX в. 41

Անահիտ Խոսրոևա
Հայ-ասորական հարաբերություններն ու համագործակցության
դրսևորումները XIX դարի վերջին 46

Լիլիթ Ասոյան
Հայ բնակչության տեղաբաշխումը և աճը Սիբիրում
ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների 51

Գևորգ Խուդինյան
Հ. Յ. Դաշնակցության գործունեությունը
Էրզրումի վիլայեթում 1890-1895 թթ. 57

Ռուբեն Գասպարյան
Կիլիկիահայության կրթական վիճակը
19-րդ դ. վերջին – 20-րդ դ. սկզբին 65

Արման Սահակյան
Տիվրիկի գավառակի վարչաժողովրդագրական պատկերը
19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին 77

Հովակիմ Բոյաջյան
Արևմտյան Հայաստանի ընդհանուր քննիչների ընտրության հարցը
և Պողոս Նուբարը 84

Մանուկ Ստեփանյան
Հնչակյան կուսակցության մասնակցությունը
կամավորական շարժմանը 90

Քնարիկ Ավագյան
Հայ առաջին լոբբիստական կազմակերպությունը ԱՄՆ-ում 98

Գեղամ Պետրոսյան
Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին
քաղաքական կացությունը Հանրապետության
գոյության առաջին շրջանում (1918թ. հունիս – նոյեմբեր) 105

Հայկ Մարտիրոսյան
Հովհաննես Քաջազնունու դերը Հայաստանին օտարերկրյա
նյութական և ֆինանսական օգնություն կազմակերպելու գործում 118

Արմենուհի Ղամբարյան
Վուդրո Վիլսոնի ուղերձը ԱՄՆ Կոնգրեսին 125

Վանիկ Բաբաջանյան
1919 թ. Մայիսի 28-ի ակտը և հայ քաղաքական կուսակցությունները..131

Հակոբ Գրիգորյան
Արցախահայության մասնակցությունը կենտրոնական և
հարավ-արևելյան Եվրոպայի երկրների ազատագրմանը 137

Շողեր Սշրգեան
Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան
Հայ Դատի աշխատանքները 1960ական թ. երկրորդ կիսուն 142

Марина Чальян
Освещение вопроса объединения двух армянских
апостольских церквей в англоязычной армянской прессе
США (февраль, 1988 – август, 1990 гг.) 149

[400 դր.]

Լիլիթ Զաքարյան
Ժողովրդավարացման գործընթացները Հայաստանի
Հանրապետությունում 1990-ական թվականների առաջին կեսին 160

Արթուր Մխիթարյան
Աղետի գոտու վերականգնման աշխատանքների կազմակերպումը
և ընթացքը Շիրակի մարզում 1998-2003 թթ. 166

ՀԱՊԱՎՈՒԱՆԵՐ

ԵՊՀ – Երևանի պետական համալսարան
ՀՀ ԳԱԱ ՊԻ – Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտ
ՌԻ – Ռազմական ինստիտուտ
ИИ НАН РА – Институт истории Национальной академии наук Республики Армения